

Ճ Ի Ի Լ Վ Ե Ռ Ն

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ  
ԴԷՊԻ ԵՐԿՐԻ ԿԵԴՐՈՆԸ

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

---

1949

ՏՄԱՐԱՆ « Հ Ա Յ Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի »

Պ Է Յ Ր Ո Ւ Յ



84

Վ. Ի. Կ. Ն. Ն.

# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊՈՒ ԵՐԿՐԻ ԿԵԴՐՈՆԸ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

A <sup>II</sup> 33558



1949

ՏՄԱՐԱՆ « Հ Ա Յ Ժ Ե Մ Ա Ր Ա Ն Ի »  
Պ Է Յ Ր ՈՒ Յ



1863 թ. Մայիս 24-ին, կիրակը օրը, հօրեղբայրս, բրօֆէսէօր Լիդենպրոկը, շտապով կը վերադառնար իր փոքր տունը, որ կը գտնուէր Համպուրկի հին քաղաքամասի ամենահին փողոցներէն մէկուն՝ Արքայական փողոցին վրայ:

Բարի Մարթան կարծեց, թէ ինքը շատ ուշացեր էր, որովհետեւ ճաշը նոր սկսեր էր եփել խոհանոցի վառարանին վրայ:

— Է՛, — ըսի ես ինծի, — եթէ հօրեղբայրս անօթի է, ուրեմն այդ անհամբեր մարդը մեծ աղմուկ կը բարձրացնէ:

— Ահա արդէն Պ. Լիդենպրոկը, — բացականչեց բարի Մարթան շփոթած, սեղանատան դուռը կէս մը բանալով:

— Այո՛, Մարթա, բայց ճաշը կրնայ պատրաստ չըլլալ, որովհետեւ դեռ ժամը երկու չէ եղած, Ս. Միքայէլ եկեղեցիի ժամացոյցը դեռ նոր մէկ ու կէսը զարկաւ:

— Հապա ինչո՞ւ Պ. Լիդենպրոկը արդէն տուն կը վերադառնայ:

— Հաւանաբար ինքը կը յայտնէ պատճառը:

— Ահա և ինքը, ես կը փախիմ, Պ. Աքսէլ, դուն խօսք հասկըցուր անոր:

Ու բարի Մարթան կրկին շտապելով խոհանոց մտաւ:

Ես մինակ մնացի: Բայց քիչ մը անմճուական բնաւորութիւնս կը խանդարէր խօսք հասկցնել բրօֆէսէօրներէն ամենազայրացկոտին: Այդ պատճառաւ կը պատրաստուէի խոհամասար վերը քաշուիլ, փոքրիկ սենեակս, երբ փողոցի դուռը ճուռաց և տանտիրոջ երկար ոտներուն տակ փայտէ սանդուխները դղրդացին: Հապճէպով անցնելով սեղանատունէն, Պ. Լիդենպրոկը իր աշխատանոցը մտաւ:

Այսպէս շտապով անցնելու ժամանակ անկիւն մը շարտեց ձեռնափայտը, գլխարկը՝ սեղանին, և բարձր ձայնով կանչեց եղբորորդիին:

— Աքսէ՛լ, եկուր այստեղ:

Ես դեռ տեղէս չէի շարժուեր, երբ բրօֆէսէօրը անհամբեր շեշտով կրկին կանչեց.

— Ի՞նչ է, դեռ չեկա՞ր:

Ես վազեցի ահարկու հօրեղբորս սենեակը:

Օտտօ Լիդենպրոկը չար մարդ չէր. ես յօժարակամ կ'ընդունիմ այդ, բայց եթէ անոր մէջ ոեւէ փոփոխութիւն չը կատարուէր, ինչ որ

ըլորտովին անհաւանական էր, որով մինչև կեանքին վերջը պիտի մնար ինքնատիպ մարդ մը: Անիկա հանքաբանութեան բրոֆէսէօր էր և բոլոր դասախօսութիւններու ընթացքին մէկ կամ երկու անգամ սնուպայման կը բարկանար: Զինք երբեք չէր հետաքրքրեր, թէ արդեօք ուսանողները կանոնաւոր կը յաճախեն իր դասախօսութիւններուն, ուշադրութեամբ կը լսեն զինքը, թէ ոչ, և ինչքան կը յառաջդիմեն, — այդ մանր խնդիրները զինքը չէին անհանդստացնէր: Անիկա կը դասախօսէր, — համաձայն գերմանական փիլիսոփայութեան դարձուածքի մը, — «ենթակայօրէն», իրեն համար և ոչ թէ ուրիշներուն: Անիկա եսասէր գիտնական մըն էր, գիտութիւններու ջրհոր մը, որու անիւր կը ճռռայ, եթէ ուզեն անկէ բան մը կորզել: Մէկ խօսքով՝ փլատին մէկը:

Այդ տիպի բրոֆէսէօրներ Գերմանիոյ մէջ չատ կը դտնուէին:

Դժբախտաբար անիկա լաւ առողջանութեամբ չէր օժտուած, մասնաւոր երբ կը խօսէր հասարակութեան առջև. ինչ որ դասախօսի համար ցաւալի պակասութիւն է: Իր դասախօսութիւններուն ընթացքին յանկարծ կանգ կ'առնէր և կը կռուէր զժուար արտասանող ըմբոստ բառի մը դէմ, որ չէր ցանկար դուրս գալ իր շըրթունքներէն, այն բառերէն մէկը, որոնք կը դիմադրեն, կը փրօւին ու վերջապէս դուրս կու գան գիտութեան հետ քիչ կապ ունեցող յիշոցի նման: Բան մը, որմէ սաստիկ կը զայրանար:

Հանքաբանութեան մէջ կան բազմաթիւ կէս-յունարէն, կէս-լատիներէն անուններ, դժուար արտասանելի և այնպիսի կոպիտ հնչիւններով, որ բանաստեղծի շրթունքներուն համար տանջանք պիտի ըլլար զանոնք արտասանելու: Վատարանել չեմ ցանկար այդ գիտութիւնը, բայց և այնպէս ամենաճկուն լեզուին իսկ ներելի է շփոթութիւնը, երբ կ'արտասանես այնպիսի անուններ, ինչպէս են, օրինակ, շեղանկիւնային բիւրեղացում, ռեալին-ասֆալդային կուպր, կապարի ծծմբաւոր, կապարարծաթ և այլն:

Քաղաքին մէջ գիտէին հօրեղբօրս այդ ներելի պակասութիւնը և կը հեգնէին զինքը, կ'ըստասէին այդ վտանգաւոր վայրկեաններուն, կը բարկացնէին զինքը և կը ծիծաղէին վրան. և եթէ Լիդենպրոկի դասախօսութիւններուն միշտ ալ բազմաթիւ ունկնդիրներ ներկայ կ'ըլլային, այդ անոր համար էր, որ մեծամասնութիւնը կու գար բրօֆէսէօրի գայրոյթին վրայ ծիծաղելու և զուարճանալու:

Ինչ ալ ըլլար, այնուամենայնիւ հօրեղբայրս, — կը շեշտեմ այս հանգամանքը, իսկական գիտնական էր: Թէև ան երբեմն, փորձերու ժամանակ, կոպիտ վարուելով կը ջարդէր նմոյշները, բայց և այնպէս անիկա երկրարանական տաղանդին կը միացնէր հանքաբանի սրատեսութիւնը: Զինուած իր մուրճով, պողպատէ քլուքով, մագնիսական

սլաքով, զօղիչ խողովակով և աղօթաթիթուի սրուակով, չափազանց զօրեղ մարդ կը դառնար: Ըստ կոտորուածքի, արտաքին տեսքի, կարծրութեան, հալունութեան, ձայնի, հոտի կամ համի, առանց տատանումի կ'որոշէր ոեւէ հանք և կը դասակարգէր մինչև օրս յայտնի վեց հարիւր տեսակներու մէջ:

Ահա այդ պատճառաւ Լիդենբրոկի անունը մեծ համբաւ կը վայելէր գլխնաղիաներու և գիտական ընկերութիւններու մէջ: Հէմֆրի Դիւին, Ֆոն Հուսթալը, Կապիտան Ֆրանքլինն ու Սաբինը այցելեցին անոր երբ Համպուրկէն կ'անցնէին: Բէկկըրէլը, Էմբելմէնը, Բըրօուստէրը, Դիւման, Միլն Էլփարտը հաճոյքով կը խորհրդակցէին անոր հետ քիմիայի ամենահրատապ հարցերու մասին: Այդ գիտութիւնը կարեւոր գիւտեր պարտական էր անոր: 1853ին Լայփցիկի մէջ հրատարակուեցաւ Օտտօ Լիդենբրոկի մէկ աշխատութիւնը՝ «Տըրանսցենդալ բիւրեղագրութիւն» անունով, մեծածաւալ հատոր մը՝ նըկարներով, որ սակայն հրատարակութեան ծախսը չձածկեց:

Ատիչ դատ, հօրեղբայրս կը զլխաւորէր ռուսական դեսպան Ըստրուկկէի հանքարանական թանգարանը, որու հաւաքածոները եւրոպահան հռչակ կը վայելէին:

Այդպէս էր անհաւասիկ այն մարդը, որ այնքան անհամբերութեամբ ինծի կը կանչէր: Անիկա քարձրահասակ, նիհար տղամարդ մըն էր, երկաթէ առողջութեամբ, խարտեաշ, յիսուն տարեկանի մօտ, սակայն երիտասարդ արտաքինով, որը տասը աւորի պակաս ցոյց կուտար գինքը: Անոր խոշոր աչքերը անընդհատ կը շարժէին մեծ ակնոցներուն տակ. երկար ու բարակ քիթը դանակի սուր բերանի կը նմանէր. չար լեզուները կ'ըսէին, թէ անոր քիթը մաշնիստցած է և իրեն կը քաշէ երկաթի կտորները: Բացարձակ զրպարտութիւն. անոր քիթը միայն քթախոտ կը քաշէր, և պէտք է խոստովանիլ, բաւական մեծ քանակութեամբ:

Եթէ աւելցնեմ, որ հօրեղբայրս մօտ մէկ մէթր երկարութեամբ քայլեր կ'առնէր, և ըսեմ, որ ան քայլելու ատեն միշտ բռունցքները սեղմած կը պահէր. — ինչ որ նշան էր մոլեգին բնաւորութեան, — բնթերցողը անոր հետ բաւականաչափ ծանօթացած կ'ըլլայ և անոր ընկերութիւնը շատ ալ չի ցանկար:

Անիկա կը բնակէր իր սեփական բնակարանին մէջ, որը կէս փայտով կէս աղիւսով կառուցուած էր՝ ատամնաւոր ճակատով: Տունը կը գտնուէր այն ջրանցքներէն մէկուն մօտ, որոնք ոլորապտոյտ կ'անցնին Համպուրկի հին մասի մէջէն, որ բարեբախտաբար ազատուեցաւ 1842ի հրդեհէն: Տունը քիչ մը ծուած էր մէկ կողմին վրայ, այնպէս, ինչպէս Տուգէնպուլդի անդամ ուսանողի զլխարկ. պատերը քիչ մը ծուած էին, սակայն և այնպէս բաւական ամուր էր կանգնած, շը-

նորհիւ հսկայ կնձենիի մը, որ խրուած էր անոր ճակատին մէջ և գարնան իր ծաղկող ոստերը կ'երկարէր լուսամուտներէն ներս:

Որպէս գերմանական բրօֆէսէօր, հօրեղբայրս համեմատաբար հարուստ էր: Տունը իր սեփականութիւնն էր, իր բոլոր ունեցածներով: Իր ստացուածքներուն մէջ պէտք է դասել նաև իր սանուհի Գրետիսենը տասնընթեքը տարեկան աղջիկ մը, բարի Մարթան և զիս: Որպէս եղբորորդի և որբ, անոր օգնականը դարձայ իր փորձերու ժամանակ:

Պէտք է խոստովանիլ, որ ես մեծ հաճոյքով կ'ղբաղուէի երկրաբանական գիտութիւններով: Երակներուս մէջ կը հոսէր հանքաբանի արիւնը, և ինձի սիրելի էր քարերու ընկերակցութիւնը:

Մէկ խօսքով, կարելի էր երջանիկ ապրիլ Արքայական փողոցի այդ տնակին մէջ, հակառակ անոր տիրոջ խիստ և անհամբեր բնաւորութեան, որովհետև հետս թէև քիչ մը կոպիտ կը վարուէր, բայց և այնպէս զիս շատ կը սիրէր: Իսկապէս այդ մարդը ծագասել՝ բառը չէր գիտեր և կ'շտապէր նոյնիսկ բնութենէն ալ առաջ անցնիլ: Անգամ մը Սպրիլին անիկա իր հիւրասենեակի յախճապակիէ ծաղկամաններու մէջ յափորուկի և պատուտակի ծիլեր տնկեր էր, և ամեն առտու տերեւներո կը քաշէր անոնց աճումը արագացնելու համար:

Այդպիսի ինքնաթիպ մարդու մը հետ գործ ունենալու համար հնազանդելէ զատ ուրիշ միջոց չկար: Այդ պատճառով շտապեցի անոր առանձնասենեակը:

## Բ

Կատարեալ թանգարան էր այդ առանձնասենեակը: Այնտեղ կը գտնուէին բոլոր նմուշները հանքային թագաւորութեան, համապատասխան պիտակներով և կատարեալ կարգով դասաւորուած, համաձայն հանքային տեսակներու:

Ես հրաշալի ծանօթ էի հանքաբանութեան այդ նմուշներուն: Յաճախ, փոխանակ ընկերներուս հետ ժամանակը խաղով վատնելու, հաճոյքով կը մաքրէի այդ ուրուաքարերը, ածխաքարերը, փայտաքարերը, քարածուխներու և ռուճերու փոշին: Իսկ կուպրը, ասփալդը, զանազան աղերը — ինչպիսի՞ խնամքով պէտք էր անոնց պահել և պաշտպանել ամենափոքր փոշիէն: Իսկ մետաղները, սկսած երկաթէն մինչեւ ոսկին, որոնց յարսբերական արժէքը կը չքանար գիտական տեսակներու բացարձակ հաւասարութեան առջև: Հապա բոլոր այդ քարերը, որոնք բաւական էին Արքայական փողոցի տնակը կըրկին կառուցանելու, նոյնիսկ սենեակ մըն ալ աւելցնելով, որուն մէջ կրնայի այնքան լաւ կերպով տեղաւորուել ես:

Բայց, մտնելով առանձնասենեակը, բոլորովին ալ չէի մտածեր այդ հրաշալիքներու մասին. միաքս միայն հօրեղբորմովս զբաղած էր: Անիկմ/ թաղուած էր իր մեծ գերմանական թաւշապատ բազկաթոռին մէջ, մէկ ձեռքով գիրք մըն էր բռնած և խորունկ հիացումով կը դիտէր զայն:

— Ի՞նչ գիրք, ի՞նչ գիրք,— բացագանչեց անիկա:

Այդ բացագանչու թիւնը յիշեցուց ինծի, որ բրօքէսէօր Լիդենբրոկը սիրահար մըն էր հին գիրքերու, բայց հին գիրքը արժէք ունէր անոր աչքին այն ժամանակ, երբ խիստ հազուագիւտ էր և անընթեռնելի:

— Ահա՛,— ըսաւ անիկա,— միթէ՞ չես տեսներ: Չէ՞ որ աս անգնահատելի գանձ մըն է, որուն ես պատահեցայ այս առտու հրեայ Հեվելիուսի կրպակին մէջ:

— Սքանչելի է,— պատասխանեցի ես, շինծու ոգեւորութեամբ:

Եւ իսկապէս, ի՞նչ հարկ կար այդքան ազմուկ բարձրացնել հին, դեղնած, խոնացած, կոպիտ կաշեկազմ հատորի մը համար: Սակայն բրօքէսէօրի հիացական բացագանչութիւնները չէին վերջանար:

— Նայէ՛,— կ'ըսէր ան, ինքնիրեն հարց տալով ու պատասխանելով,— գեղեցիկ չէ՞ միթէ: Այո՛, պարզապէս հրաշալի է: Ինչպէ՛ս կազմ: Որքա՛ն դիւրութեամբ կը լացուի: Ինչպէ՛ս լաւ կը փակուի: Թերթերը որքա՛ն լաւ կը հանդէին իրարու վրայ. ոչ մէկ տեղ իրարմէ չեն բամուռի: Եօթը դար է անցեր, բայց ոչ մէկ ճեղքուածք չերևիր:

Այս խօսքերուն հետ հօրեղբայրս յաջորդաբար կը բանար և կը փակէր հին գիրքը: Ինծի կը մնար միայն հարցնել գրքի բովանդակութեանը մասին, թէ և այդ այնքան ալ չէր հետաքրքրեր զիս:

— Իսկ ի՞նչ է վերնագիրը այս հրաշալի գիրքին,— հարցուցի մեծ անհամբերութիւն ցոյց տալով:

— Այս երկը,— պատասխանեց հօրեղբայրս ոգեւորուած,— կը կոչուի «Հէյմս-կրինգլա», որու հեղինակը ժ. Բ. Ղարու հռչակաւոր Իսլանտացի գրող Սնօրէ Թուրլէսսնն է: Ասիկա Իսլանտայի տիրող Նորվէգիանի իշխաններու տարեգրութիւնն է:

— Միթէ՞,— բացագանչեցի ես, որքան կարելի է ուրախ ձեւանալով,— և անկասկած ատիկա դերմաներէն թարգմանութիւնն է:

— Դու ալ բան ըսիր,— առարկեց Բրօքէսէօրը աշխուժօրէն, — թարգմանութիւն. ի՞նչ ընեմ քու թարգմանութիւնդ: Ասիկա Իսլանտական լեզուով բնագիրն է, այդ հիանալի, հարուստ և միանգամայն պարզ բարբառով, որ հնարաւորութիւն կուտայ կազմելու քերականական տարբեր ձեւեր և բառեր:

— Ինչպէս և գերմանական լեզուն,— աւելցուցի ես իսկոյն:

— Այո՞, պատասխանեց հօրեղբայրս, ուսերը թոթռելով, մի-  
այն այն տարբերութեամբ, որ իսլանտական լեզուն յունարէնի նման  
ունի երեք սեռ և յատուկ անունները կը խոնարհուին լատինարէնի  
պէս:

— Ա՛հ, բացառանչեցի ես, յաղթահարելով անտարբերութիւնս,  
— Ի՛նչ գեղեցիկ են տպուած գիրքի տառերը:

— Տառերը, ո՞ր տառերու մասին կը խօսիս, խեղճ Ա.քսէլ. կը  
կարծես թէ այս գիրքը տպագրուած է: Խելօ՞ք, սա ձեռագիր մըն  
է. ունական ձեռագիր...

— Ռուսական:

— Այո՞. դու թերեւս կը հարցնես այդ լատի բացատրութի՞ւնը:

— Պէտք չունիմ անոր, պատասխանեցի վիրաւորուած մարդու  
չնշտով:

Բայց հօրեղբայրս աւելի՛ եռանդով շարունակեց սորվեցնել ինձի,  
հակառակ իմ կամքիս, այնպիսի բաներ, որոնց գիտնալ երբեք չէի  
ցանկար:

— Ռուսները, շարունակեց ան, գրաւոր նշաններ էին, որոնք  
ժամանակ մը կը գործածուէին Իսլանտայի մէջ, և ըստ աւանդութեան,  
անոնց հնարեր է ինքը՝ Օղինը: Բայց նայիր հէ՛յ, և հիւսցեր, ան-  
աստուած, այս նշաններով, որոնք աստուածներու երեւակայութեան  
արդիւնք են:

Պատասխանի փոխարէն ես կը պատրաստուէի ծունկի դալ, պա-  
տասխան մը որ հաճելի կ'ըլլայ և՛ աստուածներուն, և՛ արքաներուն,  
երբ գիպուած մը մեր խօսակցութեան ընթացքը փոխեց: Յանկարծ  
գիրքէն դուրս թուաւ և գետին ինկաւ աղտոտ մագաղաթ մը:

Հօրեղբայրս հասկնալի ագահութեամբ յարձակեցաւ այդ անպէտք  
բանին վրայ: Հին փաստաթուղթ մը, որ թերեւս անյիշատակի ժա-  
մանակներէն ինկած է եղեր այդ հնադարեան գիրքին մէջ, չէր կա-  
րող մեծ արժէք չունենալ անոր համար:

— Ի՛նչ բան է աս, բացառանչեց հօրեղբայրս և զգուշութեամբ  
սեղանին վրայ բացաւ հինգ մատնաչափ երկարութեամբ և երեք մատ-  
նաչափ լայնութեամբ մագաղաթի այդ կտորը, որուն վրայ իսկմըզ-  
ւած էին անհասկնալի, ծուռումուռ նշաններ:

Ես այստեղ կուտամ այդ տարօրինակ նշաններու իսկական պատ-  
կերը: Այդ անհրաժեշտ է, որովհետեւ անոնք զրգեցին բրօֆէսէօր Լի-  
դենպրոկը և անոր եղբորդին ձեռնարկել XIX դարու շատ տարօրի-  
նակ ճամբորդութեան:

Ճ ԱԽՐԿ	ԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿ
ԿՅԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ
ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ
ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ
ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ
ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ
ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ	ԿԿԿԿԿԿԿԿ

Բրոֆէսէօրը քանի մը ըրաւ զիտեց այդ նշանները, ապա ակնոցները վերցնելով, ըսաւ.

— Ռուսական զիրեր են ասոնք. այս նշանները բոլորովին նման են Մնորէ Թուրքիստանի ձեռագրի նշաններուն: Բայց... ինչ կը նշանակեն ասոնք...

Որովհետեւ ինծի կը թուէր, թէ ռուսական զիրերը դիտնականներու յօրինածն էին անգէտ մարդիկը խաբելու համար, ուրեմն ես չցաւեցայ, տեսնելով, որ հօրեղբայրս բան չէր հասկնար ատոնցմէ: Ամենայնգէպս անոր մատներու արագ շարժումէն այդպէս եզրակացուցի:

— Բայց և այնպէս ասիկա հին խառնուրդն է, — կ'ըսէր ինքնիրեն:

Բրոֆէսէօր Լիդենպրոկը, ի հարկէ, պէտք է գիտնար այդ բանը. պարապ տեղը չէր, որ լեզուագէտի համբաւ ունէր: Թէեւ անիկա երկրագուննախ վրայ գործածուող երկու հազար լեզուներով և չորս հազար բարբառներով սահուն չէր խօսեր, բայց և այնպէս անոնց մեծ մասին ծանօթ էր:

Այսպիսի զժուարութիւններու առջեւ անիկա կը պատրաստուէր բռնկիլ իր սովորական բարկութեամբ և ես կ'սպասէի շատ բուռն տեսարանի, երբ բուրներիկի վրայ դրուած փոքրիկ ժամացոյցը ժամը երկուքը զարկաւ և Մարթան դուռը բանալով ըսաւ.

— Կերակուրը սեղանին վրայ է:

— Ստանան տանի քու կերակուրդ, — գոռաց հօրեղբայրս, — պատրաստոյն ալ, ուսողներն ալ:

Մարթան փախաւ. ես հետեւեցայ անոր և չեմ գիտեր ինչպէս եղաւ, որ նստայ ճաշի, սովորական տեղս: Քիչ մը սպասեցի. բրոֆէսէօրը չեկաւ: Որքան կը յիշեմ, առաջին անգամն էր, որ ճաշէն կը բացակայէր: Եւ սակայն ինչ հրաշալի ճաշ էր: Ստեպանով ապուր, խոզապուխտով ձուաղեղձով թրթնջուկի աղցան, տապակած միս՝ սալորի թացանով, իսկ որպէս անուշեղէն՝ շաքարաբլիթ. այդ բոլորի հետ ըսքանչիկի Մողիլեան գինի:

Այդ բոլորը հօրեղբայրս արհամարհեց հին թուղթի կտորի մը հա-

մար: Իսկապէս, իրրեւ անձնուէր եղբօրորդի, ես պարտք հա-  
մարեցի ուտել թէ իմ և թէ անոր փոխարէն, և այդ բանը կատարե-  
ցի բարեխղճօրէն:

— Կեանքիս մէջ այդպէս բան չեմ տեսեր,— ըսաւ Մարթան:—  
Պ. Լիդենպրոկը ճաշի չի գա՞յ. տեսնուած բա՞ն է:

— Իսկապէս անհաւատալի է:  
— Ասիկա վատ նշան է,— շարունակեց պառաւը, գլուխը շար-  
ժելով:

Իմ կարծիքով այդ բոլորէն վերջը սոսկալի տեսարան մը պիտի  
ըլլար, երբ հօրեղբայրս իր բաժին կերակուրը կերուած գտնէր:

Վերջին կտորը կ'ուտէի, երբ ահեղ ձայն մը զիս բաժնեց անուշե-  
ղէնի վայելումէն: Մէկ ոստիւնով ցատկեցի հօրեղբօրս առանձնա-  
սենեակը:

## Գ.

— Շատ պարզ է որ ունական զիրեր են ասոնք,— ըսաւ բրօնէսէօրը  
յօնքերը կիտելով:— Բայց այստեղ գաղտնիք մը կայ և ես այդ գաղտ-  
նիքը կը բանամ, այլապէս...

Ձեռքի ուժեղ շարժումով մը աւարտեց իր միտքը:

— Նստի՛ր այստեղ,— ըսաւ սեղանը ցոյց տալով, և դրէ՛:

Ակնթարթի մը մէջ պատրաստ էի:

— Հիմա քեզի կը թելադրեմ մեր այբուբէնի իւրաքանչիւր տա-  
ռը, որը կը համապատասխանէ այս նշաններէն մէկուն: Տեսնենք ինչ  
դուրս կուգայ: Բայց ուշադիր եղիր, չսխալիս:

Անիկա սկսաւ թելադրել, իսկ ես ամբողջ ուշքս հաւաքեցի: Ար-  
տասանեց մէկ տառը միւսի ետեւէն և այդպէսով ստացանք հետեւե-  
եալ անհասկնալի բառերը.

N•rnlls	esreuel	seecjde
sgtssmf	uneeiet	niedrke
kt samn	atrates	saodrrn
emtnae	nuaect	rrilsa
Atvaar	•nscrc	ieaabis
ccdrmi	eentul	frantu
dt, iac	oseibo	kediee

Երբ այս աշխատանքը վերջացաւ, հօրեղբայրս իսկոյն վերցուց  
գրածս թուղթը և երկար ժամանակ ուշադրութեամբ դիտեց:

— Այս ի՞նչ կը նշանակէ,— կը կրկնէր ան մեքենայօրէն:

Անկասկած որ ես չէի կարող պատասխանել անոր հարցումին:

Թէև ան ինծի բան մը հարցուցած չունէր արդէն, և կը շարունակէր խօսիլ ինքն իրեն:

— Ասիկայ մենք կ'անուանենք ծածկագրութիւն՝ «Կրիպտոգրամա», — ըսաւ ան, — իմաստը դիտակցարար ծածկուած է անկարգ կերպով իրարու խառնուած դիրքով, որոնց եթէ դասաւորենք համապատասխանօրէն, հասկնալի նախադասութիւն մը կ'ստացուի: Ո՞վ գիտէ, թերեւս այստեղ ծածկուած է գաղտնիք մը, կամ գաղտնիքի մը բանալին:

Իմ կարծիքովս այնտեղ ոչ մէկ գաղտնիք չկար, սակայն խոհեմութիւն համարեցի կարծիքս չյայտնել:

Բրօֆէսէօրը վերցուց գիրքն ու մագաղաթը և սկսաւ իրարու հետ համեմատել:

— Չեռագրերը միևնոյն ձեւքով չեն գրուած,— ըսաւ ան,— ծածկագրերը գիրքէն յետոյ են գրուած, առաջին հայեացքով կը անսնեմ ասոր անհերքելի փաստը՝ առաջին տառը կրկնակի M է, որը գոյութիւն չունի Թուրլիսոնի գրքին մէջ, որովհետեւ այդ տասը իսլանտական այբուբենին վրայ աւելցուած է XIV դարուն: Ուրեմն առնուածն երկու հարիւր տարուայ ժամանակաշրջան կայ ձեռագրին և փաստաթուղթին մէջ:

Այդ դատողութիւնը բաւական տրամաբանական երեւաց ինծի:

— Ատկէ եւ կ'եզրակացնեմ,— շարունակեց հօրեղբայրս,— որ խորհրդաւոր նշանները կազմեր է գիրքի տէրերէն մէկն ու մէկը: Բայց ո՞վ կրնայ ըլլալ, սափանան տանի, այդ տէրը: Արդեօք անունը չէ՞ որած ձեռագրին մէջ ունէ տեղ:

Հօրեղբայրս ակնոցները բարձրացուց ճակատին, վերցուց ուժեղ խոշորացոյց մը և ուշադրութեամբ դիտեց գիրքի առաջին էջերը: Երկրորդ էջի հակառակ կողմը բիծ մը գտաւ, որ մելանի բիծի կը նմանէր, սակայն մօտիկէն դիտելով, որոշ կ'երեւային կէս շնջուած նշաններ:

Հօրեղբայրս հասկցաւ այդ բիծի կարեւորութիւնը և սկսաւ մեծ ուշադրութեամբ դիտել խոշորացոյցի օգնութեամբ: Վերջապէս երեւան եկան հետեւեալ ռունական տառերը և առանց դժուարութեան կարողացաւ կարդալ:

ՂԱԿ ԿՂԿՆԿԿԿԿ

— Արնէ Սահնուսեմ,— բացգանչեց յաղթական,— բայց աս անուն մըն է և ան ալ Իսլանտական անուն, XVI դարու գիտնականի մը, հռչակաւոր ալքիմիկոսի մը անունն է:

Հօրեղբորս նայեցայ Թեոսի մը հիացումով:

— Այդ ալքիմիկոսները, — շարունակեց ան, — Ավիցէնը, Բեկոնը, Լիււլը, Պարացէլսը իրենց ժամանակի միակ իսկական գիտնականներն էին: Անոնք այնպիսի յայտնութիւններ ըրեր են, որոնք կրնան մեզի զարմանք պատճառել: Չի՞ կրնար պատահիլ, որ Սակնուսսեմը այս խորհրդաւոր ծածկագրերու տակ ուէ զարմանալի յայտնութիւն կամ գիւտ պահած ըլլայ: Այդպէ՛ս պէտք է ըլլայ, և այդպէ՛ս ալ է:

Այս ենթադրութիւնը բրոֆէսէօրի երեւակայութիւնը բոցալուսեց:

— Շատ հաւանական է, — համարձակեցայ պատասխանել, — բայց ի՞նչ շահ ունէր այդ գիտնականը այդպիսի հրաշալի գիւտ մը գաղտնի պահելու:

— Ի՞նչ շահ, ի՞նչ շահ, ես ի՞նչ գիտնամ: Գալիլէն նոյն ձեւով չվարուեցա՞ւ միթէ Սատուրնի հետ: Ամենայն դէպս դեռ կը տեսնենք, այս վաւերագրի գաղտնիքը ես կը պարզեմ, ո՛չ կ'ուտեմ, ո՛չ կը քրնանամ մինչեւ չպարզեմ:

«Ա՛հ, — մտածեցի ես:

— Դուն ալ նոյնպէս, — Ա.Փսէլ, — շարունակեց ան: «Սատանան տանի, մտածեցի ես, — ինչ լաւ ըրի երկու մարդու չափ ուտելով»:

— Նախ և առաջ, — ըսաւ հօրեղբայրս, — պէտք է պարզել այս ծածկագրի լեզուն, բան մը որ դժուար չէ:

Այդ խօսքերը լսելով, իսկոյն գլուխս բարձրացուցի: Հօրեղբայրը շարունակեց ինքնիրեն խօսիլ:

— Ատկէ դիւրին բան չի կայ: Այս վաւերաթուղթը կը պարունակէ 132 տառ, որոնց 79ը բաղաձայն են և 53 ձայնաւոր: Համարեայ նոյն համեմատութեամբ գոյութիւն ունի հարաւային լեզուներու մէջ. մինչդեռ հիւսիսային լեզուները անհամեմատ աւելի հարուստ են բաղաձայններով: Ուրեմն պարզ է, որ այստեղ գործ ունինք հարաւային լեզուներէն մէկուն հետ:

Այդ եզրակացութիւնները ճիշտ էին: Բայց ո՞րն էր այդ լեզուն:

— Այդ Սակնուսսեմը, — շարունակեց հօրեղբայրս, — գիտնական մարդ էր, ուրեմն, եթէ անիկա մայրենի լեզուով չէ գրեր, պէտք է գերադասէր այն լեզուն, որ կը գործածէին XVI դարու զարգացած մտքերը, այսինքն լատիներէնը: Եթէ ես կը սխալիմ, կարիլի է փորձել սպաններէնը, ֆրանսերէնը, իտալերէնը, յունարէնը և եբրայերէնը: Բայց XVI դարու գիտնականները ընդհանրապէս լատիներէն կը գրէին: Հետեւապէս, առանց կասկածի կրնամ ըսիլ, որ ասիկա լատիներէն է:

Ես աթոռէն վեր ցատկեցի: Լատինապէտի յիշողութիւնս կ'ըմբոստանար այն կարծիքին դէմ, թէ այդ տարօրինակ բառերու շարքը կարող էր պատկանիլ Վիրգիլիոսի քաղցր լեզուին:

Այո, լատիններէն, — շարունակեց հօրեղբայրս, բայց խառնուած լատիններէն:

«Թող այդպէս ըլլայ, — մտածեցի ես, — եթէ դու այդ գիրերը կարողանաս պարզել, ուրեմն խելացի մարդ ես, հօրեղբայր»:

— Լաւ քննենք, — ըսաւ, դրած թուղթս վերստին ձեռք առնելով: — Ահա շարք մը այդ 132 տառերէն, դրուած անկարգ դրութեամբ: Բառեր կան, որոնք միայն բաղաձայններէ են կաղմուած, ինչպէս, օրինակ, առաջինը «որոլլս». իսկ ուրիշ բառերու մէջ ընդհակառակը, ձայնաւորները գերակշիռ են. օրինակ՝ հինգերորդը «սքեյէ», կամ նախաւերջինը «օսեյօ»: Պարզ է, որ այս կարգը պատահական չէ. անիկա առաջացած է չափադիտօրէն, մեղի համար անյայտ յարաբերութեան մը օգնութեամբ, որը պայմանաւորեր է այդ տառերու յաջորդականութիւնը: Անկասկած, որ սկզբնական նախադասութիւնը զըրուած ըլլալու է կանոնաւոր կերպով, բայց յետոյ ուէ կերպով, ուէ կանոնով մը դարձեալ փոխուած ըլլալու է. ուրեմն պէ՛տք է յայտնաբերել: Անոր, որուն ձեռքին տակ կ'ըլլայ այս ծածկագրի բանալին, աշատ կրնայ կարգալ դայն: Աքսէ՛լ, կրնա՞ս գտնել այդ բանալին:

Այս հարցին ես բան մըն ալ չպատասխանեցի շատ յայտնի պատճառով: Հայեացքս ինկած էր պատէն կախուած սքանչելի նկարի մը վրայ՝ Գրետխինի նկարին: Հօրեղբորս սանուհին այդ ժամանակ կը գտնուէր Ալտօնիա, իր աղգակսնններէն մէկուն մօտ. անոր բացակայութիւնը զիս սաստիկ կը տխրեցնէր, — որովհետեւ հիմայ կրնամ խոստովանիլ. — բրօքէսէօրի դեղեցիկ սանուհին և եղբորորդին զիրար կը սիրէին ճշմարիտ համբերութեամբ և քնքշութեամբ: Մենք նըշանուած էինք առանց հօրեղբորս գիտութեան, որ այնքան տարուած ըլլալով երկրաբանութեամբ, այդպիսի զլացումներէ բան չէր հասկընար: Գրետխինը հրապուերիչ. խարտեաշ աղջիկ մըն էր, կապոյտ աչքերով, քիչ մը լուրջ բնաւորութեամբ, սակայն այդ չէր խանգարեր զիս աւելի շատ սիրելէ. ինչ կը վերաբերէր ինծի, ես պարզապէս կը պաշտէի դայն, եթէ իսկապէս այդ բառը զոյութիւն ունի հին գերմաներէնի մէջ: Սիրուն Գրետխինի պատկերը պահ մը իրական աշխարհէն զիս փոխադրեց ցնորքի և յուշերու աշխարհը:

Ես կրկին տեսայ աշխատանքի և զուարճութեան հաւատարիմ ընկերոջս. անիկա ամեն օր ինծի կ'օգնէր հօրեղբորս թանկագին քարերը կարգի բերելու և անոնց վրայ պիտակներ փակցունելու գործով: Օրիորդ Գրետխինը հանքաբանութեան մէջ աւելի ուժեղ էր. անիկա կը սիրէր խորասուզուիլ այդ գիտութեան ամենադժուար հարցերուն մէջ: Որքան հրաշալի ժամեր ենք անցուցեր միասին, և քանի՛ քանի անգամ ես նախանձեր եմ այդ անկենդան քարերուն, որոնց հպեր էին անոր քնքուշ ձեռքերը:

Ապա, հանդիստի ժամերուն մենք միասին դուրս կուգայինք և կը թափառէինք խիտ ծառուղիներուն մէջ և կ'այցելէինք հին ջրաղացը, որ այնքան գեղեցկօրէն կը պատկերանար լիճին ծայրը: Ծամբան մենք կը խօսակցէինք իրարու ձեռք բռնած, ես կը պատմէի զանազան բաներ, որոնք այնքան կը ծիծաղեցնէին զինք: Այդպէս մենք կը հանդիպէինք մինչեւ էլպայի դետափը, և բարի գիշեր ըսելով կարայներուն, որոնք կը լողային սպիտակ, խոշոր նունուֆարներուն մէջ, տուն կը վերադառնայինք շոգեհաւով:

Յուշերս ճիշտ հոտ էին հասեր, երբ հօրեղբայրս բոունցքը սեղանին զարնելով, զիս խնայն իրականութեան վերադարձուց:

— Տեսէ՛ք, — ըսաւ ան: — Մէկ նախադասութեան տառերը խոսնելու համար առաջին միջոցը, կարծիքովս, բառերը հորիզոնական կարգով գրելու փոխարէն, ուղղահայեաց գրելն է:

«Ահա թէ ինչ».— մտածեցի ես:

— Պէտք է տեսնել թէ ինչ դուրս կուգայ ատկէ: Աքսէլ, ուէ նախադասութիւն մը գրէ այս թուղթին վրայ, բայց փոխանակ տառերը իրարու կողքի դնելու, զանոնք դասաւորէ յաջորդաբար՝ ուղղահայեաց շարքով, մէկ շարքին դնելով հինգ կամ վեց տառ:

Ես հասկցայ, թէ բանն ուր է և իսկոյն գրեցի վերէն վար.

ք	տ	ր	թ	դ	ե
ե	կ	ե	ա	ի	տ
ղ	ը	մ	ն	ն	խ
շ	ս	ի	կ	դ	ե
ա	ի	մ	ա	ր	ն

Լաւ, — ըսաւ բրօնիէսէօրը առանց գրածս կարդալու, — այժմ այդ առոնքը գրէ հորիզոնական ուղղութեամբ:

Ես հնազանդեցայ, և ստացայ, հետեւեալ նախադասութիւնը.

քարթզե եկեաիտ զըմ,ննխ շսիկԳե Խիմարն

— Շուտ լաւ, — ըսաւ հօրեղբայրս, ձեռքէս թուղթը խլելով, — այս արդէն նման է մեր հին փաստաթուղթին, ձայնաւորներն ու բաղաձայնները դասաւորուած են միևնոյն անկարգութեամբ, նոյնիսկ գրչխադիր և ստորակէտ կայ բառերուն մէջ, ինչպէս Սակնուսսեմի մագաղաթին վրայ:

Ստիպուած էի ընդունիլ, որ այդ գիտողութիւնները շատ սրամիտ էին:

— Իսկ այժմ. — շարունակեց հօրեղբայրս, — գրածդ նախադասութիւնը կարդալու համար, որուն իմաստը ինձի անծանօթ է, բաւական է, որ ես յաջորդաբար վերցնեմ յերաքանչիւր բառի նախ առաջին տառը, յետոյ երկրորդը, ապա երրորդը և այդպէս շարունակաբար:

Եւ հօրեղբայրս, թէ ինքը զարմանալով և թէ զիս զարմացնելով, կարդաց.

«Քեզ շատ կը սիրեմ, իմ թանկագին Գրետխենն»:

— Էհէ՛, ըսաւ բրօֆէսէօրը:

Այո՛, առանց մտածելու, յիմար սիրահարի պէս, գրեթէ այդ մասնող նախադասութիւնը:

— Ահ, ուրեմն դուն կը սիրես Գրետխենը, — շարունակեց հօրեղբայրս, իսկական խնամակալի ձայնով:

— Այո... ոչ... — կմկմացի ես:

— Ախ, այդպէ՛ս ուրեմն, դուն Գրետխենը կը սիրես, — մեքենայօրէն կրկնեց ան: — Է՛, լաւ, հիմայ իմ եղանակս գործադրենք մեր վաւերաթուղթին վրայ:

Հօրեղբայրս կրկին խորասուզուեցաւ մտածումներու մէջ, որոնք կլանեց ինչ զինքը, այնպէս որ արդէն մոռցաւ անզգոյշ խօսքերս: Ես կ'ըսեմ «անզգոյշ», որովհետեւ գիտնականի գլուխը անընդունակ է սրտի գործերը հասկնալ, բայց բարեբախտաբար, վաւերաթուղթով զբաղուելը անոր մոռցնել տալ ամեն բան:

Երբ բրօֆէսէօրը կը պատրաստուէր կատարել իր վճռական փորձը, անոր աչքերը այդ պահուն կարծես շանթեր կ'արձակէին ակնոցներու մէջէն: Մատները կը դողային, երբ վերցուց մաքաղաթը. լուրջ կերպով յուզուած էր: Վերջապէս շատ ուժով հալաց և սկսաւ հանդիսաւոր ձայնով թելադրել հետեւեալ տողերը, սկիզբը իւրաքանչիւր բառի առաջին տառը, ապա երկրորդը.

Mmessunka Senr A. icesf do K. segnittamurtin ecertserrette, rotaissadua, ednee sedsadne lacartniilu lsirartarc Sarbmutabiledmek meretarsil lucoe lsleffjen Sn I

Պէտք է անկեղծօրէն խոստովանիմ, որ երբ վերջացուցի թելադրութիւնը, բաւական յուզուած էի: Հատիկ-հատիկ արտասանուած այդ տառերը ոչ մէկ իմաստ չէին տար, մինչդեռ կ'սպասէի, որ բրօֆէսէօրը նախադասութիւն մը արտասանէ հրաշալի լատիներէնով:

Իայց ո՞վ կրնար սպասել. բռունցքի ուժեղ հարուած մը ցնցեց սեղանը: Մեջանը թափեցաւ, գրիչը ձեռքէս թռաւ:

— Երբեք իմ սպասածս չէ, — բացազանչեց հօրեղբայրս: — Ոչ մէկ իմաստ չիկայ ասոր մէջ:

Ապա ուռմբի մը պէս անցաւ առանձնասենյեակէն, սանդուխէն իջաւ հեղեղի պէս, և փողոց վազեց կատաղի արագութեամբ:

— Գնա՞ց,— բացականչեց Մարթան, լսելով դրան վակուելու ձայնը, որմէ ամբողջ տունը դղրդաց:

— Այո,— պատասխանեցի ես,— բոլորովին գնաց:

— Ի՞նչ կ'ըսէք, իսկ ճաշը,— հարցուց պառաւ աղախինը:

— Չպիտի ճաշէ:

— Իսկ ընթրի՞ք:

— Չպիտի ընթրէ:

— Ինչպէ՛ս,— ըսաւ Մարթան, ձեռքերը իրարու կցելով:

— Այո՛, սիրելի Մարթա. անիկա այլևս չպէտք է ուտէ, և առհասարակ մեր տունը ոչ ոք չպիտի ուտէ: Հօրեղբայրս մեզ բոլորիս կ'ստիպէ ձո՛մ պահել այնքան ժամանակ, մինչեւ որ կարողանայ կարդալ հին խզբզանք մը, որ բացարձակապէս անընթեռնելի է:

— Յիսուս-Քրիստոս. ուրեմն մենք պէտք է սովամահ ըլլանք:

Ես չհամարձակեցայ խոստովանիլ, որ այդ անխուսափելի էր, քանի որ հօրեղբօրս նման յամառ մարդու հետ գործ ունէինք:

Ե՛րբ աղախինը չափազանց վրդովուած, ախ ու վախ ընելով խոհանոց վերադարձաւ:

Երբ մինակ մնացի, մտածեցի երթալ Գրեթխենին քով և ամեն բան յայտնել անոր. բայց ինչպէ՞ս հեռանալ տունէն: Բրօֆէսէօրը կրնար ամեն բոպէ վերադառնալ: Իսկ եթէ զիս կանչէ՞ր: Իսկ եթէ ցանկար վերսկսիլ այդ հանելուկը, պարզել կարենալու իր աշխատանքը, որ նոյնիսկ պատմագէտ խտիպը չէր կրնար լուծել: Ի՞նչ կը պատահէր, եթէ ես չպատասխանէի անոր կանչին:

Խոհեմութիւնը տունը մնալն էր: Դեռ նոր Պըզանսոնէն հանքարան մը մեզի ուղարկեր էր կայծքարի տեսակներէն քարերու հաւաքածոյ մը, որոնց պէտք էր դասակարգել: Գործի անցայ, կը զատէի պիտակները փակցնելով, կը դասաւորէի ապակիէ արկղին մէջ այդ անամէջ քարերը, որոնց մէջ փոքրիկ բիւրեղներ կը շարժէին:

Բայց այդ աշխատանքը զիս չէր զբաղեցնէր. հին վաւերաթուղթը մտքէս չէր ելլեր: Գլուխս կ'այրէր և մեծ անհանգստութիւն մը տիրեր էր ինծի: Աղէտի մը նախազգացումը ունէի:

Ժամ մը յետոյ քարերս արդէն դասաւորուած էին: Անկէ վերջ ես ինկայ մեծ բաղկաթոսին մէջ, վառեցի ծխամորճս,— երկար ծուռ, ծխամորճ մը, որու քանդակուած գլուխը ունէր յաւերժահարսի ձեւ. ես կը դիտէի թէ ինչպէս յաւերժահարսը հետզհետէ ածխանալով, իսկական նեղրուհի կը դառնար: Երբեմն-երբեմն ես ականջ կը գնէի, թէ արդեօք սանդուխին վրայ ոտնաձայն չի՞ լսուիր: Բայց ոչ: Ո՞ւր կըր-

նար ըլլալ հօրեղբայրս այդ միջոցին: Ես կը պատկերացնէի զինքը, վաղելու վրայ Ալտոնայի պողոտայի գեղեցիկ ծառերու տակէն, կատաղի շարժումներ ընելով, ամբողջ ուժով ձեռնափայտը խոտերուն զտրնելով, ուղտափուշերը փրցնելով և արագիլներուն հանգիստը խոտովելով:

Ինչպէ՞ս կը վերագառնար արդեօք, յաղթակա՞ն, թէ յուսահատ: Կը յաջողէ՞ր թափանցել գաղտնիքին: Այդպէս հարցեր տալով ես ինձի, մեքենայօրէն վերցուցի թուղթի այն էջը, որուն վրայ գրեր էի անհասկնալի տառերու շարքը: Ես ինձի կ'ըսէի,— Ի՞նչ կը նշանակէ աս:

Ջանացի տառերը դասաւորել այնպէս, որ բառեր կազմուին, բայց բան մը զուրս չեկաւ: Ինչ ձեւով որ զանոնք կը միացնէի՝ երկուքով, երեքով, հինգով կամ վեցով, բան մը չէի ստանար: Բայց և այնպէս տասնըչորսերորդ, տասնըհինգերորդ և տասնըվեցերորդ տառերէն կը ստացուէր անգլերէն «ise» բառը, իսկ 84րդ, 85րդ և 86րդ տառերէն «ix» բառը. վերջապէս վաւերաթուղթին մէջտեղը, տասնըերեքերորդ տողին վրայ նկատեցի լատիներէն «rotas», «mutabile», «ira», «nec», «aira» բառերը:


«Սատանան տանի, — մտածեցի, — այս վերջին բառերը կարծես իրաւունք կուտան հօրեղբօր»՝ վաւերաթուղթի լեզուի մասին այդպիսի կարծիք ունենալու: Եւ նոյնիսկ չորրորդ տողով նկատեցի նաեւ «lucos» բառը, որ կը նշանակէ «սրբազան անտառ»: Ճիշդ է որ երրորդ տողին վրայ կը կարդացուի «tabiled» բառը, որ եբրայերէն է. իսկ վերջին տողով «mer», «arc», «mèr» բառերը որոնք մաքուր ֆրանսերէն են:

Կարելի էր խելագարուիլ: Չորս տարբեր լեզուներ այս անմխոնախաղատութեան մէջ: Ի՞նչ յարաբերութիւն կրնար գոյութիւն ունենալ աստուոյց, պարոն, բարկութիւն, դաժան, սուրբ անտառ, փոփոխական, մայր, աղիզ, ծով» բառերուն մէջ: Միայն առաջինն ու վերջինը կարելի էր իրարու հետ կապել. ոչ մէկ զարմանալի բան չկար, որ Իսլանտական լեզուով գրուած վաւերաթուղթին մէջ խօսք ըլլար Սատուցեալ ծովու մասին: Սակայն ծածկագրին մնացեալ մասը հասկնալը բոլորովին ուրիշ բան էր:

Ես կը պայքարէի անլուծելի դժուարութեան դէմ. ուղեղս կը տաքնար, աչքերս կը յօգնէին թուղթին նայելէն. կը թուէր, թէ այդ 132 տառերը պար կուղային շուրջս:

Տեսակ մը զառանցանքի մէջն էի ինկեր, կը խեղդուէի, օդը քիչ կը թուէր ինձի: Մեքենայարար սկսայ ինքզինքս հովահարել թուղթի թերթիկով, այդպիսով թերթիկի երկու կրեսները յաջորդաբար աչքերուս առջեւ կուգային:

Որքա՞ն մեծ եղաւ զարմանքս, երբ այդ արագ շրջադարձի մի-



Չոցին ինծի թուեցաւ թէ շատ պարզ կերպով լատիներէն բառեր կարգացի, ինչպէս օրինակ՝ «craterem», «terrestrem»:

Յանկարծ լոյս մը ճառագայթեց մտքիս մէջ. այդ քանի մը նշաններով տեսայ ճշմարտութիւնը. գտեր էի ծածկագրի գաղտնիքը: Վաւերաթուղթը հասկնալու համար բոլորովին ալ կարիք չկար թերթիկը կարգալ ծուռ կողմէն: Ոչ, զայն կարելի էր կարգալ այնպէս, ինչպէս թելադրուած էր ինծի: Բրօֆէսէօրի բոլոր օրամիտ ենթադրութիւնները իրականութիւն կը դառնային. անիկա իրաւացի էր թէ՛ տառերու դասաւորման, և թէ՛ վաւերաթուղթի լեզուի վերաբերմամբ: Այդ լատիներէն նախադասութիւնը ծայրէ ծայր կարգալու համար կը պակսէր «չնչին» բան մը և պատահմունքը ինծի տուաւ այդ «չնչին» բանը:

Հասկնալի է թէ ինչքան յուզուած էի: Աչքերս կը մթնէին, ոչինչ չէի կրնար տեսնել: Թերթիկը դրի սեղանին վրայ: Բաւական էր որ հայեացք մը ձգէի անոր վրայ, և գաղտնիքը կ'իմանայի:

Վերջապէս յուզումս կարողացայ զսպել: Զիջերս հանդստացնելու համար երկու անգամ դարձայ սենեակը, և կրկին հանգչեցայ բազկաթոռին մէջ:

— Հիմա կարդանք, — բացագանչեցի. լիաթոք օդ շնչելով: Ծռեցայ սեղանին վրայ, մտտս յաջորդարար դրի իւրաքանչիւր տառին վրայ և առանց կանգ առնելու, առանց ակնթարթ մը տատանուելու, բարձր ձայնով կարգացի ամբողջ նախադասութիւնը:

Իայց ի՞նչ սպշուութիւն, ի՞նչ օտարապի տիրեց ինծի: Սկիզբը սեղ հարուած մը ստացող մարդու պէս էի: Ի՞նչ. միթէ՞ այն որ կարգացի հիմա, իսկապէս կատարուե՞ր է: Արդեօք եղեր է մարդ մը այդքան յանդուգն, որ համարձակեր էր թափանցել...

— Ա՛հ, — բացագանչեցի սեղէս վեր ցատկելով, — ո՛չ, ո՞չ. հօրեղբորս պէտք չէ այս բանը գիտնայ: Ապա թէ ոչ անիկա անպայման կը ձեռնարկէ նման ուղեւորութեան մը: Ինքն ալ կը ցանկայ ընել այդ փորձը: Ոչ մէկ արգելք չի կրնար կասեցնել այդ խիզախ երկրաբանը: Անիկա անպատճառ կը մեկնի. հակառակ ամեն բանի: Եւ զիս ալ հետը կը տանի, ու մենք այլևս չենք վերադառնար. երբ՛ք, երբե՛ք:

Ես աննկարագրելի յուզումի մէջ էի:

— Ո՛չ, ո՛չ, այդ չըլլար, — ըսի ես վճռականօրէն, — և քանի որ ես կրնամ արգելք հանդիսանալ, որ այդպէս նպատակ մը չծագի հօրեղբորս գլխուն մէջ. ես կ'ընեմ այդպէս: Եթէ ան ձեռքին մէջ ունենայ այս վաւերաթուղթը, կարող է պատահմամբ դաննել բանալին: Պէտք է ոչնչացնել ուրեմն:

Վառարանին մէջ դեռ կրակ կար. ես վերցուցի ոչ միայն թեր-

Թիկը այլ նաև Ստկնուսսեմի մագաղաթը, դողացող ձեռքով կը պատ-  
րաստուէի, թէ մէկը և թէ միւսը նետել կրակին մէջ ու այգպիսով  
ոչնչացնել այդ վտանգաւոր գաղտնիքը:

Այդ բոպէին սենեակին դուռը բացուեցաւ և հօրեղբայրս ներս  
մտաւ:

## Ե

Հողիւ ժամանակ ունեցայ կրկին սեղանին վրայ դնելու չարա-  
բաստիկ վաւերաթուղթը:

Բրօֆէսէօր Լիդենպրոկը խօրապէս մտատանջ կ'երեւար: Զինքը  
կլանող միտքը ոչ մէկ բոպէ հանգիստ չէր տար անոր: Զբօսանքի ժա-  
մանակ, ինչպէս կ'երեւար, քններ ու վերլուծեր էր խնդիրը, լարե-  
լով մտքի ամբողջ կարողութիւնը և վերադարձեր էր փորձելու հա-  
մար նոր միջոց մը:

Իսկապէս նստաւ բաղկաթուին և գրիչը ձեռքին սկսաւ գրել այն-  
պիսի օրինակներ, որոնք գրահաշուի կը նմանէին:

Նայուածքովս կը հետեւէի անոր դողդղացող ձեռքերուն՝ ոչ մէկ  
չարժումը աչքէս չէր վրիպեր: Արդեօք ան կրնա՞ր անսպասելի հե-  
տեւանքի հասնիլ: Կը դողայի, բայց բոլորովին ի դուր, քանի որ  
միակ ձիշտ լուծումը արդէն գտնուած էր, ուրեմն ուրիշ ամեն տեսակ  
հետադատութիւն պէտք է ապարդիւն ըլլար:

Երեք ժամ անընդհատ հօրեղբայրս զբաղուեցաւ առանց խօսելու,  
առանց գլուխը բարձրացնելու, ջնջելով, կրկին գրելով, դարձնալ գրե-  
լով, ուղղելով և հազար անգամ կրկին սկսելով:

Ես լաւ գիտէի, որ եթէ յաջողէր դասաւորել այդ տառերը բոլոր  
հնարաւոր դիրքերով, կ'ըստացուէր նախադասութիւնը: Բայց ես գի-  
տէի նաև, որ միայն քսան տառէն կ'ըստացուէր երկու քառիլիոն.  
չորս հարիւր երեսունը երկու երիլիոն, ինը հարիւր երկու երկիլիոն,  
ութը միլիոն վեց հարիւր քառասուն հազար չափեր: Իսկ այդ նախա-  
դասութեան մէջ կար հարիւր երեսունը երկու տառ և այդ հարիւր  
երեսունը երկու տարերը կարող էին աստաջացնել անհաշիւ չափեր.  
որոնք կը պարունակէին առնուազն հարիւր երեսունը երեք թուա-  
նշան, թիւ մը, որը հաշուել անհնար էր և նոյն իսկ անհնար էր պատ-  
կերացնել:

Սակայն ժամանակը կ'անցնէր. գիշերը վրայ հասաւ. փողոցի ող-  
մուկը դողրեցաւ. հօրեղբայրս գլուխը կախած կը շարունակէր զբաղ-  
ուիլ այդ խնդրով. բան չէր տեսներ, նոյնիսկ չնկատեց Մարթային,  
երբ ան դուռը կէս մը բացաւ: Բան մը չէր լսեր, նոյնիսկ այդ հա-  
ւատարիմ սոպատուհիին ձայնը, որ կը հարցնէր:

— Պարոնը պիտի ընթրէ՞ այս իրիկունս :

Մարթան ստիպուած էր հեռանալ առանց պատասխան ստանալու . ինչ կը վերաբերէր ինծի, ժամանակ մը դիմադրելէ յետոյ թաղուեցայ խոր քունի մէջ և քնացայ նստած տեղս դիւանի ծայրը , մինչ-դեռ հօրեղբայրս կը շարունակէր հաշուել ու ջնջել :

Երբ միւս առտու արթնցայ , անխոնջ հետախոյզը դեռ կ'աշխատէր : Անոր կարմրած աչքերը , գունատ դէմքը , ցրուած մազերը , շառագունած այտերը որոշակի կը վկայէին այն պայքարի մասին , որ ան մղեր էր անհնարինին հասնելու համար և թէ մտքի ինչպէ՞ս յոգնածութեան և ուղեղի լարուածութեան մէջ էին անցեր ժամերն անոր համար :

Իսկապէս ես խղճացի անոր : Թէպէտ և կարող էի մեղադրել զինքը , այնուամենայնիւ յուզում մը պաշարներ էր զիս : Խեղճ մարդը այն աստիճան տարուած էր իր միտքով , որ մոռցեր էր նոյնիսկ զայրանալ . անոր բարձր կենդանի ուժերը կեդրոնացեր էին կէտի մը վրայ , և որովհետեւ այդ ուժերը ելքի ճամբայ չէին գտնար իրենց սովորական հունով , ուրեմն կարելի էր վախնալ , որ անոնց լարումը կրնար պայթիլ ամեն րոպէ :

Ես կրնայի ձեռքի շարժումով մը , մէկ խօսքով ազատել զինքը այժ Երկաթէ օղակէն , որ կը սեղմէր անոր գանկը , բայց ես չըրիստիկա , հակառակ որ սիրտս բարի էր , ինչո՞ւ համար մնացի այդ դրութեան առջև : Ուղղակի հօրեղբօրս շահերուն համար :

— Ձմռան , կը կրկնէի ես ինծի , — ո՛չ , ես բան չեմ ըսեր : Զինքը լաւ կը ճանչնամ , անիկա անպայման պիտի ուզէ մեկնիլ . ոչ մէկ բան չի կրնար զինքը ետ կեցնել : Անիկա հրարդխային երեւակայութիւն ունի և իր կեանքը կը զոհէ կատարելու համար այն , ինչ որ ուրիշ երկրաբաններ չեն կրցեր : Կը լռեմ , կը պահեմ այն գաղտնիքը , որ դիպուածը բացաւ ինծի : Յայտնել անոր այդ գաղտնիքը , համազօր է զինքը սպաննելու : Թող ինքը գտնայ , և թէ կրնայ . ես չեմ ցանկար նրբելիցէ ինքզինքս մեղադրել , որ զինքը դէպի կորուստ մղեցի » :

Ընդունելով այս որոշումը , ձեռքերս խաչեցի ու սպասեցի : Բայց ես հաշուի չէի առներ դիպուած մը , որ պատահեցաւ քանի մը ժամ յետոյ :

Երբ Մարթան կը պատրաստուէր շուկայ երթալ , դուռը փակուած գտաւ , իսկ բանալին դրան վրայ չէր : Ո՞վ կրնար վերցուցած ըլլալ : Պարզ էր որ հօրեղբայրս էր վերցուցեր նախորդ օրը երեկոյեան , երբ զբօսանքէ վերադարձաւ :

Արդեօք դիտաւորեա՞լ ըրած էր այդ բանը , թէ պատահաբար : Խիթէ՞ ան կը ցանկա՞ր բռնորս սովի մատնել : Բայց այդ արդէն չա-

վազանց կ'ըլլար: Ինչպէ՛ս, ստիպել մեզ,— ինձի և Մարթան,— տանջողիլու այնպիսի բանի մը համար, որ մեզի երբեք չէր վերարբերեր: Բայց ամենայն դէպս կ'ստեղծուի չկար, որ այդպէս էր դրութիւնը: Ես յիշեցի նմանօրինակ դէպք մը: Իսկապէս, քանի մը տարի առաջ, երբ հօրեղբայրս կ'աշխատէր հանքարանական դասակարգութեան վրայ, անգամ մը 48ը ժամ առանց բան ուտելու անցուց և ամբողջ տունը հարկադրուեցաւ մասնակցիլ այդ գիտական ծոմապահութեան: Անկէ ես ստացայ ստամոքսի կծկումներ, բան մը, որ հասնիլ չէ շատ լաւ ակտիւ ռեժիմով երիտասարդի մը:

Եւ ահա մտածեցի, թէ այսօր նախաճաշ չպիտի ունենանք, ինչպէս նախորդ գիշեր չընթրեցինք: Բայց և այնպէս որոշեցի դիմանալ հերոսաբար և չզիջիլ ստամոքսի պահանջներուն: Մարթան խիստ վրդովուած էր ու վհատած: Զիս ամենէն աւելի կ'անհանգստացնէր տունէն դուրս գալու անկարելիութիւնը, և այդ շատ լաւ հասնիլու է:

Հօրեղբայրս կը շարունակէր աշխատիլ. անոր երեւակայութիւնը ամբողջովին կ'ընտելուէր դասաւորութիւններու խտէլական աշխարհով. կ'ապրէր այս աշխարհէն հեռու և իսկապէս երկրային կարիքներէն դուրս:

Կէսօրուայ ճօտ քաղցը սկսաւ լրջօրէն տանջել զիս: Մարթան անկեղծօրէն նախորդ օրը կերեր էր եղած պաշարը. տունը ուտելու բան չէր մնացած: Սակայն ես լաւ դիմացայ. ատիկա ինձի համար պատուի խնդիր էր դարձեր:

Ժամը երկուքը զարկաւ: Դրութիւնն արդէն ծիծաղելի, նոյնիսկ անհանդուրժելի կը դառնար: Ինձի թուաց, թէ կը չափազանցէի վաւերաթուղթի նշանակութիւնը, թէ հօրեղբայրս անոր բովանդակութեանը չէր հաւատար և կ'ընդունէր զայն իրրեւ պարզ խաբբայութիւն, իսկ ամենավատ պարագային՝ եթէ նոյնիսկ հօրեղբայրս կամենար այդպէս արկածախնդրութեան մը ձեռնարկել, կարելի էր զինքը բռնի ետ պահել, և վերջապէս, ինքը ի վերջոյ կրնար գտնել ծածկագրի բանալին, և այդ պարագային ես իզուր ծոմ պահած կ'ըլլայի:

Այս դատողութիւնները, որ նախորդ օրը վրդովմունքով կը վանէի ես ինձմէ, այժմ հրաշալի կը թուէին ինձի. նոյնիսկ այսքան երկար սպասումս ծիծաղելի էր. վերջապէս որոշեցի ամեն բան յայտնել:

Այդ նպատակով սպասեցի յարմար առիթի, որպէսզի մէկ անգամէն չըլլար, երբ յանկարծ բրօնիէսէօրը ոտքի ելաւ, գլխարկը հագաւ և պատրաստուեցաւ դուրս երթալ:

Ի՛նչ, տունէն հեռանալ, մեզ կրկին բանտարկելով, այդ երբեք:

— Հօրեղբա՛յր,— ըսի :

Կարծես չլսեց ինձի :

— Հօրեղբա՛յր Լիդենպրո՛կ,— կրկնեցի ձայնս բարձրացնելով :

— Ի՞նչ կայ,— հարցուց, քունէն յանկարծ արթնցած մարդու պէս :

— Իսկ բանալի՞ն :

— Ի՞նչ բանալի, դրա՞ն բանալին :

— Ո՛չ,— բացագանչեցի ես,— վաւերաթուղթի բանալին :

Բրօֆէսէօրը ինձի նայեցաւ ակնոցներուն վրայէն : Հաւանական է, արտակարգ բան մը նկատեց դէմքիս վրայ, որովհետեւ իսկոյն բռնեց ձեռքէս և առանց խօսելու հարցադիտան նայուածք մը ձգեց վրաս : Այդ հայեացքի իմաստը չափազանց պարզ էր :

Գլխովս տոյտ ըսի :

Ան գլուխը շարժեց այնքա՛ն խեղճ արտայայտութեամբ մը, որ կարծես խելագարի հետ գործ ունէր :

Գլխովս աւելի հաստատական շարժում մը ըրի :

Անոր աչքերը փայլեցան, ձեռքը սպառնական դարձաւ :

Այս համր խօսակցութիւնը ամենաանտարբեր մարդու հետաքրքրութիւնն իսկ կարող էր շարժել :

Եւ իսկապէս, ես համարձակութիւն չունէի խօսք մը իսկ արտասանելու, վախնալով, որ հօրեղբայրս ուրախութենէն իր գրկին մէջ զիս կը խեղդէ : Սակայն անհրաժեշտ էր պատասխանել :

— Այո, այդ բանալին. պատահմամբ...

— Ի՞նչ կ'ըսես.— բացագանչեց ան, աննկարագրելի յուզումով :

— Նայեցէ՛ք,— ըսի, տալով անոր այդ թերթիկը, որուն վրայ գրեր էի,— կարգացէ՛ք :

— Բայց ասիկա ոչ մէկ միտք չարտայայտեր,— ըսաւ թուղթը ուրեւելով :

— Ոչինչ, եթէ սկիզբէն կարդանք, բայց եթէ վերջէն սկսինք...

Դեռ խօսքս չէի վերջացուցած, երբ բրօֆէսէօրը ճիշ մը արծակեց — աւելին, իսկական մռնչիւն : Անոր միտքը յայտնութիւն մըն էր ըրեր : Բոլորովին կերպարանափոխուեր էր :

— Ա՛հ, սրամիտ Սակնուսսեմ,— բացականչեց ան : Դու ուրեմն նախադատութիւնը հակառակ էիր գրեր :

Ու խլելով թուղթի կտորը, պզտոր հայեացքով, դողացող ձայնով կարդաց ամբողջ վաւերաթուղթը, վերջին տառէն մինչև առաջինը :

Վաւերաթուղթի բովանդակութիւնը հետեւեալն էր .

«Jn Sneffels Joculis craterem kem delibat umbra Scartaris julii intra calendass descende, auidas viator, et terrestre centrum attinges. Kod feci.— Arne Saknussem.

Թարգմանելով՝ կ'ըստանանք հետեւեալը.

«Իջիր Մնեֆելիս Եոկուլ խառնարանը, որուն Սկարաարիսի ըստուերը կը շոյէ Յուլիսի ամսամուտէն առաջ, և դ՛ու, խիզախ ուղեւոր, կը հասնիս երկրի կեդրոնին: Ես կատարեցի այդ ճամբորդութիւնը:— Արնէ Սակնուսեմ»:

Երբ հորեղբայրս կարգաց վերջացուց, այնպիսի ոստիւն մը ըրաւ, կարծես պատահամբ Լէյլենեան ելեքտրական սրուակի էր դպած: Ան հիացմունք կը պատճառէր իր զուարթութեամբ, հաստատ համոզումով ու համարձակութեամբ: Կը քալէր ետ ու առաջ, գլուխը ձեռքերուն մէջ կ'առնէր, աթոռները տեղէ-տեղ շարժելով, գիրքերը իրարու վրայ կը շարէր, թանկագին քարերը գնդակի նման օդը կը նետէր, բռունցքով այս ու այն կողմը կը հարուածէր: Վերջապէս անոր ջիղերը հանգըստացան, ու ստոտիկ յոգնած՝ ինկաւ բազկաթոռին մէջ:

— Ժամը քանի՞ն է,— հարցուց քանի մը ըոպէի լուսթենէ յետոյ:

— Երեքն է,— պատասխանեցի:

— Ա՛հ, որքան շուտ անցաւ ճաշի ժամանակը: Անօթութենէ կը մեռնիմ: Սեղան նստինք, իսկ յետոյ...

— Իսկ յետո՞յ:

— Կը պատրաստես պայուսակս:

— Ինչպէ՞ս, բացաքանչեցի:

— Քու պայուսակդ ալ,— պատասխանեց անողորմ բրօֆէսէօրը սեղանատուն մտնելով:

## 2

Այս խօսքերը լսելով, ամբողջ մարմնէս սարսուռ մը անցաւ. զբսպեցի ինքզինքս և որոշեցի նոյնիսկ ուրախ ձեւանալ: Գիտական ապացոյցները միայն կարող էին ետ պահել բրօֆէսէօր Լիդենպրոկին, իսկ այդպէս ուղեւորութեան մը դէմ շատ լուրջ ապացոյցներ կային: Մեկնիլ դէպի երկրի կեդրոնը: Ի՞նչ խելագարութիւն: Առարկութիւններս պահեցի աւելի յարմար ժամանակի և ճաշելու պատրաստուեցայ:

Որքան դայրացաւ հորեղբայրս, երբ տեսաւ, որ սեղանը պատրաստ չէ: Ամեն ինչ հարթուեցաւ: Մարթան կրկին ստացաւ իր ազատութիւնը և այնքան արագ պատրաստեց ամեն ինչ, որ ժամ մը յետոյ արդէն կուշտ էի և կրկին իրերու դրութիւնը պատկերացաւ առջևս:

Ճաշի ժամանակ հորեղբայրս ուրախ էր. գիտնականի յատուկ քանի մը կատակներ ըրաւ, որոնք վտանգաւոր չեն: Ճաշէն վերջ հորեղբայրս ուղեւորուեցաւ իր սննեակը և նշան ըրաւ ինձի՝ հետեւիլ իրեն:

Հնազանդեցայ, ինքը նստաւ գրասեղանին մէկ իսկ ես՝ միւս ծայրը:

— Աքսէ՛լ, ըսաւ բաւական քաղցր ձայնով մը, — դուն շատ ուշիմ տղայ մըն ես, այսօր ինծի մեծ ծառայութիւն մը մատուցիր այն րոպէին, երբ ես պայքարէ յոգնած, արդէն կը պատրաստուէի հրաժարիլ այդ գործէն: Ի՞նչ կ'ըլլար իմ վիճակս, յայտնի չէ: Ես ըրածդ երբեք չեմ մոռնար և դուն կը մասնակցիս այն փառքին, որուն մենք կը հասնինք:

— Է՛հ, — մտածեցի ես, — լաւ տրամադրութեան մէջ է, ժամանակն է այդ փառքի մասին վիճելու անոր հետ:

— Ամենէն առաջ, — շարունակեց հօրեղբայրս, — պիտի խնդրեմ խիստ գաղտնապահ ըլլալ: Դուն, ի հարկէ, կը հասկնաս՝ գիտական աշխարհի մէջ այնքան շատ նախանձողներ կան, անոնցմէ շատ-շատերը կը ցանկային կատարել այդ ուղեւորութիւնը, որու մասին պէտք է տեղեկանան միայն մեր վերադարձէն յետոյ:

— Միթէ՞ կը կարծէք, որ այդպիսի խիզախներու թիւը մեծ կ'ըլլայ:

— Անկասկած. ո՞վ երկար պիտի մտածէր այդպիսի փառքի տիրանալու համար: Եթէ այդ վաւերութեւնը յայտնի ըլլար, երկրաբաններու ամբողջ բանակ մը կը վազէր Արնէ Սակնուսսեմի հետքերէն:

— Իսկ ես հաւատացած չեմ ատոր, որովհետև վաւերութեւնը իսկութիւնը ոչինչով չի հաստատուիր:

— Ինչպէ՛ս, իսկ այն գիրքը, որուն մէջ գտանք թղթիկը:

— Լա՛ւ, կ'ընդունիմ, որ Սակնուսսեմը գրեր է այդ տողերը: Բայց միթէ՞ ատկէ պէտք է եզրակացնել, թէ ան իսկապէս կատարեր է այդ ուղեւորութիւնը. այդ հին մագաղաթը միթէ՞ խաբերայութիւն մը չի կրնար ըլլալ:

Ես զղջացի այս քանի մը խիստ խօսքերը ըսելու համար: Բրօֆէսէօրը յօնքերը կիտեց և ես վախցայ, որ մեր խօսակցութիւնը կըրնար վատ հետեւանք ունենալ: Բարեբաղդաբար այդպէս չեղաւ: Խըստաբարոյ խօսակիցս թեթև մը ժպտելով պատասխանեց:

— Մենք այդ կը տեսնենք:

— Ա՛հ, ըսի քիչ մը սրդողած, թոյլ տուէք ինծի ըսել այն ամենը, ինչ որ կարելի է ըսել այդ վաւերութեւնի մասին:

— Խօսէ՛, տղաս, մի՛ ամչնար: Քեզ բոլորովին ազատ կը թողում կարծիքդ արտայայտելու: Դուն հիմա ոչ թէ իմ եղբորդդին, այլ ընկերակիցս ես: Ուրեմն շարունակէ:

— Լա՛ւ. ամենէն առաջ հարց կու տամ, թէ ի՞նչ են այդ Մոկուլը, Մենֆելսն ու Սկարտարիսը, որոնց մասին մինչև այսօր բան մը չեմ լսած:

— Անկէ դիւրին բան չիկայ: Դեռ վերջերս Լայբցիկի մէջ ապրող բարեկամէս՝ Պետերմանիցէն քարտէս մը ստացայ, որը այս մի-

Ջոցին կրնայ մեզի օգտակար ըլլալ: Վերջօր երեսուներորդ ատլասը, մեծ պահարանի երկրորդ դարակին վրայէն — շարք Z, դարակ 4:

Ոտքի ելայ և հետեւելով անոր ճշգրիտ ցուցմունքին, դիւրութեամբ գտայ փնտռածը: Հօրեղբայրս բացաւ զայն և ըսաւ.

— Ահաւասիկ Խալանտայի ամենալաւ քարտէսներէն մէկը, Հենդերսոնի քարտէսը, և ես կը կարծեմ, որ անոր օգնութեամբ մենք կը լուծենք բոլոր դժուարութիւնները:

Ծռեցայ քարտէսին վրայ:

— Նայէ՛ այս կղզիին, որ կազմուած է հրաբուխներէ, — ըսաւ բրօֆէսէօրը, — և նկատէ՛, որ անոնք բոլորն ալ Յոկոուլ կը կոչուին: Այդ բառը իսլանտերէն կը նշանակէ «սառցադաշտ» և Խալանտայի պէս հիւսիսային երկրի մը մէջ հրաբխային ժայթքումներու մեծ մասը կը յառաջանայ սառոյցի շերտերու մէջէն:

— Լաւ, — պատասխանեցի ես, — բայց ի՞նչ կը նշանակէ Սնեֆելս: Յոյս ունէ՛ի, որ ան չպիտի կարողանար պատասխանել այդ հարցումիս: Սխալեցայ. հօրեղբայրս շարունակեց:

— Հետեւիր ինծի Խալանտայի արեւմտեան ափին վրայ: Կը տեսնե՞ս անոր զլխաւոր քաղաքը՝ Մէյկիալիկը: Այո՞, լաւ, բարձրացիր ծովէն կարուած եզերքներու անթիւ անցքերէն և կանգ առ լայնութեան վաթսուներհնգ աստիճանէն քիչ մը ցած: Ի՞նչ կը տեսնես այնտեղ:

— Կարծես թերակղզի մը կայ:

— Ծիշդ է, տղաս, լա՛ւ, արդեօք բա՞ն մը չես տեսներ այդ թերակղզիին վրայ:

— Ինչպէ՞ս չէ, լեռ մը կը տեսնեմ, որ կարծես ծովէն դուրս է ցցուեր:

— Լաւ, ուրեմն այդ Սնեֆելսն է:

— Սնեֆել՞սը:

— Ծիշդ ինքը. հինգ հազար ոտք բարձրութեամբ լեռ մը, կղզիի ամենանշտնաւոր լեռներէն մէկը և անկասկած աշխարհի ամենահրոշակաւոր լեռը, եթէ իսկապէս անոր խառնարանը կը տանի դէպի երկրի կեդրոնը:

— Բայց այդ անկարելի է, — բացազանչեցի ուսերս բարձրացնելով, ըմբոստացած՝ նման ենթադրութեան մը դէմ:

— Անկարելի՞ է, — առարկեց բրօֆէսէօր Լիդենպրոկը խիստ շեշտով, — ինչո՞ւ անկարելի է:

— Որովհետեւ այդ խառնարանը անկասկած լեցուած է լաւօյով, հրաբորոք ժայռերով, և...

— Իսկ եթէ մարած հրաբո՞ւխ է...

— Մարա՞ծ:

— Այո: Ներկայիս երկրագունդի վրայ գործող հրաբուխներու թիւը մօտաւորապէս երեք հարիւր է, իսկ հանդած հրաբուխներու թիւը շատ աւելի մեծ է: Վերջիններու շարքին կը պատկանի Սնեֆելսը: Ամբողջ պատմութեան ընթացքին անիկա միայն ժայթքում մըն է ունեցեր. այդ եղեր է 1219 թուականին: Այդ թուականէն վերջ անիկա հետզհետէ մարեր է և հիմա գործող հրաբուխներու շարքին չի պատկանիր:

Այդ ստոյգ տեղեկութիւններէն յետոյ ես այլեւս ուէ առարկութիւն ընել չէի կրնար, ուստի կանգ արի վաւերաթուղթի բովանդակած ուրիշ մութ կէտերուն վրայ:

— Ի՞նչ կը նշանակէ Սկարտարիս բառը, հարցուցի, և ի՞նչ գործ ունին այստեղ յուլիսեան ամսամուսնները:

Հօրեղբայրս մտածումի մէջ ինկաւ: Բոպէ մը յոյս ծագեցաւ մէջս. բայց միայն բոպէ մը, որովհետեւ ան իսկոյն հետեւեալ պատասխանը տուաւ.

— Ինչ որ դուն մութ կ'անուանես, ինծի համար լուսաւոր է: Այս բոլորը ցոյց կուտայ, թէ ինչքան ուշադրութեամբ Սակնուսսեմը ցանկացեր է ճշգրտօրէն նկարագրել իր գիւտը: Սնեֆելսը կաղմուած է քանի մը խառնարաններէ, այդ պատճառաւ ալ անհրաժեշտ էր ցոյց տալ, թէ անոնցմէ ո՞ր մէկն է դէպի երկրի կեդրոն տանողը: Ի՞նչ ըրեր է խառնացի գիտնականը: Նկատեր է, որ Յուլիսի սկիզբի մօտ՝ այսինքն Յունիսի վերջերը լեռնային բարձունքներէն մէկը՝ Սկարտարիսը իր ստուերը կը ձգէ մինչեւ յիշեալ խառնարանի բացուածքը, և այդ փաստը նշանակեր է փաստաթուղթին մէջ: Այդ այնքան ճշգրիտ ցուցմունք է, որ երբ կը հասնիս Սնեֆելսի գագաթը, կասկածելու պէտք չես ունենար, թէ ո՞ր ճամբան պէտք է ընտրես:

Իսկապէս, հօրեղբայրս ամեն ինչի պատասխանը կը գտնէր: Ես պարզօրէն նկատեցի, որ անիկա անխոցելի էր հին վաւերաթուղթի նկատմամբ: Այդ պատճառով ալ այլեւս հարցեր չտուի այդ ուղղութեամբ, և որովհետեւ նպատակս էր համոզել զինքը, ասպա ես անցայ գիտական առարկութիւններուն, որոնք, կարծիքովս, աւելի էական էին:

— Լաւ, ըսի ես, պէտք է համաձայնիմ, որ Սակնուսսեմի գրութեան իմաստը պարզ է և ոչ մէկ կասկածի ենթակայ չէ: Կ'ընդունիմ նոյնպէս, որ վաւերաթուղթը իսկական է: Այդ գիտնականը իջեր է Սնեֆելսի խորքը, տեսեր է, որ Սկարտարիսի ստուերը կը շոյէ խառնարանի եզերքները յուլիսի մէկէն առաջ. նոյն իսկ իր ժամանակի աւանդութիւններէն ան լսեր է, որ այդ խառնարանը կը տանի դէպի երկրի կեդրոնը: Բայց ինչ կը վերաբերի այն բանին, թէ Սակնուսսեմը անձամբ իջեր է այնտեղ և թէ այդ ուղեւորութիւնը կատարելէն վերջ վերադարձեր է, աստոր է որ երբեք չեմ հաւատար:

— Բայց ի՞նչ հիման վրայ չես հաւատար, — հարցուց հօրեղբայրը սուր կեանքով:

— Այն հիման վրայ, թէ բոլոր գիտական տեսութիւնները կ'ապացուցանեն այդպիսի ձեռնարկի մը անիրագործելիութիւնը:

— Բոլոր տեսութիւնները այդ կ'ապացուցանեն, — պատասխանեց բրօֆէսէօրը բարեմիտ արտայայտութեամբ: — Ա՛հ, այդ անպիտան տեսութիւնները. ինչպէ՞ս մեզի կը շփոթեցնեն այդ խեղճ տեսութիւնները,

Պարզ էր որ կը կեանքը ղիս, բայց և այնպէս ես շարունակեցի.

— Այո՛, կատարելապէս ապացուցուած է, որ երկրի մակերեւոյթի տակ ջերմաստիճանը կը բարձրանայ մօտաւորապէս իւրաքանչիւր մէթրի վրայ մէկ աստիճան. ուրեմն, ընդունելով, որ այդ բարձրացումը անփոփոխ է, և ընդունելով, որ երկրի շառաւիղը հաւասար է վեց հազար քիլօմէթրի. երկրի կեդրոնի ջերմութիւնը պէտք է հասնի երկու հարիւր հազար աստիճանի. այդպէսով երկրի ներսը եղած բոլոր նիւթերը կը գտնուին հրավառ կաղային վիճակի մէջ, քանի որ մետաղները — ոսկին, լուսնոսկին և ամենակարծր քարերն անգամ չեն դիմանար այդպիսի ջերմութեան: Ուրեմն, ես իրաւունք ունիմ հարցնելու — միթէ՞ հնարաւոր է այդքան խորը թափանցել:

— Ուրեմն, Աքսէ՛լ, տաքութի՞ւնը քեզ կը մտահոգէ:

— Իհարկէ: Բաւական է, որ մենք քառասուն քիլօմէթր խորութեան մէջ իջնինք, արդէն հասած կ'ըլլանք երկրի կեղևի սահմանին, որովհետև այնտեղ արդէն ջերմութիւնը հազար երեք հարիւր աստիճանէն բարձր է:

— Եւ դուն հալելէ՞ն կը վախնաս:

— Այդ հարցին պատասխանը ձեզի կը թողում, — ըսի սըրտանդութեամբ:

— Լաւ. անհաւաստի վճռական կարծիքս, — ըսաւ բրօֆէսէօր Լիւբենպրօկը վճռական կերպով: — Ո՛չ դուն, ոչ ալ ուրիշը վճռական կերպով չի գիտեր որոշ, թէ ի՞նչ կը կատարուի երկրագունդին ներսը, քանի որ անոր շառաւիղի մէկ տասներկու հազարերորդական մասն է միայն ուսումնասիրուած. ուրեմն գիտական տեսութիւնները կարող են անվերջ կատարելագործուիլ և փոփոխուիլ. իւրաքանչիւր տեսութիւն անվերջ կ'ոչնչանայ ուրիշ տեսութեամբ մը: Չէ՞ որ մինչև Ծուրեհէն կը կարծէին, թէ միջմոլորակային տարածութեան ջերմաստիճանը անվերջ կ'իջնայ. մինչդեռ այժմ յայտնի է, որ մթնոլորտի ամենացած աստիճանը չանցնիր քառասունէն-յիսուն աստիճանէն\*): Ինչո՞ւ միեւնոյնը չի կրնար կատարուիլ նաև երկրի

\*) Ըստ Եւրօպոյն օուեալմիրու՝ ոչ քէ յիսուն, այլ երկու հարիւր աստիճան:

ներսի ջերմաստիճանի հետ: Ինչո՞ւ այդ ջերմաստիճանը, որոշ խո-  
րութեան վրայ, չի կրնար հասնիլ իր ամենաբարձր աստիճանին, որ-  
մէ յետոյ այլեւս չի հասնիր այնպիսի բարձրութեան, ուր կը հալին  
ամենակայուն մետաղներն իսկ:

Քանի որ հորեղբայրս հարցը փոխադրեց ենթադրական վարկած-  
ներու հողի վրայ, ինձի այլեւս ոչինչ կը մնար պատասխանել:

— Բացի այդ, ես քեզի կ'ըսեմ նաեւ այն, որ իսկական դիտնա-  
կանները, ինչպէս, օրինակ, Պուասօնը և ուրիշները, սպայուցներ են,  
որ, եթէ երկրագունտի ներսը գոյութիւն ունենար երկու հարիւր հա-  
զար աստիճան տաքութիւն, հալած նիւթերէն գոյացած հրավառ կա-  
ղերը այնպէս լարուած դրութեան մէջ կ'ըլլային, որ երկրի կեղեւը  
անոնց ճնշումին չէր կրնար դիմանալ, ու կը պայթէր այնպէս, ինչ-  
պէս շոգեկաթսան շոգիի ճնշման տակ:

— Ատիկա Պուասոնի կարծիքն է, հորեղբայր, և ուրիշ ոչինչ:

— Համաձայն եմ, բայց ուրիշ նշանաւոր երկրաբաններ եւս կ'են-  
թադրեն, որ երկրագունտի ներսի մասը կազմուած չէ ո՛չ կաղէ, ո՛չ  
ջուրէ, ո՛չ ալ մեղի ծանօթ ռելէ տեսակի ծանր քարերէ, որովհետեւ  
այդ պարագային երկիրը կ'ունենար երկու անգամ աւելի քիչ ծան-  
րութիւն:

— Մ'հ թիւերով կարելի է ապացուցանել այն ամենը, ինչ որ  
մարդ կը ցանկայ:

— Իսկ փաստերո՞վ, տղաս, միթէ՞ կարելի չէ: Միթէ՞ հաստատա-  
ւած չէ, որ հրաբուխներու թիւը մեծ չափով պակսեր է երկրի գո-  
յութեան առաջին իսկ օրերէն սկսեալ, և եթէ կեդրոնական ջերմու-  
թիւնը գոյութիւն ունի, կարելի չէ՞ ատկէ եզրակացնել, որ այդ ջեր-  
մութիւնը հետզհետէ կը նուազի:

— Հօրեղբա՛յր, եթէ դուք ենթադրութիւններու շրջանը կը մըտա-  
նէք, ձեզի հետ վիճաբանելէ կը հրաժարիմ ուրեմն:

— Իսկ ես քեզի կ'ըսեմ, որ իմ կարծիքներուս կը միանան շատ  
իրազեկ մարդոց կարծիքները: Կը յիշե՞ս այն այցելութիւնը որ տը-  
ւաւ ինձի անգլիացի յայտնի քիմիադէտ Հեմֆրի Դեւին 1825 թուին:

— Ոչ, չեմ յիշեր, որովհետեւ ես ծնեի եմ այդ թուականէն տաս-  
ներինը տարի վերջը:

— Ինչեւիցէ: Հեմֆրի Դեւին ինձի այցելեց երբ Համպուրկէն  
կ'անցնէր: Մենք երկար խօսեցանք. ի միջի այլոց քննեցինք երկրի  
միջուկի հեղուկ դրութեան ենթադրութիւնը: Մենք երկուքով համա-  
ձայն էինք, որ անոր հեղուկ դրութիւնը չէր կրնար գոյութիւն ունե-  
նալ, և մենք ատոր անհերքելի ապացոյցը գտանք:

— Իսկ ո՞րն է այդ ապացոյցը:

— Այն, որ այդ հեղուկ մասսան ուկիանոսի նման կ'ենթարկուէր

լուսնի ճղողական ուժին, հետևապէս, օրական երկու անգամ երկրի խորքը կ'առաջանար մակնթացութիւն և տեղատուութիւն, որոնք պարբերաբար երկրաշարժեր կ'առաջացնէին:

— Բայց չէ՞ որ ապացուցուած է, որ սկիզբը ամբողջ երկիրը հըրավառ դրութեան մէջ է եղեր, իսկ յետոյ երկրագունդի արտաքին մասը սառեր է ու կազմեր կեղեւը, մինչդեռ կեդրոնը ջերմութիւնը կը շարունակէ գոյութիւն ունենալ:

— Սխալ կարծիք, պատասխանեց հօրեղբայրս. երկիրը տաքցիր է մակերեւոյթի այրումով միայն և ոչ թէ հակառակը: Այդ մակերեւոյթը կազմուած է եղեր մեծ քանակութեամբ մետաղներէ, որոնք ընդունակ են բոցավառուելու միայն օդի և ջուրի հետ շփուելով: Այդ մետաղները բոցավառուեցան, երբ մթնոլորտային գոլորչիները անձրևի նման թափուեցան երկրի վրայ, իսկ երբ ջուրերը հետզհետէ թափանցեցան երկրի կեղեւի ճեղքուածներու մէջէն, ժայթքումներ եւ պայթումներ առաջացուցին: Ահա թէ ինչէն է, որ աշխարհի առաջին օրերը այնքան շատ էին հրաբուխները:

— Շատ սրամիտ վարկած է այդ, բացազանչեցի ես, մասամբ հակառակ կամքիս:

— Եւ Հեմֆրի Դեւին այդ վարկածը բացատրեց ինձի շատ պարզ փորձով: Անիկա վերցուց մետաղէ գնդակ մը, կազմուած դիւսաւորապէս այն մետաղներէն, որոնց մասին քիչ մը առաջ խօսեցայ: Այդպէսով այդ գնդակը կատարելիսպէս նման էր մեր երկրագունդին. երբ զայն կը թրջէինք նուրբ ցօղով, անոր մակերեւոյթը կը փքուէր և փոքր լեռ մը կ'առաջացնէր, լեռան գագաթը խառնարան մը կը բացուէր, լավա կը ժայթքէր և այնպէս ջերմութիւն կուտար դժգոկին, որ զայն ձեռքով բռնել հնարաւոր չէր:

Ճիշտ ըսելով, բրօֆէսէօրի փաստարկումները սկսան ազդել վրաս, մտնուանդ որ ան այդ փաստերը կը բերէր իրեն յատուկ եռանդով և ողբերգութեամբ:

— Կը տեսնե՞ս, Աքսէլ, ըսաւ, կեդրոնական միջուկի դրութեան հարցը դանազան ենթադրութիւններ է յարուցեր երկրաբաններու մէջ. ոչ մէկ բան այնքան քիչ ապացուցուած չէ, որքան ներքին ջերմութեան փաստը: Կարծիքովս ան գոյութիւն չունի, չի կրնար գոյութիւն ունենալ, մենք նոյնիսկ ատոր կը համոզուինք և Արնէ Սակնուսսեմի նման մենք կ'իմանանք, թէ ինչ կարծիք կարելի է ունենալ, այս կարեւոր հարցի մասին:

— Է՛, լաւ, պատասխանեցի, ինքս ալ վարակուելով այդ ոգեւորութեամբ, այո՛, կը տեսնենք, եթէ իսկապէս բան մը կարելի ըլլայ տեսնել այնտեղ:

— Ինչո՞ւ չէ: Միթէ մենք չենք կրնաք յոյս դնել ելեքստրական

երեւոյթներու վրայ լոյս ունենալու համար, և նոյնիսկ մթնոլորտի վրայ, որ կեդրոնին մօտենալով կրնայ ճնշման շնորհիւ լուսատու դառնալ:

-- Այո, — ըսի ես, — այո, վերջիվերջոյ այդ ալ հնարաւոր է:

— Այդ կասկածէ զուրս է, — յաղթականորէն պատասխանեց հորեղբայրս, — միայն՝ լուծիւն, կը լսե՞ս: Ոչ մէկ լսօք այս մասին, որպէսզի ոչ ոք մեղմէ առաջ չմտածէ հետազօտել երկրի կեդրոնը:

## Է

Այսպէս վերջացաւ այն նշանաւոր խօսակցութիւնը: Ես կատարեալ աննշի մէջ էի. հօրեղբորս առանձնասենեակէն զուրս եկայ բոլորովին շուարած ու չլմած: Համպուրկի փողոցներուն օդը անբաւարար էր կարենալ զիս սթափեցնելու, այդ պատճառաւ դացի էլլպայի ամփերը, դէպի շոգեշարժ գեասնաւը, որուն միջոցաւ քաղաքը կը կապուի Համպուրկի երկաթուղիին հետ:

Համոզեցի՞ն զիս արդեօք այն բոլորը, ինչ որ ես լսեցի: Թէ՛ աւելորի շատ ենթարկուեցայ բրօֆէսէօր Լիաենպրոկի ազդեցութեան: Միթէ՞ պէտք էր լրջօրէն վերաբերուիլ դէպի երկրի կեդրոնը ուղեւորուելու անոր վճռին: Արդեօք խելագարի ցնդարանութիւններ չէի՞ն, որ լսեցի, թէ հանճարեղ մարդու գիտական հետեւութիւններ: Այն բոլորէն վերջ ո՞ւր կը վերջանար ճշմարտութիւնը և ուրկէ՞ կ'ըսկսէր մոլորութիւնը...

Ես կը լողայի հազարաւոր հակասական ենթադրութիւններու մէջ, անկարող ըլլալով մէկին կառչելու: Բայց և այնպէս ես զգացի, որ հօրեղբայրս զիս համոզեր էր, հակառակ որ ողեւորութիւնս կ'ըսկսէր չափաւորուիլ: Սակայն ես կը ցանկայի իսկոյն մեկնիլ, որպէսզի ժամանակ չունենայի խորհելու: Այո՛, այդ բոլորէն ես բաւականաչափ քաջութիւն ունէի պայուսակա պատրաստելու և ճամբայ իյնալու:

Բայց պէտք է խոստովանիմ, որ ժամ մը յետոյ ողեւորութիւնս արդէն մեղմացեր էր. ջիղերս հանդսացեր էին, ու երկրի խոր անդունդներէն կրկին վեր էի բարձրացեր:

— Այս բոլորը յիմարութիւն է, — ըսի ես ինձի, — ստոր մէջ ոչ մէկ առողջ միտք կայ: Չէ կարելի այսպիսի առաջարկութիւն ընել խելքը գլուխը երիտասարդի մը: Այս բոլորը ցնորք է: Ես գէշ քնացեր եմ և գէշ երազ տեսեր:

Անցայ էլլպայի ամփերէն, շրջեցայ քաղաքը ու զուրս եկայ Ալտոնայի ճանապարհը: Ծիշդ նախազգացումը զիս մղեց հոն, որովհետեւ քիչ մը յետոյ տեսայ իմ սիրելի Գրետխենին, որ արագ և համարձակ քայլերով Համպուրկ կը վերադառնար:

— Գրետխեն,— բացագանչեցի հեռուէն:

Աղջիկը կանգ առաւ, ինչպէս կ'երեւի, քիչ մը զարմացած, որ զինքը կը կանչեն այդ մեծ ճամբուն վրայ: Բույ՛է մը վերջ մօտն էի:

// — Աքսէ՛լ, ըսաւ զարմացած,— ա՛հ, զիս դիմաւորելու ես եկեր. այդ ինչ լաւ է:

Բայց դէմքիս նայելով Գրետխենը նկատեց իմ վրդովուած ու անհանգիստ ըլլալս:

— Քեզի ի՞նչ է պատահեր,— հարցուց ձեռքն ինձի երկարելով:

— Ինչ պատահեր է՛,— բացագանչեցի:

Ու քանի մը խօսքով սիրելի Գրետխենիս պատմեցի իրերու դրուած թիւնը:

Պահ մը ան լուռ մնաց: Արդեօք անոր սի՞րտն ալ կը զարնէր իմինիս պէս. չեմ գիտեր:

Բայց անոր ձեռքը ձեռքիս մէջ չէր դողար: Քանի մը հարիւր քայլ յառաջացանք առանց խօսելու:

— Աքսէ՛լ, — ըսաւ ան վերջապէս:

— Ըսէ՛, սիրելի Գրետխեն:

— Սքանչելի ճամբորդութիւն կ'ըլլայ այդ:

Ես ցատկեցի, լսելով այդ խօսքերը:

— Այո՛, Աքսէլ, ուղեւորութիւն մը, որ արժանի է գիտնականի եղբորորդիին: Լաւ է, որ տղամարդը յայտնի դառնայ ոեւէ նշանաւոր գործով:

— Ինչպէ՛ս, Գրետխեն, դուն զիս ետ չե՞ս պահեր այդպիսի ուղեւորութենէ մը:

— Ո՛չ, սիրելի Աքսէլ, և ես սիրով կ'ընկերանայի ձեզի, եթէ թոյլ աղջիկ մը ձեզի ծանր բեռ չըլլար:

— Դուն լո՞ւրջ կը խօսիս:

— Շատ լուրջ:

Ա՛հ, որքան դժուար է ճանչնալ կիները, ջահել աղջիկներուն և ընդհանրապէս կիներուն սիրտը: Եթէ անոնք չեն պատկանիր ամենէն վախկոտներուն, ուրեմն անպատճառ ամենաքաջերէն են: Ինչպէ՛ս այս երեխան զիս կը քաջալերէր մասնակցելու այդպիսի ուղեւորութեան մը: Ան երբե՛ք չէր վախնար այդ վտանգաւոր ուղեւորութենէն: Ան զիս կը մղէր դէպի այն. զիս, որ կը սիրէր սակայն:

— Գրետխեն, — ըսի ես, — տեսնենք, արդեօք վաղն ալ նոյնը կ'ըսես:

— Վաղը, սիրելի Աքսէլ, նոյնը կ'ըսեմ, ինչ որ այսօր ըսի:

Ձեռք-ձեռքի տուած, բայց խոր լուռութիւն պահելով, մենք շարունակեցինք ճամբան: Այդ օրուայ յուզումները զիս սաստիկ ընկճեր էին:

«Ինչ ընենք, — կը մտածէի. — յուլիսի մէկը դեռ հեռու է և մինչեւ այդ, ո՞վ գիտէ, գուցէ այնպիսի բան մը կը պատահի, որ հօրեղբօրս կը բուժէ ստորերկրեայ ուղեւորութեան խելագար ցանկութենէն»:

Արդէն գիշեր էր, երբ մենք հասանք Արքայական փողոցի տունը: Ես կը կարծէի, թէ տունը խաղաղ կ'ըլլայ և հօրեղբայրս, ըստ իր սովորութեան արդէն քնացած, իսկ Մարթան սեղանատունը հաւաքելով զբաղուած:

Բայց ես հաշուի չէի առեր բրօֆէսէօրի անհամբերութիւնը: Երբ մենք տուն հասանք, անիկա կը վազվզէր ասդին-անդին, կը գողգորար խուճար մը բեռնակիրներու վրայ. որոնք զանազան իրեր կը բեռնաթափէին միջանցքը. պառաւ աղախինը գլուխը կորսնցուցած էր:

— Տէ', եկու՛ր հոս, Ա.քսէ՛լ, շտապէ՛, անպիտան տղայ, — բացագանչեց հօրեղբայրս հեռուէն զիս տեսնելով: — Չե՞ս գիտեր, որ քու պայուսակդ դեռ պատրաստ չէ, թուղթերս դեռ չեն դասաւորուած, ճամբորդական պայուսակիս բանալին չկայ և սընապաններս դեռ չեն բերեր:

Ես ապշած էի և խօսք մը չէի կրնար արտասանել: Երթունքները հալիւ կարողացան շնչալ հետեւեալ խօսքերը:

— Ուրեմն արդէն կը մեկնի՞նք:

— Այո՛, անպիտան տղայ, իսկ դու կը զարմանաս, փոխանակ օգնելու:

— Կը մեկնի՞նք, կրկին հարցուցի, թոյլ ձայնով,

— Այո, վաղը չէ միւս օրը արշալոյսին:

Ես չկրցայ աւելին լսել և սենեակս փախայ:

Այլեւս ոչ մէկ կասկած չիկար: Հօրեղբայրս ճաշէն վերջ ժամանակը յատկացուցեր էր ձեռք բերելու ուղեւորութեան համար անհրաժեշտ իրերու և դորձիքներու մէկ մասը: Տան առջև, ծառուղիին վրայ թափուած էին պարսնէ պատրաստուած սանդուխներ, ջահեր, ջրամաններ, բահեր, բրիչներ, երկաթածայր ձեռնափայտեր. այդ բոլորը տեղափոխելու համար առնուազն տասը մարդ էր անհրաժեշտ եղեր:

Գիշերը շատ գէշ անցուցի: Յաջորդ օրը, կանուխ զիս արթնցուցին: Որոշեր էի դուռը չբանալ. բայց ինչպէ՞ս կրնայի դիմադրել այն քաղցր ձայնին. որ զիս կը կանչէր.

— Միրելի՛ Ա.քսէլ:

Սենեակէն դուրս եկայ՝ մտածելով, որ ընկճուած տեսքս, տըժդոյն դէմքս, անքնութենէ կարժրած աչքերս պիտի ազդէին Գրետ-խենին վրայ և ան պիտի փոխէր կարծիքը:

— Միրելի Ա.քսէլ, — ըսաւ ան. — ինչպէս կը տեսնեմ, այս առտու տեղի՛ լաւ կ'երեւաս. քունը հանգստացուցեր է քեզի:

— Հանդատարցուցե՛ր, բացադանչեցի ու վաղեցի դէպի հայելին: Իսկապէս աւելի լաւ դէմք ունէի, քան կը կարծէի. հաւատալս չէր գալի:

— Աքսէ՛լ, ըսաւ Գրետխենը. ես երկար խօսեցայ խնամակալիս հետ: Ան շատ խիզախ գիտնական մըն է, և քաջ մարդ, և դու չպէտք է մոռնաս, որ քու երակներուդ մէջ անոր արիւնը կը հոսի: Ինծի հետ խօսեցաւ իր ծրագրի, իր յոյսերու մասին, ինչպէս նաև այն մասին թէ ինչո՞ւ և ինչպէս յոյսեր ունի հասնելու իր նպատակին և ան կը հասնի, ես կասկած չունիմ: Ա՞հ, Աքսէլ, ինչ հրաշալի է այդպէս գիտութեան նուիրուիլ: Ինչպիսի՛ փառք կ'ըսպասէ բրօֆէսէօր Լիդենպրոկին և անոր ուղեկցողին: Վերադարձին, դուն կ'ըլլաս անոր հաւաստը, ազատ կ'ըլլաս խօսելու, գործելու, վերջապէս ազատ կ'ըլլաս...

Աղջիկը կարմրեցաւ և խօսքը չվերջացուց: Անոր խօսքերը զիս քաջալերեցին. բայց և այնպէս ես դեռ չէի ուզեր հաւատալ, թէ մենք կը մեկնինք: Ես Գրետխենին տարի բրօֆէսէօրին սենեակը:

— Հօրեղբայր, ըսի անոր, ուրիմն վճռուած է, որ մենք պիտի մեկնինք:

— Ինչպէ՛ս, դուն դեռ կը կասկածի՞ս:

— Ոչ, ըսի ես, անոր չընդդիմախօսելու համար, միայն ես կ'ուզէի հարցնել՝ թէ ի՞նչ պէտք կար այսքան շտապելու:

— Ինչպէ՛ս չշտապել. ժամանակը չսպասէր, ժամանակը այնքա՛ն արագ կը թափ:

— Բայց դեռ Մայիսի 26ն է և մինչեւ Յունիսի վերջը...

— Հը՛, բայց ի՞նչ կը կարծես, տիմա՛ր, միթէ այնքան դիւրին է մինչեւ Իսլանտա հասնիլը: Եթէ դուն պիտի պէս ինձմէ չփախէիր, քեզի հետս կը տանէի Կոպէնհագէնի, Լիֆենպեր և ընկ.-եան դրասենեակը: Այնտեղ դուն կը անդեկանայիր, որ Կոպէնհագէնէն չոգնուա՛րդ դէպի Ռէյկիավիկ կը մեկնի ամիսը միայն մէկ անդամ, ամսու 22ին:

— Յետո՞յ:

— Յետոյ ի՞նչ. եթէ մենք սպասենք մինչեւ Յունիսի 25ը, շատ ուշ կը հասնինք և չենք տեսներ, թէ ինչպէս Սկարտարիսի ստուերը կը սահի Մնեֆելսի խառնարանին վրայ. ուրեմն ինչքան կարելի է շուտ պէտք է Կոպէնհագէն մեկնիլ, այնտեղէն կերպով մը Իսլանտա հասնելու համար: Գնա՛ պատրաստէ պայուսակդ:

Անոր առարկել ուէ՛ ձեռով կարելի չէր: Վերադարձայ սենեակս: Գրետխենը հետեւեցաւ ինծի ու անձամբ սկսաւ փոքր պայուսակիս մէջ տեղաւորել ուղեւորութեան համար անհրաժեշտ իրերը: Երբեք յուզուած չէր. կարծես զրօսանքի կ'երթայի Լիւրէկ կամ Հելիգոլանտ. անոր փոքր ձեռքերը առանց շտապողականութեան անընդհատ կը շարժէին՝ կը խօսէր հանդիստ և ամենախելօք ապացոյցներ կը բերէր

ի նպատակ մեր ուղեւորութեան: Անիկա զիս զիւթեր էր, թէև ես սաստիկ բարկացած էի անոր վրայ: Բանի մը անգամ ուղեցի պոռթկալ, բայց ան ուշադրութիւն չդարձնելով, հետեւողական հանդարտութեամբ իր գործը շարունակեց: Վերջապէս պայուսակի վերջին կապը կապուեցաւ և ես վար իջայ:

Ամբողջ օրուայ ընթացքին, անընդհատ կը բերէին Ֆիզիքայի դանազան գործիքներ, զէնքեր, ելեքտրական լուսամտիւփներ: Մարթան բոլորովին գլուխը կորսնցուցած էր:

— Ձրլիւ՞թ թէ պարոնը խելադարուած է, հարցուց ինծի:

Գլխովս դրական պատասխան տուի:

— Եւ ձեզի ալ հե՞տը կը տանի:

Կրկին դրական պատասխան:

— Ո՞ւր կ'երթաք, հարցուց ան:

Մատովս ցոյց տուի երկրի խորքը:

— Նկո՞ւզ, բացականչեց աղախինը:

— Ո՛չ, ըսի վերջապէս, աւելի խորը:

Գիշերը վրայ հասաւ: Ձէի նկատեր թէ ինչպէս էր անցեր ժամանակը:

— Վաղը առտու, ըսաւ հօրեղբայրս, ճիշդ ժամը ճին մենք կը մեկնինք:

Ժամը 10ին անկողին ինկայ մեռածի պէս: Գիշերը երկիւղը կըրկին պատեց զիս: Երազիս մէջ անդունդներ կը տեսնէի: Կը զառանցէի: Կը թուէր սր բրօքէսէօրի հոսովու ձեռքը կը բռնէր, կը տանէր և անդունդը կը ձգէր զիս: Ես անյատակ անդունդը կ'իյնայի, ինչպէս հետզհետէ աճող արագութեամբ տարածութեան մէջ ինկող մարմինը: Կետնքս արդէն անընդհատ անկում էր դարձեր:

Ժամը 5ին արթնցայ յոգնութենէն և յուզումէն ուժասպառ: Իսկոյն սեղանատուն իջայ: Հօրեղբայրս նստեր էր սեղանին մօտ և կը նախաճաշէր: Սարսափի զգացումով անոր նայեցայ: Գրետխենն ալ հոն էր: Բան մը չըսի և բան մը չկարողացայ ուտել:

Ժամը հինգուկէսին փողոցը անիւներու ձայն լսուեցաւ: Մեծ կառք մը եկեր էր միղի Ալատնայի կայարանը տանելու: Շուտով անոր վրայ դրին հօրեղբորս իրերը:

— Իսկ քո՞ւ պայուսակդ, — հարցուց ան:

— Պատրաստ է, պատասխանեցի, հազիւ ոտքի վրայ կայնելով:

— Ինչո՞ւ ես կայներ, չուտ վար իջեցուր, ապա թէ ոչ քու պատճառովդ գնացքէն ետ կը մնանք:

Այլևս անհնար էր պայքարիլ ճակատագրիս դէմ: Բարձրացայ սենեակը, պայուսակը սահեցուցի սանդուխի աստիճաններէն ու ես ալ հետեւեցայ անոր:

Այդ վայրկեանին հօրեղբայրս հանդիսաւոր կերպով Գրետխենին կը յանձնէր իր տան ասանձերը: Երիտասարդ աղջիկը կը պահէր իր սովորական հանդստութիւնը: Ան գրկեց իր խնամակալը, բայց չկըրցաւ արցունքը զսպել, երբ իր նուրբ շրթունքները երեսիս հպեց:

— Գրետխեն, բացագանչեցի ես:

— Դնա՛, սերելի Աքսէլ, գնա՛ ըսաւ, դուն կը ձգես քու նշանածը, բայց վերադարձիդ կնոջդ պիտի դաննես:

Ես գրկեցի, յետոյ նստայ կառքը: Դրան սեմին Մարթան ու Գրետխենը իրենց վերջին հրամեշտը կ'ուղղարկէին, յետոյ զոյգ ձիերը, կառապանի սուլոցէն գրգռուած, քառասմբակ սուրացին Ալտոնայի ճամբէն:

## Ը

Համպուրկի արուարձան Ալտոնայէն ղէպի Բիլ մեկնող կառքը մեզի պէտք էր տանէր մինչև Բելա գետի ավերը:

Ժամը վեցուկէսին կառքը կանգ առաւ կայարանին առջև: Հօրեղբօրս բազմաթիւ իրերն ու արկղները, ճամբորդական բոլոր պարագաները կառքէն դուրս հանեցին, փոխադրեցին, կշռեցին, վրանին պիտակ փակցուցին, տեղաւորեցին հակերու վակօնին մէջ, և ժամը եօթին մենք արդէն նստած էինք դէմ դիմաց նոյն կիսակառքին մէջ: Լսուեցաւ սուլիչի ձայնը, շոգեկառքը շարմեցաւ, ու կառախուժը ճամբայ ելաւ:

Ես տակաւին չէի հաշտուած այս բոլորին հետ: Սակայն առաւօտեան զով օդը, արագօրէն փոխուող տպաւորութիւնները մոռցնել կու տային ինձ մտահոգութիւններս:

Իսկ Բրօֆէսէօրին միտքը, անտարակոյս աւելի առաջ կը սլանար գնացքէն, որուն ընթացքը անշուշտ շատ դանդաղ կը թուէր այդ անհամբեր մարդուն: Մենք առանձին էինք վակօնին մէջ, բայց ոչ մէկ խօսք չէինք փոխանակիր: Հօրեղբայրս ուշագրութեամբ կը քննէր իր գրպաններն ու ուղեպարկը: Ոչ մէկ բան կը պահսէր անոր ծրագիրները իրականացնելու համար:

Ուրիշ թուղթերու հետ՝ ան առած էր նաև դանիական պետական նշանը կրող թուղթ մը, ան կը կրէր Համպուրկի հիւպատոս Խրիստիանսենի ստորագրութիւնը՝ որ բարեկամն էր բրօֆէսէօրին: Այդ թղթի օգնութեամբ մենք դիւրութեամբ Բոփենհակի մէջ, կրնայինք յանձնարարական մը առնել Խալանտայի նահանգապետին ուղղուած:

Իմ ուշադրութիւնս գրաւեց նաև վաւերաթուղթը, որ հօրեղբայրս մեծ խնամքով պահած էր թղթապանակի ամենագաղտնի բաժնին մէջ:

Սրտիս խորքէն անիծեցի այդ... թուղթը և սկսայ դիտել մեր անցած վայրերը: Կ'ացնէինք իրար յաջորդող միօրինակ ու անհետաքրքիր դաշտերուն մէջէն, որ տղմաթաթաւ ու բաւական պտուղէտ էին. շրջան մըն էր ատիկա, որ շատ նպաստաւոր էր ուղիդ գծեր անցնելու համար, որոնք այնքան ցանկալի են երկաթուղային ընկերութիւններուն համար:

Բայց այդ միօրինակութիւնը չձանձրացուց զիս, որովհետև ճամբայ ելլելէն երեք ժամ յետոյ գնացքը կանգ առաւ Բիլի մէջ, որ ծովէն երկու քայլ հեռու էր:

Եւ որովհետև մեր գոյքերը յանձնած էինք Քոփենհակենի մէջ ստանալու համար, այնպէս որ Բիլի մէջ չգրադեցանք անոնցմով, բայց բրօֆէտէօրը մտահոգութեամբ հետեւեցաւ, թէ ինչպէս զանոնք կը տեղափոխէին շոգենաւ և կը տեղաւորէին նաևուն խորքը:

Հօրեղբայրս այնպէս մը հաշուած էր գնացքին հասնելու և շոգենաւին ճամբայ ելլելու ժամերը, որ մենք ամբողջ օր մը պէտք է կորսնցնէինք Բիլի մէջ:

«Էլենորա» շոգենաւը միայն գիշերը պիտի մեկնէր: Այդ պատճառով յառաջ եկած ինն ժամուայ տենդային դրութիւնը, հօրեղբորս հասցուց այնպիսի կատաղութեան, որ ան հազար ու մէկ անէծք թափեց շոգենաւային ու երկաթուղային ընկերութիւններու վարչութիւններու գլխուն, ինչպէս նաև կառավարութիւններու հասցէին, որոնք կը հանդուրժէին այսպիսի խայտառակութիւն մը: Ես ստիպուած էի՝ պաշտպանել զինք, երբ ան այդ առիթով շէլինորաօի նաւապետէն բացատրութիւն կը պահանջէր: Հօրեղբայրս կ'օւղէր ստիպել նաւապետը՝ որ իսկոյն ճամբայ ելլէ: Նաւապետը, անշուշտ մերժեց այդ:

Բիլի մէջ, ինչպէս ամեն տեղ, պէտք էր ձեւով մը անցընէինք ժամանակը: Մենք զրօսանցիք ծովածոցի կանաչազարդ փերուէն, որուն խորքին կառուցուած է փոքրիկ քաղաքը, անցանք խիտ անտառներէն, որոնք քաղաքին կու տային ճիւղերու մէջ շինուած բոյնի մը կերպարանքը. հիացանք վիլլաներուն, որոնցմէ իւրաքանչիւրը ունէր իր սեփական լողարանը: Այդպէս թափառելով ժամանակը անցուցինք մինչև գիշերուան ժամը տասը:

«Էլենորա»ի ծխնելոյղէն ծուխի քուլաները դէպի երկինք կը բարձրանային, տախտակամածը կը դողդղար շոգեմեքենայի ցնցումներէն. մենք շոգենաւին վրայ երկու տեղ ունէինք նաւի միակ սրահին մէջ:

Ժամը տասը քառորդ անցած, շոգենաւը խարիսխ վերցուց ու տրաք սահեցաւ Մեծ Բելտի մուկ ալիքներուն վրայէն:

Գիշերը խաւար էր, քամին կը փչէր ուժգին ու ծովը յուզուած էր շատ խիստ կերպով, ծովեղերքը տեղ տեղ լոյսեր կ'երեւային, քիչ

յետոյ, հեռուն շողաց փարոսի վառ լոյսը. ահա այն բոլորը, ինչ որ մնաց յիշողութեանս մէջ այդ առաջին ճամբորդութենէն:

Առաւօտեան ժամը եօթին շոգենաւը հասաւ Կորսեր — փոքր քաղաք մը Զելանուայի արեւմտեան եզերքին վրայ: Այնտեղ մենք նստանք իսկոյն ուրիշ կառախումբ մը ու անցանք այնպիսի երկրի մը մէջէն, որ նոյնքան տափարակ էր, որքան Հոլլանտի դաշտը:

Երեք ժամէն մենք պէտք է հասնէինք Դանիայի մայրաքաղաքը: Հօրեղբայրս ամբողջ գիշերը աչքերը չփակեց: Ինծի այնպէս կը թուէր, թէ իր անհամբերութեան մէջ ան պատրաստ էր նոյնիսկ իր ոտքերով առաջ մղել կառախումբը: Վերջապէս ան նկատեց ծովու շերտ մը:

— Զո՛ւնդը, բացագանչեց ան:

Մեր ձախ կողմը կ'երեւար ընդարձակ շէնք մը, որ հիւանդանոցի կը նմանէր:

— Յիմարանոց է, ըսաւ ուղեկիցներէն մէկը:

«Ըհը՛, մտածեցի ես, ահա հիմնարկութիւն մը, որ շատ կը յարմարի մեզի: Եւ որքան ալ ընդարձակ ըլլայ այս շէնքը, դարձեալ ան շատ փոքր է բրօֆէսէօր Լիդենպրոկի ամբողջ խելագարութիւնը տեղաւորելու համար»:

Վերջապէս ժամը տասին հասանք Քոփենհակեն, մեր գոյքերը փոխադրուեցան «Յենիքս» հիւրանոցը՝ Բրեդ-Գալէի մէջ: Փոխադրութիւնը կէս ժամ տեւեց, որովհետեւ կայարանը քաղաքէն դուրս կը գտնուէր: Յետոյ հօրեղբայրս ինքզինքը քիչ մը կարգի դրաւ ու դուրս ելաւ ինծի հետ միասին: Հիւրանոցին դռնապանը կը խօսէր դերմաներէն եւ անգլերէն, բայց բրօֆէսէօրը, որ բազմաթիւ լեզուներ գիտէր, անոր հետ խօսեցաւ մաքուր, դանիական լեզուով, և դռնապանը պատասխանեց նոյն լեզուով ու բացատրեց, թէ ուր կը գըտնուէր հիւսիսային հնութիւններու թանգարանը:

Այս նշանաւոր հիմնարկութեան մէջ կը գտնուին բազմաթիւ վերին աստիճանի հետաքրքրական իրեր, որոնք դիւրութիւններ կ'ընծայէր վերականգնելու երկրի պատմութիւնը իր հնագործեան քարէ զէնքերով, գործիքներով ու զարդեղէններով: Այդ թանգարանին տընօրէնը, բրօֆէսէօր Թոմասը, Համպուրկի հիւպատոսին բարեկամն էր: Հօրեղբայրս անոր ուղղուած յանձնարարական նամակ մը ունէր: Ընդհանրապէս գիտնականները գիրար բաւական գէշ կ'ընդունին, բայց այս անգամ բոլորովին տարբեր կերպարանք առաւ: Բրօֆէսէօր Թոմասը ջերմ ընդունելութիւն ցոյց տուաւ բրօֆէսէօր Լիդենպրոկին և նոյնիսկ անոր եզրօրոգիին: Որոշ էր, որ հօրեղբայրս իր գաղտնիքը չյայտնեց թանգարանի տնօրէնին: Մեր ուղեւորութեան նպատակն էր միայն պատիւ Իսլանտայի մէջ, իբրև անշահախնդիր ճամբորդներ:

Պարոն Թոմասը ինքզինքը բոլորովին մեր արամադրու թեան տակ զրաւ ու մենք պարտեցանք ամբողջ նաւահանգիստը՝ մեկնելու պատարաստ շոգենաւ մը դանելու համար:

Ես յոյս ունէի, որ յարմար նաւ մը պիտի չկրնայինք գտնել, բայց կը սխալէի: Դանիական փոքրիկ առադաստանաւ մը՝ «Վալիւրիա»-ն Յունիս Չին պիտի մեկնէր Ռէյկիավիկ: Նաւապետ Բիարնէն նաւուն մէջն էր. անոր ապագայ ուղևորը ուրախութենէն ցաւցնելու աստիճան ուժով սեղմեց անոր ձեռքը: Բաջ նաւապետը քիչ մը զարմացաւ այդպէս ջերմ արտայայտութենէն: Անոր համար շատ բնական էր, որ իր նաւը Իսլանաա պիտի մեկնէր, որովհետեւ այդ իր արհեստարն էր: Բայց հօրեղբորս համար առիկա արտակարգ բան մըն էր: Պատուարժան նաւապետը օգտուեցաւ հօրեղբորս այդ ողևորութենէն՝ մեղմէ, ուղևորութեան համար կրկին զին պահանջելով, բայց մենք ասոր վրայ ուշադրութիւն չդարձուցինք:

— Նաւուն վրայ կ'ըլլաք երեքշարթի օրը, առտունն ժամը 7ին, ըսաւ պարոն Բիարնէն, զրպանը դնելով պատկառելի գումար մը:

Մենք շնորհակալութիւն յայտնեցինք պարոն Թոմասին, իր նուրբեան համար ու վերադարձանք «Ֆենիքս» հիւրանոցը:

— Ամեն ինչ լաւ կ'ընթանայ, շատ լաւ կ'ընթանայ, ըսաւ հօրեղբայրս, ի՞նչ բախտաւոր դիպուած էր, որ գտանք մեկնելու պատարաստ այդ նաւը: Այժմ նախաճաշենք, յետոյ երթանք քաղաքը դիտելու:

Դացինք «Kongens-Nye-Torw» անկանոն հրապարակ մը, ուր կը գտնուէր պահակատունը, ոչ ոքին վախցնող երկու անվնաս թնդանօթներով: Անոր կողքին, թիւ 5 տան մէջ, կար ֆրանսական ճաշարան մը, զոր կ'աշխատցնէր Վինցենտ անունով խոհարար մը: Հոն նախաճաշեցինք կուշտ ու կուտ, իւրաքանչիւրս վճարելով չորս մարքի համեստ գումար մը:

Ես երեխայի պէս կը հրճուէի քաղաքը դիտելով. հօրեղբայրս անարբատունջ ինծի կը հետեւէր, թէև ան բան մը չտեսաւ. ոչ արքայական պալատը, ոչ XVII դարու գեղեցիկ կամուրջը, ո՛չ Թորվալդսենի հսկայ թանգարան-յուշարձանը, որուն պատերուն վրայ նկարուած էին սոսկալի նկարներ և որուն մէջ կը գտնուէին նոյն արձանագործին ստեղծագործութիւնները, ոչ բաւականին գեղեցիկ այգիի մը մէջ կառուցուած Ռօզէնրերդի սքանչելի դղեակը, ոչ Ռընէսանսի սճով կառուցուած բորսայի շէնքը, ո՛չ ալ անոր աշտարակը, որ կազմուած է իրարու հետ հիւսուած չորս պրոնդեայ վիշապներու պոչերով. ոչ սլարսպային մեծ հողմադաշները, որոնց հսկայ թեւերը կը թռչէին ծովու քամիէն՝ բացուած առադաստներու նման:

Ի՞նչ սքանչելի զբօսանք կրնայինք ընել հոս, իմ հրապուրիչ Գը-

րետխնն ու ես, նաւամատոյցին կողմը, ուր առաջստանաւերը կը հանգչէին իրենց կարմիր ծածկոյթներուն տակ, նեղուցի կանաչա-դարձ ասիւրուն, ստուերախիտ թուփերու միջեւ:

Բայց աւա՛ղ, իմ խեղճ Գրետխննը հեռու էր. ու մի՞թէ կրնայի յուսալ, թէ երբեիցէ նորէն կը տեսնեմ դայն:

Սակայն, եթէ հօրեղբայրս բոլորովին չնկատեց այդ հրաշալի տե-սարանները, բայց՝ յետոյ՝ իրեն շատ գիւր եկաւ Ամակ կղզիին զանգա-կատունը, կղզի մը, որ Գօփէնհագենի հարաւ-արեւմտեան մասը կը կազմէ:

Մենք մեր քայլերը ուղղեցինք դէպի այդ կողմը, նստեցանք փո-քըր շոգենաւակ մը, որ ջրանցքին վրայ կ'երթեւեկէր ու քանի մը վայրկեան յետոյ հասանք ծովային վարչութեան նաւամատոյցը:

Քանի մը փողոց անցնելէ յետոյ, հասանք եկեղեցիի մը առջեւ: Այդ եկեղեցին առանձին բան մը չէր ներկայացներ: Բայց ահա թէ ինչո՞ւ անոր բաւական բարձր զանգակատունը զբաւած էր բրօֆէսէօ-րին ուշադրութիւնը. զանգակատան շուրջը, դէպի անոր գագաթը, դուրսի կողմէն օձապտոյտ սանդուխ մը կը բարձրանար:

- Բարձրանա՛նք, ըսաւ հօրեղբայրս:
- Բայց դիտու պտոյտը՞, առարկեցի ես:
- Աւելի լաւ, պէտք է վարժուիլ:
- Սակայն...

— Եկո՛ւր, կ'ըսեմ քեզի ժամանակ չկորսնցնենք:

Պէտք էր հնազանդիլ. փողոցին միւս կողմը ասրոզ պահակը մեզի բանալին սուաւ ու մենք սկսանք բարձրանալ: Հօրեղբայրս առաջ անցաւ աշխոյժ քայլերով: Ես անոր կը հետեւէի երկիւղով առցուն, որովհետեւ զլուսս շատ շուտ գլխապտոյտ կ'ունենար:

Քանի զեռ կը բարձրանայինք ներքին սանդուխով, ամեն ինչ լաւ կ'ընթանար, բայց 150 աստիճան բարձրանալէ յետոյ պաղ օդը փչեց դէմքիս, մենք հասած էինք զանգակատան հարթատանիքին (Պլատֆօրմ): Այստեղէն կ'սկսէր բացօդեայ սանդուխը, որուն աս-տիճանները հետզհետէ աւելի նեղնալով, կարծես դէպի երկինք կը բարձրանային:

- Ես այլեւս չեմ կրնար, բացազանչեցի ես:
- Մի՛թէ՞ այդքան վախկոտ ես: Բարձրացի՛ր, անողաքարար պատասխանեց բրօֆէսէօրը:

Ստրպուած էի մաղլցելով հետեւիլ անոր: Բայց օդին, զլուսս ըս-կըսաւ դառնալ, կ'ըզգայի թէ ինչպէս զանգակատունը կը շարժէր զօ-րաւոր հովէն, ուղքերս կը հրաժարէին առաջ երթալու. քիչ յետոյ սկսայ ծունկ առ ծունկ մաղլցիլ, յետոյ փորիս վրայ սողալ, և յետոյ փակեցի աչքերս. զիս բռնած էր «զատարկութեան վախը»: Վերջա-

պէս հօրեղբայրս օձիքէս բռնելով քաշեց զիս և ես հասայ մինչեւ դա-  
դաթը :

— Նայէ՛, ըսաւ հօրեղբայրս, լա՛ւ նայէ : Պէտք է անդունդին  
մէջ նայելու դասեր առնել :

— Աչքերս բացի և վար նայեցայ : Տուները կը թուէին ինծի  
տափակցած , ծուխին մէջ կորսուած : Դիտուս վրայէն կ'անցնէին ամ-  
պի շեշտեր . տեսողական խաբկանքին շնորհիւ , անոնք ինծի անշարժ  
կը թուէին , մինչդեռ զանգակատունը , անոր զլխուն դրուած գունտն  
ու մենք , կարծես կը քշուէինք ու կը տարուէինք անասելի արագու-  
թեամբ : Հեռուն կը տարածուէր կանաչադարձ դաշտը , միւս կողմէն  
ծովը էր որ կը պսպղար արեւուն ճառագայթներուն տակ : Հոն կ'երեւ-  
ւար Զունդը , քանի մը սպիտակի մօտ առագաստներով , իսկ արեւել-  
եան կողմը , մշուշի մէջէն հաղիւ կ'երեւային Շուէտի ափերը : Այդ բո-  
լորը պտոյտ կուգային իմ աչքերուս առջեւ :

Բայց և այնպէս պէտք էր վեր կենալ , ուղիղ կանգնիլ ու դիտել :  
Դիտապտոյտի իմ առաջին դասը ամբողջ ժամ մը տեւեց : Երբ վերջա-  
պէս ինծի թոյլ տրուեցաւ վար իջնել ու ոտքերս դնել հաստատուն  
հողին վրայ , ես բոլորովին ջարդուած էի :

— Վաղը կը կրկնենք մեր դասը ,— ըսաւ ուսուցիչս :

Իսկապէս ամբողջ հինգ օր տեւեց այդ զլխապտոյտի մարզանքը ,  
կամայականա՛յ ես զգալի յաջողութիւն ձեռք բերի բարձրէն վար նա-  
յելու արուեստին մէջ :

## Թ

Հասաւ մեկնելու օրը : Նախորդ օրը բրօֆէսօէր Թոմսոնը տուած  
էր մեզի յանձնարարական կարիւր նամակներ , ուղղուած Իսլանտայի  
նահանգապետ Կոմս Տրամպէին , եպիսկոպոսի փոխանորդ Պ. Պիկ-  
տուրսոնին և Ռեյկիավիկի քաղաքապետ Պ. Ֆինսենին : Հօրեղբայրս  
անոր շնորհակալութիւն յայտնեց ձեռքի ուժովին սեղմումով :

Ամսուան 2ին , առտուան ժամը 6ին մեր թանկագին առարկանե-  
րը փոխադրուեցան «Վալկիրիա» նաւուն վրայ : Նաւապետը մեզի ա-  
ռաջնորդեց դէպի մեր բաւական նեղ խցիկները :

— Հովը նպաստաւոր է մնզի համար , հարցուց հօրեղբայրս :

— Հրաշալի , պատասխանեց նաւապետ Բիարնէն , հարաւա-  
րեւելեան : Զունդէն մենք դէպի բաց ծով դուրս կու գանք բոլոր ա-  
ռագաստները պարզած :

Բիչ յետոյ երեքկայմանի առագաստանաւը շարժեցաւ և բոլոր ա-  
ռագաստները բանալով՝ մտաւ նեղուցին մէջ : Ժամ մը անցաւ , Դա-

նիայի մայրաքաղաքը կարծես ընկղմեցաւ հեռաւոր ալիքներու մէջ, իսկ «Վալկիրիա»-ն կը լողար էլսինորի(\*) ակերուն մօտ: Իմ այս ջղային վիճակիս, կը թուէր, թէ ահա կը տեսնեմ առասպելական դղեակին տախտակամածին վրայ դեգերող Համլէթին ստուերը:

— Մեծ խելագար, ըսի ես, դուն կ'երեւի հաւանութիւն կու տայիր մեր արշաւանքին: Գուցէ դուն նոյնիսկ կը հետեւէիր մեզի մինչև երկրին կեդրոնը, յուսալով քու յաւիտենական կասկածներու լուծումը դանել հոն:

Բայց բան մը չերեւաց հնադարեան պատերուն վրայ: Ի դէպ, պէտք է ըսել, որ այդ դղեակը շատ աւելի երիտասարդ է, քան ինքը դանիական հերոս Իշխանը: Այժմ ան կը ծառայէ իբրև շքեղ բնակարան մը, Ձունդի նեղուցի վերակացուին համար. նեղուց մը, ուրկէ տարեկան կ'անցնին բոլոր ազգերուն պատկանող տասնեակինգ հազար նաւեր: Ինչ յետոյ կրոնպուրկի դղեակը անյայտացաւ մշուշին մէջ, ինչպէս նաև շուեռական ափին բարձրացած Հելսինպուրկի աշտարակը, և առագաստանաւը քիչ մը թեքուեցաւ կատեգատէն փչող հովուն աղդեցութեան տակ:

«Վալկիրիա»-ն հրաշալի առագաստանաւ էր, սակայն առագաստանաւերուն երբեք կարելի չէ վստահիլ: Մեր նաւը Ռէյկիավիկի համար կը տանէր ածուխ, տնային իրեր, կաւէ ամաններ և հացահատիկ: Անոր ամբողջ անձնակազմը բաղկացած էր հինգ հոգիէ, բոլորն ալ դանիացիներ, որոնք լիովին կը բաւէին այդ փոքր նաւը ղեկավարելու համար:

— Ինչքա՞ն կը տեւէ ուղեւորութիւնը, հարցուց հօրեղբայրս նաւապետին:

— Մօտաւորապէս տասը օր, պատասխանեց վերջինը. եթէ Փարերեան կղզիներէն փչող հիւսիս-արեւմտեան հովը մեզ չխանգարէ:

— Բայց, ամենայն դէպս, դուք հօ, շատ չէ՞ք ուշանար:

— Ո՛չ, Պ. Լիդենպրոկ, կրնաք հանգիստ ըլլալ, ժամանակին կը հասնինք:

Երեկոյեան դէմ նաւը դարձաւ Սկագեն հրուանդանը — Դանիոյ հիւսիսային ծայրը — յետոյ գիշերը անցաւ Սկագերակը, Նորվեկիոյ հարաւային ծայրէն դարձաւ Լինդես հրուանդանը և մտաւ Հիւսիսային ծովը:

Երկու օր յետոյ երեւցան Շոտլանտական ափերը՝ Պետերհետի մօտ, և «Վալկիրիա»-ն Օրկադեան և Շոտլանտական կղզիներուն մէջէն անցնելով, ուղղուեցաւ դէպի Փարերեան կղզիները:

\*) Էլսինորը Դանիայի այն քաղաքն է, որուն դպեակին մեզ կը կասարալի Շեյխալիբի «Համլէթ»ի գործողութիւնը:

Քիչ յետոյ մեր առաջաստանաւը կը ճեղքէր արդէն Ատլանտեան ովկիանոսին ալիքները: Նաւը ստիպուած էր դանդաղեցնել ընթացքը, դիմադրելով հիւսիսային հակառակ հովուէն, և դժուարութեամբ հասաւ Ֆարերեան կղզիները: Ամսուն 8-ին նաւապետը նկատեց երկգահնեայ՝ այդ կղզիներուն ամենէն արեւելեանը և այդ կէտէն յետոյ մենք ուղղուեցանք դէպի Պորտլանտի հրուանդանը, որ կը գտնուէր Իսլանտայի հարաւային ափին վրայ:

Ուղեւորութեան ընթացքին ոչ մէկ բան պատահեցաւ: Ես բաւական լաւ դիմացայ ծովախոտին. հորեղբայրս, սրտի մեծ կսկիծով ու ալ աւելի ամօթով, անլերջ կը տառապէր ծովային հիւանդութեամբ: Այնպէս որ չկրցաւ նաւապետ Բիարնէէն տեղեկութիւն առնել ո՛չ Անեֆելսի, ո՛չ հաղորդակցութեան միջոցներու, և ոչ ալ իրերու փոխադրութեան մասին: Ան ստիպուեցաւ այդ հարցերու պարզաբանութիւնը յետաձգել մինչև հասնելիք տեղը, և ամբողջ ժամանակը պառկած մնաց խցիկին մէջ, որուն պատերը կը ճարճատէին ալիքներու հարուածներուն տակ: Իսկապէս, ան արժանի էր այդ դրութեան:

Ամսուն 11-ին՝ մենք տեսանք Պորտլանտ հրուանդանը: Օդին պարզութիւնը մեզի կարելիութիւն տուաւ նկատելու համար Միրդալս-Հոկուլը, որ կը բարձրանար այդ հրուանդանին վրայ: Այդ հրուանդանը, ծովեզերքին միակ դուրս ցցուած բլուրն է, կազմուած սրածայր ժայռերով:

«Վալկիրիա»ն ծովեզերքէն բաւական հեռու կը լողար, հետեւելով ափերուն, ուղղուելով դէպի արեւմուտք, կէտերու և շնածուկերու բաղձաթիւ խոճարերու մէջէն: Շուտով երեւցաւ խոռոչաւոր հսկոյ ժայռ մը, որուն ժէջէն փրփրած կը թափուէին ծովուն կատաղի ալիքները: Վեստմանի կղզիակները կարծես թէ ովկիանոսէն դուրս ցցուած էին, ճիշդ այնպէս, ինչպէս հեղուկ դաշտի վրայ բարձրացած ժայռերը: Այդ կէտէն սկսեալ առաջաստանաւը դէպի բաց ծով դուրս եկաւ, որպէսզի բաւական հեռուէն ընթանայ և անցնի Ռեյկիանես հրուանդանը, որ Իսլանտայի արեւմտեան անկիւնի վերջաւորութիւնն է:

Իրիստ ալեկոծութեան պատճառով հորեղբայրս չէր կրնար նաւակամուրջին վրայ բարձրանալ ու դիտել այս կտրտուած ափերը, որոնք կը ձեծէր հարաւ-արեւմտեան քամին:

Քառասունութը ժամ յետոյ, երբ փոթորիկը հանդարտեցաւ, արեւելեան կողմը երեւցաւ Սկագն հրուանդանի կողանշանը. հրուանդան մը, որուն վտանգաւոր ժայռերը բաւական երկար տարածութեան վրայ կը շարունակուէին ջուրին տակ: Իսլանտայի ուղեցոյց մը մեր առաջաստանաւին վրայ բարձրանալով «Վալկիրիա»ն առաջնորդեց դէպի Ֆակսս ծովածոցը, որուն ափին կը գտնուէր Ռեյկիալիկը:

Բրօֆէսէօրը վերջապէս կրցաւ դուրս ելլել խցիկէն: Գունատ էր

քիչ մը, բայց և այնպէս իչպէս միշտ՝ առոյժ և դէմքի գոհ արտայայտութեամբ:

Քաղաքին բնակչութիւնը, չափազանց հետաքրքրուած առաջաստանաւին ժամանումէն՝ խմբովին հաւաքուած էր քարավին վրայ:

Հօրեղբայրս կը շտապէր հեռանալ իր լողացող բանտէն, աւելի ճիշտ՝ հիւանդանոցէն: Բայց առաջաստանաւէն չհեռացած տակաւին, ան ինձի տարու անոր առաջամասը և ցոյց տուաւ ծովածոցին հիւսիսը երեւցող երկգագաթանի, յաւէրժական ձիւնով ծածկուած լեռմը:

— Ահա՛ Սնեֆելսը, բացագանչեց ան, Սնեֆելսը:

Յետոյ պատուիրելով, որ կատարեալ լռութիւն պահեմ, իջաւ մեզի սպասող նաւակին մէջ: Նս իրեն հետեւեցայ ու քիչ յետոյ մենք ոտքերնիս դրինք Իսլանտայի հողին վրայ:

Ամենէն առաջ մեզի ներկայացուաւ շատ բարեդէմ, հազարապետի համազգեստով մարդ մը: Կղզիին կառավարիչն էր, Կոմս Տրամպը: Բրօֆէսէօրը իսկոյն ճանչցաւ ու իրեն յանձնեց Քոփէնհակէն բերած յանձնարարական նամակները, յետոյ իրենց միջեւ կարճ խօսակցութիւն մը սկսաւ դանիական լեզուով, որուն ես չմասնակցեցայ շատ յայտնի պատճառով: Այդ խօսակցութեան հետեւանքը այն եղաւ՝ որ Կոմս Տրամպը ինքզինքը ամբողջութեամբ բրօֆէսէօր Լիդենսյորդի տրամադրութեան տակ դրաւ:

Հօրեղբայրս ջերմ ընդունելութիւն գտաւ նաև քաղաքապետ Պ. Ֆինսենի կողմէն, որ նոյնպէս նահանգապետի նման՝ զինուորական համազգեստ կը կրէր, թէև անոր թէ՛ բնաւորութիւնը և թէ՛ պաշտօնը շատ խաղաղ բնութիւն ունէին:

Ինչ որ կը վերաբերի փոխանորդ եպիսկոպոս Պ. Պեկտուրսաֆին, ան կը շրջէր իր եպիսկոպոսական թեմը և այդ պատճառով ալ մեր այցելած ատեն չկրցանք ներկայանալ իրեն:

Բայց շատ համակրելի մարդ մը, որ մեզի այնքան օգտակար եղաւ, Ռէյկիավիկի դպրոցին բնագիտութեան դասատու Պ. Ֆրիդրիկսոնն էր: Այդ համեստ գիտնականը միայն իսլանտերէն և լատիներէն կը խօսէր. երբ ան Հորացիոսի լեզուով իր ծառայութիւնը առաջարկեց, ես զգացի, որ մենք իրար հասկնալու համար ստեղծուած էինք: Իսկապէս այդ միակ մարդն էր, որուն հետ կրնայի խօսիլ այնքան առեն, որքան մենք մնացինք Իսլանտա:

Այդ հրաշալի մարդը մեր տրամադրութեան տակ դրաւ իր տան երեք սենեակներէն երկուքը, ուր մենք շուտով տեղաւորուեցանք մեր իրերով, որոնց քանակութիւնը բաւական զարմացուց Ռէյկիավիկի բնակիչները:

— Է՛հ, Աքսէ՛լ, ըսաւ հօրեղբայրս, ամեն ինչ լաւ կ'ընթանայ, ամենէն դժուարը արդէն կատարուած է:

— Ինչպէ՞ս թէ ամենէն դժուարը, բացառանչեցի ես:

— Անշուշտ, հիմա մեզի կը մնայ միայն իջնել:

— Է՛հ, եթէ դուք դործին այդպէս կը նայիք, անշուշտ, իրաւունք ունիք, բայց ես կը կարծեմ, որ անգամ մը իջնելէն յետոյ, պէտք է նաև բարձրանալ...

— Օ՛հ, այդ ինծի երեսք չի անհանդստացնէր: Բայց և այնպէս պէտք չէ ժամանակ կորսնցնել: Ես իսկոյն գրադարան կ'երթամ. գուցէ հոն Սակնուսեմի ձեռագիրներէն կարենամ ճարել բան մը, որ ինծի շատ օգտակար կ'ըլլայ:

— Իսկ այդ միջոցին ես քաղաքը կը դիտեմ: Մի՞թէ դուք չէք ուզեր նոյնը ընել:

— Ա՛հ, չէ, այդ ինծի շատ քիչ կը շահագրգռէ: Իսլանտայի հետաքրքրական մասը ոչ թէ երկրի երեսն է, այլ երկրին տակը:

Ես դուրս ելայ և սկսայ ասդին անդին թափառիլ:

Դժուար էր կորսուիլ Ռէյկիավիկի ընդամենը երկու փողոցներուն մէջ, այդ պատճառով ալ պէտք չունեցայ ճամբան հարցնել, ինչ որ զիս շատ ուրախացուց, որովհետեւ ստիպուած պիտի ըլլայի նշաններով խօսիլ:

Քաղաքը կառուցուած է բաւական ցած ու ճահճային հովիտի մը մէջ, երկու բլուրներուն մէջտեղը: Մէկ կողմէն կը տարածուի մարած լավայի հաստ շերտը, որ աստիճանաբար կ'իջնէ դէպի ծովը, միւս կողմէն՝ Փակասայի ընդարձակ ծովածոցը, որուն հիւսիսը կը բարձրանայ Սնեֆելսի հսկայ սառցարանը: Ծովածոցին մէջ՝ այդ վայրկեանին՝ միայն Վլակիիրիա՞ն կանգնած էր խարիսխի վրայ: Ընդհանրապէս ծովածոցին այդ կողմը, բաց ծովուն, կը կանգնին անդիակաւան և ֆրանսական պահականաւեր, ձկնորսութիւնը պահպանելու համար, բայց այդ միջոցին անոնք կղզիին արեւելեան մասը կը գտնուէին:

Ռէյկիավիկի երկու փողոցներէն ամենէն երկարը ծովեզերքին զուգահեռ ձգուած է. այդ փողոցին վրայ՝ հորիզոնական ձեւով դըրուած կարմիր գերաններով կառուցուած հիւղակիներուն մէջ կ'ապրին վաճառականներն ու առեւտրականները. միւս փողոցին վրայ կը գտնուին եպիսկոպոսին և այնպիսի մարդոց տուները, որոնք առուտուրով չեն զբաղիր:

Կարճ ժամանակէն անցայ այս խեղճ ու տխուր փողոցներէն. երբեմն կը հանդիպէի գունատած կանաչութեան, որ խունացած ու մաշուած գորգի կը նմանէր, կամ բանջարանոցի նմանող հողամասի մը, որուն վրայ բուսած ցանցառ բանջարեղէնը — գետնախնձոր, կաղամբ, աղցան — այնքան մանր էին, որ միայն լիլիպուտներու սեղանին կը բաւէին: Հոս ու հոն քանի մը վտիտ մեխազներ, որոնք արեւի լոյսին ու ջերմութեան կարօտը կ'ըզգային:

Ոչ-առեւտրական փողոցին վրայ՝ նկատեցի քաղաքին գերեզմանատունը, շրջապատուած հողէ պատնէշով, ուր շատ քիչ գերեզմաններ կ'երեւային:

Քանի մը քայլ աւելի հեռուն, ես տեսայ նահանգապետին տունը, որ հիւզակ մըն էր, բաղդատուած Համպուրկի քաղաքապետարանին հետ, բայց պալատ կը թուէր այստեղի տնակներուն մէջ:

Փոքր լիճին և քաղաքին միջև կը բարձրանար եկեղեցին, որ կառուցուած էր բողոքական ոճով: Եկեղեցւոյ կարմիր կղմինտրէ տանիքը արեւմտեան հովերէն այնքան քայքայուած էր, որ քանդուելու և հաւատացեալներու վրայ փլելու վտանգ կ'ըսպառնար:

Եկեղեցիէն քիչ մը հեռու ըլլելի մը վրայ կառուցուած էր ազգային ուսումնարանը, ուր, ինչպէս յետագային ես տեղեկացայ մեր տանտիրոջմէն, կ'ուսուցանէին երրայերէն, անգլերէն, ֆրանսերէն և ռանիերէն լեզուներ, չորս լեզուներ, որոնցմէ, մեծ ամօթ ինծի, ես բառ մը չէի հասկնար:

Երեք ժամուայ ընթացքին ես կրցայ դիտել ոչ միայն քաղաքը, այլ նաև անոր շրջակայքը: Ընդհանուր տպաւորութիւնը շատ տխուր էր: Ո՛չ մէկ ծառ, ոչ մէկ բուսականութիւն, ամեն տեղ հրաբխային լերի ժայռեր էին միայն:

Իսլանտացիներուն հիւզակները կառուցուած են հողով ու սորֆով, դէպի ներս ծած պատերով, այդ հիւզակները կը նմանին ուղղակի հողի վրայ դրուած տանիքներու: Հիւզակներուն տանիքները ծածկուած են բաւական հարուստ բուսականութեամբ: Ներքին ջերմութեան շնորհիւ, անոնց վրայ խոտը լաւ կը բուսնի և եթէ ժամանակին չհնձնեն, անասունները կը բարձրանան տանիքներուն վրայ՝ հոն արածելու համար:

Իմ պտոյտի պահուս քիչ մարդոց հանդիպեցայ: Առեւտրականներու փողոցէն վերադարձիս, նկատեցի որ ընակչութեան մեծամասնութիւնը դժբաղած էր ձողաձուկ աղելով և չորցնելով. այդ ձուկը անոնց արտահանման գլխաւոր առարկան է:

Ինչպէս ես նկատեցի, տղամարդերը բաւական ուժեղ կազմուածք ունէին, բայց ծանրաշարժ, շիկահեր, կապուտաչուի, խոհուն հայեացքով, կարծես մարդկութենէն դուրս կ'ըզգային իրենք զիրենք. խեղճ աքսորուածներ, դատապարտուած՝ ապրելու այդ սառոյցներու երկրին մէջ, բեւեռային շրջանի սահմանին: Իրզուր անոնց դէմքին վրայ ժպիտ կ'որոնէի: Ճիշդ է, երբեմն անոնք կը ծիծաղէին, բայց կը թուէր. թէ այդ ծիծաղը հետեւանք էր դէմքի մկաններուն ակամայ կծկումին:

Անոնց հագուստը կաղմուած էր սեւ բուրդէ բաճկօնէ, լայնեզր գլխարկէ, կարմիր երիզաւոր անդրավարտիկէ և կաշիի կտորէ մը, որ ոտնամանի տեղ ոտքերնին կը փաթթէին:

Գիները, իրենց տխուր և հեղ քնաւորութեամբ, բաւական հաճելի արտաքին ունէին իրենք ալ տղամարդերու պէս հագած էին նոյն կտորէն կարուած լանջազգեստ (կորսամ) և շրջազգեստ: Աղջիկները հիւսուած ծամերուն վրայ կը կրէին կղմինտրի գոյն գործուած վոքր գլխարկներ, իսկ կիները գլուխնին կը կապէին գունաւոր թաշկինակ:

Լաւ մը զբօսնելէն յետոյ, երբ տուն վերադարձայ, հօրեղբայրս արդէն հոն էր, ու կը խօսակցէր Պ. Ֆրիդրիկսոնին հետ:

Ժ.

Ճաշը պատրաստ էր. բրօֆէսէօր Լիդենպրոկը մեծ ախորժակով կերաւ, որովհետեւ նաւուն վրայի ակամայ ծոմապահութիւնը իր ըստամոքսը բոլորովին պարպած էր: Այդ ճաշը, որ աւելի դանիական էր, քան իսլանտական, առանձին բան մը չէր ներկայացնէր, բայց մեր հիւրընկալը, որ աւելի իսլանտացի էր, քան դանիացի, ինծի յիշեցուց հնադարեան հիւրընկալութեան հերոսները:

Ոսակցութիւնը տեղական լեզուով էր, որուն հօրեղբայրս կը խառնէր գերմաներէն բառեր, իսկ պ. Ֆրիդրիկսոնը լատիներէն, որպէսզի ես ալ կարենայի հասկնալ: Ոսակցութիւնը դիտական խնդիրներու շուրջ կը դառնար, ինչպէս այդ վայել էր դիտականներուն, բայց բրօֆէսէօր Լիդենպրոկը շատ զգոյշ էր և գրեթէ ամեն վայրկեան ինծի աչքով նշան կ'ընէր, որ լռութիւն պահեմ մեր ապագայ նպատակներուն մասին:

Ամենէն առաջ պ. Ֆրիդրիկսոնը հօրեղբորս կարծիքը հարցուց գրադարանի մասին:

— Ձեր գրադարանը, ըսաւ հօրեղբայրս, կազմուած է գրեթէ պարապ դարակներու վրայ թափուած հատուկտոր գիրքերէ:

— Ինչպէ՛ս, պատասխանեց Պ. Ֆրիդրիկսոնը. — մենք ունինք ութ հազար հատոր գիրք, որոնցմէ շատերը թանկագին ու հազուագիւտ են, թէ հին-սկանաինավեան լեզուով և թէ բոլոր նոր հրատարակուած գիրքեր, որ ամէն տարի մեզի կ'ուղարկէ Գորենհակը:

— Ո՞ւր են այդ ութը հազար հատորները, իմ հաշուով...

— Օ՛հ, Պ. Լիդենպրոկ, այդ բոլոր շրջանը կ'ընեն ամբողջ երկրին մէջ, մեր հին սառուցեալ կղզիին բնակիչները կը սիրեն կարդալ. չիկայ գիւղացի մը, ձկնորս մը, որ կարդալ չգիտնայ ու չկարդայ: Մենք կը կարծենք, որ գիրքերը փոխանակ բարբոսելու երկաթէ վանդակներուն հոտելը, հետաքրքիր աչքերէ հեռու, պէտք է կարդացուին և օգտագործուին ընթերցողներուն կողմէ: Այդ նպատակով ալ այդ գիրքերը կ'անցնին ձեռքէ ձեռք, կը թղթատուին, կը կարդացուին և կրկին

ու կրկին կարգացուելէն յետոյ միայն կը վերադառնան իրենց դարակները :

— Լաւ, բայց օտարականները, հարցուց հօրեղբայրս, քիչ մը նեղացած :

— Ի՞նչ կ'ըսէ՛ք. օտարականները իրենց երկրին մէջ ունին իրենց դրադարանները, իսկ մեզի համար կարեւորը այն է, որ մեր գիւղացիները կարենան կրթուիլ: Կը կրկնեմ, սորվելու ցանկութիւնը իսլանտացիի արիւնին մէջ կայ: Այդ պատճառով 1816 թուին, մենք հիմնեցինք դրական ընկերութիւն մը, որ շատ լաւ կ'աշխատի: Օտար գիտնականները իրենց պատիւ կը համարեն պատկանիլ անոր: Այդ ընկերութիւնը կը հրատարակէ գիրքեր, որոնց նպատակն է ուսում տարածել մեր հայրենակիցներուն մէջ, և այդպէսով մեծ ծառայութիւն կը մատուցանէ երկրին: Եթէ դուք պ. Լիդենպրոկ, կ'ուզէք մեր թղթակից-արդամներէն մէկը ըլլալ, ատով մեզի մեծ հաճոյք կը պատճառէք:

Հօրեղբայրս, որ արդէն հարիւրաւոր գիտական ընկերութիւններու անդամ էր, մեծ յօժարութեամբ շնորհներ այդ առաջարկը, որ մէջ շատ զգացուեցաւ Պ. Ֆրիդրիկսոնը:

— Իսկ հիմա, շարունակեց այս վերջինը, բարի եղէք նշել այն գիրքերը, որ դուք կը յուսայիք գտնել մեր գրադարանը. գուցէ կարենամ անոնց մասին տեղեկութիւններ տալ ձեզի:

Ես նայեցայ հօրեղբորս: Ան պատասխանը ուշացուց, այդ ուղղակի իր ծրագիրներուն հետ կապուած էր: Սակայն պահ մը մտածելէ յետոյ ան որոշեց խօսիլ:

— Պարոն Ֆրիդրիկսոն, ըստ ան, ես կը փախաքէի գիտնալ, արդեօք ձեր հին ձեռագրերուն մէջ չե՞ն գտնուիր Սակնուսսեմի գրքերէն:

— Արնէ Սակնուսսեմ, բացառանչեց Ռէյկիավիկեան քրօֆէսէօրը, ձեր խօսքը XVI դարու գիտնականի մասին է, որ միևնոյն ատեն և մեծ բնագէտ էր, մեծ քիմիագէտ (ալքիմիկոս) և մեծ ճամբորդ:

— Այո՛, ճիշդ անոր մասին:

— Իսլանտացի գիտական և գրական փառքի՞ մասին:

— Դուք իրաւացի էք:

— Ամենահռչակաւոր մարդերէն մէկո՞ւն մասին:

— Համաձայն եմ:

— Եւ որուն խիզախութիւնը հաւասար էր իր հանճարի՞ն:

— Կը տեսնեմ, որ զինք լաւ կը ճանչնաք:

Հօրեղբայրս մեծ ոգեւորութեամբ մտիկ կ'ընէր իր հերոսին մասին ըսուած այդ խօսքերը և հայեացքը չէր հեռացնէր Պ. Ֆրիդրիկսոնի դէմքէն:

— Հրաշալի է, ըսաւ ան, իսկ իր երկե՞րը:

— Իր երկերը մեր մօտը չկան:

— Ինչպէ՞ս, Իսլանտա չկա՞ն անոնցմէ:

— Ատոնք գոյութիւն չունին ոչ Իսլանտայի մէջ և ոչ ալ ուրիշ տեղ մը:

— Բայց ինչո՞ւ:

— Որովհետեւ Արնէ Սակնուսեմը հալածուեցաւ իբր հերիտիկոս, և իր երկերը դահիճին ձեռքով այրուեցան Բոփէնհակի մէջ 1573 թուին:

— Շատ լաւ, հրաշալի է, բացադանչեց հօրեղբայրս մեծ զարմանք պատճառելով քնական գիտութիւններու բրօֆէօէօրին:

— Ինչպէ՞ս թէ, հարցուց այս վերջինը:

— Այո՛, ամեն ինչ կը բացատրուի, ամեն ինչ պարզ է, ես հիւմայ կը հասկնամ, թէ ինչո՞ւ Սակնուսեմը, որ դասուած է հերիտիկոսներու շարքին, ստիպուած էր իր հանճարին մեծ յայտնութիւններուն գաղանիքը թաքցնել անհասկնալի ծածկագրերու տակ...

— Ի՞նչ դադանիք, աշխուժօրէն հարցուց Պ. Յրիդրիկսոնը:

— Գաղանիք մը... որ... պատասխանեց հօրեղբայրս կմկմալով:

— Գուցէ ձեր մօտ, ուէ յատուկ վաւերութե՞ղթ մը կայ, — հարցուց մեր հիւրընկալը:

— Ո՛չ... ևս միայն ենթադրութիւն կ'ընեմ:

— Լաւ, պատասխանեց Պ. Յրիդրիկսոնը, որ բարի եղաւ չը պնդել, տեսնելով հօրեղբորս շփոթութիւնը: Յոյս ունիմ, շարունակեց ան, որ դուք մեր կղզիէն չէք հեռանար, առանց ուսումնասիրելու անոր հանքային հարստութիւնները:

— Անպայման, պատասխանեց հօրեղբայրս, բայց ես քիչ մը ուշացեր եմ. ուրիշ գիտնականներ անկասկած անցած են այստեղէն:

— Այո՛, Պ. Լիդենպրոկ, արքայական յանձնարարութեամբ կատարուած Պ. Պ. Օլասսենի և Պովկլսոնի աշխատանքները, Տրոյլի ուսումնասիրութիւնները՝ Գայմարի և Ռուպէնտի գիտական արշաւանքը Փրանսական «La Recherche» գործընթացին (նաև) վրայ և վերջապէս «Թագուհի Հորսենդիա» Յրեկութիւն (նաև) վրայ գտնուող գիտնականներուն վերջերս կատարած գիտողութիւնները, մեծապէս նպաստեցին Իսլանտայի ուսումնասիրութեան գործին: Բայց հաւատացէք ինձի, տակաւին շատ բան կայ ընելիք:

---

(\*) Նաւապետ Դիւպերէն «La Recherche» գործերը դրկած էր «Lilloise» նաւուն ետեւէն, որմէ ոչ մէկ լուր կար, եւ որ վերջնականապէս անյայտացաւ: (Ծան. Հեղ.)

— Կը կարծէ՞ք, միամիտ Գէմքով հարցուց հօրեղբայրս, ջանալով ծածկել իր աչքերուն ուրախ փայլը:

— Այո՛, տակաւին որքան լեռներ, սառցարաններ, հրաբուխներ կան ուսումնասիրելու, որոնք այնքան քիչ ծանօթ են: Շատ հեռուն չերթանք, տեսէք նոյնիսկ այդ լեռը, որ կը բարձրանայ հորիզոնին, Սնեֆելսն է այդ:

— Ա՛, ըսաւ հօրեղբայրս, Սնեֆելսը:

— Այո՛, ամենահետաքրքրական հրաբուխներէն մէկը, որուն խառնարանը քիչ կ'այցելեն:

— Մարա՞ծ է:

— Իհարկէ, հինգ հարիւր տարի առաջ:

— Լաւ ուրեմն, պատասխանեց հօրեղբայրս, ջղածգօրէն ոտքը ոտքին վրայ դնելով, որպէսզի տեղէն վեր չցատկէ. ես կը փափաքիմ երկրաբանական ուսումնասիրութիւններ սկսիլ այդ Սնեֆելս... Ֆեսել... Ինչպէս ըսիք...

— Սնեֆելս, պատասխանեց պատուական Պ. Ֆրեդրիկսոնը:

Խօսակցութեան այդ մասը տեղի ունեցաւ լատիներէն, ես բոլորը հասկցայ եւ հագիւ կրնայի գէմքիս յուրջ արտայայտութիւն տալ, տեսնելով, թէ ինչպէս հօրեղբայրս կ'աշխատէր ծածկել իր ուրախութիւնը, որ կը փայլէր իր գէմքին վրայ: Շատ միամիտ մարդու տեսք ընդունելով, ան ծերուկ սատանայի կը նմանէր:

— Այո, ըսաւ ան, ձեր խօսքերը զիս աւելի վճռական կը դարձնեն. մենք կը փորձենք բարձրանալ Սնեֆելսը, դուցէ նոյնիսկ ուսումնասիրենք անոր խառնարանը:

— Շատ կը ցաւիմ, պատասխանեց Պ. Ֆրեդրիկսոնը, որ զբաղումներս թոյլ չեն տար, որ բացակայիմ. ես յօժարակամ կ'ընկերակցէի ձեզի:

— Ա՛հ, ո՛չ, ո՛չ, աշխուժօրէն աւելցուց հօրեղբայրս, մենք չենք ուզեր ոչ ոք անհանդստացնել, Պ. Ֆրեդրիկսոն. ամբողջ սրբատօլս շնորհակալ եմ ձեզի, ձեզի պէս գիտնականի մասնակցութիւնը խիստ օգտակար կ'ըլլար, բայց ձեր սլաշտօնին պարտականութիւնները...

Ինձի կը թուէր, թէ մեր հիւրընկալը իր Խառնարանի հոգիին պարզութեամբ կ'ըզգար հօրեղբորս խորամանկութիւնը:

— Ես լիովին համամիտ եմ ձեզի, Պ. Լիդենպրոկ, ըսաւ ան, որ դուք ձեր հետազօտութիւնը սկսիք այդ հրաբուխէն. դուք հոն հետաքրքիր գիտողութիւններու համար առատ նիւթ կը հաւաքէք: Բայց ըսէք, ինչպէ՞ս կը մտածէք հասնիլ Սնեֆելսի թերակղզին:

— Ծովով, անցնելով ծովածոցը. այդ ամենէն կարճ ճամբան է:

— Անկասկած, բայց հիմա այդ անհնար է:

- Ինչո՞ւ :
  - Որովհետեւ Ռէյկիւալիկի մէջ ո՛չ մէկ նաւակ կայ :
  - Սասունան տանի :
  - Դուք ստիպուած էք ցամաքէն երթալ : Այդ աւելի երկար կը տեւէ, բայն աւելի հետաքրքրական է :
  - Լաւ : Կ'աշխատիմ ուղեցոյց մը գտնել :
  - Ճիշդ այդպիսի մէկը կրնամ ձեզի առաջարկել :
  - Վստահելի և խելացի մա՞րդ է :
  - Այո՛, այդ թերակղզիի բնակիչ է : Ան սուղահաւի ճարպիկ որսորդ է և դուք իրմէ գոհ պիտի ըլլաք : Շատ աղատ կը խօսի զանիւրէն :
  - Բայց ե՞րբ կարելի է տեսնել զայն :
  - Վաղը, եթէ կ'ուզէք :
  - Ինչո՞ւ այսօր չէ :
  - Որովհետեւ ան վաղը միայն հոս կ'ըլլայ :
  - Լա՛ւ. ուրեմն վաղը, պատասխանեց հօրեղբայրս, հռահելով : Քանի մը վայրկեան վերջ այդ շատ կարեւոր խօսակցութիւնը վերջացաւ և գերմանացի բրօֆէսէօրը սրտադին շնորհակալութիւն յայտնեց իսլանտացի բրօֆէսէօրին :
- Այդպէսով, ճաշի ատեն հօրեղբայրս կարեւոր անդեկութիւններ հաւաքեց, ուրիշներուն հետ մէկտեղ Սակնուսետի պատմութեան և անոր վաւերաթուղթի մասին, ինչպէս նաև այն մասին, որ մեզի հիւրընկալողը չէր կրնար ընկերանալ, մեզի, և մեր տրամադրութեան տակ ուղեցոյց մը կ'ըլլար :

## ԺԱ.

Երեկոյին ես կարճ զրօսանք մը ըրի Ռէյկիւալիկի ծովափը և շատ կանուխ տուն վերադարձայ. պտկեցայ հաստ տախտակներէ շինուած մահճակալին վրայ ու քնացայ խոր քունով :

Սոսաւօտուն, երբ արթնցայ, լսեցի հօրեղբորս ձայնը, որ տաք խօսակցութեան բռնուած էր քովի սենեակը : Անմիջապէս ելայ ու ընտապեցի իրեն մօտ :

Ան զանիւրէն կը խօսէր, բարձրահասակ, ամրակազմ մարդու մը հետ : Յաղթանդամ երիտասարդը արտակարգ ուժի տէր կ'երեւար : Անոր լայն գէմքին վրայ փայլող կապոյտ-երսզուն աչքերը խելացի արտայայտութիւն ունէին : Երկար մազերը, որոնք նոյնիսկ Անգլիոյ մէջ շիկահեր կը համարուէին, թափուած էին իր հովակու ուսերուն վրայ : Անձանօթը ճկուն շարժումներ ունէր, սակայն ձեռքերը քիչ կը

չարժէր, մարդու մը պէս որ չգիտեր կամ չտիրեր: Ամեն բան անոր մէջ ցոյց կուտար հանդիստ բնաւորութիւն, բայց ոչ անհող, այլ խաղաղ: Կ'ըզգայիր, որ այդ մարդը ո՛չ ոքէն բան մը կը խնդրէ, որ ան կ'աշխատի իր սեփական հայեցողութեամբ և այս աշխարհին մէջ ո՛չ մէկ բան կը դարմացնէր զինք: Ես իրեն ընաւորութեան այդ գիծերը նկատեցի այն ձեւէն, ինչ ձեւով որ ան մտիկ կ'ընէր բրօքէտսօրին պերճախօսութիւնը: Թեւերը խաչաձեւ, ան անշարժ կանգնած կը դիտէր հօրեղբորս ձեռքի անվերջ շարժումները, բացասական պատասխան տալու ատեն՝ ան գլուխը կը դարձնէր ձախէն աջ, իսկ համաձայնութիւն յայտնելուն, գլուխը կը խոնարհեցնէր, բայց այնքան թեթեւակի, որ երկար մազերը հազիւ կը շարժէին: շարժումներու խրնայողութիւնը ան կը հասցնէր ժլատութեան:

Այդ մարդուն նայելով, երբեք չէի գուշակեր, որ ան պանծալի որսորդ է, ան, անկասկած, չէր վախցնիր որսը, բայց ի՞նչպէս կրնար մօտենալ անոր:

Ամեն բան բացատրուեցաւ, երբ Պ. Ֆրիդրիկսոնը ինձի բսաւ, որ այդ հանդիստ մարդը ռուզաճաճի որսորդ էր միայն: Իսկապէս, կըզգիին զխաւոր հարստութիւնը կազմող աղուամաղը, որ սուղահաւի խոշոր բազի նման թռչուն մը՝ փետուրը հաւաքելու համար մասնաւոր շարժումներ ընելու պէտք չի կայ:

Ամառուայ առաջին օրերուն էզ սուղահաւը իր բոյնը կը շինէ ֆիորգներու(\*) մայրերուն մէջտեղը—այդ ֆիորգներով կարտուած են կզդիին բոլոր ավերը — և յետոյ, բոյնը կը ծածկէ կուրծքէն վերցուցած նուրբ փետուրով: Այնուհետեւ կուղայ որսորդը, կամ աւելի ճիշդ փետուրի վաճառականը, կը վերցնէ բոյնը, և էզը կը վերսկսի իր աշխատանքը: Այդպէս կը շարունակուի այնքան ատեն, որքան դեռ էզին վրայ փետուր կայ: Երբ էզը բոլորովին փետրազերծ կը մնայ, կարող կուղայ արուին: Բայց քանի որ անոր կոշտ և կարծր փետուրը ոչ մէկ արժէք ունի, որսորդը ալ ձեռք չի գպցնէր բոյնին, որուն մէջ էզը հակիթ կ'ածէ. ձագերը գուրս կու գան և յաջորդ տարին կը շարունակուի փետուրի հաւաքումը նոյն եղանակով:

Եւ որովհետեւ սուղահաւը իր բոյնին համար կ'ընտրէ ոչ թէ սեպաձեւ, այլ հարթ և դիւրամատչելի մայրերէ, որոնք ղէպի ծովը կ'իջնեն, իսլանտական որսորդը կրնայ իր արհեստը բանեցնել առանց մեծ շարժումներ ընելու: Այնպէս որ, զիւղացի մըն է ան, որ ոչ կը ցանէ, ոչ կը հնձէ բերքը, այլ միայն կը հաւաքէ դայն:

Այդ լուրջ, պաղարիւն և լռակիաց մարդուն անունը Հանս Բելկէ

---

\*) Ֆիորդ կը կոչուին ցեղ ծովածոցերը Սկանսինավեան երկիրներու մէջ:

էր: ան եկած էր Պ. Ֆրիդրիկսոնի յանձնարարութեամբ: Ան մեր ապագայ ուղեցոյցն էր: Իր շարժումներով հօրեղբորս հակապակերն էր: Սակայն անոնք դիւրութեամբ լեզու գտան և վարձատրութեան մասին ոչ մէկ առարկութիւն եղաւ. մէկը պատրաստ էր ստանալ, ինչ որ անոր առաջարկէին, միւսը՝ վճարել այնքան, որքան կը պահանջէին իրմէ: Երբեք սակարկութեան գործը այնքան դիւրութեամբ վերջացած չէր:

Այսպէս, ըստ պայմանագրութեան, Հանսը յանձն կ'առնէր մեզի առաջնորդել մինչև Ստապի գիւղը, որ կը գտնուէր Մնեֆելս թերակղզիին հարաւային ափը, ճիշդ հրաբուխին ստորոտը: Մինչև այդ գիւղը ճամբան ցամաքէն տասներկու մղոն էր, որ հօրեղբայրս կ'ենթադրէր անցնիլ երկու օրէն: Բայց երբ տեղեկացաւ, որ խօսքը զանիական մղոնի մասին է, որ հաւասար է 7 քիլօմետրի, ան ստիպուեցաւ փոխել իր հաշիւը և հաշուելի հօթը կամ ութը օրուայ ճամբորդութեան հետ:

Պէտք եղաւ ձեռք ձգել չորս ձի. որոնցմէ երկուքը հօրեղբորս և ինծի համար, իսկ միւս երկուքը բեռներուն համար: Հանսը, իր սովորութեան համաձայն, ոտքով պիտի երթար: Ան կատարելապէս ծանօթ էր այդ ծովկղերփին և խոստացաւ ամենակարճ ճամբան ընտրել:

Պայմանագրութեան համաձայն, Ստապի հասնելով չէր վերջանար Հանսի ծառայութեան ժամանակը, ան պէտք է ուղեկցէր մեզի մինչև գիտական ուղեւորութեան վերջանալը, իբր վարձք ստանալով շաբաթական երեք ռիկստալէր (\*): Միայն որոշուեցաւ, որ այդ գումարը իրեն պէտք է վճարուէր ամեն շաբաթ երեկոյեան:

Մեկնումի օրը որոշուեցաւ Յուլիս 16ին: Հօրեղբայրս ուղեց որսորդին կանխավճար տալ, բայց ան մերժեց բառ մը միայն ըսելով.

— «Աֆթըր»:

— «Յետոյ», թարգմանեց ինծի բրօֆէսէօրը:

Երբ պայմանագիրը կնքուեցաւ, Հանսը իսկոյն հեռացաւ:

— Հրաշալի մարդ է, բացազանչեց հօրեղբայրս, բայց չի պատկերացներ, թէ ինչ կարեւոր դեր կ'ըսպասէ իրեն:

— Ուրեմն մեզի պիտի ընկերանայ մինչեւ...

— Այո, Աքսէլ, մինչև երկրին կեդրոնը:

Տակաւին մեզի կը մնար 48 ժամ մինչև մեկնումը:

Դժբախտաբար, ինծի համար, այդ երկու օրը անցընել պէտք եղաւ ուղեւորութեան պատրաստութիւններով: Մեր ամբողջ հմտութիւնը գործի դրինք, որպէսզի իւրաքանչիւր իր, որքան կարելի է յարմար կերպով տեղաւորենք գիտական գործիքները մէկ կողմ,

---

\*) Մօսաւոքայէս 3 Բրանֆ:

զէնքերը ուրիշ տեղ մը, ձեռքի գործիքները հակի մը մէջ, պաշարը ուրիշ տեղ մը: Այս ձեւով իրերը չորս մասի բաժնուեցան:

Գիտական գործիքներուն մէջ կային.

1) Էկէլի ջերմաչափ մը, որ բաժնուած էր հարիւրյիսունն աստիճանի իմ կարծիքով, ատիկա կամ չափազանց շատ էր, կամ անբաւարար: Չափազանց շատ՝ եթէ շրջապատի ջերմութիւնը հասնէր այդ բարձրութեան, այն ատեն մենք կը ապուլէինք. անբաւարար՝ եթէ հարցը կը վերաբերէր ստորերկրեայ աղբիւրներու կամ հալած նիւթերու ջերմաստիճանը չափելու:

2) Մթնոլորտային ճնշումը չափելու համար անգայտաչափ մը (մանօմեթր) որ կրնար ցոյց տայ ծովու մակերեւոյթի ճնշումէն աւելի բարձր ճնշումը: Իսկապէս, սովորական օդաչափը (բարօմէթր) մեզի համար անպէտք էր, որովհետեւ օդին ճնշումը հետզհետէ համեմատաբար պիտի աւելնար, քանի մենք երկրին խորը իջնէինք:

3) Ժնեւայի Բուասօնի խրոնօմեթրը, որ ձշգրտօրէն ստուգուած էր Համպուրկի միջօրեականով:

4) Երկու կողմնացոյց, ուղղահայեաց և հորիզոնական ուղղութիւններու համար:

5) Գիշերային հեռադիտակ:

6) Ռուսկորֆի երկու գործիք, (\*) որ ելեքտրական հոսանքի օգնութեամբ առաջ կը բերէ դիւրին տեղափոխելի լոյսի աղբիւր մը, միեւնոյն ատեն անլտանդ և քիչ տեղ բռնող:

---

\*) Ռուսկորֆին գործիքը կազմուած է Վոյսեան սիւնով, որ գործողութեան մէջ կը դրուի հոս չունեցող երկխումային կալիումով: Էնսիւֆիօն նախարակը հաղորդակցութեան մէջ կը դնէ Վոյսեան սիւնի առաջացուցած էլեքտրականութեան յատուկ կառուցուած ունեցող լապսերին հետ. այդ լապսերին մէջ կայ ապակեայ օձաձեւ խողովակ, որմէ օդը դուրս հանուած է. անոր մէջ մնացած է միայն ֆիջ մը անլտանդի կամ բորակածին: Երբ գործիքը կ'ըսկսի աշխատիլ, այդ կազը կը լուսաւորէ միօրինակ սպիտակ լոյսով: Վոյսեան սիւնն ու նախարակը տեղաւորուած են կաշիք ֆակի մէջ, որ ուղեւորը կը կախէ ուսէն: Լապսերը դրուելով դուրսի կողմէն, խաւարին մէջ բաւականաչափ լոյս կուտայ: Ան հնարաւորութիւն կուտայ, առանց պայքիւնէն վախճալու, առաջանալ ամենադիւրին բռնկուող կազերու մէջէն եւ չի մարիւր նոյնիսկ ամենախոր ջուրերուն ցակ:

Այս գործիքի գիւսարար Ռուսկորֆը գիտնական եւ հմուտ բնագէտ է: Անոր մեծ գիւտը էնսիւֆիօն նախարակն է, որ կարելիութիւն կուտայ արագորելու բարձր լարուածութեան էլեքտրականութիւն:

(Ման. հեղ.)

Մեր զէնքերը բազկացած էին երկու հրացանէ (կարապին) և ֆօլթի երկու ատրճանակէ: Բայց ինչի՞ համար էին զէնքերը: Իմ կարծիքով մենք վախնալու ոչ մէկ բան ունէինք, ո՛չ վայրենիներէն, ո՛չ ալ գիշատիչ գազաններէն: Բայց հօրեղբայրս, ինչպէս կ'երեւայ, նոյնքան կարեւորութիւն կուտար զէնքերուն, որքան գործիքներուն յատկապէս բաւական մեծ քանակութեամբ հրաքամակին, որուն կործանարար ուժը սովորական վառօդէն շատ բարձր է:

Ձեռքի գործիքներն էին. երկու բրիչ, երկու բահ, մետաքսէ պարանէ սանդուխ, երեք հատ երկաթապատ գաւազան, կացին, մուրճ մէկ երկտասնհակ երկաթի կեռ և սեպ ու հանդուցաւոր երկար պարաններ: Այդ բոլորէն, անշուշտ, անագին հակ մը կազմուեցաւ, որովհետեւ միայն սանդուխը երեք հարիւր ռաք երկարութիւն ունէր:

Վերջապէս, կար նաև պաշարը. անոր հակը թէև մեծ չէր. բայց և այնպէս կը պարունակէր վեց ամսուայ պաշար — չորհուած միս և պաքսիմաթ, մրգօղին միակ խմիչքն էր. ջուր երբեք չառինք, բայց առած էինք ջրամաններ. հօրեղբայրս կը յուսար ատոնք լեցնել ճամբու աղբիւրներէն: Այն առարկութիւնները, որ ես ըրի ստորերկրեայ աղբիւրներու ջուրի որակին, ջերմաստիճանին նոյնիսկ անոնց գոյութեան վերաբերեալ, մնացին անհետեւանք:

Մեր ուղեւորութեան իրերու ամբողջական ցուցակը լրացնելու համար պէտք է յիշեմ նաեւ շարժական զեղարանը, որ կը պարունակէր բթածայր մկրատներ, տախտակներ՝ մարմինն ջարդուած մասերը կապելու համար, կոշտ կերպասէ պատրաստուած ժպալուէն, վիրակապեր և վիրաբարձեր, վիրաբուժական լաթ, արիւնակալ անօթ — բոլորն ալ սոսկալի բաներ. բացի այդ, բազմաթիւ սրուակներ՝ յեցուած աջիտով (ղեկատրին) վէրքեր լուալու սրիբաով, կապարաթթուով, էֆիրով, քացախով և անուշադրով. վերջապէս Ռուսկոբի գործիքին համար անհրաժեշտ նիւթեր:

Հօրեղբայրս չէր մոռցած նաեւ առնել ծխախոտ, վառօդ, արէթ, ինչպէս նաեւ կաշեգօտի, որ կապած էր մէջքը. այդ գօտիին մէջ կար բաւական քանակութեամբ ոսկի, արծաթ և թղթադրամներ: Ուրիշ իրերու հետ գրուած էին նաեւ ձգախէժով պատուած վեց զոյգ անթափանց հաստատուն կօշիկներ:

— Այսպիսի զգեստաւորում և պաշար ունենալէն յետոյ, մենք կրնանք ձեռնարկել աւելի հեռաւոր ուղեւորութիւններու, ըստ ինձի հօրեղբայրս:

Յունիս 14ի ամբողջ օրը պրազնցանք բոլոր այդ իրերը կարգի բերելու գործով: Երեկոյին մենք ճաշեցինք պարոն Տրամպի մօտ, Սէէյիալիկի քաղաքապետին և այդ երկրին գլխաւոր բժիշկ տօքթ. Հիալաալինի ընկերակցութեամբ: Պ. Ֆրիդրիկսոնը չէր մասնակցեր

սեղանին. հետագային տեղեկացայ, որ երկրի կառավարիչին և իր յարաբերութիւնները լաւ չէին, ինչ որ վարչական հարցի մը պատճառով և իրարու հետ չէին տեսնուեր: Որով ես չկրցայ ոչ մէկ բան հասկնալ այն խօսակցութենէն, որ տեղի ունեցաւ այդ կիսապաշտօնական ճաշկերոյթի ատեն: Ես միայն նկատեցի, որ հօրեղբայրըս կը խօսէր անընդհատ:

Յաջորդ օրը, ամսու 15ին, ճամբորդութեան պատրաստութիւնները վերջացան: Մեզ հիւրընկալողը մեծ հաճոյք պատճառեց բրօֆէսէօրին, նուիրելով իրեն իսլանտայի քարտէզը, որ անհամեմատ աւելի ամբողջ էր, քան Հէնդէրսոնինը: Այդ քարտէզը կազմած էր Օլաֆ Նիկոլաս Օլսէնը 1 : 480,000 մաշտարով և հրատարակած էր իսլանտական գրական ընկերութիւնը՝ Շէէլ Յրիզակի և Պիորն Գուժլաուգսոնի տեղագրական տուեալներու հիման վրայ: Հանքաբանին համար շատ թանկարժէք նուէր էր առիկա:

Վերջին դիշերը անցուցինք մտերիմ խօսակցութիւն ունենալով պ. Յրիգրիկսոնին հետ, որուն հանդէպ ես ջերմ համակրանք կ'ըզգայի: Գիշերը բաւական անհանգիստ անցաւ, գոնէ ինծի համար:

Առաւօտեան ժամը հինգին ինծի արթնցուց չորս ձիերուն խըրխինջը, որոնք սմբակներով գետինը կը դոփէին պատուհանիս տակ: Ես իսկոյն հագուեցայ և փողոց իջայ: Հոն էր Հանսը և մեր իրերը կը բեռնէր գրեթէ առանց տեղէն շարժելու, բայց և այնպէս կը գործէր արտասովոր ճարպիկութեամբ: Հօրեղբայրս աւելի աղմուկ կը հանէր, քան թէ կ'օգնէր, և մեր ուղեցոյցը, ինչպէս կ'երեար, իրեն ցուցմունքներուն քիչ մը ուշադրութիւն կը դարձրնէր:

Ժամը վեցին ամեն ինչ պատրաստ էր: Յրիգրիկսոնը մեր ձեռքը սեղմեց: Հօրեղբայրս իսլանտերէն ջերմ շնորհակալութիւն յայտնեց իր սրտագին հիւրընկալութեան համար, եւ լատիներէն, որքան որ կրցայ, անկեղծ խօսքեր արտասանեցի, յետոյ նստանք ձիերը: Յրիգրիկսոնը, որպէս հրաժեշտ, Վիրգիլիոսի հետեւեալ խօսքերը բացագանչեց մեր ետեւէն:

«Համարձակ առաջ շարժինք, դէպի հոն՝ ուր բախա՞ր կը տանի մեզ»:

## ԺԲ

Ամպամած, բայց հանդարտ եղանակ էր: Ո՛չ խեղդող սօթէն կըրնայինք վախնալ, ոչ ալ տեղատարափ անձրեւէն: Իսկական ճամբորդութեան եղանակ:

Անծանօթ երկրին մէջ, ձիով շրջելու հաճոյքը կարծես կը հաշտեցնէր ինձի այս արշաւանքին հետ: Ես բուսականութիւն կ'ըստանայի ուղեւորութեան ազատ կեանքէն և կ'ըսկսէի մոռնալ ուղեւորութեան վտանգները:

Ճիրապէս, կ'ըսէի ես ինձի, ի՞նչ կը կորսնցնեմ: Մենք կը ճամբորդենք հետաքրքրական երկրի մը մէջ, կը լարձրանանք հոչակաւոր լեռան գագաթը, ամենագէշ պարագային կ'իջնենք անոր մարած խառնարանին խորքը: Շատ պարզ է, որ Սահնուսսեմն ալ միայն այդքանը կատարած է: Ինչ որ կը վերարեւի այն խնդրին, թէ նըրբանցք մը հոնկէ կը տանի երկրին կեդրոնը, այդ արդէն պարզապէս կ'երեւակայութիւն է, կատարեալ անկարելիութիւն: Հուսկ ուրեմն պէտք է օգտուիլ այս արշաւանքի լաւ կողմերէն, առանց երկար բարակ մտածելու:

Մինչդեռ ես այդ դատողութիւնը կ'ընէի, մենք արդէն դուրս եկած էինք Ռէյկիավիկէն:

Հանսը կ'երթար առջեւէն, արագ, հաւասար, և հանդարտ քայլերով: Իրեն կը հետեւէին մեր իրերով բեռցուած երկու ձիերը, որոնց պէտք չկար քաշելու: Անոնց ետեւէն մենք կ'երթայինք, հօրեղբայրս ու ես, և պէտք է ըսել, որ գէշ տեսք չունէինք մեր փոքրիկ, բայց ուժեղ ձիերուն վրայ: Իսլանտան Եւրոպայի ամենամեծ կղզիներէն մէկն է: Անոր 1400 քառակուսի մղոն տարածութեան վրայ միայն վաթսուն հազար բնակիչ կ'ապրէր(\*): Աշխարհագէտները այդ կղզին չորս մասի կը բաժնեն. մեզի վիճակուած էր կտրել՝ անցնիլ անոր հարաւ արեւմտեան մասով:

Ռէյկիավիկէն դուրս գալով, Հանսը իսկոյն սկսաւ երթալ ծովեզերքի ուղղութեամբ: Մենք կ'անցնէինք աղքատ արօտավայրերէն, որոնք աւելի շատ դեղնած էին, քան կանաչ: Թրախիտեան(\*\*) զանգուածներուն գագաթները ծածկուած էին մշուշով՝ մէկիկ մէկիկ կ'երեւային ձիւնի շերտեր, որոնք արեւին յոյսը կեդրոնացնելով իրենց վրայ, կը փայլէին հեռաւոր բարձունքներու փեշերուն. առանձին գագաթներ, աւելի համարձակ վեր բարձրանալով, կը ճեղքէին դորշ ամպերը և նորէն կ'երեւային այդ շարժուն գոլորչիներուն վերեւ՝ խութերու պէս՝ ջինջ երկնակամարին վրայ:

Յաճախ այդ լերկ ժայռերուն շրթանները կ'ուղղուէին դէպի ծով և կը ծածկէին հովիտը. բայց այդ պարագային ալ բուսականաչափ տեղ կը մնար անցնելու համար: Մեր ձիերը, պէտք է ըսել, բնազդաբար կ'ընտրէին ամենայարմար ուղիները առանց քայլերնին դանդա-

(\*) Հիմա Իսլանտայի բնակիչներուն քիւն է մօտ 120.000: (Մ. Խ.):

(\*\*) Թրախիտ-ձալոնկեհ-բեսաուր հրաբխային հանգաւար:

ղեցնելու: Հօրեղբայրս ո՛չ մէկ անգամ պէտք չզգաց իր ձին քշելու պիռուլով կամ մարակելով. անհամբեր ըլլալու ո՛չ մէկ առիթ չունեցաւ: Ես չէի կրնար խնդուկս զսպել, երբ իրեն կը նայէի. սոյնքան շատ խոշոր էր իր փոքր ձիուն համեմատութեամբ. իր երկու ոտքերը գրեթէ դեպիս կը քսուէին, և ան կը նմանէր վեցոտանի սանթօրի(\*):

— Ըիանալի՛ կենդանի, հիանալի՛ կենդանի, կ'ըսէր ան: Դուն կը տեսնես, Ա.քսէլ, որ ո՛չ մէկ անասուն իր խելքով չի գերազանցեր իսլանտական ձին: Ո՛չ ձիւնը, ո՛չ փոթորիկը, ո՛չ գէշ ճամբաները, ո՛չ ժայռերը, ո՛չ սառնադաշտերը չեն կասեցնէր զայն: Ան համարձակ է, սակաւսպետ և վստահելի. երբեք չի սայթաքիր, երբեք չի յամառիր: Եթէ պէտք է անցնիլ գետէն կամ Ձիորդէն, դուն կը տեսնես, որ ան առանց տատանելու ջուրը կը նետուի իսկական երկկենցաղի նման և միւս ափը կ'ելլէ: Բայց պէտք չէ քշել ան. ձգենք, որ ան երթայ իր կամքով, այդպիսով օրական միջին հաշուով տասը մղոն կ'անցնինք:

— Մենք, անկասկած, այդքան կ'անցնինք, պատասխանեցի ես, բայց ուղեցո՞յցը:

— Օ՛հ, անոր մասին չեմ մտածեր: Այդ մարդիկը առաջ կ'երթան առանց իրենք իսկ նկատելու այդ. իսկ այս մէկը այնքան քիչ չարժումներն է, որ բնաւ չի յոգնիր: Բացի այդ, եթէ պէտք ըլլայ, ձիս իրեն կը զիջիմ, իմ սրունքներս շուտով կը կարկամին, եթէ անչարժ մնամ:

Այսպէս՝ արագօրէն կը յառաջանայինք, երկիրը հետզհետէ աւելի ամառի կը դառնար: Մէկիկ-մէկիկ կ'երեւար առանձին աքարակ մը, մինակիկ իսլանտական աղքատ խրճիթ մը, շինուած փայտէ, հողէ, լավայի կտորներէ, մուրացկանի պէս կանգնած ձորին մէջ՝ ճամբուն եղբրքը: Այդ խարխուլ տնակները կարծես անցորդներէն ողորմութիւն կը խնդրէին: Այս երկիրը կը բացակային ճամբաներն ու նոյնիսկ արահետները, և որքան ալ դանդաղ կ'աճի բուսականութիւնը հոս, այնուամենայնիւ կը ջնջէ շուտով սակաւաթիւ անցորդներուն հետքերը:

Մինչդեռ կզգիին այս մասը, գտնուելով մայրաքաղաքի կողքին, կը համարուի իսլանտայի մարդաբնակ ու մշակուած շրջաններէն մէկը. ի՞նչ գրութեան մէջ էին ուրեմն այն վայրերը, որոնք աւելի անմարդաբնակ էին, քան այս անապատը: Անցանք կէս մղոն տեղ ու տակաւին չտեսանք ոչ մէկ գիւղացի, կանգնած իր հիւղակին դրան առջև. ոչ մէկ հովիւ, որ արածէր իր հօտը, նոյնքան վայրենի՝ որքան ինքը. միայն նկատեցինք քանի մը կով և ոչխար, որոնք ձրգ-

(\*) Սանթօր-առասպելական հակ՝ կես մարդ, կես ձի:

ուած էին իրենց բազմին: Հապա ի՞նչ դրութեան մէջ կ'ըլլային այն շրջանները, որոնք ենթարկուած էին հրաբուխներու և երկրաշարժներու ազդեցութեան:

Մեզի վիճակուած էր անոնց հետ ծանօթանալ հետագային. բայց նայելով Օլսէնի քարտէզին, տեսայ, որ ատոնցմէ կարելի էր խուսափիլ, եթէ հետեւինք ծովեղերքի ոլորապտոյտ ճամբուն: Իրօք, հրաբուխային զլխաւոր գործունէութիւնը կեդրոնացած էր յառկապէս կղզիին ներքին մասին մէջ. ճիշդ հոն կը գտնուէին իրարու վրայ դիւլուած ժայռերու հորիզոնական շերտեր, որոնք սկանտինավեան լեզուով «Տրապպ» կը կոչուէին և որոնք կազմուած էին տրախիտներէն, պաղալտէ, ամեն տեսակ հրաբխային տուֆէ և լավայի հոսանքներէն, որոնք երկրին կու տային ահռելի երեւոյթ: Ես դեռ այն ատեն չէի պատկերացնիր, թէ ինչ տեսարան կ'ըստպասէր մեզի Մենֆելս թերակղզիին մէջ, ուր մոլեգին բնութեան այդ աւերումները սոսկալիքոս մը կը յառաջացնեն:

Ռեյկիավիկէն հեռանալէն երկու ժամ յետոյ հասանք Գուֆուս աւանը: Ոչ մէկ հետաքրքրական բան չկար հոն. քանի մը տուն միայն, որոնք Գերմանիա հաղիւ տնակ մը կը կազմէին:

Հանսը հոն կէս ժամ կանգ առաւ, մասնակցեցաւ մեր համեստ նախաճաշին: «Այո» կամ «ոչ» պատասխանելով ճամբուն վիճակին մասին հօրեղբորս տուած բոլոր հարցումներուն, իսկ երբ հարցուցինք իրեն թէ ո՞ր որոշած էր գիշերել, ան բառ մը ըսաւ միայն.

— «Գարդեր»:

Նայեցայ քարտէզին և Հուալֆիորդի ափը, Ռեյկիավիկէն չորս մղոն հեռաւորութեան վրայ գտայ այդ անունը կրող փոքրիկ գիւղ մը: Երբ ես այդ կէտը ցուցուցի հօրեղբորս, ան ըսաւ.

— Չորս մղոն միայն, չորս մղոն քսաներկու մղոնէն: Իրապէս, որ գիւղեցիկ զբօսանք է:

Ինչ որ բաներ մը ուղեց ըսել ուղեցոյցին, բայց այս վերջինը առանց իրեն պատասխանելու, ձիերուն առջևը անցաւ և շարունակեց ճամբան:

Երբ ժամ յետոյ, հասանք Չիւլպերկ աւանը, որ այդ շրջանի դատական կեդրոնն էր. կէսօր էր և անշուշտ ժամը տասներկուքը պիտի զարնէր, եթէ իսլանտական կեղեցիները այնքան նիւթական ունենային, որ կարենային հնչող ժամացոյցով զանգակատուն չինել:

Այստեղ ձիերուն կեր տուինք, յետոյ նորէն ճամբայ կանք բլուրներու շղթայի և ծովու միջև ինկած նեղ արահետէն, և մէկ շունչով հասանք Բրոնտարի «Մայր եկեղեցիին» և մղոն մըն ալ անկէ աւելի հեռուն, մինչև Զաուր-Ֆօէրի «յարակից եկեղեցիին», որ կը գտնուէր Հուալֆիորդի հարաւային ափը: Երեկոյեան ժամը չորսն էր: Մենք ընդամենը չորս մղոն (դանիական) անցած էինք:

Հոս ֆիորդի լայնութիւնը ասնուայն կէս մղոն էր. ծովուն ալիքները ազմուկով կը փչրուէին. դարնուելով սուր ժայտերուն: Որքան ալ խելացի ըլլային մեր ձիերը, ես յոյս չունէի, որ անվտանգ կ'անցնինք այդ ծովածոցը, անոնց վրայ նստած:

— Եթէ ատոնք խելացի են, ըսի ես, չեն փորձեր անցնիլ: Ամենայն դէպս ես կը փորձեմ խոհեմ ըլլալ անոնց տեղ:

Բայց հօրեղբայրս չէր ուզեր սպասել, ան քշեց դէպի ծովափ. իր ձին զգաց ալիքներուն մօտենալը և կանգ առաւ. բայց հօրեղբայրս, որ իրեն յատուկ բնազդ ունէր, սկսաւ աւելի ուժով քշել ձին: Ձին գլուխը թափահարեց ու մնորմեց առաջ երթալ: Հօրեղբայրս ըսկըսաւ հայհոյել ու մտրակով զարնել, բայց ձին աքացի առաւ ըստ երևոյթին, ձիաւորը գետին տապալելու նպատակով: Վերջապէս այդ փոքր ձին ոտքերը ծալլեց ու բրօֆէտէօրին երկար ոտքերուն մէջէն դուրս սահեցաւ. այսպէսով հօրեղբայրս կանգնած մընաց ժայռին վրայ Հոթթոսեան կոլոսի\*) նման,

— Ա՛հ, անիծակ կենդանի, բացագանչեց ձիաւորը, անսպասելիօրէն հետեւակի փոխուած և ամօթահար:

— Անարժա՞ն, ըսաւ ուղղեցոյցը, անոր ուսին զարնելով:

— Ինչպէ՛ս և լատա՞ով:

— Հոն, պատասխանեց Հանսը ցոյց տալով լատը:

— Ծի՛շդ է, բացագանչեցի, ա՛յ, հոն է լատար:

— Լաւ կ'ըլլար այդ մասին նախօրօք յայտնել: Լաւ, յառա՛ջ:

— Tidvalten, յարեց ուղեցոյցը:

— Ի՞նչ կ'ըսէ:

— Կ'ըսէ՝ մակընթացութիւն, ըսաւ հօրեղբայրս, թարգմանելով զանիերէն բառը:

— Ուրի՛նս պէտք է սպասել մակընթացութեա՞ն:

— Farhida?, հարցուց հօրեղբայրս:

— Այո՛, պատասխանեց Հանսը:

Հօրեղբայրս ոտքը գետին զարկաւ, մինչ ձիերը լատին մօտեցան: Ես լաւ կը հասկնայի, որ ֆիորթ լատով անցնելու համար պէտք է սպասել յարմար վայրկեանին, երբ ջուրը կը հասնի իր ամենաբարձր կէտին և այն հետեւ այլևս ո՛չ կը բարձրանայ, ո՛չ կը ցածնայ, որովհետեւ այդ միջոցին հոսանք չըլլար ո՛չ ալս, ո՛չ այն ուղղութեամբ և լատը քշուիլ-տարուելու վտանդին չենթարկուիր:

Այդ նպատատար վայրկեանը հասաւ միայն երեկոյեան ժամը վեցին: Հօրեղբայրս, ես, ուղեցոյցը, երկու լատափարնիրն ու չորս ձիև

---

(\*) Հոթթոս կղզիին վրայ գտնուող Ապոլոնին հսկայ առձանը, որ հին ասեկ կը համարուէր աշխարհի եօթ հրաշալիքներէն մէկը: (Մ. Խ.):

րը տեղաւորեցինք բաւական խարխուլ տափակ լաստի մը վրայ, ժամէ մը աւելի պէտք եղաւ ֆիտորդը անցնելու համար, բայց և այնպէս լաստով կատարուած այդ ուղեւորութիւնը յաջող անցաւ: Կէս ժամ յետոյ Գարդեր հասանք:

#### ԺԳ.

Օրուայ այն ժամն էր, երբ պէտք է մութ ըլլար, բայց լայնութեան վաթսուն չորրորդ աստիճանի վրայ լուսաւոր գիշերները ինծի չղարմացուցին, Խալանտայի մէջ Յունիս և Յուլիս ամիսներուն արեւը մարը չի մտնիր: Եւ սակայն օդին ջերմութիւնը իջաւ, կը մսէի և անօթի էի. շատ ուրախացայ, երբ գիւղացի մը սիրով հիւրընկալեց մեզի: Այդ գիւղացիին հիւրընկալութիւնը արքայական ընդունելութիւն կ'արժէր: Երբ մօտեցանք, տանտերը ձեռքը տուաւ մեզի ու տաջարկեց, առանց աւելորդ ձեւակերպութեան, հետեւիլ իրեն: Իրապէս, պէտք էր քալել ետեւէն, որովհետեւ կողք կողքի երթալը անկարելի էր: Երկար, նեղ, մութ նրբանցք մը կը տանէր դէպի այդ շէնքը, որ կառուցուած էր տեսակ մը տաշուած դերաններէ: Բնակարանը չորս սենեակ ունէր — խոհանոց, ջուլհականոց, ննջարան՝ ընտանիքի անդամներուն համար և սենեակ՝ հիւրերուն համար, որ ամենալաւն էր բոլորին մէջ: Որովհետեւ տունը կառուցանելու ատեն չէին մտածած հօրեղբօրս հասակին մասին, ան քանի մը անգամ դուրսը դարկաւ առաստաղին դուրս ցցուած մասերուն:

Մեզի տարին տան մեծ սենեակը, որուն յատակը պնդացած հողէ էր և միայն մէկ լուսամուտ ունէր, որ ապակիի փոխարէն ծածկուած էր ոչխարի կիսաթափանց փուչիկով: Անկողինը կազմուած էր չոր խոտէ, որ դրուած էր երկու տախտակներուն վրայ, որոնք ներկուած էին կարմիր գոյնով և նկարազարդուած խալանտական ոճով: Այդպիսի յարմարութեան չէի սպասեր. սակայն ամբողջ տունը լեցուած էր չորցած ձուկ, ազած մսի և թթուած կաթի զօրաւոր հոտով, որ ինծի երբեք հաճելի չէր:

Երբ հանեցինք մեր ուղեւորութեան հանդերձները, տանտէրը մեզի հրաւիրեց խոհանոց, միակ բաժինը, ուր միայն՝ տմենացուրտ օրերուն կրակ կը վառէին:

Հօրեղբայրս իսկոյն ընդունեց այդ հրաւերը, ես իրեն հետեւեցայ. խոհանոցը հնադարեան ձեւով վառարան կար — սենեակին մէջտեղը քար մը դրուած էր, որ վառարանի դեր կը կատարէր — այդ քարին ուղղութեամբ տանիքէն անցք մը բացուած էր, ուրկէ ծուխը կ'ելլէր. խոհանոցը միեւնոյն ատեն ճաշասենեակ ալ էր:

Երբ խոհանոց մտանք, ասնտէրը ողջունեց մեզի — կարծես թէ մեզ անսած չէր տակաւին — «բախտաւոր եղէք» խօսքերով և համբուրեց մեր երեսը: Իրեն հետեւեցաւ կինը, նոյն խօսքերն արտասանելով նոյն ձեւականութեամբ, յետոյ անոնք աջ ձեռքը սրտին դնելով խոնարհութիւն ըրին: Տանտիրոջ կինը մայր էր, տասնեւիններ զուգի որոնք բոլորը, փոքրէն մինչեւ մեծը, խառնիխառն կը վժվժային վառարանէն բարձրացող ու սենեակը լեցնող ծուխին մէջ: Ամեն վայրկեան կը նկատէի շիկահեր գլուխ մը, որ պահ մը կ'երեւար այդ մշուշի մէջէն:

Հօրեղբայրս ու ևս գգուեցինք այդ ճճուտիկոյնները և քիչ յետոյ, քաջալերուելով մեր լաւ վերաբերմունքէն, երեքը կամ չօրսը միասին բարձրացան մեր ուսերուն կամ ծունկերուն վրայ, իսկ մնացածները մեր ոտքերուն միջեւ: Անոնք, որոնք կրնային խօսիլ, կը կըրկնէին «բախտաւոր եղէք» անասելի ճղճղոցով: Խօսիլ չկրցողներն ալ աւելի կ'աղմկէին:

Այդ համերգը ընդհատուեցաւ երբ մեզ ճաշի հրաւիրեցին: Այդ վայրկեանին ներս մտաւ սուզահաւի որսորդը, որ գացած էր ձիերուն կեր տալու: Ան պարզապէս ձիերը ազատ արձակած էր, խնայողութեան համար, որ արածին գաշտին մէջ. խեղճ կենդանիները պէտք է բաւարարուէին ժայռերուն վրայ բուսած չոր մամուռով և ծովային քիչ սննդարար խոտով, իսկ յաջորդ առաւօտուն իրենք իրենց պիտի վերադառնային, նորէն գործի անցնելու համար:

«Բախտաւոր եղէք», ըսաւ Հանսը ներս մտնելով, յետոյ շատ հանգիստ ինքնաբերաբար կրկնուեցաւ համբուրուելու տեսարանը, ան համարուրեց հիւրընկալին, կինը ու տասնեւինը զուակները:

Երբ այդ ձեւակերպութիւնը վերջացաւ, բոլորը նստան սեղանին շուրջ, թիւով քսանչորս հոգի, մէկը միւսին վրայ, բառին բուն իմաստով: Սակայն երբ ապուրը սեղանին վրայ դրուեցաւ, այս մանկական աշխարհին մէջ իսկոյն լուրթիւն տիրեց: Տանտէրը մեզի հիւրասիրեց իսլանտական մամուռէ պատրաստուած բաւական համեղ ապուրով, յետոյ բերին մեծ չորցած ձուկ մը՝ տապկուած իւղի մէջ, որ զառնացած էր քսան տարի առաջ, հետեւաբար, ըստ իսլանտական կարծիքի, աւելի լաւ էր քան թարմ իւղը: Յետոյ բերին «սկիր», մածունի նմանող բան մը: Վերջապէս, ինչ որ խմիչք-կաթի շիճուկ, ջրով խառնուած էր, թէ գէշ այդ տարօրինակ ճաշը, չեմ գիտեր, առօրեայցած էի ու անուշեղէնի փոխարէն մինչև վերջին պատառը խմուցի հնդկացորինէն պատրաստուած կաշան:

Ճաշէն յետոյ տղաքները չքացան. մեծերը նստան վառարանին շուրջ, որուն մէջ կը վառէր տորֆ, մացառ, աթար և չոր ձուկի ոսկոր: Այնուհետև, տաքնալէ վերջ, ամին մտրդ գնաց իրեն յատկացուած

սենեակը: Տանտիրուհին, տեղական սովորութեան համաձայն, փափաքեցաւ հանել մեր դուռլպաներն ու անդրափարափքը, բայց մեր քաղաքափարի մերժումէն յետոյ չպնդեց, և ես վերջապէս կրցայ կծկուել խօսէ անկողնին մէջ

Յաջորդ առաւօտ, ժամը հինգին, հրածեղտ սոււինք իսլանտացի գիւղացիին: Հօրեղբայրս մեծ դժուարութեամբ իրեն համողեց ընդունիլ պատշաճ վարձք մը: Հանող մեկնումի նշանը տուաւ:

Գարդեբեհն հարիւր քայլ հետաւորութեան վրայ երկիրը սկսաւ փոխել իր տեսքը, չօղը հեռագհեաէ ճահճային կը դատար և աննպաստ, ձիւով երթալու համար: Աջ կողմը լոտնաչզթան կ'երկարէր անվերջ, կարծես քնականէն շինուած պատնէշներ ըլլային: յաճախ զետերու կը հանդիպէինք, որոնց հուշէն պէտք էր անցնիլ, առանց սակայն իրերը շատ թրջելու:

Շրջակայքը հեալհեաէ կ'ամայանար, երբեմն սակայն կը թուէր, թէ մարդկային դէմք կ'երեւար հետուն: Եթէ ճամբու դարձակէտին յանկարծ կը մօտենայինք այդ ուրուականներէն մէկուն, ևս ակամայ զղուանք կ'ըզգայի, տեսնելով այդ հերազուրկ, ուռած դուլիւր, ծածկուած փայլուն մաշկով ու զղուելի վէրքերով, որոնք կ'երեւային խեղճուկ ցնցոտիներու տակէն:

Դժբախտ արարածը գօտացած ձեռքը չէր պարզեր բարեւելու համար, ընդհակառակը, կը փախէր այնքան արագ, որ Հանող չէր կրնար ողջունել իր սովորական քախտաւոր եղէքք բառերով:

— Բորտ է, կ'ըսէր ան:

Այդ բառը արդէն ինքնին զղուանք կ'առաջացնէր:

Այդ սոսկալի հիւանդութիւնը բաւական շատ տարածուած է Իսլանտայի մէջ. վարակիչ չէ, բայց ժառանգական է. այդ պատճառով ալ այդ թշուառներուն արգիլուած է ամուսնանալ:

Այդ ուրուականներուն երեւումը, անշուշտ չուէր այն բնոյթը, որ կենդանացնէր շրջակայքի ախուր տեսարանը: Վերջին խոտերը կը խամբէին մեր ոտքերուն տակ. ո՛չ մէկ ծառ կ'երեւար, բացի գաճաճ ցարասիներու թուփերէ. ոչ մէկ կենդանի, բացի քանի մը ձիւրէ, որոնք կը թափառէին ախուր հովիտները, սրովհետեւ տէրերը չէին կրնար կերակրել զանոնք: Շերտ շերտ գորշ ամպերուն մէջ բազէն կը սաւառնէր ու դէպի հարաւ կը սլանար: Այս վայրենի բնութիւնը զիս մեղամաղձոտ կը դարձնէր ու յիշողութիւնս զիս կը փոխապէր հայրենի երկիրս:

Ի՞նչ յետոյ նորէն հարկ եղաւ անցնիլ քանի մը աննշան ֆիորդներ և վերջապէս ծովածոց մը: Այդ ժամանակ ծովը մակրնթացութեան մէջ էր, ուստի մեղի յաջողուեցաւ ծովածոցը անցնիլ առանց սպասելու: Հասանք Ալտրան գիւղակը, որ հինգ միսն հետաւորութեան վրայ կը գտնուէր:

Երեկոյին անցանք երկու դետերու հուներէն, որոնց մէջ կը վըլտային կարմրախայտեր և գայլաձուկեր, և գիշերը ստիպուեցանք անցընել լքուած տան մը աւերակներուն մէջ, որոնք արժանի էին բընակավայր ըլլալու Սքանտինավեան դիցարանութեան բոլոր ոգիներուն համար: Բայց պէտք է ըսել, որ ցուրտի անիծեալ ոգին իր բնակարանը հոս էր հաստատած և ամբողջ գիշերը տանջեց մեզի:

Յաջորդ օրը մասնաւոր բան մը չպատահեցաւ. միշտ միեւնոյն ճահճային հողը, նոյն միօրինակութիւնը. նոյն տխուր տեսարանը: Երեկոյեան անցած էինք ճամբուն կէսը և գիշերեցինք կրէոզոլտ գիւղը:

Յունիս 19ին, մօտաւորապէս մղոնի մը վրայ, մեր ոտքերուն տակ կը տարածուէր լավայի շերտ մը: Հսկայ հեղեղ մը գահավիժած էր մօտակայ հրաբխային լեռներէն, հրաբուխներ՝ որոնք հիմա մարած էին: Բայց և այնպէս հոս ու հոն տաք ակունքներէն գոլորշի կը բարձրանար: Փամանակ չկար այս երեւոյթները դիտելու, պէտք էր առաջ անցնիլ: Քիչ յետոյ ձիերու սմբակներուն տակ կրկին երեցաւ ճահճային հողը, տեղ-տեղ փոխուելով լճակներու: Այն ատեն մենք դէպի արեւմուտք կ'երթայինք, դարձած էինք Յակու մեծ ծովածոցը, և Սնեֆելսի կրկնակի սպիտակ գագաթը կը բարձրանար մեր առջև, մօտաւորապէս հինգ մղոն հեռաւորութեան վրայ:

Ձիերը լուռ կը քալէին, հակառակ անտանելի ճամբուն: Ինչ ինձի կը վերաբերէր, ես շատ յոգնած էի, մինչդեռ հօրեղբայրս ձիուն վրայ նստած էր հաստատ և ուղիղ, ճիշդ այնպէս՝ ինչպէս առաջին օրը: Ես չէի կրնար չհիանալ իրմով, ինչպէս նաև մեր որսորդով, որուն համար այս ուղեւորութիւնը միայն զրօսանք էր:

Շարաթ օր, Յունիս 20ին, երեկոյեան ժամը վեցին, հասանք Թիւօ գիր, — ծովու ափին ինկած փոքրիկ աւան մը. — հոս ուղեցոյցը պահանջեց ըստ պայմանագրի իրեն որոշուած վարձքը: Հօրեղբայրս իսկոյն վճարեց: Հոս կ'ապրի Հանսի ընտանիքը, իր քեռիները, հօրեղբայրները և այլ ազգականները, որոնք մեզի հիւրասիրեցին: Ձերմ ընդունելութիւն դտանք և առանց վախնալու շահագործեցինք անոնց բարութիւնը. ես սիրով կը հանդատանայի այդ բարի մարդոց քով, տաժանելի ճամբորդութիւնէն յետոյ: Սակայն հօրեղբայրս, որ հանգըստանալու պէտք չունէր, ուրիշ ձեւով կը նայէր հարցին և յաջորդ առտու պէտք եղաւ կրկին ձի նստիլ:

Հողը արդէն լերան մօտակայութեան նշաններ ցոյց կու տար. լերան ժայռոտ արմատները հողէն դուրս կը ցցուէին ճիշդ այնպէս՝ ինչպէս մեր կաղնիին արմատները: Կը մօտենայինք հրաբուլդիին ստորտը: Բրօֆէսէօրին հայեացքը անկէ չէր հեռանար: Ան ձեռքով շարունակ շարժումներ կ'ընէր, կարծես մէկուն սպառնալով:

— Ահա այն հսկան, որ ես կը յազթահարեմ:

Վերջապէս, քսանչորս ժամուայ ճամբայէն յետոյ, ձիերը իրենք իրենց կանգ առին Ստապիի փասքեօրին տան առջեւը:

## ԺԴ.

Ստապին փոքրիկ դիւղ մըն է, բաղկացած մօտաւորապէս երեսուն խրճիթներէ, որոնք կառուցուած են լավայի թանձր շերտի վրայ, ճիշդ հրաբուխին ստորտը: Ստապին ինկած է բաղալարի ժայռերով շրջապատուած փիօրդի մէջ:

Յայտնի է, որ բաղալար հրաբխային ծագում ունեցող գորշ գոյնով ժայռ մըն է: Ան կ'ըստանայ կանոնաւոր ձեւեր, որոնք կը զարմացնեն իրենց իւրայատկութեամբ: Հոս բնութիւնը կը գործէ երկրաչափի մը պէս և կ'աշխատի մարդու մը նման, կարծես զինուած ըլլար անկիւնաչափով, կարկինով, և կապարալարով: Եթէ բնութիւնը ուրիշ ամեն տեղ ցոյց տուած է իր արուեստը, կառուցանելով ընդարձակ, անկարգ ցրուած ու արատավոր շրջափերով դանդուածներ, սակայն հոս փափաքած է տալ ձեւերու կանոնաւորութեան օրինակ մը, և սահղծեր է այնպիսի ճշգրիտ ձեւեր, որոնք չեն կրցած գերազանցել ո՛չ Բարելոնի հրաշալիքները, և ոչ ալ Յունաստանի սքանչելի գեղարուեստը:

Լսած էի Իսլանտայի «Հսկաներու պողոտային» և Հերրիգեան կղզիներէն մէկուն «Ճինդալեսան քարանձաւի» մասին, սակայն իմ առջեւ տակաւին չէր պատկերացած բաղալարի կառուցուածքներու այդպիսի տեսարան մը: Եւ ահա Ստապիին մէջ այդ երեւոյթը պարզուեցաւ այքիս առջև իր ամբողջ գեղեցկութեամբ:

Փիօրդին պատը, ինչպէս ամբողջ թերակղզիին ծովեկերքը, կազմուած է շարք մը ուղղահայեաց, մօտ երեսուն ոտք բարձրութեամբ սիւններէ: Այդ արտակարգ կանոնաւոր գծերով ուղղաձիգ սիւներուն վրայ կը նստէր կամար մը, իսկ սիւները դուրս ցցուած են դէպի ծով: Որոշ անջրպետներով այդ բնական կամարին տակ հայեացքը կ'ընդգրկէր հրաշալի գծադրութեամբ ձուած և բացուածքներ, որոնց մէջէն կը դահավիժէին փրփրալից ալիքներ: Պազալարի մեծ կտօներ, ժայռերէն իյնալով, չորտուած էին գետնին վրայ, հնադարեան տաճարի բեկորներու պէս, յաւիտեան երիտասարդ աւերակներ, որոնց վրայէն դարեր կ'անցնին, առանց աւերելու զայն:

Այս էր մեր ուղևորութեան վերջին հանգրուանը: Հանսը մեղի այնքան հմտութեամբ առաջնորդած էր, որ ես քիչ մը հանգստացած էի, մտածելով, որ հետագային ալ ան կ'ըլլայ մեր ուղևորացը:

Երբ հասանք փասթէօրին տունը, — ցած խրճիթ մը, որ ոչ մէկ բանով կը տարբերէր դրացի խրճիթներէն, — անսայ կաշիէ գոշնոցով մարդ մը, որ մուրճը ձեռքին իր ձիուն պայտ կ'անցընէր:

— Բախտաւոր եղէ՛ք, ըսաւ որսորդը:

— Բարեւ, պատասխանեց դարբինը մաքուր դանիերէնով:

— Ծիտաւէր քահանան է, ըսաւ Հանսը հօրեղբորս:

— Աքսէ՛լ, կը լսե՞ս, կ'երեւի որ այս պատուական մարդը փասթէօր է:

Մինչ այդ ուղեցոյցը փասթէօրին պարզեց գործին էութիւնը, և ան աշխատանքը ձգելով ձիւ մը արձակեց, ինչպիսին, անկասկած, ձիավաճառ միջնորդները կ'արձակեն: Իսկոյն խրճիթէն դուրս ելաւ բարձրահասակ ջատու մը: Եթէ իր հասակը վեց ոտքի չէր հասներ, և սակայն պակաս ալ չէր: Կը վախնայի, թէ չըլլայ որ այդ կինը ուղեւորներուն խօլանտական համբոյր տայ, բայց վախս ի դուր էր, ան նոյնիսկ շատ ալ սիրալիբ չեղաւ մեզ տուն հրաւիրելուն առթիւ:

Հիւրերուն յատկացուած սենեակը, ինծի թուեցաւ, թէ տան սենեակներէն ամենազէշն էր. նեղ, ալտոտ և դարչահոտ, բայց պէտք էր զոհանալ ասով ալ: Փասթէօրը, ինչպէս կ'երեւայ, հնադարեան հիւրասիրութիւն չէր ճանչնար: Ընդհակառակը: Մինչև երեկոյ ես արդէն հասկեցայ, որ գործ ունէինք դարբինի, ձկնորսի, որսորդի, որմնադրի հետ, բայց ոչ երբեք հողեւորականի:

Ես չեմ ուզիր գէշ խօսիլ քահանաներու մասին, որոնք, ինչպէս կ'երեւայ, թշուառ զրութեան մէջ են. անոնք զանիական կառավարութենէն կ'ըստանան շատ չնչին ոտձիկ և եկեղեցւոյ տասնորդական տուրքէն կ'օգտուին միայն մէկ քառորդով, որ 60 մարք անգամ չընենր. այդ պատճառով ալ անոնք ստիպուած են աշխատիլ, ապրելու համար, բայց երբ կը կատարես ձկնորսի, որսորդի, դարբինի աշխատանքը, անշուշտ՝ բնական է, որ ի վերջոյ պէտք է իւրացնես այդ անուս մարգերուն բարքերն ու սովորութիւնները. երեկոյն նոյնիսկ նկատեցի, որ մեզի հիւրասիրողը իր առաքինութիւններուն մէջ չէր մտցնիր մուժկալութիւնը...:

Հօրեղբայրս իսկոյն հասկեցաւ, թէ ինչպիսի մարդու հետ գործ ունի, փոխանակ արժանաւոր գիտունի, իր գիմացը կոշտ ու տղէտ գիւղացի մըն էր միայն: Այդ պատճառաւ ալ ան որսչեց ինչքան կարելի է շուտ ճամբայ ելլիլ և հեռանալ այս անհիւրընկալ տունէն. հակառակ յոգնութեան, ան գերազաս կը համարէր քանի մը օր լեռները անցընել: Այդ պատճառով ալ Ստապի հասնելու յաջորդ օրն իսկ պատաստուեցանք մեկնիլ: Հանսը երեք խօլանտացիներ վարձեց, ձիերու փոխարէն մեր իրերը փոխադրելու համար, բայց երբ կը հասնէինք խառնարանին, անոնք պէտք է ետ վերադառնային: Այդ առթիւ հօ-

րեղբայրս Հանսին յայտնեց, որ ինք մատաղիք էր հրաբուխի ուսումնասիրութիւնը շարունակել մինչև վերջին սահմանները: Հանսը միայն զիսով պատասխանեց. իրեն համար նոյնն էր, թէ ուր կ'երթայ, հոս թէ հոն, կը մնայ Երկրի երեսը, թէ՛ կ'իջնէ անոր ընդերքը: Ինչ կը վերարեբէր ինծի, սակայն՝ մինչև հիմա, տարուաամ ճամբու արպաւորութիւններէն, գրեթէ մոռցած էի մտածել սպազայի մասին, բայց հիմա այդ միտքը շատ ուժգնակի յուզեց զիս: Ի՞նչ ընել: Եթէ գիմադրելը կարելի ալ ըլլար, այդ պէտք էր փորձել Համպուրկի մէջ, և ոչ թէ Մնեֆելսի ստորտար:

«Այսպէս ուրիմն, կը մտածէի ես, մենք կ'ըսկսինք բարձրանալ Մնեֆելսը: Լաւ, կ'իջնենք անոր խաւնարանը, ուրիշներն ալ ըրած են նոյն բանը, և չեն կորուսած: Բայց գործը ատով չի վերջանար: Եթէ ճամբան բաց է դէպի Երկրին ընթերքը երթալու համար, եթէ այդ չարաբաստիկ Սակնուսակմը ճիշդ ըսած է, այն ատեն կը կորուսինք հրաբուխի ստորերկրեայ նրբանցքներուն մէջ: Չէ որ բան մը չենք գիտեր, թէ Մնեֆելսը մարած է, թէ ոչ, կամ գուցէ նոր ժայթքում կ'սպառնայ: Եւ ի՞նչ կ'ըլլայ մեր վիճակը այն ատենա:

Կ'արժէր մտածել այդ մասին և իսկապէս ես կը մտածէի: Չէի կրնար քնանալ, առանց երազիս մէջ հրաբուխի ժայթքում տեսնելու, իսկ լավային հետ միասին դուրս նետուիլը այնքան ալ դիւրին բան չէ:

Վերջապէս չկրցայ զսպիլ ինքզինքս ու որոշեցի այդ մասին խօսիլ հօրեղբորս հետ, ու իմ կարծիքս յայտնել որքան կարելի է հըմտութեամբ: Այդ նպատակով իրեն մօտեցայ և յայտնեցի իմ վախս:

— Ես այդ մասին մտածած եմ, պատասխանեց պարզապէս:

Ի՞նչ կը նշանակէր այդ միթէ ան պիտի լսէր գատողութեան ձայնը:

Պահ մը լուռ թնկն յետոյ հօրեղբայրս շարունակեց.

— Ես մտածած եմ այդ մասին. Սաապի հասնելէն ի վեր կը մտածեմ այդ հարցին շուրջ, որովհետեւ պէտք չէ անխոհեմ համարձակութիւն ընել: Արդէն հինգ հարիւր տարի է, որ Մնեֆելսը չի գործեր, բայց և այնպէս ան կրնայ խօսիլ: Սակայն ժայթքումներուն միշտ ալ նախընթաց կ'ըլլան յայտնի նշաններ: Ես հարցաւորք ըրի անզայի ընակչութիւնէն, ուսումնասիրեցի հողը և կրնամ քեզի ըսել, Աքսէ՛լ, որ ոչ մէկ ժայթքում չըսպատուիր:

Ես զարմանահար եղած էի այդ պատասխանէն և բան մը չկրցայ առարկիլ:

— Կր կասկածի՞ս, հարցուց հօրեղբայրս, է՛հ, եկուք ինծի հետ:

Ես մեքենարար հնազանդեցայ: Դուրս ելանք փասթէօրին տունէն և քրօֆէստօրը ընարեց այն ճամբան, որ բազալտի պատնէջի անց-

քէն ծովուն հակառակ կողմը կ'երթար: Ի՞նչ յետոյ մենք բաց դաշտին մէջն էինք, եթէ միայն այդ անունը կարելի է տալ հրաբխային նիւթերու հսկայ կուտակումներուն:

Հո՞ւ ու հոն կ'երեւային տաք աղբիւրներէն բարձրացող սպիտակ գոլորչիներ. այդ աղբիւրներուն ուժգին թափը ցոյց կուտար Նրկրին հրաբխային գործունէութիւնը: Կը թուէր, թէ այս երեւոյթը կը հաստատէր իմ վախս: Բայց որքան մեծ եղաւ զարմանքս, երբ հօրեղբայրս ըսաւ.

— Նայէ այդ գոլորչիներուն, Աքսէ՛լ. ատոնք ապացոյց են, որ հրաբուխներէն վախնալու բան մը չունինք:

— Ի՞նչպէս թէ, բացառանչեցի ես:

— Լաւ նկատէ, շարունակեց բրոֆէսէօրը, եթէ ժայթքումէն առաջ այդ գոլորչիներուն գործունէութիւնը կը զօրանայ, յետոյ ժայթքումին ամբողջ տեւողութեան միջոցին բոլորովին կը դադրի: Ուրեմն, եթէ այդ գոլորչիները կը մնան իրենց սովորական վիճակին մէջ, եթէ անոնց գործունէութիւնը չի զօրանար, և եթէ քամին ու անձրեւը չեն փոխարիներ ծանր ու անչարժ մթնոլորտային զրութեան, ուրեմն կրնաս հպտատ համոզուիլ, որ մօտ ապագային ոչ մէկ ժայթքում չըլլար:

— Բայց...

— Բաւական է: Երբ զիտութիւնը իր խօսքը ըսեր է, կը մնայ միայն լսել:

Գլուխս կախ քահանային տունը վերադարձայ. գիտական փաստարկումներով հօրեղբայրս ստիպած էր զիս լռեել: Բայց ես յոյս ունէի, որ երբ կը հասնինք խառնարանին յատակը, այնտեղէն զէպի Նրկրին կեդրոնը տանող ճամբայ չըլլար և այդպէսով անհնար կ'ըլլար աւելի խորանալ, հակառակ աշխարհի բոլոր Սակնուսսեմներուն:

Գիշերը շատ անհանգիստ անցուցի. կ'երագէի, թէ կը գտնուիմ հրաբուխի մէջ և երկրին ընդերքը. կ'ըզոյսայի. իբր թէ հրաբխային ժայտերու նման կը նետուիմ տարածութեան մէջ:

Յաջորդ առաւօտ, Յունիս 23ին, Հանսը մեզի կ'ըսպասէր իր ընկերներուն հետ, որոնք բեռնաւորուած էին պաշարով, գործիքներով ու հանդերձանքով: Երկաթածայր երկու գաւազան, երկու հրացան և երկու փամփշտակալ կը պատրաստէին հօրեղբորս և ինձի համար: Իրրև նախզոյւշութիւն, Հանսը մեր իրերուն աւելցուցած էր ջուրով լիցուն տիկ մր, որ մեր ջրամաններուն հետ միասին, կ'ապահովէր ութը օրուայ ջուրը:

Աստուան ժամը ինն էր: Փասթէօրն ուրի կիւնը մեզի կ'ըսպասէին գրան սևմին. կ'երեւի ուղեւորներուն վերջին հրաժեշտը տալու համար: Բայց այդ հրաժեշտը անուպասելիօրէն փոխուեցաւ ահռելի հաշուե-

ցուցակի մը, որուն համար մեզմէ կը պահանջուէր վճարել նոյնիսկ փաստթէօրի տան դարչահոտ օգին համար։ Այդ արժանաւոր զոյգը մեզի կը կոչուողտէր այնպէս, ինչպէս կ'ընեն Ջուլիցերիոյ հիւրանոցատէրերը, իրենց հիւրասիրութիւնը շատ սուղ գնահատելով։ Հօրեղբայրս վճարեց առանց առարկելու։ Մայր մը, որ ճամբայ ելած էր երկրին կեդրոնը հասնելու համար, անշուշտ չէր մտածեր քանի մը աւելորդ ուկիտաւէրի մասին։

Երբ այդ հաշիւը փակուեցաւ, Հանսը մեկնումի նշանը տուաւ և քանի մը վայրկեան յետոյ հեռացանք Ստապլին։

Մեկնելու հինգ հազար ոտք բարձրութիւն ունէր, ան իր կրկնակի կոնաձև դագաթով կը փակէ այն տրախետեան չղթան, որ սկիւզ կ'աճնէ կղզիին լեռնային դրութեան։ Մեր մեկնման կէտէն կարելի չէր տեսնել անոր երկու դագաթները, որոնք կ'ուրուազծուէին երկնակամարի գորշ լսորքին վրայ։ Նկատեցի միայն վիթխարի ձիւնէ գտակ մը, որ իջած էր հսկայի ճակտին։

Կ'երթայինք իրարու ետեւէ, առաջնորդ ունենալով Հանսը, որ կը բարձրանար այնպիսի նեղ արահետներէն, ուրկէ երկու հոգի չէին կրնար երթալ քով-քովի։ Այդպէսով խօսակցութիւնը գրեթէ անկարելի կը դառնար։

Ստապլի ֆիորդի բազալտէ պատնէշէն այն կողմը՝ երեւցաւ ընդարձակ հարթութիւն մը, ծածկուած տորֆային հողով, որ առաջացած էր թերակղզիին հնադարեան ճահճային բուսականութիւնէն. տակաւին չօգտադորձուած այդ վառելանիւթի զանդուածը, կը բաւարարէր դար մը ամբողջ տաքցնելու իսլանտայի բնակարանները. տորֆի այդ ընդարձակ շերտը, տեղ-տեղ մօտ եօթանասուն ոտնաչափ թանձրութիւն ունէր և կը ներկայացնէր ամխացած բեկորներու յաջորդական շերտեր, որոնք իրարմէ կ'անջատուէին պեմզային սուֆի թերթերով։ Իրրև բրօքէսէօր Լիդենպրոկի արժանի եղբորորդի, հակառակ իմ վախիս, ես հետաքրքրութեամբ կը գիտէի բնագիտական այս ընդարձակ թարգարանին մէջ ցուցադրուած հանքային հետաքրքիր նմոյշները։ Միեւնոյն ատեն մտքիս մէջ կը վերապատկերանար իսլանտայի ամբողջ երկրաբանական պատմութիւնը։

Այս հետաքրքրական կղզին, արտաքինապէս, ծովու խորքերէն դուրս եկած էր համեմատաբար վերջին ժամանակները, թերեւս նոյն իսկ հիմա ալ ան կը բարձրանայ աննկատելիօրէն։ Եթէ այդ այգպէս է, ուրեմն անոր ծագումը կարելի է վերադրել միայն ստորերկրեայ կրակներու ազդեցութեան. այս պէպքին Հեմֆրի Դեվիի տեսութիւնը, Սակնուսեմի վաւերացութեամբ, հօրեղբորս պնդումները, այդ բոլորը կը ցնդէին ծուխի պէս։ Այս ենթադրութիւնը ինծի զրգեց ուշադրութեամբ հետազօտել հողի բնոյթը, և ես շուտով դադափար կազմեցի կղզիին առաջացման պատճառ եղող երեւոյթներու մասին։

Երկրին կեղեւի բարձրանալուն հետեւանքով յառաջացեր էին հրա-  
բուխները և հրաբխային երեւոյթներ. նախ՝ նոր բացուած անցքե-  
րէն շուրս ժայթքած էին, մեր անցած հովիտին մէջ: Կը քալէինք այդ  
մուգ-գորշ վիթխարի ժայռերուն վրայ, որոնք սասելէն յետոյ վե-  
ցանկիւնային հիմք ունեցող պրիզմակի ձև ստացած էին: Հոռուն կ'ե-  
րեւային մեծ թիւով տափակցած կոնաձև փոսեր, որոնք ատեն մը բո-  
ցարձակ երախներ էին:

Այնուհետև, երբ դադրած էր բաղալտի ժայթքումը, հրաբուխը  
դուրս վիժած էր լավայի հոսանք մը, մոխրի դանգուածին հետ միա-  
սին, սրուն երկար շերտերը — զգզուած մաղերու պէս — տեսայ ես  
անոր լանջերուն:

Այսպէս էր եղած Իսլանտան մէջտեղ բերող երեւոյթներուն յա-  
ջորդականութիւնը: Այս բոլորը հետեւանքն էր ներքին կրակի ազ-  
դեցութեան, և յիմարութիւն կ'ըլլար կարծել, թէ կղզիին արաքին  
կեղեւին տակ գոյութիւն ունեցող նիւթերու զանգուածը, մշտական ե-  
ռացման ու հալման վիճակի մէջ էր: Ուստի և խելագարութիւն էր  
ենթադրել, թէ կարելի է հասնիլ երկրին կեդրոնը:

Այդ պատճառով ալ ես հանդստացայ մեր արշաւանքին հետեւան-  
քին նկատմամբ, երբ կը բարձրանայինք Սնեֆելսը:

Ճամբան հետզհետէ կը դժուարանար և կը ծռէր, ժայռի բեկոր-  
ները կը շարժէին մեր ոտքերուն տակ, և շատ զգոյշ պէտք էր ըլլալ  
վտանգաւոր անկումներէն խուսափելու համար: Հանսը հանգիստ ա-  
ռաջ կ'երթար, կարծես հարթ դաշտի մէջ ըլլար. երբեմն ան կը չը-  
քանար մեծ ժայռերուն ետեւը և մենք պահ մը դայն կը կորսնցնէ-  
ինք մեր աչքին առջեւէն: Այդպիսի դէպքերուն՝ ան սուր տուրջով  
ցոյց կուտար այն ուղղութիւնը, որուն պէտք է հետեւէինք: Յաճախ  
ան կանգ կ'առնէր, ժայռերէն փրցուած քարերու կտորներ կը հաւա-  
քէր և կը դասուորէր այնպէս, որ դիւրութեամբ կարելի ըլլայ գըտ-  
նել ճամբան վերադարձին: Այդ լու նախազգուշութիւն էր, բայց  
հետագայ դէպքերը այդ ամենը անօգուտ դարձուցին:

Երեք ժամուայ յոգնեցուցիչ ճամբէն յետոյ կաղեա լերան ստո-  
րոտը հասանք: Հոն Հանսը դադարի նշան տուաւ և բոլորս թեթև  
նախաճաշ մը ըրինք: Հօրեղբայրս երկու պատուով միասին կը կլլէր,  
որպէսզի աւելի շուտ ճամբայ ելլենք, բայց այդ դադարը միեւնոյն  
ատեն հանդստանալու համար ալ էր, և ան ստիպուած էր հնազանդիլ  
ուղեցոյցին կարգադրութեան: Հանսը միայն ժամ մը յետոյ նշան  
տուաւ մեկնելու: Երեք Իսլանտացիները, նոյնքան լուսկեաց, որքան  
իրենց որսորդ ընկերը, բառ մը չարտասանեցին ու կերան չափաւոր  
կերպով:

Արդէն սկսանք բարձրանալ Սնեֆելսի փէշերն ի վեր: Անոր ձիւ-

նուպատ դադաթը, լեռներուն մէջ յաճախ պատահող տեսապատրանքի հետեւանքով, ինծի շատ մօտիկ կը թուէր և սակայն որքան ժամեր անցան մինչև հասանք հոն, և այն ալ ինչպիսի՞ դժուարութիւններով: Քարերը, որոնք թափուած էին դետնի երեսը, կը շարժէին մեր ոտքերուն տակ ու դէպի դաշտ կը գլորուէին ձիւնի հիւսկի արագութեամբ:

Տեղ-տեղ լեռան զառիվայրը հորիզոնին հետ առնուազն 36 աստիճան անկիւն կը կազմէին. անկարելի էր ուղիղ բարձրանալ, ստպուած էինք մեծ դժուարութեամբ վիթխարի ժայռերուն շուրջը պտոյտ ընել. այդպիսի դէպքերուն կ'օգնէինք իրարու մեր ձեռնափայտերով:

Պէտք է ըսեմ, որ հօրեղբայրս, որքան կարելի է իմ քովէս կը քալէր. աչքը չէր հեռացներ ինձմէ և շատ անգամ ինծի ամուր նեցուկ կ'ըլլար: Ինչ որ իրեն կը վերաբերէր, ան, անկասկած, հաւասարակշռութեան բնածին ընդունակութիւն ունէր, որովհետև երբեք չէր սայթաքեր: Իսլանտացիները հակառակ որ ծանրաբեռնուած էին, կը մագլցէին լեռնցի ճարպիկութեամբ:

Նայելով Մնեֆելսի գագաթը, ինծի կը թուէր, թէ չենք կրնար հոն հասնիլ այս կողմէն: Բարեբախտաբար կէս ժամուայ տանջալից ճամբայէն յետոյ, հրաբուխի լանջքերը ծածկող ձիւնի ընդարձակ ծածկոցին վրայ, մեր առջև անսպասելիօրէն յայտնուեցաւ տեսակ մը քնական սանդուխ, որ դիւրացո՞ց մեր վերելքը: Այդ սանդուխը առաջացած էր ժայթքումի ժամանակ դուրս նետուած քարերու զանգուածներէն: Եթէ այդ քարերը կասեցուած չըլլային լեռան լանջքերու պատուարներէն, ծով կը թափուէին և նոր կղզիներ առաջ կը բերէին: Ամենայն դէպս այդ վիճակին մէջ մեզի համար շատ օգտակար եղան: Լեռան լանջքերուն ծռութիւնը կ'աւելնար, բայց այդ քարերէն կազմուած աստիճանները թոյլ կու տային դիւրութեամբ բարձրանալ ու նոյնիսկ այնքան արագ, որ բաւական է վայրկեան մը ետ մնայի և իմ ուղեկիցները այն ատեն այնքան հեռացած կ'ըլլային, որ շատ փոքր կ'երևային աչքիս:

Երեկոյեան ժամը եօթին բարձրացած էինք սանդուխին մօտ երկու հազար աստիճանները և կը դռնուէինք լեռան դուրս ցցուած մասին մէջ, որուն կարծես կը կռթնէր խառնարանին իսկական կոնսոնանսները:

Ծովը՝ կը տարածուէր երեք հազար երկու հարիւր ոտք խորութեան վրայ. անցած էինք յաւերժական ձիւնին սահմանը, որ իսլանտայի մէջ, խոնու կլիմային հետեւանքով, շատ բարձր չէ:

Սաստիկ ցուրտ էր. քամին ուժգին կը փչէր. ես ուժասպառ էի: Բրօֆէսէօրը անանկով, օդ իմ ոտքերս կը հրամարէին առաջ երթալէ, հակառակ իր անհամբերութեան, որոչեց կանգ առնել և նշան առաւ որսօրդին, բայց ան գլուխը շարժեց:

— Ինչպէս կ'երեւայ, ըստ հօրեղբայրս, պէտք է աւելի բարձրանայ:

Յետոյ Հանսին հարցուց, թէ ինչու չէր ուզեր կանգ առնել:

// «Mistourea» պատասխանեց ուղեցոյցը:

// «Ja, mistourea» կրկնեց իսլանտացիներէն մէկը քիչ մը վախօցած ձայնով:

— Ի՞նչ կը նշանակէ այդ բառը, հարցուցի անհանգստացած:

— Նայէ՛, ըստ հօրեղբայրս:

Ես գէպի դաշտը ուղղեցի իմ հայեացքը մանրացած պեմզայի, աւազի ու փոշիի վիթխարի սիւն մը կը բարձրանար, թաթառի պէս դալարուելով: Քամին դայն կը շարժէր գէպի Սնեֆելսի այն լանջքը ուրիշ մենք կը բարձրանայինք: Մուգ վարագոյրի նման ան փռուած էր արևուն գէմ. լայն ստուեր ձգելով լերան վրայ: Եթէ այդ թաթառը մեր կողմը թեքուէր, անխուսափելիօրէն մեզի իր շրջապոռոյտին մէջ կ'առնէր: Այս երեւոյթը, որ յաճախ կը պատահի, երբ քամին սառնակոյտերէն կը փչէ, իսլանտական լեզուով «mistour» կը կոչուի:

— Hastigt, hastigt, կը կանչէր ուղեցոյցը:

Թէև գանիերէն չէի գիտեր, բայց իսկոյն հասկցայ, որ պէտք է որքան կարելի է արագ՝ Հանսին հետեւիլ: Ան սկսաւ խառնարանին բերանին շրջանը ընել, բայց՝ աւելի արագ յառաջանալու համար, ծուռ կ'երթար: Քիչ յետոյ թաթառը զարնուեցաւ լերան, որ սկսաւ դողալ՝ հարուածին ուժէն: Քամիին հոսանքէն բռնուած քարերը օդին մէջ կը թռչէին, ինչպէս հրարուխներու ժայթքման: Ետևն, Բարեբախտաբար մենք կը գտնուէինք հակառակ կողմը, և ատոր շնորհիւ ալ վտանգէն դուրս էինք. առանց ուղեցոյցի նախազգուշութեան, մեր ջարդուած ու փոշիացած մարմինները վար պիտի չալըրտուէին, ինչպէս ասուպի բեկորներ:

Հանսը սակայն խոհեմութիւն համարեց գիշերը չմնալ Սնեֆելսի լեռնալանջերուն: Շարունակեցինք մեր գիկ-դակ վերելքը: Այն հազար հինգհարիւր օտք տարածութիւնը, որ մեզի կը մնար բարձրանալ, մեղմէ գրեթէ հինգ ժամ աւաւ. չրջագարձերն ու թեքումները առնուազն երեք մղոն (\*) կը բռնէին: Ես ուժասպառ եղած էի, ցօրոտէն և անօթութենէն ընկճուած:

Վերջապէս գիշերուան ժամը 11ին, խոր մթութեան մէջ, հասանք Սնեֆելսի գագաթը: Նախքան խառնարանին ներսը մեր պատըսպարուիլը, ևս ժամանակ ունեցայ նայելու «կէս գիշերային արեւին», որ կը գտնուէր իր ամենացած կէտին վրայ, ուրիշ իր տըժգոյն ճառագայթները կը սփռէր ոտքերուս տակ քնացող կղզիին վրայ:

(\*) Ֆրանսական միտր հաւասար է 4 ֆիուեթրի: (Մ. Թ.)

Ընթրիքը շատ կարճ տեւեց և մեր խմբակը պատրաստուեցաւ գիշերելու: Անկողինը կարծր էր, սանիքը քիչ յուսալի, ընդհանուր դրուժիւնը խիստ ծանր: Կը գտնուէինք ծովու մակերեւոյթէն մօտ հինգ հազար ոտք բարձրութեան վրայ: Բայց և այնպէս այդ գիշեր իմ քունս յատկապէս հանգիստ եղաւ. շատոնց այդպէս չէի քնացած: Նոյնիսկ երազ չտեսայ:

Յաջորդ առտու արթնցանք սաստիկ ցուրտէն կիսով մը սառած, հակառակ որ արեւուն ճառագայթները այնքան պայծառ կը փայլէին: Ես ձգեցի իմ քարէ անկողինը մեր աւջեւ բացուող այդ հրաշալի տեսարանը դիտելու համար:

Կը գտնուէի Սնեֆիլսի հարաւային գաղաթը, ուրկէ իմ հայեացքը կ'ընդգրկէր կղզիին մեծ մասը: Շնորհիւ այն տեսողական պատրանքին, որ կ'ըստացուէր բարձրէն նայելու ատեն, կղզիին ափերը կարծես կը բարձրանային, իսկ կեդրոնական մասերը կը ցածնային: Ոտքերու տակ կը տեսնէի խոր հովիտներ, որոնք իրար կը խաչաձեւէին ամեն ուղղութեամբ. անդունդները, ջրհորներ կը թուէին, լիճերը՝ ջրափոսեր. դեաներ՝ առուներ: Այլ կողմը կ'երկարէին անհամար սառցակոյտեր և բազմաթիւ գաղաթներ, որոնցմէ մէկ քանիէն ծուխի բարակ քուլաներ կը բարձրանային: Այդ անհամար լուսերու — որոնք ձիւնով ծածկուած ըլլալուն պատճառաւ փրփրալի կը թուէին, — ալ իր քանման տատանումները փոթորկալի ծովը կը յիշեցնէին ինծի: Հայեացքս դէպի արեւմուտք ուղղելով, կը տեսնէի վեհօրէն տարածուած ուկրանոսը, որ կարծես շարունակութիւնը ըլլար այդ փըրփըրացող գագաթներուն. հնարատր չէր որոշել, թէ ուր կը վերջանար երկիրը և ուրկէ կ'սկսէր ծովը:

Ես բարձրովին խորասուզուած էի այն հրաշալի ինքնամոռացութեան մէջ, որ մարդ կ'ըզգայ բարձր գագաթներու վրայ. այս անգամ ես գլխապատշաճ չունեցայ, որովհետեւ սորված էի արդէն բարձրէն նայիլ: Իմ շլացած հայեացքը կը լողար արեւին ճառագայթներու թափանցիկ լուսաշողին մէջ: Յափշտակուած այդ սրանչելի տեսարանէն, մոռցած էի, թէ ուր էի. ալ չէի մտածեր այն անդունդներուն մասին, որոնց մէջ ճակատագիրը պիտի տանէր ինծի քիչ յետոյ: Սակայն բրոֆէսէօրն ու Հոնսը մօտեցան ինծի լերան այդ բարձունքին վրայ, և անոնց յայտնութիւնը զիս վերադարձուց դէպի իրականութիւն:

Հօրեղբայրս դէպի արեւմուտք դառնալով ձեռքով բարակ ծուխ մը ցուցուց — ինչ որ մշուշ ալիքներէն բարձրացած հողի կտոր մը: — Կրէօնլանտաւն, ըսաւ ան:

— Կրէօնլուծումն, բացառանչեցի ես :

— Այո՛, մենք անկէ հազիւ երեսունհինգ մղոն հեռու ենք, և ձիւնահալքի ժամանակ սպիտակ արջերը նստած հիւսիսէն եկած սառցապատերուն վրայ, մինչև Իսլանտա կու դան: Բայց կարեւորը այդ չէ: Մենք հիմա Սնեֆելսի գագաթն ենք, ահա անոր երկու բարձունքները, հիւսիսային և հարաւային: Հանսը մեզի կ'ըսէ, թէ ինչ կը կոչեն իսլանտացիները այն գագաթը, որուն վրայ կը գտնուինք:

— Սկարտարի՛ս:

Հօրեղբայրս ինծի նայեցաւ յաղթական հայեացքով ու ըսաւ .

— Դէպի խառնարան:

Սնեֆելսի խառնարանը շուռ եկած ձագարի նման էր, որուն բերանը մօտաւորապէս հինգ քիլոմետր արամագիծ կրնար ունենալ: Անոր խորութիւնը, իմ կարծիքով, մօտաւորապէս երկու հազար ոտք կ'ըլլար: Կարելի է երեւակայել, թէ ինչ պիտի կատարուէր այդ խոր երախին մէջ, երբ ան լեցուած ըլլար որոտներով և բոցերով: Ձագարին ստորին մասը հազիւ թէ հազար ոտքէ աւելի չըջագիծ ունենար, այնպէս որ լերան զառիվայրը այնքան ալ ծուռ չէր և անոր լանջքերէն դիւրութեամբ կարելի էր հասնիլ խառնարանին յատակը: Ես ակամայ այդ խառնարանը համեմատեցի վիթխարի թնդանօթի մը երախին հետ:

«Իջնել թնդանօթին երախին մէջ, կը մտածէի ես, որ թերեւս լեցուած է ու ամեն վայրկեան կրնայ պայթիլ, ասիկա խելագարութիւն է»:

Բայց արդէն նահանջել կարելի չէր: Հանսը անտարբեր դէմքով առաջ անցաւ: Ես հետեւեցայ առանց խօսք մը ըսելու:

Վայրէջքը դիւրացնելու համար Հանսը ձագարին ներսը երկար թեքումներ կ'ընէր. պէտք էր իջնել ճեղքերէն հրաբխային ժայռերու, որոնք երբեմն, ամենափոքր ցնցումէն վար կը գլորուէին. այդ քարերուն անկումը տարօրինակ ձայնով արձագանգ կը յառաջացնէր:

Հրարուխի բերանին քանի մը կէտերուն վրայ ներքին սառցապատեր կային. այսպիսի պարագաներուն Հանսը մեծ զգուշութեամբ առաջ կ'երթար, երկաթածայր ձեռնափայտով դետինը քննելով, տեսնելու համար, թէ չըլլայ որ անդունդներ ըլլան: Քանի մը կ'սկսածելի տեղեր քափպուեցանք իրարու կապուել երկար պարանով, որպէսզի, եթէ մեզմէ մէկուն ոտքը սայթաքէր, կարենար իր ուղեկիցներէն օգնութիւն ստանալ: Այս յախզղուշութիւնը անհրաժեշտ էր, բայց ատով վտանգը չէր վերջանար:

Բայց և այնպէս, հակառակ այն բոլոր դժուարութիւններուն, որոնք անձանօթ էին ուղեցոյցին, վայրէջքը եղաւ առանց արկածի, միայն պարանի ծրար մը վար ինկաւ իսլանտացիներէն մէկուն ձեռքէն և ամենահարճամբայէն անդաւելին յատակը գլորուեցաւ:

Կէսօրին խառնարանին յատակը հասած էինք: Գլուխս բարձրացուցի ու կոնսպարաթի անցքին մէջէն երկինքի փոքր կտոր մը տեսայ: Միայն մէկ կէտէն կ'երեւար Սկարտարիսի սրածայր գագաթը:

Խառնարանի յատակէն դուրս կու գային երեք ծխնելոյզներ, որոնց մէջէն Սնեֆելսի հրաբխային ժայթքումներու ժամանակ, ներքին հնոցը գուրս կը ժայթքէր լավա ու գալորչիներ: Այդ ծխնելոյզներէն իւրաքանչիւրը մօտաւորապէս հարիւր ոտք տրամագիծ ունէր: Անոնք՝ մեր ոտքերուն տակ՝ երախները բացած էին. ես չէի համարձակեր անոնց մէջ նայիլ, Բրոֆէսէօր Լիգենպրոկը իսկոյն քննեց զանոնք. շնչասպառ մէկ անցքէն միւսը կը վազէր, ձեռքերը շարժելով և ինչ որ անհասկնալի բառեր արտասանելով: Հանսը և իր ընկերները, նստած լավայի կտորներուն վրայ, բրոֆէսէօրին կը նայէին, և ինչպէս կ'երեւայ, խելագարի տեղ կը դնէին զինքը:

Յանկարծ հօրեղբայրս ճիշտ մը արձակեց, կարծեցի, թէ անոր ոտքը սայթաքեցաւ ու ծխնելոյզներէն մէկուն մէջ ինկաւ: Բայց ոչ. տեսայ գայն, թեւերը առաջ պարզած և ոտքերը բացած կանգնած էր կրանիգեայ ժայռի մը առջև, ճիշդ խառնարանին մէջտեղը, այնպէս՝ ինչպէս Պլուտոնի արձանը՝ իր վիթխարի պատուանդանին վրայ:

Ապա՛ս մարդու գրութեան մէջ կ'երեւար, բայց այդ սալշութիւնը շուտով մոլորին հրճուանքի փոխուեցաւ:

— Աքսէ՛լ, Աքսէ՛լ, բացագանչեց ան, եկո՛ւր հոս, եկո՛ւր:

Ես շտապեցի անոր մօտ: Հանսը և ընկերները տեղերնէն չչարժեցան:

— Նայէ՛, ըսաւ բրոֆէսէօրը:

Եւ ես իրմէ նուազ չղարմացայ, թէիւ ոչ իրեն չափ ուրախացած, երբ ժայռին արեւմտեան երեսին շրայ կարդացի: Ունենան տառերով գրուած, ժամանակի ընթացքին կիսով մը ջնջուած, հետեւեալ՝ հազար անգամ անիծեալ անունը:

## ՂԱԿԻ ԿՐԻՆՈԿԿԻՃ

— Արնէ Սակնուսեմ, բացագանչեց հօրեղբայրս, մի՞թէ դուն հիմա դարձեալ կը կասկածիս, Աքսէ՛լ:

Ես պատասխան չտուի, և չփոթուած վերադարձայ լավայի աթոռիս մօտ: Բացայայտութիւնը կը ճնշէր զիս:

Որքան ատեն այդպէս թաղուած մնացի խոհերու մէջ, չեմ գիտեր. երբ գլուխս կրկին բարձրացուցի, խառնարանին յատակը միայն հօրեղբայրս ու Հանսը տեսայ: Միւս իսլանտացիները ճամբու վրայ էին ու անոնք արդէն Սնեֆելսի արտաքին լանջերէն վար կ'իջնէին, Ստապի վերադառնալու համար:

Հանսը հանդիստ քնացած էր ժայռին ստորոտը, մտաբանելով լավայի մը կոյտին վրայ պառկած: Հօրեղբայրս ետ ու առաջ կ'երթար խառնարանին յատակը, ինչպէս ծուղակը ինկած վայրի գաղան: Ես ելլելու ո՛չ ուժ ունէի և ո՛չ ալ ցանկութիւն, և հետեւելով ուղեցոյցի օրինակին, պառկեցայ քնանալու և ինկայ տանջալի մտաբան մէջ — կարծես կը լսէի խուզ աղմուկ մը լերան ընդերքը:

Այդպէս անցաւ առաջին գիշերը խառնարանին մէջ:

Յաջորդ օր կոնազագաթը ծածկեց գորշ, ամպամած, ծանր երկինքը: Ես այդ նկատեցի աւելի հօրեղբորս բարկութենէն: Ես հասկըցայ անոր բարկութեան պատճառը ու յոյսի նշոյլ մը ծագեցաւ մէջս:

Մեր առջև բացուած երեք ուղիներէն Սակնուստեմը միայն մէկը ընտրած էր: Իսլանտացի իմաստունին խօսքերով, այդ ճամբան կարելի էր գտնել ծածկագրին մէջ յայտնուած նշանով, այսինքն այն՝ որ Սկարտարիսի ստուերը՝ կը շոյէր անոր եզերքը՝ Յունիսի վերջին օրերուն:

Եւ իրօք, այս սրածայր գագաթը կարելի էր ընդունիլ, ինչպէս վիթխարի արեւի մը ժամացոյցի սլաք, որուն ստուերը ցոյց կու տար դէպի երկրին կեդրոնը տանող ուղին: Ուրեմն, եթէ արեւ չըլլար ստուեր ալ չէր ըլլար, հետեւաբար և՛ անհրաժեշտ ցուցումը: Այդ օր Յունիս 25ն էր: Բաւական էր, որ երկինքը վեց օր ամպամած մնար, այն ատեն մենք ստիպուած կ'ըլլայինք մեր արշաւանքը յետաձգել յաջորդ քարտան:

Չեմ ուզեր նկարագրել բրօքէսէօրին անզօր բարկութիւնը: Օրը անցաւ, բայց ստուեր մը չի նկատուի խառնարանին յատակը: Հանսը տեղէն չշարժեցաւ, թէև ան պէտք է գարմանար, թէ ինչո՞ւ կ'ըստատենք, եթէ միայն ան գարմանալու կարողութիւն ունենար: Հօրեղբայրս ոչ մէկ խօսք ըսաւ ինձի: Անոր հայեացքը անընդհատ ուղղուած էր դէպի երկինք և կը կորսուէր գորշ ու ամպամած անեղբուս մէջ:

Ամսու 26ին՝ դարձեալ ոչինչ: Ամբողջ օրը անձրեւախառն ձիւն տեղաց: Հանսը հիւզակ մը պատրաստեց լավայի կտորներով: Ես տըխրութիւնս քիչ մը կը փարատէի, դիտելով կոնազագաթի կողերէն հոսող այն հազարաւոր փոքրիկ ջրվէժները, որոնց խլացուցիչ աղմուկը կ'աւելնար քարերու անկումէն: Հօրեղբայրս այլևս չէր կրնար զսպել ինքզինքը: Իսկապէս, ամենահամբերատար մարդն անգամ այսպիսի պայմաններուն ինքնիրմէ դուրս կ'ելլէ, որովհետև այս վիճակը շատ կը նմանէր ճիշդ նաւահանդիստի մօտ ընկղմելուն:

Յաջորդ օրը երկինքը տակաւին ամպամած էր բայց կիրակի օրը, ամսուն 27ին, նոր լուսնին հետ եղանակն ալ փոխուեցաւ: Արեւը խառնարանին վրայ թափեց իր պայծառ ճառագայթները: Ամեն մէկ

բլրակ, ամեն մէկ ժայռ, իւրաքանչիւր քար, իւրաքանչիւր բարձ-  
րութիւն իր բաժինը առաւ այդ բարերար լոյսէն և իսկոյն իր ըստ-  
ուերը նետեց երկրին վրայ: Սկարտարիսի ստուերը յատակ ուրուա-  
գծուեցաւ խառնարանին յատակին վրայ: Հօրեղբայրս անոր հետ  
կ'ըզբաղէր:

Կէսօրին ստուերը քնքշօրէն շոյեց մէջտեղի ծխնելոյզին եզրերը:

— Հո՛ւ է, բացագանչեց բրօֆէսէօրը, հոս: Այստեղէն կ'ըսկսի  
դէպի երկրին կեդրոնը տանող ճամբան, աւելցուց ան դանիւրէն:

— «Forül», հանգիստ ձայնով ըսաւ ուղեցոյցը:

— Առա՛ջ, կրկնեց հօրեղբայրս:

Ժամը ցերեկուայ մէկը անցած էր 13 րոպէ:

## ԺԷ.

Նոր միայն կ'ըսկսէր բուն ուղեւորութիւնը: Մինչև հիմա դըժ-  
ուարութիւնները կը յաջորդէին մէկը միւսին, իսկ հիմա, բառին  
բուն առումով անոնք կը բուսնին մեր ոտքերուն տակ:

Ես տակաւին չէի նայած այն անյատակ անդունդին խորը, սրուն  
մէջ պէտք է իջնէինք: Հիմա հասած էր ժամանակը — կամ մաս-  
նակցիլ այս արչաւանքին, կամ հրաժարիլ անկէ: Բայց ես ամէցայ,  
տեսնելով ուղեցոյցին վճռականութիւնը: Հանսը այնքան յօ-  
ժարակամ ընդունեց մասնակցիլ այս վտանգաւոր արչաւանքին, ան  
այնքա՛ն հանգիստ, այնքան անտարբեր էր դէպի ամեն տեսակի վը-  
տանգները, որ ես կարմրեցայ իրմէ նուազ քաջ ըլլալուս համար:  
Առանց իրեն, ես չաօ առաջարկութիւններ կրնայի ընել, բայց ուղե-  
ցոյցին ներկայութեան լոնցի, իմ յիշողութիւնը թռաւ դէպի գեղեցիկ  
Գրետխենը և՛ մօտեցայ մէջտեղի անցքին:

Ինչպէս արդէն բսած եմ, ունէր 100 ոսք տրամագիծ. կամ 300  
ոսքէն աւելի չըջագիծ: Հակեցայ ժայռերէն մէկուն վրայ ու վարնա-  
յեցայ. մազերս փուշ փուշ կանգնեցան, դլուխս ապուշցաւ, գինովի  
պէս զգացի, որ ծանրութեան կեդրոնը տեղափոխուած էր իմ մէջս:  
Եւ անդունդին զօրաւոր ձգողական ուժը քիչ կը մնար զիս պէսի ի-  
րեն քաշէր, եթէ Հանսը իր հզօր ձեռքով չբռնէր զիս: Պարզ է, որ  
բաւականաչափ գլխապտոյտի դասեր չէի առած Քոփէնհակին մէջ:

Սակայն, թէև ես չաօ քիչ ժամանակ նայեցայ անդունդին խոր-  
քը, բայց և այնպէս գաղափար կազմեցի անոր կառուցուածքին մա-  
սին: Անոր գրեթէ ուղղաձիգ սլատերուն վրայ կ'երեւային բազմաթիւ  
դուրս ցցուած մասեր, որոնք կը դիւրացնէին մեր վայրէջքը. թէև  
սսնդուխը կար, սակայն կը պակսէր ճաղաչարքը: Անկասկած,

եթէ անդունդին բացուածքը թոկ մը կապուէր, այդ կրնար իբրեւ յե-  
նարան ծառայել, բայց ինչպէ՞ս քանդէինք թոկը, յատակը հասնելէն  
յետոյ: Այդ գծուարութիւններէն դուրս ելլելու համար հօրեղբայրս  
չէր պարզ միջոցի դիմեց: Ան վերցուց մասնաչափ հաստութեամբ և  
400 ստնաչափ երկարութեամբ թոկ մը, մէջտեղէն զայն կապեց դուրս  
ցցուած մեծ փայտի մը վրայ, իսկ երկու ծայրերը վար իջեցուց: Այս-  
պէսով, մեզմէ իւրաքանչիւրը կրնար վար իջնել, բռնելով թոկի եր-  
կու կողմերէն: Երկու հարիւր ոտք իջնելէն յետոյ, շատ դիւրին կ'ըլ-  
լար թոկը փայտէն ազատել՝ մէկ ծայրը ձգելով, իսկ միւսէն քաշելով:  
Այս միջոցը այդպէս կարելի էր շարունակել անվերջ: Երբ պատրաս-  
տութիւնները վերջացան, հօրեղբայրս ըսաւ.

— Հիմա զբաղինք իրեզնններով. երեք կապոց ընենք, մեզմէ իւ-  
րաքանչիւրս թող ասնէ կապոց մը իր մէջքին, խօսքս, անշուշտ,  
դիւրարեկ իրերու մասին է:

Պարզ էր, որ խիզախ բրօֆէսէօրը մեզի դիւրարեկ իրերու շար-  
քին մէջ չէր հաշուեր:

— Հանսը, շարունակեց ան, կ'աւնէ գործիքներն ու պաշարեղէնի  
մէկ երրորդ մասը, դո՛ւն, Աքսէ՛լ, միւս երրորդը, իսկ ես մնացած պա-  
շարեղէնն ու դիւրարեկ գործիքները:

— Բայց, հարցուցի ես, ո՞վ վար կ'իջեցնէ հազուստները, թոկերն  
ու սանդուխները:

— Աստնք իրենք իրենց վար կ'իջնեն:

— Ի՞նչպէս հարցուցի ես դարմացած:

— Հիմա կը տեսնես:

Եւ ան իսկոյն գործի անցաւ: Իր կարգադրութեամբ Հանսը կա-  
պոցի մը մէջ ամփոփեց բոլոր չկոտորատուող իրերը, պինդ կապեց և  
առանց այլեւայլի ձգեց անդունդը: Լսեցի, թէ ինչպէս մեծ աղմուկով  
կապոցը վար կը գլորուէր: Հօրեղբայրս անդունդին վրայ հակած՝ դո՛հ  
հայեացքով իրերուն վար իջնելը կը դիտէր, այնքան ատեն, մինչեւ  
անոնց անհետանալը:

— Լա՛ւ, ըսաւ ան, հիմա հերթը մերն է:

Կը հարցնեմ ամեն մէկ ողջամիտ մարդու, մի՞թէ կարելի էր  
առանց սոսկալու այդ խօսքերը լսել:

Բրօֆէսէօրը մէջքին կապեց դիտական գործիքներու կապոցը.  
Հանսը միւս գործիքները առաւ, ես՝ զէնքերը: Մենք սկսանք իջնել  
հետեւեալ կարգով. առջեւէն կ'երթար Հանսը, անոր ետեւէն հօր-  
եղբայրս ու ամենէն վերջը՝ ես: Վայրէջքը սկսաւ կատարեալ լռու-  
թեամբ, միայն այդ լռութիւնը երբեմն կը խանդարուէր քարերու աղ-  
մուկէն, սրտնք փրցուելով անդունդը կը գլորուէին: Ես կը սողայի,  
մէկ ձեռքով ուժով բռնած կրկնակի թոկէն, միւս ձեռքով կոթնած

ձեռնափայտիս վրայ: Ամեն ժամանակ մէկ բանի մասին կը մտածէի: չըլլայ թէ կորսնցնեմ յենման կէտը: կը թուէր, թէ պարանը շատ բարակ էր ու չէր կրնար դիմանալ երեք հոգիի ծանրութեան: Այդ պատճառով որքան կարելի է անկէ քիչ կ'օգտուէի, աշխատելով հասարակչութիւնս պահել, յենուելով լավայի կտորներուն վրայ, ոտքերու շօշափումով գտնելով զայն: Երբ այդ սահող աստիճաններէն մէկը կ'իջնար Հանսի ոտքին տակէն, ան հանգիստ ձայնով կ'ըսէր.

— Զգո՛յ՛ն:

կէս ժամ յետոյ հասանք բաւական մեծ ժոյռի մը, որ դուրս ցըցուած էր պատէն: Հանսը սկսաւ քաշել թոկին ծայրէն, իսկ միւս ծայրը բարձրացաւ օդը, հասնելով այն ժոյռին գաղաթը, որմէ կախուած էր, յետոյ վար ինկաւ իրեն հետ միասին բերելով քարի և լավայի կտորներ, որոնք կը թափուէին անձրեւի կամ աւելի ճիշդ՝ խիստ վտանգաւոր կարկուտի նման:

Մեր ժոյռին վրայ հակելով, նկատեցի, որ անդունդին յատակը տակաւին չէր երեւար:

Նորէն թոկը ի գործ դրինք ու կէս ժամ յետոյ երկու հարիւր օտք եւս վար իջանք:

Չեմ գիտեր, թէ ինչպիսի մոլեռանդ երկրաբան պէտք էր ըլլալ, որ այսպիսի վայրէջքի պահուն փորձէր հետազօտել չրջապատի հողին կազմը: Ինչ որ ինծի կը վերաբերէր, ես երբեք չէի հետաքրքրուիլ ատով, բայց բրօֆէսէօրը, ինչպէս կ'երեւայ, գիտողութիւններ և նըշումներ կ'ընէր, որովհետեւ զաղարներէն մէկուն ժամանակ ըսաւ ինծի.

— Որքան վար կ'իջնենք, այնքան վտահուութիւնս կ'աւելնայ: Այս հրաբխային հողերուն կազմը կատարելապէս կը հաստատէ Տեվրին տեսակէտը: Մենք կը գտնուինք հողի նախնական շերտերու վրայ, որոնց մէջ աեղի ունեցած է մետաղներու կազմութեան քիմիական կազմութիւնը. մետաղներ, որոնք բոցավառուած են օդին և ջուրին հետ շփուելու ազդեցութեան տակ: Ես վճռականապէս կը ժխտեմ կեղրոնական ջերմութեան տեսութիւնը, մենք դեռ կը տեսնենք այդ:

Միշտ նոյն եզրակացութիւնը: Հասկնալի է, որ ես բնաւ փափաք չունէի փիճելու: Իմ լուծութիւնը իբր համաձայնութիւն ընդունուեցաւ ու վայրէջքը նորէն սկսաւ:

Երեք ժամ իջնելէ յետոյ անդունդին յատակը տակաւին չէր երեւար: Գլուխս վեր բարձրացնելով նկատեցի, որ խառնարանին բերանը զգալիօրէն պղտիկցած էր, անոր պատերը հեղհեղաւ կը մօտենային իրարու, մթութիւնը կ'աւելնար:

Բայց և այնպէս շարունակեցինք իջնել, կը թուէր, թէ պատերէն փրցուած քարերը աւելի խուլ ձայն կը հանէին և աւելի շուտ կը

հասնէին յատակը: Եւ որովհետեւ ես մեծ ուշադրութեամբ հաշուած էի, թէ քանի անգամ ամրացուցած ենք թուր, ու քսնդած, այնպէս որ կրցայ հաշուել անդունդին խորութիւնն ու անցած ժամանակին տեւողութիւնը: Արդէն տասնչորս անգամ թուր ձգած էինք իւրտքանչիւր կէս ժամը անգամ մը: Ուրեմն ընդամենը եօթը ժամ էր տեւած մեր վայրէջքը: Մենք սկսած էինք իջնել ժամը մէկին, ուրեմն հիմա ժամը ութը պէտք էր ըլլար: Իսկ այն խորութիւնը որուն հասած էինք, հաւասար էր 14 անգամ 200 քոթի — այսինքն երկու հազար ութըհարիւր քոթի:

Այդ վայրկեանին լսուեցաւ Հանսին ձայնը.

— «Հայդ» («կանգնէ») բացաղանչեց ան:

Ես իսկոյն կանգ առի և քիչ կը մնար ոտքովս զարնէի հօրեղբորս զլիտուն:

— Հասանք, ըսաւ այս վերջինը:

— Ո՞ւր, հարցուցի ես սողալով անոր մօտ:

— Ուզո՞ւս հայեաց ծխնելոյղին յատակը:

— Ուրեմն ուրիշ անցք չիկա՞յ:

— Կա՞յ. աջ կողմը ինչ որ նրբանցք մը կը տեսնեմ: Վաղը կը տեսնենք այդ: Իսկ հիմա ընթրենք և յետոյ քնանանք:

Տակաւին մութը բոլորովին չէր իջած: Պաշարեղէնին պարկը բացինք, ընթրեցինք և պոկեցանք քարերու ու լավայի կտորներուն վրայ:

Մէջքիս վրայ պոկած, վեր նայեցայ: Երեք հազար քոթ երկար, հսկայ հեռադիտակի նման այդ խողովակին ծայրը լուսաւոր կէս նըշմարեցի: Անտիայլ աստղ մըն էր ասիկա, իմ հաշուով Փոքր Արջ համաստեղութեան մաս կազմող Պէթան:

Յետոյ թաղուեցայ խոր քունի մէջ:

## ԺԸ:

Առաւօտեան ժամը ութին արեւի ճառագայթ մը ներս թափանցեց ու արթնցուց մեզի: Պատերուն վրայ լավայի հաղարաւոր անկիւնաւոր քարերը արտացոլացուցին այդ ճառագայթը ու սիւսեցին կայծերու անձրևի մը պէս: Այդ լոյսը այնքան օւժգին էր, որ կարելի էր պարզ տեսնել շրջապատի իրերը:

— Է՛հ, Աքսէ՛լ, ի՞նչ կ'ըսես դուն, բացագանչեց հօրեղբայրս, ձեռքերը շփելով: Միթէ՞ ասկէ աւելի հանգիստ գիշեր անցուցած ես Արքայական փողոցի մեր տան մէջ: Չկայ ո՛չ սայլակներուն ազմուկը, ոչ մանրավաճառներուն կանչերը, ո՛չ մակոյկավարներուն գոռում-գոչումը:

— Անշուշտ, մենք շատ հանդիստ ենք այս անդունդին յատակը, բայց և այնպէս այս խաղաղութեան մէջ սոսկալի բան մը կայ:

— Է՛հ, ի՞նչ պիտի ընես հետագային, բացառանչեց հօրեղբայրս, եթէ դուն հիմակուց կը վախնաս: Մենք տակաւին մատնաչափ մ'իսկ չենք խորացած երկրին ընդերքը:

— Ի՞նչ կ'ուզէք ըսել:

— Կ'ուզեմ ըսել, որ մենք հազիւ կղզիին մակերեսը հասած ենք: Այս երկար ուղղահայեաց խողովակը, որ կը բացուի Սնեֆելսի խառնարանէն, կը վերջանայ մօտաւորապէս ծովու մակերեւոյթին վրայ:

— Դուք համոզուած էք ատոր:

— Կատարելապէս. նայէ՛ օդացոյցին:

Իսկապէս սնդիկը, որ մեր վայրէջքին հետեւանքով քիչ քիչ բարձրացած էր, կանգ առած էր քսանիններորդ բաժանմունքին վրայ:

— Կը տեսնե՞ս, շարունակեց բրօֆէտէօրը, որ մենք տակաւին նոյն մթնոլորտային ճնշման ազդեցութեան տակ ենք ու ես անհամբերութեամբ կ'ըսպասեմ, թէ ե՞րբ օդաչափը կը փոխենք անգայտաչափով:

— Օդաչափը, անշուշտ անպէտք կ'ըլլայ այն վայրկեանէն, երբ օդին ծանրութիւնը կը գերադանցէ անոր ճնշումը ծովու մակերեւոյթին վրայ:

— Բայց, ըսի ես, միթէ՞ պէտք չէ վախնալ այն բանէն, որ այդ անընդհատ աճող ճնշումը անտանելի կը դառնայ:

— Ոչ, մենք դանդաղ կ'իջնենք ու մեր թոքերը կը վարժուին աւելի խտացած օդ շնչելու: Ոտագնացները՝ մթնոլորտին վերի շերտերը բարձրանալու պահուն՝ օդի պոկասութիւն կ'ըզդան, իսկ մենք թերեւս պէտք եղածէն աւելի օդ կ'ուռնենանք: Ուրեմն, ոչ մէկ վայրկեան պէտք չէ կորսնցնենք: Ո՛ւր է այն կապոցը, որ ամենէն առաջ վար ձգեցինք:

Յիշեցի, որ նախորդ օր, երեկոյին այդ կապոցը ի դուր փնտռած էինք: Հօրեղբայրս այս մասին հարցուց Հանսին, որ իր որսորդական հայեացքով չօրս կողմը նայելով՝ պատասխանեց.

— Հոն է, վերը:

Իսկապէս, կապոցը կառչելով դուրս ցցուած ժայռի կտորի մը, կախուած էր մեր գլխուն վրայ, մօտաւորապէս հարիւր ոտք բարձրութեան վրայ: Ճարպիկ իսլանտացին կատուի պէս իսկոյն վեր մագըլցեցաւ ու քանի մը վայրկեանէն կապոցը վար բերաւ:

— Իսկ հիմա, ըսաւ հօրեղբայրս, նախաճաշենք, բայց նախաճաշ ենք այն մարդոց պէս, որոնք երկար ճամբայ պիտի կտրեն:

Պաքսիմատ և չորցած միս կերանք ու քանի մը ուժպ մրդօղի խմեցինք:

Նախաճաշէն վերջ հօրեղբայրս գրպանէն հանեց յուշատետրը, կարգով վերցուց զանազան դործիքներ ու նօթագրեց:

«Ներկուշարթի 1 Յուլիս:

Քրոնոմեթր — առաւօտեան ժամը Տը 17 վայրկեան անցած:

Պարոմեթր — 29,7.

Ջերմաչափը — 6°.

Ուղղութիւնը — Արեւելք-հարաւ-արեւելք:

Այս վերջին գիտողութիւնը կը վերաբեօքէր մաւթ ներքնուղիին և կողմնացոյցի միջոցաւ ստացուած էր:

— Հիմա, Աքսէ՛լ, բացագանչեց ըրօֆէսէօրը ոգեւորուած, մենք կ'ըսկսինք խորանալ երկրագունդի իսկական ընդերքին մէջ: Ճիշդ ըսելով, այս վայրկեանէն կը սկսի մեր ուղեւորութիւնը:

Եւ հօրեղբայրս իսկոյն մէկ ձեռքով վերցուց վզէն կախուած Հուճկորֆի գործիքը. իսկ միւս ձեռքով՝ ելեքտրական հոսանքը հաղորդակցութեան մէջ կապեց լապտերին օձնեակին հետ և բաւական վառ լոյս մը սփռեց ներքնուղիին խաւարին մէջ:

Երկրորդ գործիքը, որ Հանսը կը տանէր, նոյնպէս գործի դըրուեցաւ: Ելեքտրականութեան այս սրամիտ գործադրութիւնը մեզի հնարաւորութիւն կու տար, արուեստական լոյս յառաջացնելով, երկար ժամանակ առաջ երթալ, նոյնիսկ բոցավառուող կազերու միջավայրին մէջ:

— Առա՛ջ, ըսաւ հօրեղբայրս:

Մեզմէ իւրաքանչիւրս վերցուց իր կապոցը. Հանսը յանձն առաւ հագուստներու և թոկերու կապոցը իր առջեւէն քշել, և մենք երեքով մտանք ներքնուղիին մէջ:

Այդ մաւթ միջանցքը մտնելէն առաջ գլուխս վեր բարձրացուցի ու վերջին անգամ մը վիթխարի խողովակին մէջէն տեսայ Խալանտայի երկինքը, որ այլեւս ինծի չվիճակուած չէր տեսնել:

1229 թուին հրաբուխի ժամանակ լավան իրեն համար ճամբայ բացած էր այդ ներքնուղիին մէջէն: Եւ անոր պատերը ծածկած էր թանձր ու փայլուն շերտով մը, որուն վրայ ելեքտրական լոյս կ'անդրադառնար, հարիւրապատիկ ուժով նալով:

Ճամբուն գլխաւոր դժուարութիւնը այն էր, որ պէտք չէր մեծ արագութեամբ սահիլ քառասունհինգ աստիճան անկիւնով ծուռ մակարդակին վրայ: Բարեբախտաբար քանի մը փոսեր ու անհարթութիւններ կարելի էր իբրև աստիճան օգտագործել, իսկ մեր իրերը կրնայինք մեր ետեւէն քաշել երկար թոկին ծայրը կապած:

Բայց այն, ինչ որ մեր ոտքերուն տակ իբրև աստիճան կը ծառայէր միւս պատերուն վրայ կը վերածուէր շթաքարերու:

Տեղ-տեղ ծակոտէն լավան կ'առաջացնէր փոքրիկ կլօր սրուակներու նման կտարցի անփայլ բիւրեղներ, զարդարուած խալակի թափանցիկ կաթիլներով, որոնք ջահերու պէս առաստաղէն կախուած՝

կը լուսաւորէին մեր ճամբան: կը թուէր, ստորերկրեայ ոգիներ լուսաւորած էին իրենց պալատը, ընդունելու համար դուրսի աշխարհէն եկող հիւրերը:

— Զրաշալի է, բացառանչեցի ես ահամայ, ի՞նչ տեսարան: Ի՞նչ սքանչելի են լավայի այս ճրագները, որոնք մուգ կարմիրէն անդգալիօրէն կը փոխուին փայլուն դեղնադոյնի: Իսկ այս բիւրեղները որոնք լուսաւոր գունդերու պէս են:

— Հը՛, դուն արդէն կ'ոգեւորուիս, Ա.քսէլ, պատասխանեց հօրեղբայրս: Հը՛, հրաշալի կը գտնես այս ամենը, տղա՛ս: Ըոյս ունիմ, որ դուն ասոնցմէ աւելին պիտի տեսնես: Բայց յառա՛ջ, յառա՛ջ:

Կողմնացոյցը, որուն յաճախ կը նայէի, անփոփոխ հարաւարեւելք ցոյց կուտար: Լավային այս հոսանքը ուղիղ գծէն չէր շեղիր ո՛չ աջ, ո՛չ ձախ:

Սական ջերմութիւնը զգալիօրէն չէր բարձրանար, ինչ որ կը հաստատէր Տեվիին տեսութիւնը. ես քանի մը անգամ գարմանքով ջերմաչափին նայեցայ: Մեր մեկնելէն երկու ժամ յետոյ ջերմաչափը 10<sup>0</sup> միայն կը ցուցնէր, այսինքն 4<sup>0</sup>-ի բարձրացում միայն: Այդ ինձի թոյլ կուտար մտածելու, որ մենք աւելի հորիզոնական ուղղութեամբ կ'իջնէինք, քան թէ ուղղահայեաց: Ինչ որ կը վերաբերէր այն բանին, թէ ինչ խորութեամբ վար իջած էինք, դիւրին էր չափել այդ բրոֆէսէօրը ճշտութեամբ չափեց ճամբուն շեղման անկիւնները, բայց իրեն պահեց դիտումներուն արդիւնքը:

Երեկոյեան ժամը 9ին դադարի նշան տրուեցաւ: Հանսը իսկոյն նստեցաւ, լապտերներ կախեցին լավայի ցցուածքներէն: Կը գանձուէինք տեսակ մը քարայրի մէջ, ուր օդի պակասութիւն չկար, ընդհակառակը, քամիի հոսանք կուգար մեզի: Ինչէ՞ն յառաջ կուգար այդ հոսանքը. այդ վայրկեանին չգրաղեցայ այդ հարցին լուծումով, որովհետեւ անօթութենէս ու յոգնութենէս կորսնցուցած էի դատելու կարողութիւնս: Եօթը ժամուայ անընդհատ վայրէջքը զիս ուժասպառ ըրած էր, ու ես մեծ բաւականութեամբ լսեցի «կեցիր» բացառանչութիւնը: Հանսը լավայի կտորին վրայ փռեց ուտելիքը և մենք ասխորժակով կերանք: Սակայն բան մը գիս կ'անհանգստացնէր մեր ջուրի պաշարին կէսը սպառած էր: Հօրեղբայրս կը յուսար ջուրի պաշարը ամբողջացնել ստորերկրեայ ջրերէն, բայց տակաւին ոչ մէկ ջուրի չէինք հանդիպած: Ես չկրցայ անոր ուշադրութիւնը չհրաւիրել այդ բանին վրայ:

— Հանգի՛ստ եղիր: Ա.քսէլ, կը վստահեցնէր, որ ջուր կը գտնենք, և նոյնիսկ աւելի, քան պէտք է:

— Բայց ե՞րբ:

— Երբ դուրս կ'ելլենք լավայի չերտէն. ի՞նչ է, կը կարծես, աղբիւրներ պէտք է դուրս հոսին այս պատերէն:

— Բայց թերևս այս նորոնցքը շատ խորանայ: Կը թուի, թէ շատ չենք իջած ուղղահայեաց գծով:

— Ինչի՞ վրայ հիմնուած է ենթադրութիւնդ:

— Այն բանին, որ եթէ մենք շատ խորացած ըլլայինք երկրին կեղեւին մէջ, ջերմութիւնն ալ աւելի բարձր կ'ըլլար:

— Այդ քու տեսակէտն է, պատասխանեց հորեղբայրս. իսկ ի՞նչ ցոյց կուտայ ջերմաչափը:

— Հաղիւ տասնըհինգ աստիճան, ուրեմն մեր մեկնումէն յետոյ, միայն ինը աստիճան բարձրացած է:

Էաւ, ուրեմն ըրէ՛ եզրակացութիւնդ:

— Ահաւասիկ իմ եզրակացութիւնս: Ամենածիշդ. դիտողութիւններուն համաձայն, ջերմութեան բարձրացումը երկրի ընդերքին մէջ հաւասար է մէկ աստիճանի իւրաքանչիւր հարիւր ոտքին. բայց տեղին պայմաններու ազդեցութեան տակ այս թիւը կրնայ որոշ փոփոխութեան ենթարկուիլ: Օրինակ, Իրկուտսկին մէջ, Սիպերիա, նկատուած է, որ ջերմութեան մէկ աստիճանի բարձրացում կ'ըլլայ երեսունըվեց ոտքի վրայ. այս տարբերութիւնը ինչպէս կ'երեւայ, կախուած է ժայռերու ջերմահաղորդումէն: Ես կ'աւելցնեմ նաև, որ նրկատուած է, որ մարած հրաբուխներու մօտ ջերմութեան մէկ աստիճանի բարձրացումը կը կատարուի միայն 100-125 ոտք բարձրութեան վրայ: Առնենք, այս վերջին թիւը իբրև ամենէն նպաստաւորը և հաշուենք:

— Հաշուէ՛, տղաս:

— Դժուար չէ, ըսի քանի մը թուանշաններ գրելով յուշատարիս մէջ: Ինն անգամ հարիւր քսան հինգ ոտք հաւասար է հազար հարիւր քսանհինգ ոտքի:

— Շատ ճիշդ է:

— Ուրեմն:

— Այն, որ ըստ իմ դիտումներուս, հասած ենք կէտի մը, որ ծովու մակերեսէն տասը հազար ոտք վար ենք:

— Չի կրնար ըլլալ:

— Այո՛, եթէ թիւերը կորսնցուցած չեն իրենց նշանակութիւնը: Բքօֆէսէօրին հաշիւները ճիշդ էին, մենք արդէն վեց հազար ոտք աւելի խորը իջած էինք, քան երբեւիցէ իջեր է մարդը, ինչպէս օրինակ, Տիրոլի՝ Բից—Բիւլի հանքերուն, և Պօէհմիոյ Կիւթենպերկի հանքերուն:

Չերմաստիճանը, որ հոս պէտք է ըլլար +81<sup>0</sup>, հազիւ 15<sup>0</sup>ի կը հասնէր: Այս երեւոյթը մտածելու առիթ կուտար:

Յաջորդ օր, Յունիս 30ին, Երեքշաբթի, առտուան ժամը վեցին, մենք նորէն սկսանք իջնել: Կը շարունակէինք քալել լաւալի ներքնուղիէն, որ քիչ քիչ կը ցածնար թեթեւ շեղումով, նման այն շեղումին, որոնք մինչեւ հիմայ ալ, կարդ մը հին տուներուն մէջ, կը փոխարինեն սանդուխները:

Այդպէս շարունակուեցաւ մինչեւ ժամը 12ը 17ը վայրկեան անցնիլը, երբ հասանք Հանսին, որ կանգ առած էր:

— Ա՛հ, բացադանչեց հօրեղբայրս, նրբանցքին ծայրը հասանք: Շուրջս նայեցայ. հասած էինք կէտի մը, ուրկէ կը բամուռէին երկու ճամբաներ, երկուքն ալ մութ և նեղ: Անոնցմէ ո՞ր մէկը պէտք էր ընտրել. դժուար լուծելիք հարց էր այդ:

Սակայն հօրեղբայրս չուզեց իր վարանումը ցուցնել ո՛չ ինձի, ո՛չ ալ ուղեցոյցին. ցոյց տուաւ արեւելեան ներքնուղին և մենք խօսոյն մտանք: Պէտք է ըսել, որ այս երկու ուղիներու ընտրութեան առջեւ վարանումը կրնար շատ երկար տեւել, որովհետեւ նշան մը չկար մէկ կամ միւս ճամբան նախընտրելու համար. պէտք էր բացարձակապէս ըստ բախտի երթալ:

Այս նոր ներքնուղիին թեքումը հազիւ զգալի էր և անոր կըտորուածքը մէ՛կ կը լայննար, մէ՛կ կը նեղնար: Երբեմն մեր առջեւ կը բացուէին շարք մը կամարներ, գոթական մայր եկեղեցիի կամարներուն պէս: Միջնադարեան արուեստագէտներ հոս կրնային ուսումնասիրել եկեղեցական ճարտարագետութեան այն բոլոր ձեւերը, որոնք դարգացած են սլաքածեւ կամարէ: Մէկ մղոն առաջ երթալէ յետոյ ստիպուած էինք գլուխնիս ծռել ուսմանական ոճի ցածլիկ կամարներուն տակ, ուր՝ իրենց հիմերուն ամրացած վիթխարի սխւները՝ կը պահէին այդ կամարները: Ուրիշ տեղեր անոնց կը փոխարինէին ցած հողապատնէշներ, և մենք կ'ըստիպուէինք սողալով անցնիլ նեղ անցքերէն:

Ջերմաստիճանը տակուին տանելի էր: Ես սկսեայ այդ ջերմութիւնը կը համեմատէի այն բարձր ջերմաստիճանին հետ, որ ան հոս տիրած ըլլար, երբ Սնեֆելսէն դուրս ժայթքած լաւաները կը հոսէին այս ճամբով, որ այնքան խաղաղ էր հիմա: Ես կ'երեւակայէի, թէ ինչպէս կրակի հեղեղը կը փշրուէր, դարնուելով նրբանցքի անկիւններուն, ինչպէ՛ս այս նեղ անցքերուն կը կուտակուէին այնչափ սաքցած գոլորշիները:

«Միայն թէ, կը մտածէի ես, ձերուկ հրաբուխի խելքին չփչէ նորէն գործել»: Անշուշտ իմ միտքս չյայտնեցի հօրեղբայր Լիդենայրուկին. ի՛նչ կասկած, որ ան բան պիտի չի հասկնար: Անոր միտքը բոլո-

րովին մէկ ուղղութեամբ կը գործէր. առաջ երթալու կը քալէր, կը սայթաքէր, նոյնիսկ թաւազլոր կ'ըլլար այնպիսի հաստատամտութեամբ, որուն իսկապէս կարելի էր հիանալ:

Երեկոյեան ժամը վեցին, քիչ յոգնեցուցիչ երթէ յետոյ, երկու մղոն անցած էինք զէպի հարաւ, բայց հաղիւ քառորդ մղոն մը խորացած էինք: Հօրեղբայրս հանգիստի նշան տուաւ: Կերանք գրեթէ առանց խօսելու և քնացանք առանց երկար մտածելու:

Մեր անկողինը միայն ճամբորդական վերմակն էր, որուն մէջ կը վաթթուէինք իւրաքանչիւրս: Մենք ոչ ցուրտէն վախնալու սլաճառ ունէինք, ոչ անսպասելի այցելութենէն: Ափրիկէի անապատներուն կամ Նոր Աշխարհի անատներուն ուղեւորները ստիպուած են իրարու հսկել քնանալու ժամանակ, բայց այստեղ կը արապետէր բացարձակ առանձնութիւն ու կատարեալ վտանգի բացակայութիւն, ո՛չ վայրենիներու վախ կար, ո՛չ ալ զիչատիչ գազաններու:

Յաջորդ օրը, արթնցանք թարմացած և կազդուրուած: Ուղեւորութիւնը շարունակուեցաւ: Նախորդ օրուայ պէս կ'երթայինք լավայի վրայէն, անկարելի էր որոշել այն հողաչերտերուն տեսակը, որ ծածկած էր լավան: Ներքնուղին փոխանակ իջնելու դէպի երկրին ընդերքը, բոլորովին հորիզոնական դիրք կ'ստանար: Ինծի թուեցաւ նոյնիսկ, որ ներքնուղին զէպի Երկրին երեսը կը բարձրանայ: Աստուծոյ ժամը տասին մօտ այդ դրութիւնը այնքան սլարդ էր և առաջ երթալը այնքան յոգնեցուցիչ, որ ես ստիպուած եղայ դանդաղեցնել քայլերս:

— Ի՞նչ պատահեցաւ, Ա.քսէլ, հարցուց բրօֆէսէօրը անհամբերութեամբ:

— Այլեւս չեմ կրնար քայիլ, պատասխանեցի ես:

— Ի՞նչ, այսպիսի հարթ ճամբուն վրայ, հազիւ երեք ժամ քալելէն յետո՞յ:

— Հարթ է, դէմ չեմ, բայց և այնպէս խիստ յոգնեցուցիչ:

— Ի՞նչպէս, չէ՞ որ մենք կ'իջնենք:

— Ներողութիւն, կը բարձրանանք:

— Կը բարձրանանք, բացազանչեց հօրեղբայրս ուսերը ցնցելով:

— Անշուշտ, կէս ժամէ ի վեր ճամբուն թեքութիւնը փոխուած է և եթէ այսպէս շարունակուի, անկասկած երկրին երեսը կը վերագառնանք:

Բրօֆէսէօրը գլուխը շարժեց մարդու մը պէս, որ բան մը լսել չուզեր: Փորձեցի խօսակցութիւնը շարունակել, բայց ան բան մը չը պատասխանեց և ձեռքով հրամայեց ճամբայ ելլել: Հասկցայ. որ իր լուրթիւնը պէջ արամադրութեան նշան էր:

Ես նորէն առի իմ կապոցս ու արաք քայլերով հետեւեցայ Հան-

սին, որ կ'երթար հօրեղբորս առջևէն: Պէտք չէր անոնցմէ ետ մնայի, իմ զլխաւոր ջանքս էր ուղեկիցներս աչքէ չկորսնցնել: Կը սոսկայի այն մտածումէն թէ՛ կրնայի մոլորուիլ այդ լարելւրինթոսին մէջ:

Հակառակ որ բարձրացող ճամբան յողնեցուցիչ էր, բայց և այնպէս դիտ կը մխիթարէի մտածելով, որ ան մեղի կը մօտեցնէ Երկրի մակերեսին: Այդ յոյս մըն էր ամենայն դէպս: Իւրաքանչիւր քայլ զայն կը հաստատէր

Կէսօրին ներքնուղիի պատերուն տեսքը փոխուեցաւ, այդ նկատեցի ելէքարական լոյսի տկարանալէն: Լավային կը փոխարինէր քարածայրը, կազմուած էր թեք շերտերով, մեծ մասով ուղղահայեաց դիրքով: Կը գտնուէինք սիլուրեան, փոխանցման շրջանի շերտերուն:

— Շատ պարզ է այս, բացագանչեցի ետ Երկրագունդի կազմաւորման երկրորդ շրջանին ջրային տեղումներու թորումէն զոյսացան թերթաքարերը, կրաքարերն ու աւաղները: Մենք այժմ կը հեռանանք կրանիտեան զանդուածէն: Մենք կը նմանինք այն համպուրկցիներուն, որոնք Լիւրէկ երթալու համար Հանովրէն կ'անցնին(\*):

Ես ինծի պէտք է պահէի իմ դիտողութիւններս: Բայց երկրաբանի իմ աւիւնը յաղթեց խոհեմութեան և հօրեղբայր Լիդենպրոկը լսեց բացագանչութիւնս:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուց ան:

— Նայեցէ՛ք, պատասխանեցի, ցոյց տալով աւաղային, կրային շերտերը և թերթաքարային հողի առաջին նշանները:

— Լաւ, յետոյ ի՞նչ:

— Այդ կը նշանակէ, որ մենք հասած ենք այն ժամանակաշրջանին, երբ երեւցան առաջին բոյսերն ու կենդանիները:

— Ահա՛ թէ ինչ. զուէն կը կարծե՞ս:

— Խնդրեմ նայեցէ՛ք, քննեցէ՛ք, դիտեցէ՛ք:

Ես ստիպեցի բրօֆէսէօրը, որ իր լապտերը ուղղէ ներքնուղիի պատերուն: Կ'ըսպասէի, որ ան ոեւէ բացագանչութիւն կ'ընէ, բայց բառ մը չարտասանեց ու շարունակեց ճամբան: Հասկցած էր սրգոքի դիտ, թէ ոչ: Կամ գուցէ չուզեց ընդունիլ — հօրեղբոր ու գիտնականի ինքնասիրութենէն զրդուած — թէ ինքը սխալած էր, ընտրելով արեւելեան ներքնուղին, կամ գուցէ կ'ուզէր մինչև վերջը հետադասիլ այդ անցքը: Պարզ էր, որ մենք լավայի ճամբէն չիզած էինք, եւ այն ուղին, որուն մէջէն կ'երթայինք, մեղի չէր կրնար Մնեֆելտի վառարանին հասցնիլ:

Բայց և այնպէս կը մտածէի ես, թէ արդեօք չատ մեծ նշանա-

(\*) Այսինքն ոչ քէ ուղիղ. այլ գաբսուլի ճամբով:

կրթիւն չէի՞ տար հողի կազմի այդ փոփոխութեան: Մի՞թէ ես չփոթուեցի մէջ չէի՞ ինկած: Մի՞թէ իսկապէս կ'անցնէի այնպիսի շերտերէ, որոնք նստած են կրօնիտեան զանգուածներուն վրայ:

«Եթէ ես իրաւացի եմ, կը մտածէի, ուրեմն պէտք է, որ նախնական բոյսերու մնացորդներ պանեմ: Փնտռենք ուրեմն:»

Հարիւր քայլ հազիւ յառաջացած էի, երբ անհերքելի ապացոյցներ ներկայացան աչքիս առջեւ: Այդպէս ալ պէտք էր ըլլար, որովհետեւ սիւլուրեան ժամանակաշրջանին ծովերուն մէջ եղած են հազար հինգհարիւրէն աւելի բոյսերու և կենդանիներու տեսակներ: Ոտքերս, որ մինչև այնտեղ կը կոխէին լավայի կարծր հողին վրայ, յանկարծ խրեցան բոյսերու և խեցիներու մնացորդներէն առաջ եկած փոշիին մէջ. պատերուն վրայ ակնյայտնի կ'երևային ծովասէղերու և գետնամտմուռի հետքեր: Բրօֆէսէօր Լիդենպրոկը այլևս չէր կրնար սխալիլ. բայց ինծի կը թուէր, թէ ան փակած էր աչքերը ու հաստատ քայլերով կը շարունակէր ճամբան:

Այդ յամառութիւնը չափէն աւելի էր արդէն: Ես ալ չկրցայ զբսպել ինքզինքս, առի շատ լաւ պահուած խեցի մը, որ կը պատկանէր ժամանակակից խղունջի նմանող կինդանիի մը, մօտեցայ հօրեղբօրս ու ըսի իրեն.

— Նայեցէ՛ք:

— Լաւ, ըսաւ ան հանդիստ ձայնով, ասիկա ներկայիս անհետացած եռաբլթակներու ցեղին պատկանող խեցի է, և ուրիշ ոչինչ:

— Բայց դուք չէ՞ք եղբակացներ ասկէ...

— Ա՛յն, ինչ որ դուն եղբակացուցիր: Ծիչդ է: Մենք դուրս եկած ենք հրաբխային շերտէն: Կրնայ պատահիլ, որ ես սխալ ճամբայ ընտրեցի, բայց սխալիս մասին միայն այն ատեն վստահ կ'ըլլամ, երբ կը հասնինք այս ներքնուղիին ծայրը:

— Դուք իրաւունք կ'ունենաք այդպէս վարուելու, ես լիապէս ձեզի համաձայն կ'ըլլայի, եթէ մենք չվախնայինք մեզի հետզհետէ աւելի ու աւելի սպառնացող վտանգէ մը:

— Ի՞նչ վտանգ է այդ:

— Ջուրի պակասութիւնը:

— Շատ լա՛ւ, Աքսէլ, խնայողութեամբ կը դործածենք ջուրը:

Ի

Եւ իրապէս պէտք էր ջուրի խնայողութիւն ընէինք: Մեր ունեցածը հազիւ երեք օր կը բաւէր մեզի. ատոր համոզուեցայ երեկոյան ընթրիքի ատեն: Դժբախտութիւնը հոն էր, որ շատ քիչ յոյս կար,

Թէ հողի այս շերտերուն, աղբիւրի կը հանդիպինք: Յաջորդ օր, նոյնպէս կ'անցնէինք անվերջ կամարներու տակէն: Կը քալէինք առանց խօսելու, Հանսի լուսկեացութիւնը մեզի ալ փոխանցուած էր:

Ճամբան չէր բարձրանար, ամենայն դէպս ատիկա զգալի չէր. երբեմն նոյնիսկ կը թուէր, թէ կ'իջնէ: Ներքնուզիին պատերուն վերայ թերթաքարը, կրաքարն ու կարմիր աւաղաքարը կը շողշղային ելեքտրակալիան լոյսի պէս. տեղ-տեղ պատերը կը ծածկուէին հրաշալի մարմարով, որուն մէկ մասը գորշ գոյն էր, սպիտակ երակներով, միւս մասերը՝ բոսորագոյն կամ դեղին կարմիր բիծերով, երբեմն ալ մուգ գոյն, կարմիր և սրճագոյն հատիկներով:

Այս մարմարներու մեծ մասին վրայ կ'երեւային նախադարեան կենդանիներու հետքեր: Նախորդ օրուայ հետ համեմատելով, բնութեան այդ ստեղծագործութեան մէջ օրօշ յառաջիմուծիւն կը նշկատուէր. փոխանակ զարգացման նախնական աստիճանին վրայ գըտնըւող միջատներու, ես նկատեցի աւելի կատարեալ տեսակներու մը նացորդներ. անոնց թիւին մէջ կային այնպիսիներ, որոնց մէջ փալեոքոլոկիլն աչքը կրնար յայտնաբերել սողուններուն առաջին ձևերը: Այդ շրջանի ծովերուն մէջ կ'ապրէին այդ տեսակին պատկանող բազմաթիւ կենդանիներ, և անոնք միլիարդներով նստեցան նոր կազմուած ժայռերուն վրայ: Պարզ էր, որ մենք կը բարձրանայինք կենդանական կեանքի սանդուխին աստիճաններէն. որուն ամենաբարձր աստիճանին վրայ կը գտնուէի մարդը:

Բայց բրոֆէսէօր Լիդենպրոկը, կարծես ոչ մէկ ուշադրութիւն կը դարձնէր այս բոլորին: Ան մէկ բանի կ'ըսպասէր. կամ, իր ոտքերուն տակ բացուելու էր ուղղաձիգ հոր մը, որ իրեն հնարաւորութիւն տար վերսկսելու վայրէջքը, կամ արդելք մը որ խափանէր եր հետագայ յառաջխաղացումը: Բայց գիշերը վրայ հասաւ, իսկ այդ յոյսը չիրականացաւ:

Ուրբաթ օր, գիշերը անցընելէ յետոյ, որու տեւողութեան ես արդէն սկսայ ծարաւի տանջանքը զգալ, շարունակեցինք մեր թափառումը ներքնուզիի մէջէն: Երկու ժամ յառաջանալէ յետոյ նկատեցի, որ ելեքտրակալիան լոյսի արտացոլումը պատերուն վրայ զգալիօրէն նուազած էր: Մարմարը, թերթաքարերը, կրաքարն ու աւաղաքարը փոխարինուած էին մուգ և անփայլ պատով: Տեղ մը, ուր ներքնուզին խիստ նեղցաւ, ես ձեռքով հպեցայ պատին ու երբ ձեռքըս ետ քաշեցի, տեսայ, որ բոլորովին սևցած էր, ուշադրութեամբ դիտեցի ձեռքս. կը գտնուէինք քարածուխի հանքերուն մէջ:

— Քարածուխի հանք, բացաքանչեցի ես:

— Քարածուխի հանք, առանց հանքափորներու, պատասխանեց հօրեղբայրս:

— Ո՞վ գիտէ:

— Իսկ ես գիտեմ այդ, պատասխանեց բրօֆէսէօրը կարուկ կերպով և վստահ եմ, որ այս ներքնուղին, որ ամուսնի շերտին մէջէն կ'անցնի, մարդկային ձեռքով չէ բացուած: Սակայն բնութեան գործըն է այդ թէ ոչ, զիս քիչ կը հետաքրքրէ աստիկա: Ընթրիքի ատենն է, ընթրենք:

Հանսը պատրաստեց ուտելիքը: Շատ քիչ կերայ ու խմեցի միայն ինծի բաժին ինկած քանի մը կաթիլ ջուրը: Ընթրիքէն յետոյ, երկու յողնած ուղեկիցներս փաթթուեցան իրենց վերմակներուն մէջ և իսկոյն քնացան: Բայց ես չկրցայ քնանալ ու ժամերը հաշուեցի մինչեւ առաւօտ:

Շարաթ օր, առտուայ ժամը վեցին նորէն ճամբայ ինկանք: Քսան վայրկեան վերջ հասանք մեծ քարայր մը, անմիջապէս հասկցոյ, որ հանքահորը չէր կրնար մարդու ձեռքով փորուած ըլլալ, որովհետեւ այդ պարագային կամարներուն տակ յենարաններ կ'ըլլային, մինչդեռ հոս անոնք հրաշքով կը կանգնէին: Այդ ինքնատիպ քարայրը հարիւր ոտք լայնութիւն և հարիւր յիսուս ոտք բարձրութիւն ունէր. յատկը շատ խորունկ բացուած էր: Հողի զանգուածները տեղի տալով ստորերկրեայ հզօր ճնշման, տեղահան եղած էին, առաջացնելով այս ընդարձակ զատարկ տարածութիւնը, ուր առաջին անգամն էր որ ոտք կը դնէին երկրին բնակիչները:

Քարածուխի դարաշրջանի ամբողջ պատմութիւնը արձանագրութեամբ էր այդ մտայլ պատերուն վրայ, ու երկրաբանը դիւրութեամբ կրնար հետեւիլ դարգացման զանազան աստիճաններուն: Ածուխի զանգուածները իրարմէ բաժնուած էին աւաղաքարի և կաւի պինդ շերտերով:

Երկրորդ դարաշրջանը նախորդող դարաշրջանին, Երկիրը, շնորհիւ արեւագարձային ցերմութեան ու օդի մշտական խոնաւութեան համատարած ազդեցութեան, ծածկուած էր հարուստ բուսականութեամբ: Գոլորշիներով յաղեցած մթնոլորտը չրջապատած էր երկրագունսը բոլոր կողմերէն, ծածկելով գայն արեւի ճառագայթներէն: Այստեղէն ալ կը բխի այն եղրակացութիւնը, թէ բարձր ջերմաստիւճանը առաջ չէր գար այս նոր կեդրոնէն: Գուցէ ցերեկուայ լուսատուն, այսինքն արեւը, այդ ժամանակ տակաւին ի վիճակի չէր իր փայլուն գերը կատարելու: Կլիմաները տակաւին գոյութիւն չունէին և այրող ջերմութիւնը սփռուած էր Երկրի ամբողջ մակերևոյթին վրայ, լնչպէս բեւեռներուն, նոյնպէս ալ հասարակածին: Ո՞րկէ էր ուրեմն այդ այրող ջերմութիւնը: Երկրագունսի կեդրոնէն:

Հակառակ բրօֆէսէօր Լիդենպրոսկի անսովիւններուն, Երկրին ընդերքը ուժեղ կրակ կը վատէր, որուն ազդեցութիւնը կ'ըզդացուէր

երկրագունտի կեղեւին մինչեւ ամենաքարձր շերտերուն վրայ Բոյսերը՝ զրկուած արևի կենսարար յոյսէն, ոչ կը ծաղկէին, ոչ կը բուրէին, բայց անոնց արմատները ուժեղ կեանք կ'ըստանային առաջին օրերու տաք հողերուն մէջ: Ծառեր քիչ կային, գոյութիւն ունէին միայն խոտազգի բոյսեր, անսահման մարդագիտիւններ, ձարխոտեր, գեանամամուռներ և ուրիշ հազուագիւտ ընտանիքներ, որոնց անսակահերը այդ դարաշրջանին հազարներով կը հաշուուէր:

Ճիշդ այդ ճոխ բուսականութեան պարտական է քարածուխը իր ծագումը: Բոյսերը ջուրէ սարուելով, հեղուկութիւն ընդարձակ շերտեր կազմեցին: Այն ատեն սկսան գործել բնական քիմիական ուժերը: Ծովերուն յատակի բուսական զանգուածները նախ փոխուեցան աօրֆի, յետոյ կապիուտ, ու խմորումներու ազդեցութեան տակ վերածուեցան հանքի: Այսպէս կազմուեցան ածուխի հսկայական շերտերը:

Այս մտածումները կ'անցնէին իմ գլխուս մէջ, երբ կը գիտէի այդ ածխային հարստութիւնը, որ կը կուտակուէր հոս: Այս ածխահանքերը, ինչ խօսք, որ երբեք չեն օգտագործուիր: Այսպիսի հեռուոր հանքերու շահագործումը շատ մեծ զոհողութիւն կը պահանջէ և աւելորդ է այդ, քանի որ տակաւին կարելի է ածուխ ձեռք բերել շատ երկիրներուն մէջ, երկրագունդի երեսը:

Բայց և այնպէս մենք կը յառաջանայինք, իմ ընկերներէս միայն ես կը մոռնայի ճամբուն երկարութիւնը, խորասուզուելով երկրաբանական գիտողութիւններու մէջ: Զերմաստիճանը նոյնը կը մնար, ինչ որ էր, երբ կ'անցնէինք լավաներու ու թերթաքարերու մէջէն. միայն՝ իմ հոտառութիւնը շատ զօրաւոր կ'ըզգար ածխաջրածինի հոտը: Ես անմիջապէս հասկցայ է որ այս ներքնուղիին մէջ հաւաքուած էր մեծ քանակութեամբ այն վտանգաւոր կազէն, որուն բռնկումը այնքան յաճախ սոսկալի արկածներու պատճառ կ'ըլլայ: Բարեբախտաբար կը լուսաւորուէինք Ռուսկորֆի հրաշալի գործիքով: Եթէ անպզոյ ըլլայինք ու ներքնուղին ձեռքի ջահի լոյսով գիտէինք, սոսկալի պայթիւնը վերջ կը դնէր մեր ուղեւորութեան, ոչնչացնելով ուղեւորներս:

Ածխահանքին մէջէն շարունակեցինք յառաջանալ մինչև իրիկուն: Հօրեղբայրս հազիւ կը զսպէր ճամբու հորիզոնական ուղղութեանէն յառաջացած իր անհամբերութիւնը: Մութը կը խանդարէր որոշել ներքնուղիին երկարութիւնը, և ես կ'ըսկսէի ենթադրել, թէ անվերջ է ան, երբ յանկարծ, ժամը վեցին պատի մը հանդիպեցանք: Ոչ մէկ անցք կար, ո՛չ աջ ո՛չ ձախ. ո՛չ վերէն ո՛չ վարէն: Ըստ երևոյթիին հասած էինք փակուղիին ծայրը:

— Է՛հ, աւելի լաւ, բացաքանչեց հօրեղբայրս. ամենայն դէպս հիմա գիտենք թէ ինչ պէտք է ընել: Մենք շեղած ենք Սակնուսսեմի

ճամբայէն (մարչըրուդ) և մեղի կը մնայ միայն ետ դառնալ: Գիշերը հանգստանանք ու երեք օր չանցած նորէն կ'ըլլանք հոն ուր կը բաժնուին երկու ներքնուղիները:

— Այո՛, ըսի ես, եթէ բաւականաչափ ուժ ունենանք:

— Ինչո՞ւ պիտի չընենանք:

— Որովհետև վաղը առանց ջուրի կը մնանք:

— Ինչպէս նաև առանց քաջութեան, ըսաւ բրօֆէսէօրը խիստ հայեացքը ուղղելով ինծի:

Ես համարձակութիւն չունեցայ պատասխանել:

## ԻԱ.

Յաջորդ օր շատ կանուխ ճամբայ ելանք: Պէտք էր շտապել: Մենք ներքնուղիներու բաժանման մէջէն հինգ օր հեռու էինք:

Ես կանգ չեմ առներ վերադարձի տանջանքներուն վրայ: Հօրեղբայրս այդ տանջանքները կը տանէր այն մարդու բարկութեամբ, որ ստիպուած է սեղի տալ պայմաններու զօրութեան առջև, Հանսը՝ իր անվրդով բնաւորութեան յատուկ համակերպութեամբ, իսկ ինչ որ կը վերաբերէր ինծի, պէտք է խոստովանիմ, որ ես կը դժգոհէի, և կը յուսահատէի, չկարենալով տանիլ այդ ձախորդութիւնը:

Ինչպէս նախատեսած էի, ջուրը բոլորովին վերջացաւ առաջին օրն իսկ: Մարաւը յազեցնելու համար ստիպուած էինք մրգոզիով բաւականանալ, բայց խմիչքը կ'այրէր կոկորդը և ես չէի կրնար նոյնիսկ նայիլ անոր: Ուժասպառ կ'ըլլայի անտանելի տօթէն. վայրկաններ կ'ըլլային, երբ քիչ կը մնար որ ուշաթափ ըլլայի, այդպիսի վայրկեաններուն կը կենայինք ու հօրեղբայրս և իսլանտացին ամեն կերպ կ'աշխատէին քաջալերելու զիս: Բայց ես արդէն նկատած էի, որ հօրեղբայրս ալ մեծ դժուարութեամբ կը դիմադրէր ծայրայեղ յագնութեան ու ծարաւին:

Վերջապէս Յուլիս Տին, Երեքշաբթի օր, ծունկերու և ձեռքերու վրայ սողալով, կիսամեռ վիճակի մէջ հասանք երկու ներքնուղիներու միացման կէտը: Հոն մեռածի պէս ես ինկայ լավայի կտորի մը վրան: Առտուն ժամը տասն էր: Հսինան ու հօրեղբայրս փորձեցին ստիպել ինծի քիչ մը պաքսիմատ ուտել: Ուսած չրթունքներէս միայն հառաչանքներ լսուեցան: Ինկայ խոր թմրութեան մէջ:

Քանի մը վայրկեան անցած հօրեղբայրս մօտեցաւ ինծի և թեւեւ ըսելով մէջ առնելով, կարեկցութեան անկեղծ եղանակով մը ըսաւ.

— Խեղճ սպաս:

Այդ խօսքերը յուզեցին զիս, որովհետև ես սովոր չէի այդ խըս-

տաբարոյ բրոֆէսէօրէն գուրգուրանքի խօսքեր լսել: Բռնեցի իր դող-  
ղըզացող ձեռքերը: Ան սեւեռուն նայուածքով ինծի նայեցաւ: Անոր  
աչքերուն մէջ արցունքներ կը փայլէին: Յետոյ իր կողքէն կախուած  
ջրամանը վերցնելով, շրթունքներուս մօտեցուց:

— Խմէ՛, ըսաւ ան:

Արդեօք չէի՞ սխալած: Հօրեղբայրս մի՞թէ չէր խելագարած: Եւ  
իրեն կը նայէի այուչ կտրած դէմքով, բան մը չէի հասկնար:

— Խմէ՛, կրկնեց ան:

Ու ջրամանը վերցնելով, մէջի ամբողջ ջուրը բերանս լեցուց:  
Ինչ հաճոյք: Ումպ մը ջուրը զովացուց իմ տապկուած բերանս:  
Ընդամենը ումպ մը. բայց այդ բաւական էր փախչող կեանքս վե-  
րադարձնելու համար: Ես սրտագին շնորհակալուեթիւն յայտնեցի՝ հօ-  
րեղբորս:

— Այո, ըսաւ ան, վերջին կաթիլը, կը հասկնա՞ս, վերջինը: Այս  
կաթիլը խնամքով պահած էի ջրամանիս մէջ: Քսան անգամ, հա-  
րիւր անգամ դիմադրեցի խմելու սոսկալի պահանջին: Բայց, Ա.քսէ՛լ,  
այդ քեզի համար պահած էի:

— Սիրելի հօրեղբա՛յր, շշնջացի ես ու արցունքը առատօրէն հո-  
սեցաւ աչքերէս:

— Այս, խեղճ տղաս, կ'ենթադրէի, որ այս կէտին հասնելով,  
դուն կ'իյնաս կիսամեռ վիճակի մէջ և վերջին ջուրի կաթիլը պա-  
հեցի քեզի կենդանացնելու համար:

— Շնորհակալուեթի՛ւն, շնորհակալուեթի՛ւն, բացազանչեցի ես:

Թէեւ այդ կաթիլ մը ջուրը իմ ծարաւս քիչ յագեցուցած էր,  
բայց և այնպէս քիչ մը ուժ ստացայ: Կոկորդիս մկանները, որոնք  
մինչեւ այն ատեն պրկուած էին, արձակուեցան, շրթունքներուս  
բորբոքումը մեղմացաւ: Ես կրնայի խօսիլ:

— Հօրեղբայր ըսի ես, մեզի միայն մէկ բան կը մնայ ընել. ջուր  
չունինք, հետեւաբար պէտք է վերադառնանք նոյն ճամբով:

Մինչդեռ ես կը խօսէի, հօրեղբայրս կը խուսափէր իմ հայեաց-  
քէն ու գլուխը կախեց, անոր աչքերը ուրիշ տեղ կը նայէին:

— Պէտք է վերադառնալ, բացազանչեցի ես, դէպի Սնեֆելս վե-  
րադառնալ: Աստուած մեզի ուժ կուտայ հասնելու մինչև խառնարա-  
նին գագաթը:

— Վերադառնա՛լ, կրկնեց հօրեղբայրս, կարծես ինքնիրեն և ոչ  
թէ ինծի պատասխանելով:

— Այո՛, վերադառնալ, առանց վայրկեան մը կորսնցնելու:  
Բաւական երկար լռութիւն տիրեց:

— Այսպէս ուրեմն, Ա.քսէ՛լ, շարունակեց բրոֆէսէօրը տարօրինակ  
ձայնով, այդ քանի մը կաթիլ ջուրը միթէ՞ քեզի քաջութիւն և ե-  
ռանդ չտուա՞ւ:

— Բաջուռութիւնս :

— Կը տեսնեմ, որ դուն նոյնքան ընկճուած ես, որքան առաջ  
և միեւնոյն յուսահատ խօսքերը կը լսեմ :

Ինչպի՛սի մարդու հետ գործ ունէի և ինչպի՛սի ծրագրիւններ կը  
յղանար իր յանդուգն միտքը :

— Ինչպէ՞ս, չէ՞ք ուզեր . . .

— Հրամարիլ այս արշաւանքէն այն պահուն, երբ ամեն ինչ  
ցոյց կուտայ, որ ան կրնայ յաջողի՞լ : Երբե՛ք :

— Ուրեմն կը նշանակէ, պէտք է երթալ դէպի ճշմարիտ կորուստ :

— Ո՛չ Ա. քսէլ, ո՛չ. դուն գնա՛ : Ես չեմ փափաքիր մահդ : Հանսը  
կ'ուղեկցի քեզի, ինծի մինակ ձգէ՛ :

— Լքել ձե՛ղ :

— Թո՛ղ ինծի, կ'ըսեմ քեզ : Ձեռնարկեցի այս ուղեւորութիւնը  
և մինչև վերջը կ'երթամ կամ չեմ վերադառնար : Գնա՛, Ա. քսէլ,  
գնա՛ :

Հօրեղբայրս մեծ յուզումով կը խօսէր : Անոր ձայնը որ վայր-  
կեան մը մեղմացած էր, նորէն խիստ և սպառնական դարձաւ : Ան  
մտայլ վճռականութեամբ կը պայքարէր անկարելիին դէմ : Ես չէի  
ցանկար լքել զինք այս անդունդին խորունկը, միւս կողմէն ինք-  
նապահպանութեան բնազդը ինծի կը դրդէր փախչիլ իրմէ :

Ուղեցոյցը այս տեսարանին կը հետեւէր իր սովորական պաղա-  
րիւնութեամբ : Կը հասկնար, թէ ինչ կը կատարուէր մեր միջև, բայց  
չատ քիչ կը հետաքրքրուէր այս խնդրով, որմէ սակայն իր կեանքը  
կախուած էր, ան պատրաստ էր իր տիրոջ մէկ նշանով առաջ երթալ  
կամ ետ դառնալու : Մենք միասին թերևս կարենայինք համոզել յա-  
մառ բրօֆէսէօրը և ստիպել զայն վերադառնալ : Մտեցայ Հանսին և  
բռնեցի ձեռքը, ան չշարժեցու : Յոյց տուի խառնարանին ճամ-  
բան, անշարժ մնաց, իմ դէմքէս կ'երեւար, թէ ինչպէ՛ս կը տանջուէի :  
Խալանտացին զլուսը թեթեւ մը շարժեց, ցուցնելով հօրեղբայրս և ը-  
սաւ շատ հանգիստ ձայնով .

— Master . . .

— Տէ՛րը, բացազանչեցի ես. Անխել՛ք, ո՛չ. ան քու կեանքիդ  
տէրը չէ, պէտք է փախչիլ, պէտք է իրեն ալ տանիլ : Կը լսե՞ս) կը  
հասկնա՞ս զիս արդեօք :

Բռնեցի Հանսին ձեռքէն և փորձեցի ուժով զինք վեր բարձրաց-  
նել, Հօրեղբայրս միջամտեց :

— Հանգստացի՛ր, Ա. քսէլ, ըսաւ, դուն բոն մը չես ստանար այդ  
անդրդուելի ծառայէն : Լսէ՛, թէ ինչ կ'առաջարկեմ :

Ես թեւերս խաչածեցի, ուղիղ հօրեղբորս աչքերուն նայելով :

— Իմ ծրագրիս իրականացման միակ արգելքը՝ ջուրի պակասն

է. Արեւելիւնան ներքնուղիին մէջ, որ կազմուած էր լավայէ, թերթա-  
քարէ ու քարածուխէ, մենք կաթիլ մը ջուր չգտանք: Բայց գուցէ  
աւելի բախտաւոր կ'ըլլանք արեւմտեան ներքնուղիին մէջ:

Ես անվտակօրէն գլուխս շարժեցի:

— Ինծի մտիկ ըրէ մինչեւ վերջ, շարունակեց բրօֆէսէօրը, ձայ-  
նը բարձրացնելով, երբ դուն անշարժ պառկած էիր, ես ուսումնա-  
սիրեցի այս անցքը. ուղիղ կ'երթայ երկրին կեդրոնը և քանի մը  
ժամէն մեզի կը տանի կրանիտեայ դօտին: Հոն պէտք է առտա ջուր  
գտնենք: Ուրեմն ահա թէ ինչ կ'առաջարկեմ: Գողումպոսը իր նաւաս-  
տիններէն երևք օր ժամանակ ուղեց Նոր Աշխարհը գտնելու համար:  
Ես քեզմէ միայն մէկ օր կ'ուղեմ: Եթէ այդ ժամանակի ընթացքին  
չգտնենք մեզի պակտող ջուրը, կ'երդնում, որ կը վերադառնանք եր-  
կրին երեսը:

Ես ազդուեցայ հորեղբօրս այդ խօսքերէն:

— Լաւ, բացաքանչեցի ես: Թող ձեր ըսածն ըլլայ և Տէրը թող  
վարձատրէ ձեզի ձեր գերմարդկային եռանդին համար: Քանի մը  
ժամուայ հարց է: Ի՞նչ, ուրեմն, առա՛ջ:

## ԻԲ

Այս անգամ վայրէջքը սկսաւ նոր ներքնուղիէն: Սովորականին  
պէս Հանսը առջեւէն կ'երթար: Հաղիւ հարիւր քայլ յառաջացած  
էինք, երբ բրօֆէսէօրը լապտերը պատին մօտեցնելով, բացօդանչեց.

Ահա. ասիկ նախնական բիւրեղային տեսակներ. մենք ուղիղ ճամ-  
բուն մէջն ենք, առա՛ջ, առա՛ջ:

Իր գոյութեան սկզբնական շրջանին, երբ երկիրը սկսաւ հետզհետէ  
սառիլ, անոր ծաւալին պղտիկէտը կձկում, ճեղքուածքներ ու  
պատուուածքներ առաջ բերաւ. երկրային կեղեւին մէջ: Նոր ներքնու-  
ղին այդ ճեղքուածքներէն մէկն էր, անոր անթիւ պտոյտները կը  
կազմէին անելանելի լաբիւրինթոս մը:

Որքան կ'իջնէինք, այնքան պարզ կ'երեւային իրար յաջորդող  
բիւրեղային թերթաքարերն ու զղձաքարերը՝ յինուած կրանիտեայ  
անասան ժայռին:

Երբեք հանքաքանները այդպիսի հրաշալի պայմաններուն մէջ չէին  
եղած ճիշդ տեղին վրայ բնութիւնը ուսումնասիրելու համար: Մենք  
կրնայինք մեր սեփական աչքերով տեսնել ու սեփական ձեռքերով յօ-  
շափել այն բոլորը, ինչ որ փորիչ մեքենաները չէին կրնար գուրս  
բերիլ յոյս աշխարհ:

Կապտաղոյն ներկուած թերթաքարերու ճեղքերը դասաւորուած

էին երկաթի, պղինձի և մանգանեղի երակներ, բլաթինի և ոսկիի հեաքերով: Կը մտածէի, թէ մարդկային ագահութիւնը երբեք չի կրնար օգտուիլ այսքան խորունկը թաքնուած գանձերէն:

Թերթաքարերուն կը յաջորդէին զզձաքարերու շարքերը թերթաձեւ կազմով, որոնք աչքի կը դարնէին իրենց թերթերու զարմանալի կանոնաւորութեամբն ու զուգահեռութեամբ. յետոյ՝ մեծ շերտերով փայլարային թերթաքարերը, որոնք աչքի կ'իջնային սպիտակ փայլատի շողշողումով:

Մեր ելեքտրական լապտերներուն լոյսը, ժայռերու դանդուածներէն արտայայտով կը բեկեղեկուէին լուր անկիւններու վրայ և ինծի կը թուէր, թէ կը ճամբորդենք հսկայ դատարկ աղամանդի մը մէջ, որուն ճառագայթները կը բեկին հողարուտը շրջուցիչ շողերով:

Ժամը վեցին մօտ այդ փայլը ուսաւ զգալիօրէն նուազիւ և շուտով գրեթէ զաղբեցաւ. պատերը ստացան բիւրեղեայ, բայց աւելի մուգ գոյն. փայլատը աւելի սերտօրէն խտնուեցաւ ակաթի և քրովարցի հետ, առաջացնելով ամենակարծր քարահանքը: Մենք այժմ փակուած էինք կրանիթեայ հսկայ բանտի մը մէջ:

Երեկոյեան ժամը ութն էր: Դեռ ջուր չէր երեւար: Ես ստակալիօրէն կը տանջուէի: Հօրեղբայրս միշտ առջեւէն կը քալէր, շուղելով կանգ առնելու Շարունակ ականջ կը դնէր ջուրի ձայն լսելու համար: Զուր յոյսեր:

Սակայն ոտքերս կը հրամարէին առաջ երթալ: Կը զիմադրէի տանջանքներուս, որպէսզի հօրեղբայրս ստիպուած չըլլայ կանգ առնելու: Դադարը զինք կը յուսահատեցնէր, որովհետեւ օրը արդէն վերջանալու մօտ էր. վերջին օրը, որ իրեն կը պատկանէր:

Վերջապէս ուժերս լքեցին զիս ու ես դետին ինկայ, կանչելով.

— Օգնեցէ՛ք, կը մեռնիմ:

Հօրեղբայրս իսկոյն ետ դարձաւ: Ինծի նայեցաւ՝ ձեռքերը խաչածեւ, յետոյ խուլ ձայնով ըսաւ.

— Ամեն բան վերջացաւ:

Բարկութեան անսելի շարժում մը եղաւ այն, ինչ որ տեսայ վերջին անգամ, ու փակեցի աչքերս:

Երբ վերստին աչքերս բացի, տեսայ ուղեկիցներս անչարժ պառկած, փաթթուած վերմակներուն մէջ: Արգիօք քնացած էին: Ինչ որ կը վերարկեր ինծի, վայրկեան մը չկրցայ յնանալ: Զիս առանձնապէս շատ կը տանջէր այն մտածումը, թէ ոչ մէկ ելք կար: Հօրեղբորս վերջին խօսքերը. «ամեն ինչ վերջացաւ» տակաւին կը հնչէր ականջիս: Իրապէս «ամեն ինչ վերջացած» էր, որովհետեւ իմ այս թոյլ վիճակիս մէջ մտածել իսկ կարելի չէր երկրին երեսը բարձրանալու մտօն:

Կը գտնուէինք մօտ երկու մղոն խորութեան մէջ: Կը թուէր, թէ այդ զանգուածը, իր ամբողջ ծանրութեամբ, իջած է ուսերուս վրայ: Ինքզինքս ջախջախուած կ'ըզգայի ու մեծ ջանքեր կը թափէի կրանիտեայ անկողնիս մէջ դառնալու համար:

Այսպէս անցան քանի մը ժամ: Խոր լուծիւն կը տիրէր մեր շուրջը, գերեզմանային լուծիւն: Ոչ մէկ ձայն կը թափանցէր այդ պատերուն մէջէն, որոնց հաստութիւնը աննուազն հինգ քիլօմէթր էր: Սակայն իմ ուշադրութեան միջոցին, ինծի թուեցաւ, թէ սղմուկ կը լսեմ: Երբքնուղիին մէջ կը տիրէր խաւարը: Աւելի ուշադրութեամբ դիտելով, ինծի թուեցաւ, թէ իսլանտացին կը հեռանայ լապտերը ձեռքին: Ո՛ւր կ'երթար: Մի՞թէ Հանսը կը լքէ մեզի: Հօրեղբայրս քնացած էր: Ուղեցի դռալ, բայց ձայն դուրս չեկաւ իմ չորրորդ շրջութունքներէս: Մութը կատարեալ էր, ամենփոքր շշուկն իսկ դադարած էր:

— Հանսը մեզի կը լքէ, բացադանչեցի ես: Հա՛նս, Հա՛նս:

Այդպէս կը կանչէի, ես ինծի: Սակայն առաջին վայրկեանէն յետոյ ամէցայ այդ աղնիւ մարդուն հանդէպ կասկածելուս համար: Սնահարելի էր որ ան փախչէր: Ան դէպի վար կը քալէր, փոխանակ վեր բարձրանալու: Ուր կ'երթար, եթէ գէշ մտադրութիւն ունէր: Այս մտածումը քիչ մը հանգստացուց զիս ու դանազան միտքեր ծագեցան զլիսուս մէջ: Հանսը, այդ հանդարտ մարդը անկասկած լուրջ պատճառ մը ունէր, որ խանդարեց իր հանդիսարը: Չգնա՞ց արդեօք ջուր գտնելու: Գիշերուայ լուծեան մէջ չլսե՞ց արդեօք մեղմ կարկաչ մը, որ չէր հասներ իմ ականջիս:

## ԻԳ

Ամբողջ ժամ մը գրգռուած ուղեղս կը մտածէր այն պատճառներուն մասին, որոնք այդ պաղարիւն որսորդը զրգած էին տեղէն ելլելու: Արտաոոց մտածումներ կը խճողուէին զլիսուս մէջ: Ինծի կը թուէր, թէ կը խելագարիմ:

Վերջապէս ներքնուղիի խորունկէն քայլերու ձայն լսեցի: Հանսը կը վերադառնար: Տարտամ լոյսը կը սահէր պատերու վրայէն: Հանսը երեւցաւ: Մօտեցաւ հօրեղբորս, ձեռքը զրաւ անոր ուսերուն և զգուշութեամբ արթնցուց: Հօրեղբայրս սաքի եկաւ:

— Ի՞նչ կայ, բացադանչեց ան:

— Walter, պատասխանեց որսորդը:

Պէտք է ենթադրել, որ սոսկալի տանջանքներու ժամանակ մարդ կ'ընկաի ամեն լեղուններն ալ հասկնալ: Ես դանիներէն ոչ մէկ բառ զի-

տէի և սակայն բնազդաբար հասկցայ, թէ ինչ կը նշանակէր ուղեցոյցին արտասանած բառը:

— Զո՛ւր, ջո՛ւր, բացագանչեցի ես ծափ տալով ու խելագարի շարժումներ ընելով:

— Զո՛ւր, կրկնեց հօրեղբայրս, Hwar? հարցուց խլանտացիին:

— Nedal, պատասխանեց Հանսը:

«Ո՛ւր-վարը»: Ես բոլորը հասկցայ ու բռնելով որսորդի ձեռքէն ուժգին կերպով սեղմեցի զայն: Իսկ ան հանդարտ հայեացքով ինձի կը նայէր:

Իսկոյն պատրաստուեցանք ճամբայ ելլել ու մտանք ներքնուղի մը, որուն դասիվար թեքութիւնը իւրաքանչիւր մեթրին մէկ ոտքի կը հասնէր: Ժամ մը յետոյ, մօտաւորապէս երկու հազար մեթր առաջ գացած էինք ու երկու հազար ոտք վար իջած:

Այն ատեն պարզ լսեցի ինչ որ անսովոր ձայն, կրանիտեայ պատին մէջ, տեսակ մը խուլ մոնչիւն, հեռաւոր ամպբոպի պէս: Կէս ժամ առաջ երթալէ յետոյ, չհանդիպելով խոստացուած ջուրին, ևս նորէն սկսայ անհանդստանալ, բայց հօրեղբայրս բացատրեց ինձի մեր լսած աղմուկին պատճառը:

— Հանսը սխալած չէ, ըսաւ, քու լսած աղմուկը հեղեղի ձայնն է:

— Հեղե՞ղ, բացագանչեցի ես:

— Կասկած չկայ: Մեր կողքին ստորերկրեայ գետ մը կը հոսի:

Յոյսով սոգորուած, արագուցեցինք մեր քայլերը: Այլևս յոգնութիւն չէի զգար: Խշշացող ջուրին աղմուկը արգէն սթափեցուցած էր զիս: Հեղեղը, որ երկար ժամանակ մեր զլխուն վրան էր, հիմա կը հոսէր ձախ պատի ետեւէն, մոնչելով և դահալիժելով: Յաճախ ձեռքս պատին կը քսէի, յուսալով խոնաւութեան նշաններ զգալ, բայց ի վեր:

Կէս ժամ եւս անցաւ: Նորէն երկու քիլոմէթր առաջ գացինք: Պարզ էր, թէ որսորդը իր փնտճառութներու պահուն աւելի հեռուն չէր գացած: Առաջնորդուած լեռնայիներու յասուկ բնազդով, ան այդ հեղեղը «զգացած» էր պատի մէջէն, բայց անկասկած, չէր տեսած թանկագին հեղուկը և ծարաւը չէր յագեցուցած անով:

Նոյնիսկ քիչ յետոյ պարզուեցաւ, որ եթէ մենք շարունակէինք այսպէս առաջ երթալ, այն ատեն դարձեալ կը հեռանայինք հեղեղէն, որուն խշշոցը սկսած էր նուազիլ: Այդ պատճառով ալ նորէն ևս դարձանք: Հանսը կանգ առաւ այն կէտին, ուր հեղեղը ամենէն աւելի յատակ կը լսուէր:

Ես նստեցայ պատի կողքին, մինչդեռ ջուրը մեծ արագութեամբ կը հոսէր ինձմէ մէկ քայլ անդին: Բայց կրանիտեայ պատը մեզի կը բաժնէր սնկէ: Առանց մտածելու, թէ կրնար ոեւէ միջոց գտնուիլ

այդ ջուրը ձեռք բերելու, ես առաջին իսկ վայրկեանին յուռահատեցայ: Հանսը ինձի նայեցաւ ու այնպէս թուեցաւ, թէ անոր շրթունքներուն ժպիտ մը խաղաց:

Ան ոտքի հլաւ ու բարձրացուց լապտերը: Ես հետեւեցայ անոր: Ուղղուեցաւ դէպի պատը: Կը նայէի, թէ ինչ կ'ուզէ ընել: Ականջը փակցուց յերկ պատին և սկսաւ ուշադրութեամբ մտիկ ընել: Հասկըցայ, որ ան կը փնտռէր ճիշդ այն կէտը, ուր հեղեղին աղմուկը ամենէն աւելի լաւ կը լսուէր: Այդ կէտը գտաւ ձախ պատին մէջ, հոգէն երեք ոտնաչափ բարձր: Ես խիստ յուզուած էի, չկարենալով գուշակել, թէ ինչ կ'ուզէ ընել սրտորդը: Բայց վերջապէս հասկցայ իր նըպատակը, ծափահարեցի ու գովասանքներ չուայլեցի, երբ տեսայ, որ բրիչը վերցուց պատը ծակելու համար:

— Փրկուած ենք, բացազանչեցի ես:

— Այո, կրկնեց հօրեղբայրս խելագարի պէս: Հանսը ճիշդ է: Կեցցէ՛, մենք այս մասին չէինք մտածած:

Իրօք, այդ միջոցը, որքան ալ որ պարզ ըլլար: Բայց չէ՞ որ շատ վտանգաւոր բան էր բրիչով ծակել երկրաշարժի կեղեկին այդ մասը: Կրնար փլուզում յառաջ գալ, որ կը ջախջախէր մեզի: Հեղեղը ժայռէն դուրս ժայթքելով, կրնար խեղդել, կլլել մեզի: Այս վտանգը բոլորովին ալ երեւակայութիւն չէր. բայց այդ վայրկեանին փլուզումի ու հեղեղի վտանգը մեզի չէր կրնար կասեցնել, որովհետեւ ծարաւը չափազանց սաստիկ էր:

Հանսը անցաւ աշխատանքի, որ անկարելի էր թէ հօրեղբայրս թէ ինձի համար: Անհամբերութիւնը կը շեղէր մեր ձեռքը, ու ժայռը կտոր-կտոր կ'ըլլար մեր հարուածներուն տակ: Ուղեցոյցը, ընդհակառակը, հանդիստ ու զգոյշ, շարք մը փոքր հարուածներու կրկնողութեամբ ժայռին մէջ ծակ մը բացաւ կէս ոտնաչափ լայնութեամբ: Ի՛իչ յետոյ բրիչը երկու ոտնաչափ ներս մտաւ կրանիդէ պատին մէջ. աշխատանքը, արդէն ժամէ մը աւելի տեւած էր. ես անհամբերութենէս կը զողայի: Հօրեղբայրս կ'ուզէր աւելի կտրուկ միջոցներու գիմել, ես դժուարութեամբ գինք կը կասեցնէի: Ան արդէն բրիչը ձեռքը առած էր, երբ յանկարծ սուլոց մը լսուեցաւ: Ջուրի ուժգին հոսանքը դուրս ցատկեց պատէն ու զարկաւ դիմացի պատին: Հանսը հարուածէն մէկ կողմ շարտուեցաւ և ցաւէն չկրցաւ ճիչը զգալ: Ես հասկցայ, թէ ինչն է ատոր պատճառը, երբ ձեռքս դրի հոսանքին տակ՝ գոռացի ամբողջ ուժով, ջուրը տաք, եռման ջուր էր:

— Ջուրին ջերմութիւնը հարիւր աստիճան է, բացազանչեցի ես:

— Ոչինչ, կը սառի, պատասխանեց հօրեղբայրս:

Ներքնուղիին մէջ գոլորչին հասող ջուրի գետակ մը առաջացուցած էր, որ կը հոսէր դէպի ստորերկրեայ անցքերը. քիչ յետոյ, մենք այդ գետակէն կրցանք ջուր առնել ու խմել:

Ահ, ինչպիսի՛ հաճոյք, ինչպիսի՛ աննկարագրելի բաւականութիւն: Ո՞ւրկէ էր այդ ջուրը: Այդ կարեւոր չէր: Ջուր էր այդ, թէև տաք, բայց ան մեղի կը վերադարձնէր փախչող կեանքը: Կը խժէի անվերջ, առանց իսկ համը զգալու: Միայն լրիւ կշտանալէ յետոյ, ըսի:

— Բայց երկաթային ջուր է այս:

— Հրոշալի է ստամոքսի համար, պատասխանեց հօրեղբայրս: Այս ջուրը մեծ քանակութեամբ երկաթ կը պարունակէ և կրնայ մըրցիլ լաւագոյն հանքային բուժիչ ջուրերուն հետ:

— Բայց ի՞նչ համեղ է:

— Կը հաւատամ քեզի. չէ՞ որ այս ջուրը իջած է հողին տակ 8 քիլոմէթր խորութեամբ: Անկէ թանաքի համ կուգայ, որ բոլորովին ալ անհաճոյ չէ: Հանաք մեղի համար հրաշալի կազդուրիչ ջուր մը գտաւ: Այդ պատճառով ալ կ'առաջարկեմ անոր անուշով կոչել այս փրկարար վտակը:

— Համաձայն եմ, բացազանչեցի ես:

Ու «Հանսի վտակ» անունը շուտով ընդունուեցաւ: Հանաք անով չհպարտացաւ: Քիչ մը կազդուրուելէ յետոյ, իր սովորական հանդարտութեամբ նստաւ անկիւն մը:

— Հիմա, ըսի ես, պէտք չէ կորսնցնենք այս ջուրը:

— Ինչո՞ւ, առարկեց հօրեղբայրս, կ'ենթադրեմ թէ այս ջուրը անսպառ է:

— Նոյն է. լեցնենք մեր տիկն ու շիշերը, իսկ յետոյ փորձենք անցքը դոցել:

Հետեւեցան իմ խորհուրդիս: Հանաք կրանիտի կտորներով ու մանրախիճով փորձեց դոցել բացուած անցքը: Բայց դիւրին գործ չէր այդ. մեր ձեռքերը այրեցան, առանց սակայն յաջողութիւն ձեռք բերելու: Ճնշումը շատ մեծ էր ու մեր ջանքերը ապարդիւն անցան:

— Պարզ է, ըսի, որ այս վտակին ակը շատ բարձրը կը գտնուի:

— Անկասկած, պատասխանեց հօրեղբայրս, եթէ ջուրի հոսանքը կը թափի երեսուն երկու հազար ոտք բարձրութենէն, ուրեմն ճնշումը հաւասար է հազար մթնոլորտային ճնշման: Բայց միտք մը ծագեցաւ գլխուս մէջ:

— Ի՞նչ միտք:

— Ինչո՞ւ կ'ուզենք անցքը անսպառաճ փակել:

— Որովհետեւ...

Պատճառը գտնելու դժուարացայ:

— Երբ մեր ջրամանները պարպուին, չե՞նք կրնար կրկին լեցնել:

— Հաւանաբար ոչ:

— Թողունք ուրեմն որ ջուրը հոսի. ան բնականօրէն դէպի վար կը հոսի, մեզի ճամբայ ցոյց կու տայ և միեւնոյն ատեն մեզի կը զո՛ւ վացնէ :

— Հրաշալի միտք : բացագանչեցի ես : Այս վտակին պէս ուղիցոյց ունենալնէս յետոյ, այլեւս ոչ մէկ հիմ չիկայ մեր արշաւանքի յաջողութեան մասին կասկածելու :

— Ա՛հ, հիմա դո՞ւն ալ այն եզրակացութեան կու դաս, տղս՛ս, ըսաւ բրօֆէսէօրը ժպտելով :

— Ոչ թէ կու դամ, այլ արդէն եկած եմ :

-- Բոպէ մը սպասէ : Նախ և առաջ քանի մը ժամ հանդստանանք : Իսկապէս, ես բոլորովին մոռցեր էի, որ գիշեր էր : Քրոնոմեթրէն հասկցայ : Քիչ մը յետոյ, բաւական կշտացած և կազդուրուած խորունկ քնացանք :

### Ի Դ .

Յաջորդ օրը մենք արդէն մոռցեր էինք մեր կրած տանջանքները : Ակիդքը ես զարմացայ. որ այլեւս ինքզինքս ծարաւ չեմ զգար և հետաքրքրուեցայ, թէ ինչն էր ատոր պատճառը : Վտակը որ կը հոսէր մեր ոտքերուն տակ քրքջալով, տուաւ ատոր պատասխանը : Մենք նախաճաշեցինք և խմեցինք այդ հրաշալի երկաթէ ջուրէն : Ինքզինքս լիովին առոյգ կ'ըզգայի և վճռականօրէն որոշեցի առաջ երթալ : Ինչո՞ւ այդպէս համոզուած մարդ մը, ինչպէս հօրեղբայրս էր, ունենալով Հանսի պէս շնորհալի ուղեցոյց մը և ինծի պէս խիղախ եղբորորդի մը, իր նպատակին չպիտի հասնէր : Ահա թէ ինչպիսի գեղեցիկ մտքեր կը ծնէին մտքիս մէջ : Եթէ այդ միջոցին ինծի առաջարկէին վերադառնալ Սնեֆելսի գաղաթը, բարկութեամբ կը մերժէի : Բարեբախտաբար հարցը միայն իջնելու մասին էր :

— Յառա՛ջ, բացագանչեցի ես և իմ խանդավառ կանչով արթընցուցի երկրագունտի հինէն մտրած արձագանգները :

Ուղեւորութիւնը վերսկսուաւ Ուրբաթ օրը, առաւօտեան ժամը Տիւն : Կրանիդէ միջանցքը ոլորապտոյտ էր, բայց ընդհանրապէս անոր գլխաւոր ուղղութիւնը կ'երթար դէպի հարաւ արեւելք : Հօրեղբայրս կը շարունակէր ուշադրութեամբ նայիլ կողմնացոյցին, անցած ճանապարհի ուղղութեան մասին գաղափար ունենալու համար :

Ներքնուղին հորիզոնական ուղղութիւն ունէր, իւրաքանչիւր մեթրի վրայ հաղիւ մէկ մատնաչափ ցած իջնելով : Վտակը կը հոսէր հանդարտ, կչկչալով մեր ոտքերուն տակ, Հօրեղբայրս կ'անիծէր ճամբու հորիզոնականութիւնը : Այն ուղին, որուն կը հետեւէր, անվերջ

կ'երկարէր, փոխանակ ցած իջնելու նրկրի շառաւիղի ուղղութեամբ կ'երթար, -- ինչպէս ինքը կ'արտայայտուէր -- անձանթ ուղղութեամբ: Բայց մենք ուրիշ ելք չունէինք, և քանի որ կը մօտենայինք նրկրի կեդրոնին, որքան ալ աննշան ըլլար այդ մօտեցումը, չպէտք է գանգատէինք:

Սակայն թեքումը յաճախ կ'աւելնար, վտակը աղմուկով կը հոսէր ու մենք անոր հետ միասին որքան կ'երթայինք՝ այնքան աւելի խորը կ'իջնայինք: Ընդհանրապէս, թէ՛ այդ և թէ՛ հետեւեալ օրը ճամբան աւելի հորիզոնական ուղղութիւն ունէր և քիչ ուղղահայեաց էր:

Ուրրաթ օրը՝ Յուլիսի 10ին, երեկոյեան, մեր հաշուով մենք պէտք է ըլլայինք Ռեյկիավիկէն երեսուն մղոն դէպի հարաւարեւելք, երկու ու կէս մղոն խորութեան վրայ:

Յանկարծ մեր ոտքերուն տակ բացուեցաւ սոսկալի անդունդ մը: Հօրեղբայրս ինքզինք չկրցաւ զսպել և ուրախութենէն ծափահարեց, տեսնելով անդունդի պատերուն թեքութիւնը:

— Հիմա մենք հետու կ'երթանք, բացազանչեց ան, և շատ դիւրութեամբ, որովհետեւ ժայռերու դուրս ցցուածքները իսկական սանդուխ մըն են կազմեր:

Հանսը այնպիսի ձեւով մը կապեց պարանը, որ իջնելու ատեն ոչ մէկ արկած չէր կրնար պատահիլ: Սկսանք իջնել: Ինծի համար այս վայրէջքը վտանգաւոր չէր, որովհետեւ արդէն վարժուէր էի:

Այս հորը հանքային զանգուածին մէջ բացուած նեղ ճեղքուածք մըն էր, նման այն անցքերուն, որոնք «խորոչ» կը կոչուին. հաւանաբար այդ բացուածքը երկրային կեղեւի սառելէն և կծկուելէն առաջ եկած էր: Եթէ այս անցքը ատեն մը Սնեֆիլսի դուրս ժայթքած լավայի ճամբան էր եղեր, ուրեմն ինծի համար պարզ չէր, թէ ինչո՞ւ այդ լավան իր ետեւէն հետք իսկ չէր ձգած:

Մենք կ'իջնայինք տեսակ մը պտուտակաւոր սանդուխով, որը կարծես մարդկային ձեռքով շինուած էր: Իւրաքանչիւր քառորդ ժամը անգամ մը ստիպուած էինք կանգ առնել ոտքերնիս հանգըստացնելու համար: Այդ ժամանակ կը նստէինք աստիճաններէն մէկուն վրայ. ոտքերնիս կը կախէինք և կը խօսէինք բան մը սետելով և վրայէն ջուր խմելով:

Հասկնալի է որ այս անդունդին մէջ «Հանսի վտակը» ջրվճի էր փոխուեր և ծաւալով նուազեր. բայց ջուրը այնքան առատ էր, որ լիով կը բաւէր ծարաւնիս յագեցնելու: Բայց աւելի հարթ անդեր վտակը իր սովորական հանգարտ հոսանքը կ'ըստանար:

Յուլիս 6ին և 7ին շարունակեցինք հետեւիլ այս անցքի ոլորումներուն և դարձեալ երկու մղոն խորացանք նրկրի կեղեւին մէջ, որը

հաւասար էր հինգ մղոնի, հաշուած՝ ծովու մակերեւոյթէն: Բայց ամսու Ցին կէսօրուայ մօտ, անցքի ուղղութիւնը դարձաւ դէպի հարաւարեւելք, աւելի մեղմ թեքումով, մօտաւորապէս 45 աստիճան: Ճամբան աւելի դիւրացաւ և բոլորովին միօրինակ դարձաւ: Ուրիշ կերպ ալ դժուար էր սպասել: Այսպէս վայրի մը մէջ բնութեան տեսարաններու այլազանութիւն չէր կրնար ըլլալ: Վերջապէս Չորեքշաբթի օրը, ամսու 15ին, մենք եօթը մղոն հողին տակը կը գտնուէինք, իսկ Սնեֆելսէն՝ յիսուն մղոն հեռաւորութեան վրայ: Թէև քիչ մը յոգնած էինք, բայց և այնպէս մեր առողջութիւնը լաւ վիճակի մէջ էր և ճամբորդութեան դեղարանին ձեռք չէինք դպցուցած: Հօրեղբայրս իւրաքանչիւր ժամ կ'արձանագրէր կողմնացոյցի, քրոնոմետրի, մանոմետրի և ջրմասշափի նշանակումները, որոնք հետագային հրատարակեց իր ուղեւորութեան մասին կատարած գիտական հաշուետւութեան մէջ: Այդպէսով ան գիւրութեամբ կ'որոշէր մեր դիրքը: Երբ յայտնեց, որ հորիզոնական ուղղութեամբ մենք հեռացեր էինք յիսուն մղոն. ես չկրցայ զսպել ինքզինքս և բացագանչեցի:

- Ի՞նչ պատահեցաւ քեզի, հարցուց ան:
- Ոչինչ, միտքս բան մը եկաւ:
- Ի՞նչ, սիրելի տղաս:
- Որ եթէ ձեր հաշիւները ճիշդ են, ուրեմն մենք Իսլանտայի տակը չենք գտնուիր:

- Կը կարծես:
  - Դիւրին է համոզուել ատոր:
- Եւ իսկոյն քարտէզին վրայ կարկինով չափեր ըրի:
- Չեմ սխալիր, ըսի ես. մենք անցեր ենք Պորտլանտ հրուանդանը և դէպի հարաւարեւելք մեր կատարած յիսուն մղոնը մեզ բերած է ծովուն տակ:

- Ծովուն տակ, կրկնեց հօրեղբայրս ձեռքերը շփելով:
- Ուրեմն, բացագանչեցի, մեր գլխուն վրայ ովկիանոս է:
- Է՛հ, Ա.քսէլ, շատ բնական է այդ. չէ՞ որ Նիկեստլի քարածուխի հանքերը ծովուն տակ կը գտնուին:

Բրօֆէսէօրին համար ի հարկէ այդ դրութիւնը շատ հասարակ բան մըն էր, բայց այն մտածումը, թէ ես կը քալէի ովկիանոսի ջրերու զանգուածի տակ, ի հարկէ զիս քիչ մը անհանգստացուց: Բայց թէ մեր գլխուն վրայ Իսլանտայի լեռներն ու դաշտե՞րն էին թէ՛ Ստրանանան ովկիանոսի ջրերը, տարբերութիւնը մեծ չէր. բաւական էր որ կրանիտէ առաստաղը հաստատուն ըլլար: Սակայն ես շուտով ընտանացայ այդ մաքին, որովհետև ներքնուղին, մէկ ուղիղ, մէկ՝ ծուռումուռ, մեղի անընդհատ դէպի հարաւարեւելք տանելով միշտ կը խորանար:

Չորս օր յետոյ, Շարաթ օրը Յուլիսի 18ին, մենք հասանք րնդարձակ քարայր մը: Հօրեղբայրս Հանսին վճարեց անոր մէկ շարթուայ վարձքը, և որոշեցինք միւս օրը հանգստանալ:

Ին:

Կիրակի առաւօտ արթնցայ առանց իսկոյն ճամբայ ելլելու մասին մտածելու: Թէև մենք կը գտնուէինք խորունկ անդունդին մէջ, բայց հաճելի էր: Արդէն մենք կատարեալ քարայրի բնակիչներ էինք դարձեր և ես այլևս չէի մտածեր արեւի և լուսնի մասին, որոնք լուսաւոր աշխարհի համար անհրաժեշտութիւններ են:

Քարայրը ընդարձակ սրահ մըն էր, անոր կրանիտէ յատակին վրայ հանդարտ կը հոսէր հաւատարիմ վտակը: Իր ակունքէն այսքան հեռաւորութեան վրայ անոր ջուրը ստացեր էր շրջապատի ջերմաստիճանը և դիւրութեամբ կը խմուէր: Նախաճաշէն վերջ բրօքէսէօրը քանի մը ժամ դրազուեցաւ իր ամենօրեայ նշունները կարգի բերելու:

— Ամենէն առաջ, ըսաւ ան, ես հաշիւներ պէտք է ընեմ մեր ճշգրիտ տեղը որոշելու համար, վերադարձին մտադիր եմ մեր ուղեւորութեան քարտէղը գծագրել երկրագունտի ուղղահայեաց կրտսածքի ձեւով, որը պիտի ցուցադրէ մեր արշաւանքի պատկերը:

— Այդ շատ հետաքրքիր կ'ըլլայ, հօրեղբայր, բայց ձեր տունները բաւական ճշգրիտ կ'ըլլա՞ն:

— Այո՛, ես ուշադրութեամբ չափեցի թեքումներն ու անկիւնները և վստահ եմ, որ չեմ սխալիր: Նախ և առաջ որոշենք, թէ ո՞ւր կը գտնուինք: Վերցուր կողմնացոյցը և նայէ, թէ ի՞նչ ուղղութիւն ցոյց կու տայ: Նայեցայ կողմնացոյցին և ուշի ուշով դիտեցի, յետոյ պատասխանեցի:

— Արեւելք, հարաւ-արեւելք:

— Լաւ, ըսաւ բրօքէսէօրը, արձանագրելով դիտողութիւնը, և արագ հաշիւներ ընելով, որմէ երեւցաւ, որ մեր մեկնումէն իվեր ութսունըհինգ մղոն առաջ գացեր ենք:

— Ուրեմն, մենք այժմ Ատլանտեան օվկիանոսի տակը կը ճամբորդենք:

— Ճիշդ այդպէս:

— Եւ այս բոպէին թրեւս այնտեղ, վերը փոթորիկ է, և նաեւ որ կը տատանուին մեր գլխուն վրայ, քամիի և ալիքներու ազդեցութեան տակ:

— Շատ հաւանական է:

— Եւ կէտերը իրենց պոչերով կը զարնեն մեր քանտի պատերուն:

— Հանգիստ եղիր, Աքսէլ, անոնք չեն կրնար տեղահան ընել զայն: Բայց վերադառնանք մեր հաշիւներուն: Մենք կը գտնուինք դէպի հարաւ-արեւելք: Մենքելսէն 85 մղոն հեռու և համաձայն դիտումներուս, 16 մղոն խորութեան տակ:

— Տասնըվեց մղոն, բացազանչեցի ես:

— Անկասկած:

— Բայց այդ, ըստ գիտութեան, Երկրի կեղեւի հաստութեան վերջին սահմանն է:

— Չեմ յիտեր:

— Եւ ըստ ջերմաստիճանի բարձրացման օրէնքի, այստեղ հազար հինգ հարիւր աստիճան տաքութիւն պէտք էր ըլլար:

— Պէտք է ըլլար, սիրելի տղաս:

— Եւ ամբողջ այս կրանիտը չէր կրնար կարծր դրութեան մէջ մնալ, այլ կատարեալ հալած վիճակի մէջ:

— Կը տեսնե՞ս որ այդպէս չէ, և փաստերը, ինչպէս յաճախ կը պատահի, կը ժխտեն ենթադրութիւնները:

— Ստիպուած եմ համաձայնիլ, բայց և այնպէս շատ տարօրինակ է:

— Ի՞նչ ցոյց կուտայ հիմա ջերմաչափը:

— Քսանեօթը և վեց տասնորդական աստիճան:

— Ուրեմն գիտնականներու կարծիքը հաստատելու համար կը պակսի հազարչորսհարիւր եօթանասուն երկու և չորս տասնորդական աստիճան: Ուրեմն, ջերմաստիճանի համեմատական բարձրացումը սխալ է: Ուրեմն Հեմֆրի Դեւին չէր սխալուած: Ուրեմն ես իրաւացի էի, որ հաւատացի անոր: Ինչո՞վ կրնաս առարկել ասոր դէմ:

— Ոչինչով:

Իսկապէս շատ բանով կարելի էր առարկել: Ես վճռականօրէն կը ժխտէի Դեւիի տեսակէտը և վստահարար կողմնակից էի կեդրոնական տաքութեան տեսակէտին, թէպէտ չէի զգար անոր ազդեցութիւնը: Ես աւելի շուտ կ'ենթադրէի, թէ մարած հրաբուխի այս ծխնելոյղը, ծածկուելով հրակայուն լավայով, թոյլ չի տար, որ տաքութիւնն անցնի իր պատերու մէջէն: Բայց առանց նոր ապացոյցներ փնտռելու, ես բաւականացայ իրերու դրութիւնը ընդունիլ այնպէս, ինչպէս որ կար:

— Սիրելի հօրեղբայր, շարունակեցի ես, կ'ընդունիմ, որ ձեր բոլոր հաշիւները ճիշդ են, բայց թոյլ տուէք անոնցմէ անխուսափելի եզրակացութիւն մը հանել:

— Խնդրեմ, տղա՛ս, ինչքան որ կ'ուզես:

— Հոն, ուր մենք կը գտնուինք, Իսլանտայի լայնութեան տակ, երկրի շառուիղը հաւասար է մօտաւորապէս հազար հինգ հարիւր ութսուն երեք մղոնի, այդպէ՞ս է:

— Այո՛, հազար հինգհարիւր երեսուներեք և մէկ երրորդական։  
— Կլոր թիւով, ըսենք, հազար վեցհարիւր։ Այդ տարածութենէն մենք անցեր ենք տասներկու մղոն։

— Ճիշդ է։

— Եւ ութսունհինգ մղոն յառաջանալով։

— Ճիշդ այդպէս։

— Մօտաւորապէս քսա՞ն օրուայ մէջ։

— Քսան օր։

— Լաւ. տասնութ մղոնը երկրի շառաւիղի մէկ հարիւրերորդական մասը կը կազմէ։ Ուրեմն, եթէ մենք շարունակենք այսպէս առաջ երթալ, մեզի պէտք կ'ըլլայ երկու հազար օր, կամ մօտաւորապէս հինգուկէս տարի, որպէսզի երկրի կեդրոնին հասնինք։

Բրօֆէսէօրը չպատասխանեց։

— Առանց հաշուելու, որ եթէ ուղղահայեաց գիծով տասնըվեց մղոն վայրէջքը համապատասխան է հորիզոնական ուղղութեամբ ութսուն մղոնի, ապա մենք կ'ըստանանք ութը հազար մղոն դեպի հարաւարեւելք. հետեւապէս մենք շատոնց արդին երկրի մակերեւոյթին հասած պիտի ըլլայինք։

— Ստանան տանի այդ հաշիւներդ, պատասխանեց հօրեղբայրս բարկացած, սատանան տանի ենթադրութիւններդ։ Ինչի՞ վրայ անոնք հիմնուած են։ Ո՞վ ըսաւ քեզի, որ այս ներքնուղին ուղղակի մեր նպատակին չի տանիր։ Բացի այդ, մեր նախորդի օրինակը ի նպաստ մեզի կը խօսի։ Այն ինչ որ ես կ'ընեմ, արդէն ուրիշը ըրեր է, և քանի որ ան յաջողեցաւ, մենք ալ կը յաջողինք։

— Յոյս ունիմ, բայց վերջապէս ինձի թոյլ կը տրուի...

— Քեզ թոյլ կը տրուի լռել, փքսէլ, եթէ կ'ուզես այդ ձեւով շարունակել։

Ես տեսայ որ հօրեղբորս մէջ կրկին կը ծնէր զայրացկոտ բրօֆէսէօրը և այդ պարագան նկատի ունեցայ։

— Իսկ այժմ, շարունակեց ան, նայէ՛ մանօմեթրին։ Ի՞նչ ցոյց կու տայ։

— Բաւական մեծ ճնշում։

— Լաւ։ Կը տեսնես, որ ստաիճանարար ցած իջնելով, հետզհետէ կը սորվինք աւելի խիտ միմնուորտի և երբեք ունէ ձեւով չենք տուժեր։

— Բացի ականջներուս ցաւէն։

— Այդ ոչինչ, և հնարաւոր է այդ ցաւէն ազատուիլ. արագացընելով շնչառութիւնը, և այդպէսով արագացնելով օդի փոփոխութիւնը թոքերուն մէջ։

— Շատ լաւ, պատասխանեցի ևս, որոշելով այլևս չհակամտուել հօրեղբորս։ Նոյն իսկ տեսակ մը հաճոյք կ'ըզգայ մարդ այս աւելի

խիտ մթնոլորտին մէջ: Նկատե՞ր էք, թէ ինչպէս ուժով կը տարածուի ձայնը այստեղ:

— Իհարկէ, այստեղ խուլն ալ հրաշալի պիտի լսէր:

— Բայց օդի այս խտութիւնը անկասկած կ'աւելնայ:

— Այո՛, համաձայն օրէնքի մը, որ դեռ բաւականաչափ չէ պարզուած: Ճիշդ է որ ձգողական ուժը կը պակսի, որքան երկրի խորքը իջնենք: Քեզի յայտնի է, որ անոր ազդեցութիւնը ամենէն աւելի երկրի երեսին զգալի կ'ըլլայ և երկրագունդի կեդրոնը իրերը ոչ մէկ կշիռ չունին:

— Գիտեմ. բայց ըսէ՛ք՝ արդեօք օդը վերջիվերջոյ ջուրի խտութիւնը չպիտի՞ ունենայ:

— Անկասկած. եօթը հարիւր տասը մթնոլորտի ճնշման տակ:

— Իսկ աւելի՞ ցած:

— Աւելի ցած խտութիւնը կը շարունակէ աւելնալ:

— Այդ պարագային ինչպէ՞ս պիտի իջնենք:

— Գրպաննիս քար կը դնենք:

— Խօսք չկայ, հօրեղբայր, դուք ամեն բանի պատասխան ունիք:

Ես չհամարձակեցայ աւելի առաջ երթալ ենթացութիւններու մէջ, որովհետեւ կրկին ռեւէ անկարելիութեան պիտի բաղխէի, որը սաստիկ պիտի զայրացնէր բրօֆէսէօրը:

Սակայն պարզ էր, որ այնպիսի ճնշման տակ, որը կրնար քանի մը հազար մթնոլորտի հասնիլ, օդը վերջիվերջոյ կարծր վիճակ կ'ըստանար և այդ տեսն, ընդունելով նոյն իսկ, որ մեր մարմինը կարենար դիմադրել ճնշման, հարկ կ'ըլլար կանգ առնել, հակառակ մարդկային բոլոր դատողութիւններուն:

Բայց ես այդ առարկութիւնը չըրի: Հօրեղբայրս կրկին իր Սակնուսեմը մէջտեղ կը բերէր, ինծի համար արժէք չունեցող ապացոյց մը, որովհետեւ, նոյնիսկ իբրև իրականութիւն ընդունելով այդ իսլանտացի գիտունի ուղեւորութիւնը, կարելի էր շատ պարզ առարկութիւն ընել, թէ չէ՞ որ Ժ.Պ.րդ դարուն հնարուած չէր ոչ պարօմեթրը, ո՛չ մանօմեթրը. ուրեմն Սակնուսեմը ինչպէ՞ս կրնար հաստատել, թէ երկրի կեդրոնին է հասեր: Ես այդ առարկութիւնը մէջս պահեցի և օպասեցի իրադարձութիւններուն:

Գրուայ մնացած մասն անցաւ հաշիւներով և խօսակցութիւններով: Ամեն բանով կը համաձայնէի բրօֆէսէօր Լիդենպրոկի հետ և կը նախանձէի Հանսի կատարեալ անտարբերութեան: Ուղեցոյցը, առանց հետաքրքրուելու պատճառներով ու հետեւանքներով, անխօս կ'երթար, ուր որ կը տանէր զինք ճակատագիրը:

Պէտք է խոստովանիմ որ մինչեւ այժմ ամեն ինչ լաւ կ'երթար և գանդատուելու առիթ չունէի: Եթէ «միջին հաշուով» զժուարու- թիւնները չաւելնային, մենք անպայման կը հասնէինք մեր նպատակին: Եւ այն ժամանակ ինչպիսի՞ փառք կ'ըսպասէր մեզի: Ես մինչև նման դատողութիւններ ընելու աստիճանին էի հասեր:

Քանի մը օր տեւող զարիւլայրը, երբեմն նոյն իսկ սաստիկ ուղ- ղահայեաց ճամբան մեզի կը տանէր արագօրէն դէպի երկրի ընդեր- քի խորքը: Օրեր կ'ըլլային երբ առաջ կ'երթայինք դէպի կեդրոնը մէկուկէս երկու մղոնով: Վայրէջքը վտանգաւոր էր: Բայց Հանսի ճարպիկութիւնն ու զարմանալի սառնասրտութիւնը մեզի օգնութեան կը հասնէին: Այս անդրդուելի իսլանտացին երբե՞ք հոգիի արիւթիւ- նը չէր կորսնցնէր, անդաւաճանօրէն նուիրուած էր մեզի և անոր շնորհիւ էր, որ բարեյաջող կերպով անցանք բաղձաթիւ դժուարու- թիւններու մէջէն, մինչդեռ առանց անոր մենք անկարող կ'ըլլայինք այդքանը ընել:

Մեր վերջին խօսակցութենէն երկու շաբաթ յետոյ ոչ մէկ նշա- նակելի դէպք տեղի չունեցաւ: Ես կը յիշեմ, և ոչ առանց պատճա- ռի, միայն դէպք մը, որը խիստ մեծ նշանակութիւն ունեցաւ: Ես եր- բեք չեմ մտնար անոր ամենափոքր մանրամասնութիւններն իսկ:

Օգոստոս 7-ին մենք աստիճանաբար հասանք երեսուն մղոն խո- րութեան, այսինքն մեր գլխուն վրայ կը գտնուէր երեսուն մղոն քա- րածայու, ովկիանոս, ցամաքամաս և քաղաքներ: Այդ միջոցին կ'ե- րևի կը գտնուէինք իսլանտայէն երկու հարիւր մղոն հեռաւորութեան վրայ: Այդ օրը փապուղին աննշան թեքումով ցած կ'իջնէր: Ես առջևէն կ'երթայի, հօրեղբայրս կը տանէր Ռուսկորֆի ասպարատնե- րէն մէկը, ես՝ միւսը: Ես կը դիտէի կրանիտէ շերտերը: Եւ յանկարծ շուրջս նայելով տեսայ որ մինակ եմ:

«Ոչինչ, մտածեցի ես, կ'երևի շատ արագ քալեցի, կամ Հանսն ու հօրեղբայրս կանգ առին: Պէտք է դաննը վիրկնք: Բարեբախտա- րար վերելքը շատ թեք չէր»:

Ու ետ դառնալով, քառորդ ժամ քալեցի, չորս կողմս նայելով. բայց ոչ ոք կար: Սկսայ կանչել, ոչ մէկ պատասխան: Չայնս կը կորսուէր անոր յառաջացուցած յանկարծական արձագանգներուն մէջ: Սկսայ վախնալ. սարսուռ մը անցաւ ամբողջ մարմնէս:

— Պէտք է անվրդուլ ըլլալ. ըսի բարձր ձայնով. վստահ եմ, որ կը գտնեմ ուղեկիցներս: Չէ՞ որ միայն մէկ ճամբայ կայ: Քանի որ ես առջևէն կ'երթայի, ապա ուրեմն պէ՞տք է շարունակ ետ երթալ:

Կէս ժամ քալեցի այդ ուղղութեամբ և սկսանջ կը դնէի, արդեօք չէի՞ն կանչեր դիտ: Այդպէս խիտ մթնոլորտի մէջ անոնց ձայնը հե- ոուէն ալ պիտի լսէի: Մեռելային լռութիւն կը արէր այդ անծայր ներքնուղիին մէջ:

Կանգ առի: Չէի ուզեր հաւատալ, թէ ժողորովին մինակ եմ: Կը ցանկայի մօլորուած ըլլալ, ոչ թէ կորած: Իսկ եթէ մօլորուած էի, ուրեմն կրկին կը գտնէի ընկերներս: Անընդհատ ես ինծի կը կըրկնէի. «եթէ միայն մէկ ճամբայ կայ և անոնք այդ ճամբայով կ'երթան, ուրեմն պէտք է հասնիմ անոնց: Ուրեմն պէտք է շարունակ ետ երթամ: Սակայն, թերևս չտեսնելով ու մոռնալով, որ ես առաջ կ'երթայի, թերեւս, անոնք ալ մտածեցին ետ դառնալ: Բայց նոյն իսկ այդ պարագային եթէ ամապարեմ կը հասնիմ անոնց: Շատ պարզ է:

Այս վերջին խօսքերը կը կրկնէի մարդու մը նման, որ այնքան ալ չի հաւատար ըսածներուն: Բաւական ժամանակ պէտք եղաւ, որ պէսզի այդքան պարզ միտքերը իմի հաւաքէի և անոնցմով դատողութիւն մը կազմէի: Կասկածը տիրեց ինծի: Իսկպպէ՞ս առջեւէն կ'երթայի ես: Անկասկած, Հանսը հտեւէս կուգար. իսկ անոր կը հետեւէր հօրեղբայրս: Ան նոյն իսկ րոպէ մը կանգ առաւ, որպէսզի ամրացնէ մէջքի բռնին կապերը: Լաւ կը յիշէի այդ բոլորը: Ծիշդ այդ բոպէին էր, որ առաջ անցայ:

«Ամենայն դէպս, մտածեցի ես, չմոլորուելու շատ ապահով միջոց ունիմ, ատիկա իմ հաւատարիմ վտակս է, որ զիս կրնայ առաջնորդել այս լաբիրինթոսին մէջ: Պէտք է բարձրանալ անոր հոսանքն ի վեր և ես անպայման կը գտնեմ ուղեկիցներս»:

Այս մտքերը զիս քաջալերեցին և ես որոշեցի ճամբայ իյնալ առանց րոպէ մը կորսնցնելու: Ինչքան կը դովէի այժմ հօբեղբօրս հեռատեսութիւնը, որ ան թոյլ չի տուաւ որսորդին փակելու այն անցքը, որմէ կը հոսէր վտակը: Այսպէսով, այս բարեբար վտակը, որ ճանապարհին մեզի կը զովացնէր, այժմ առաջնորդս պիտի ըլլար Նրկրի կեղեւի լաբիրինթոսին մէջ:

Մեկնելէ առաջ ուզեցի քիչ մը լուսցիլ. այդ նպատակով ալ ծըռեցայ «Հանսի վտակ»ին վրայ: Երեւակայեցէք զարմանքս, երբ դէմս տեսայ չոր ու խորտուկորտ կրանիտը: Վտակը այլեւս չէր հոսեր ուղեբորուս տակ:

Ի՛ի:

Աննկարողը յուսահատութիւն մը պատեց զիս: Ոչ մէկ մարդկային լեզու չի կրնար արտայայտել զգացածս: Ողջ-ողջ թաղուած էի և ինծի կ'սպառնար մահը՝ սովի և ծարաւի տանջանքներուն մէջ: Ակամայ այրուող ձեռքերով գետինը կը բռնէի: Որքան չոր կը թըւէր ինծի այս ժայռը:

Բայց ինչպէ՞ս հեռացեր էի վտակի հոսանքէն: Այժմ միայն հասկըցայ այն ասորիինակ լուրթեան պատճառը, երբ վերջին անգամ ականջ կը դնէի, թէ արդեօք ուղեկիցներու ձայնը չի՞ հասնիր ինծի: Ուրեմն երբ ես իմ անզգուշ քայլն էի արեւ այս ուղղութեամբ, չէի

նկատեր, թէ վտակն անհետացեր էր: Պարզ էր որ այդ միջոցին ճանապարհը բաժնուեր էր տռչեալ և հետեւեր էի այս ուղղութեան, մինչդեռ «Հանսի վտակ»ը հասելով միւս ճանապարհի ուղորդարար անցքերէն, ուղեկիցներու հետ ուղղուեր էր դէպի անյայտ խորութիւններ:

Ինչպէ՞ս վերադառնալ: Ոչ մէկ հետք չկար: Ոտքը՝ ոչ մէկ հետք չէր թողուր կրանիտի վրայ: Գլուխս կը ջարդէի այս անբացատրելի հանելուկին լուծումը գտնելու համար: Դրութիւնս կ'արտայայտուէր միակ բառով մը—կորսուած մ.յո՛ւ, կորսուած անդունդին մէջ, որը ինծի անչափելի կը թուէր: Երկրի կեղեւին երեսուն մղոն ծանրութիւնը անուելի կերպով չոքեր էր ուսերուս: Ինքզինքս ջախջախուած կ'ըզգայի:

Ջանացի միտքս վերադարձնել երկրի յիշողութիւններուն. բայց հոտ ալ դժուարութիւն կրեցի: Յիշողութենէս արագօրէն անցան Համպուրկը, Արքայական փողոցի տունը, խեղճ Գրետխենս, այդ ամբողջ աշխարհը, որ գլխուս վերեւն էր:

Կրկին տեսայ, երազի մը պէս, մեր ուղեւորութեան դէպքերը, ծովով անցնելնիս, Իսլանտան, Պ. Ֆրիտրիկսոնը, Սնեֆելսը: Ինքս ինծի կ'ըսէի, թէ այս դրութեան մէջ, եթէ յոյսի ամենափոքր նշոյն իսկ ունենայի, խելագարութեան նշան կ'ըլլար այդ և թէ աւելի լուս կ'ըլլար ոչ մէկ յոյս ունենալ:

Իսկապէս, ինչպիսի՞ մարդկային ուժ կարող էր զիս բարձրացնել դարձեալ երկրագունտի երեսը կամ իրարմէ բաժնել այն վիթխարի կամարները, որոնք կախուած էին գլխուս վրայ: Ո՞վ կրնար տանիլ զիս դէպի վերադարձի ճամբան և միացնել ուղեկիցներուս:

— Ա՛հ, հօրեղբա՛յր, հօրեղբա՛յր, կը կանչէի յուսահատ շեշտով:

Այդ եղաւ միակ մեղադրական խօսքը, որ դուրս թռաւ շրթունքներէս, որովհետեւ հասկցայ, թէ որքա՞ն կը տանջուէր այդ դժբախտ մարդը, զիս փնտռելով:

Տեսնելով, որ ոչ մէկ մարդկային օգնութեան յոյս չկայ, զըրկուած ըլլալով ես ինծի օգնելու որբեւէ կարելիութենէ, մտածեցի երկինքի օգնութեան մասին: Վերադարձան մանկութեանս յիշատակներն ու յուշերը մօրս մասին, որուն ճանչցած էի միայն կեանքիս երեխայական օրերուն: Սկսայ աղօթել, թէեւ իրաւունք չունէի պահանջելու, որ Աստուած, որուն այնքան ուշ դիմեցի, լսէր աղաչանքս: Այդ աղօթքը քիչ մը հանդստացուց զիս ու ես կրցայ կեցրոնացնել բոլոր հոգեկան ուժերս, որպէսզի մտածեմ վիճակիս մասին:

Երեք օրուայ սննդապաշար ունէի և ջրամանս ալ լեցուն էր: Երեք օրէ աւելի չէի կրնար գոյութիւնս պահպանել: Բայց դէպի ո՞ւր երթալ. բարձրանա՞լ, թէ իջնել: Բարձրանալ, ի հարկէ, միշտ բարձրանալ: Այդպէսով կը հասնէի մինչեւ այն կէտը, ուրկէ բաժնուեցայ վտակէն. մինչեւ չարարաստիկ ճիւղաւորումը: Այնտեղէն, անդամ մը որ վտակը ոտքերուս տակը մնար, շարունակելով բարձրանալ, կրնայի

հասնիլ Անեֆելիսի դագաթը: Ինչո՞ւ նախապէս չէի մտածած այդ մասին: Ձէ՞ որ այդ էր փրկութեան միակ յոյսը: Ուրիմն, նախ և առաջ պէտք էր գտնել «Հանսի վտակը»:

Ոտքի կանգնեցայ ու յենուելով ձեռնափայտիս սկսայ վեր բարձրանալ ներքնուղիին մէջէն: Չառիվերը բաւական թեք էր: Կը քալէի յուսալից և առանց սատանումի, մարդու մը պէս որ ուրիշ ընելիք չունի:

Կէս ժամուայ ընթացքին ոչ մէկ արգելքի հանդիպեցայ: Կը փորձէի ճանչնալ ճամբան ներքնուղիի ձեւէն, քանի մը ժայտերու դուրս ցցուածքներէն և ոլորաներու գիրքաւորումէն: Բայց ոչ մէկ սրոշ նշան աչքիս չդարկաւ և շատ շուտով հասկցայ, որ այդ ներքնուղիին չէր կրնար զիս տանիլ մինչև ճամբուն ճիւղաւորումը: Այդ ուղին ելք չունէր: Չարնուեցայ անթափանց պատին և ինկայ քարածայռին վրայ:

Անկարելի է նկարագրել այն ահաւոր սարսափը, այն յուսահատութիւնը, որուն մէջ ինկայ: Անէացած էի: Վերջին յոյսս ջարդուփշուր եղած էր, զարնուելով այս կրանիտէ պատին:

Կորսուած՝ այս լաբիրինթոսին մէջ, որուն ոլորտները իրար կը խաչաձևէին ամեն ուղղութեամբ, տեսայ, որ անհնար էր ազատիլ այստեղէն: Պէտք էր մնաիլ ամենասոսկալի մահով: Եւ, տարօրինակ բան, մտքէս անցաւ, որ եթէ երբեւիցէ գտնուի իմ քարացած դիակս, ինչպիսի գիտական հարցեր պիտի ծագին, երբ զայն հանին Երկրի երեսէն երեսուն մղոն խորութենէն:

Կ'ուզէի բարձր խօսիլ, բայց միայն խուլ ձայներ ելան չորացած շրթունքներէս: Կը հեւայի: Այս տագնապին մէջ նոր սարսափ մը պատեց զիս: Լապտերս փճացաւ վար իյնալով և ես չէի կրնար նորոգել: Անոր լոյսը կը տմղունէր և կը մարէր: Կը տեսնէի, թէ ինչպէս լոյսի հոսանքը հետզհետէ կը նուազի գործիքի օձնեակին մէջ: Մութ պատերուն վրայ երևեցան շարժող ստուերներ: Այլևս չէի համարձակեր փակել աչքերս, վախնալով կորսնցնել խուսափող լոյսի տմենափոքր նշոյլն իսկ: Ամեն վայրկեան կը թուէր, թէ լոյսը կը մտրի և խաւարը կը շրջապատէ զիս: Վերջապէս վերջին ցոլքը զողողաց լապտերին մէջ: Անոր հետեւեցայ, անոր վրայ կեդրոնացուցի տեսողութեանս ամբողջ ուժը, իբրև լոյսի վերջին զգայութեան վրայ, և թաղուեցայ անհուն խաւարին մէջ:

Սարսափելի ճիշ մը դուրս թուա կուրծքէս: Երկրին վրայ ամեն նախոր մթութեան մէջ իսկ, լոյսը երբեք բոլորովին չի կորսնցնել իր իրաւունքները: Կորսուած է ան ու տկար, բայց որքան ալ թոյլ ըլլայ, աչքին ցանցը կ'որսայ զայն: Իսկ հոս՝ ոչինչ: Բացարձակ մթութիւնը ինծի կուրցուցած էր, բառին բովանդակ նշանակութեամբ:

Հիմա գլուխս կորսնցուցի: Ոտքի ելայ, ձեռքերս պարզեցի, փոր-  
ձեղով ամենատանջալի խարխափումներ ընել. սկսայ վաղել այս անե-  
լանելի լարիւրինթոսին մէջ, անընդհատ իջնելով, ստորերկրեայ կա-  
մարներու բնակիչի պէս, կանչելով, ազաղակելով, հեկեկալով, զար-  
նուելով ժայռի ցցուածքներուն, իյնալով ու հլլելով, արնակալած, և  
միշտ սպասելով, որ կը զարնուիմ պատի մը և գլուխս ջարդուի:

Ո՞ւր կը տանէր զիս այս անոխտ վաղքը: Չէի գիտեր: Քանի մը  
ժամ յետոյ, բոլորովին ուժասուպառ, անշունչ դանգուածի պէս ինկայ  
պատի մը առջև և ուշաթափեցայ:

## ԻԸ

Երբ ուշքի եկայ, դէմքս արցունքով ողողուած էր: Ո՞րքան ժա-  
մանակ տեւեց այս վիճակը, չեմ կրնար ըսել. կարելիութիւն չկար  
հաշիւ տալու ժամանակի մասին: Այնպիսի միակուլութիւն ու լքում  
չէ եղած, ինչպէս հիմա իմս էր:

Իյնալէն վերջ շատ արիւն կորսնցուցած էի: Ա՛հ, ինչպէ՞ս կ'ափ-  
սոսայի, որ չեմ մեռած, որ տակաւին մահ կ'ըսպասէր ինձի: Ալ չու-  
զեցի մտածել. ամեն մտածում մէկ կողմ շարտեցի, ու ցաւէն ընկ-  
ճուած պառկեցայ գետին:

Ես արդէն կ'ըզդայի, որ նորէն պիտի ուշաթափիմ և այս ան-  
գամ մօտ կ'ըլլայ իմ վերջնական վախճանը, բայց այդ պահուն ուժ-  
գին աղմուկ մը պարնուեցաւ ականջիս: Ան կը նմանէր ամպրոպի  
որոտին, ու լսեցի, թէ ինչպէս ձայնի ալիքները հետզհետէ կը կոր-  
սուէին ներքնուղիի խորութեան մէջ:

Ո՞ւրկէ էր այդ աղմուկը: Անկասկած բան մը կը կատարուէր եր-  
կըրի ընդերքին մէջ, կազի պայթիւն կամ վիթխարի ժայռի ան-  
կում:

Ականջ դրի, արդեօք չէ՞ր կրկնուեր աղմուկը: Այդպէս անցաւ  
քառորդ ժամ: Կատարեալ լուութիւն էր, նոյնիսկ սրտիս բարախումը  
չէի լսեր:

Ըանկարծ, երբ պատահմամբ ականջս պատին մօտեցուցի, ինձի  
այնպէս թուեցաւ, թէ հեռուէն անհասկնալի կցկտուր խօսքեր կը  
լսուէին: Ես ցնցուեցայ:

«Յնորք է», մտածեցի: Բայց ոչ: Աւելի ուշադրութեամբ ականջ  
դնելով, իսկոյն լսեցի շշուկ: Սակայն ես այնքան ուժասուպառ էի, որ  
չէի կրնար որոշել՝ թէ ինչ կը խօսուէր: Անկասկած, կը խօսէին. հա-  
ւատացած էի ատոր:

Վայրկեան մը վախցայ, չըլլայ թէ իմ սեփական խօսքերուս

արձագանգը կը լսեմ: Գուցէ բացազանչութիւն մը ըրած էի անգիտակցաբար: Շրթունքներս ամուր սեղմեցի և նորէն ականջս պատին փակեցուցի:

Այո՛, ի հարկէ, կը խօսին, կը խօսին:

Պատի կողքէն քանի մը քայլ առաջ երթալով, աւելի յստակ լսեցի խօսակցութեան ձայնը: Յաջողեցայ որսալ անորոշ, տարօրինակ, անհասկնալի բառեր: Ատոնք մինչև ինծի կը հասնէին, ցած ձայնով արտասանուած խօսքերու պէս: Ականջիս հասաւ յաճախ կրկնուած, տխուր շեշտով արտասանուած «Forlorad» բառը: Ի՞նչ կը նշանակէր այդ բառը: Ո՞վ կ'արտասանէր: Անհասկած հօրեղբայրս կամ Հանսը: Բայց թէ ես լսեցի անոնց ձայնը, անոնք ալ կրնային լսել իմ ձայնս:

— Օգնեցէ՛ք, կանչեցի ես սամրոջ ուժովս, օգնեցէ՛ք:

Ականջս դրի, ջանալով բռնել պատասխանը. ուէ աղաղակ մը, հառաչ մը: Ոչ մէկ ձայն: Անցան քանի մը վայրկեաններ: Անթիւ մտածումներ անցան գլխէս: Կը մտածէի, թէ ձայնս թոյլ էր և ստոր համար չէր հասներ ուղեկիցներուս:

— Պարզ է, որ անոնք են, կը կրկնէի: Ուրիշ ո՞վ կրնար ըլլալ հոս, երեսուն մղան խորութեան մէջ:

Նորէն սկսայ ականջս դնել: Ականջս պատին երկայնքով տանելով գտայ այն մաթեմատիկական կէտը, ուրկէ ձայնը, կը թուէր, թէ ամենէն աւելի ուժգին կը լսուէր: «Forlorad» բառը նորէն զարկաւ ականջիս, յետոյ նորէն լսուեցաւ ամպրոպին որոտը, որ քիչ առաջ զիս սթափեցուցած էր:

— Ոչ, ըսի, ո՛չ: Պատին մէջէն չէ, որ կը լսուին այս ձայները. կրանիդէ այս պատէն չէր կրնար անցնիլ ամենաուժեղ ձայնն իսկ: Աղմուկը ճիշդ ներքնուղիէն կուգայ: Այստեղ իւրայատուկ լսողական բան մը կայ:

Նորէն ականջ դրի և իսկապէս այս անգամ լսեցի անունս, շատ յստակ արտասանուած: Հօրեղբայրս էր, որ կուտար անունս: Ան կը խօսէր ուղեցոյցին հետ և կ'արտասանէր դանիական «Forlorad» բառը: Հիմա ամեն բան պաթզուեցաւ: Որպէսզի անոնք զիս հասկնային, պէտք էր խօսիլ անմիջապէս մօտէն, որովհետեւ պատը ձայնը կը հաղորդէ այնպէս, ինչպէս երկաթալարը կը հաղորդէ ելքաբաղան հոսանքը: Ժամանակ պէտք չէր կորսնցնել: Եթէ ուղեկիցներս քանի մը քայլ հեռանային պատէն, լսողականութիւնը կը կորսուէր: Այդ պատճառով շուտով մօտեցայ պատին և կարելի եղածին չափ յստակ ձայնով ըսի.

— Հօրեղբայր Լիւննպրո՛կ:

Ու սպասեցի մեծ անհամբերութեամբ: Չայնը այնքան ալ մեծ

արագութեամբ չընթանար. օգի շերտերուն խտութիւնը կ'աւելցնէ ոչ թէ անոր արագութիւնը. այլ միայն անոր ուժը: Անցաւ քանի մը վայրկեան, մինչև որ վերջապէս ակունջիս հասան հետեւեալ խօսքերը.

— Աքսէ՛լ, Աքսէ՛լ, այդ դո՞ւն ես...

— Այո՛, այո՛, պատասխանեցի ես...

— Խեղճ տղաս, ո՞ւր ես...

— Մոլորուած եմ և կը գտնուիմ խոր մթութեան մէջ...

— Իսկ լապտե՞րը...

— Մարած է...

— Իսկ վտակը...

— Անյայտացած է...

— Աքսէլ, խեղճ Աքսէլ, արիացի՛ր...

— Ի՞նչ մը սպասեցէ՛ք. ուժասպառ եմ. ուժ չունիմ պատասխան տալու համար, բայց դուք խօսեցէք ինձի հետ...

— Արիացի՛ր, շարունակեց հօրեղբայրս. դուն մի՛ խօսիր, մտիկ ըրէ: Մենք քեզի կը փնտռէինք յարձրանալով ու իջնելով ներքնուղիին մէջ, բայց չգտանք: Ես այնքա՛ն լացի քեզի համար, տղա՛ս: Վերջապէս ենթադրելով, որ դուն կը հետեւիս «Հանսի վըտակ»-ին ուղղութեան, մենք նորէն վար իջանք, հրացանը կրակելով: Այժմ, թէև մեր ձայները, շնորհիւ իւրայատուկ լսողականութեան մը, լսելի կ'ըլլան, բայց մեր ձեռքերը իրարու չեն կրնար հասնիլ: Միայն թէ չյուսահատի՛ս, Աքսէ՛լ: Մենք կը լսենք զիրար, ատիկա բան մըն է արդէն...

Այն ատեն խորհեցայ. որոշ յոյս մը, տակաւին տարտամ, ծնաւ մէջս: Նախ և առաջ պէտք է կարեւոր հանգամանք մը պարզել: Շրթունքներս պատին մօտեցուցի և ըսի.— Հօրեղբա՛յր...

— Ի՞նչ կայ, տղաս, եղաւ պատասխանը քանի մը վայրկեան յետոյ:

— Նախ և առաջ պէտք է զիանալ, թէ որքա՞ն հեռու ենք իւրարմէ:

— Այդ զիւրին է գիտնալ...

— Ձեր խրոնօմետրը անվնաս է...

— Այո...

— Ուրեմն, ձեռքերնիդ բռնեցէք խրոնօմետրը, իմ անունս արտասանեցէք, ճշգրիտ նշանակելով այն վայրկեանը, երբ կ'ըսկսիք խօսիլ: Ես կը կրկնեմ անունս, ճիշդ եբք ձայնը ձեզի հասնի դուք նորէն կը նշանակէք պատասխանս. ստանալու համար ճշգրիտ ժամանակը...

— Լաւ. այդպէսով իմ հարցումիս և քու պատասխանիդ միջև անցած ժամանակին կէսը կը հաւասարի այն ժամանակին, որուն ընթացքին իմ ձայնս քեզի կը հասնի...

— Ճիշդ այնպէս, հօրեղբայր...

— Պատրիս՞տս ես...

— Այո...

— Լաւ. ուշադրութի՛ւն. կ'արտասանեմ անունդ...

Ականջս պատին դրի և ճիշդ, որ «Ա.քսէլ» բառը ականջիս հասաւ իսկոյն նոյնը կրկնեցի ու սպասեցի...

— Քառասուն վայրկեան, ըսաւ հօրեղբայրս, երկու բառերուն միջև քառասուն վայրկեան անցաւ. ուրեմն ձայնդ քսան վայրկեանէն ինծի հասաւ: Եւ քանի որ ձայնի արագութիւնը մէկ վայրկեանին պէտք է հաշուել հազարքսան ոտք, ուրեմն ընդամենը կ'ընէ քսանհազար չորսհարիւր ոտք, այսինքն գրեթէ մէկուկէս մղոն...

— Մէկուկէս մղո՞ն, շշնջացի ես:

— Ոչինչ. այնքան ալ սարսափելի չէ, կարելի է անցնիլ. Ա.քսէլ...

— Բայց ի՞նչպէս երթամ. բարձրանա՞մ, թէ իջնեմ:

— Իջնել. և ահա թէ ինչու: Մենք հասանք մեծ հրապարակ մը, ուր կը վերջանան մեծ թիւով ներքնուղիներ: Այն ուղին, որուն հետեւած ես, անկասկած քեզի հոս կը հասցնէ, որովհետեւ այս բոլոր ճեղքուածքները, երկրագունդի այս բեկումները, երեւոյթապէս, ճառագայթաձև դուրս կուգան այն ընդարձակ քարայրէն, որուն մէջ կը գտնուինք: Ոտքի՛ ելիր ուրեմն և յառաջացիր, քալէ՛, սողոսկէ՛. եթէ պէտք է, սահէ՛ թեք զառիվարէն և ճամբու ծայրին մեր թեւերը պատրաստ են քեզի ընդունելու համար: Առա՛ջ, տղա՛ս, առա՛ջ...

Այդ խօսքերը քաջալերեցին զիս:

— Յտեսութի՛ւն, հօրեղբայր, բացադանչեցի ես, ահա կը մեկնիմ: Ճիշդ այն ատեն որ այստեղէն հեռանամ, ալ զիրար չենք լսեր: Յտեսութիւն, ուրեմն:

— Յտեսութի՛ւն, Ա.քսէլ, դեստութի՛ւն:

Վերջին խօսքերն էին, որ կը լսէի: Այս տարօրինակ խօսակցութիւնը, որ անդի ունեցաւ երկրի պանդուածին մէջէն, գրեթէ մէկ մղոն հեռուորութեան վրայ, վերջացաւ այդ յուսադրիչ խօսքերով:

Այս դարձանալի լսողական երեւոյթը դիւրութեամբ կը բացատրուի բնագիտական օրէնքներով: Ան յառաջ կուգայ ներքնուղիի ձեւէն և քառաժայռի հազորպականութենէն: Յիշեցի, որ այդպիսի երեւոյթներ նկատուած են քանի մը անգիր, ի միջի այլոց Լոնտոնի Ս. Պօղոս եկեղեցիի ներքին միջանցքին մէջ, և յատկապէս Սիկիլիոյ հետաքրքրական քարայրներուն մէջ, որոնցմէ ամենէն նշանաւորը կը կոչուի «Իոնիսիսեան ականջ»:

Այս յիշուցութիւնները անցան մտքէս ու ինծի պարզ էր, որ եթէ հօրեղբորս ձայնը հասաւ ինծի, ուրեմն արդիւք մը չկար մեր միջև:

Հետեւելով ձայնին, անխուսափելիօրէն կը հասնէի ուղեկիցներուս, եթէ ուժերս չդաւաճանէին ինծի:

Ոտքի կանգնեցայ ու սկսայ ձեռով մը յառաջանալ: Չափովարը բաւական թեք էր. սկսայ սողալով վար իջնել: Քիչ յետոյ վայրէջքը սկսաւ այնպէս մը արագանալ, որ կրնար կատարեալ անկումի փոխելի: Ոյժս չէր ներքեր, որ կանգ առնէի:

Յանկարծ դիտինը չքացաւ ոտքերուս տակէն: Չգացի, որ կը գլորուիմ, ցատկատելով ուղղահայեաց ներքնուղիի անհարթութիւններու վրայէն. գլուխս զարնուեցաւ սրածայր ժայռին և ուշքս կորսընցուցի:

## ԻԹ

Երբ նորէն ուշքի եկայ, տեսայ որ պառկած եմ կիսախաւարին մէջ, հաստ վերմակներուն վրայ:

Հօրեղբայրս նստած էր մօտս, աշխատելով դէմքիս վրայ կենդանութեան նշաններ դտնել: Այն պահուն որ շնչառութիւնս վերսկսաւ, ան բռնեց ձեռքէս: Իմ առաջին հայեացքս նկատելով՝ ուրախութեան ճիչ մը արձակեց.

— Ո՛ղջ է, ո՛ղջ է, բացադանչեց հօրեղբայրս:

— Այո, պատասխանեցի ես թոյլ ձայնով:

— Սիրելի տղաս, ըսաւ հօրեղբայրս, սեղմելով զիս իբ կուրծքին, ուրեմն փրկուեցար:

Ես շատ յուզուած էի այդ խօսքերու շեշտէն և զիս ա՛լ աւելի յուզեց այն խնամքը, որ կ'ընկերակցէր այդ խօսքերուն: Բայց նման փորձութիւններ պէտք էին, բրօֆէսէօրին մէջ այդպիսի սրտի զեղում առաջացնելու համար:

Այդ վայրկեանին Հանսը մօտեցաւ: Տեսաւ ձեռքս հօրեղբորս ձեռքին մէջ և կը համարձակիմ պնդել, որ իբ աչքերուն մէջ ուրախութեան փայլ չողաց:

— God dag, ըսաւ ան:

— Ի՛արե՛ւ Հանս, բարե՛ւ, շնջացի: Իսկ հիմա, սիրելի հօրեղբայր, բացատրեցէ՛ք, թէ ո՞ւր կը գտնուինք:

— Վաղը, Աքսէլ, վաղը: Այսօր դուն դեռ չատ տկար ես, գլխուդ վիրակապ (գօմբրէս) դրած եմ, անոր պէտք չէ ձեռք դպնայ. քնացի՛ր տղաս, իսկ վաղը ամեն ըսն կ'իմանաս:

— Բայց գոնէ ըսէ՛ք, շարունակեցի ես, ժամը քանին է և ամսուայ ո՞ր օրն է այսօր:

— Իրիկուան ժամը տասնևմէկն է. այսօր կիրակի է, Օգոստոս իննը, իսկ հիմա ալ կ'արգիլեմ հարցում տալ ամսու տասնէն առաջ:

Իսկապէս շատ տկար էի, աչքերս կը փակուէին ինքնաբերաբար: Անհրաժեշտ էր ինծի լաւ մը քնանալ, հանդստանալ ու ես քնացայ այդ մտածումով, թէ իմ բաժանումը ընկերներէս՝ տեւած էր չորս երկար օրեր:

Յաջորդ օր արթննալով, սկսայ շուրջս դիտել: Անկողինս, կազմուած ճամբորդական բոլոր ծածկոյթներէ, կը գտնուէր սքանչելի քարայրի մը մէջ, որ ծածկուած էր հրաշալի սթալաքիթիտներով: Քարայրին յատակը ծածկուած էր մանր աւաղով: Քարանձաւին մէջ կիսախաւարը կը տիրէր. ոչ ճրագ կար վառած, ոչ ալ ջահ, և սակայն քարայրի նեղ անցքէն ներս կը թափանցէր անբացատրելի լոյս մը: Կը լսէի նոյնպէս ինչ որ տարտամ ծփանք, նման՝ ափը զարնուող ալիքներու ձայնին և հրբեմն ալ քամիի սուլոց:

Հարց կուտայի ինծի, միթէ՞ իրապէս արթուն եմ, թէ կ'երագնմուղեղս չէ՞ր խանդարուած արդեօք ինկած ատենս, ու այս բոլորը միթէ՞ իմ երեւակայութեանս արդիւնքը չին: Սակայն ո՛չ աչքերս, ո՛չ ալ ականջներս չէին կրնար այդ աստիճան խառել դիտ:

«Ցերեկուայ լոյսի ճառագայթն է, կը մտածէի, որ կը թափանցէ ժայռերու ճեղքուածքէն: Իսկ ալիքներու ծփանքը: Քամիին սուլոցը: Մի՞թէ ես սխալած եմ, կամ մենք նորէն Սրկրի Սրեսը կը բարձրանանք: Մի՞թէ հօրեղբայրս հրաժարած է իր արշաւանքէն: Թէ յաջողութեամբ աւարտած է այն»:

Այս անյուշելի հարցերը կուտայի ես ինծի երբ ներս մտաւ բրօքէսէօրը:

— Բարեւ Աքսէլ, ըսաւ ան ուրախ ձայնով. պատրաստ եմ դրաւի գալու, որ ինքզինքդ լաւ կ'ըզգաս:

— Այո՛, այո՛, պատասխանեցի դուրսս բարձրացնելով:

— Այդպէս ալ պէտք էր ըլլար, որսվհետեւ հանգիստ քնացար: Հանսն ու ես հերթով հսկեցինք գիշերը, և տեսանք, որ առողջութիւնն ըզգալիօրէն գէպի լաւը կ'երթաւ:

— Իսկապէս, ես ինծի առողջ կ'ըզգամ և իբրեւ ապացոյց մեծ հաճոյքով կը մասնակցիմ նախաձաշին:

— Անշուշտ, տղաս: Տենդդ արդէն անցած է: Հանսը վէրքերուդ տեսակ մը սպեղանի քսեց, որ իսլանտացիներու գաղտնիքն է, և վէրքերդ իսկոյն գոցուեցան... Ի՞նչ հրաշալի մարդ է մեր որսորդը:

Հետս խօսելով, հօրեղբայրս ինծի համար ուտելու բան պատրաստեց, որ ազահութեամբ կերայ, հակառակ անոր յորդորներուն: Միեւնոյն ատեն հարցումներու տարափ կը թափէի վրան, իսկ ան սիրով կը պատասխանէր:

Այդպէսով տեղեկացայ, որ բարեբախտ կերպով ինկած էի ներքնուղիին յատակը, գլորուելով մեծ քանակութեամբ քարի կտորներ:

րուն հետ, որոնցմէ ամենափոքրն իսկ կրնար զիս ջախջախել: Եւ այդպէս ահռելի ձեւով գլորուած էի ուղղակի հօրեղբօրս թեւերուն մէջ, արնաթաթախ և անկենդան:

— Իսկապէս որ, շատ զարմանալի է, որ չես մեռած հազար անգամ: Բայց ի սէր Աստուծոյ, այլեւս չբաժնուինք, թէ ոչ կրնանք այլեւս երբեք զիրար չտեսնել:

«Այլեւս չբաժնուինք»: Ուրեմն ուղեւորութիւնը տակաւին չէ՞ վերջացած: Զարմանքէս լայն-լայն բացի աչքերս: Հօրեղբայրս իսկոյն հարցուց.

- Ի՞նչ պտտահեցաւ քեզի, Աքսէ՛լ:
- Կ'ուզեմ հարցում մը ընել: Կ'ըսէք, թէ ողջ առո՞ղջ եմ:
- Անկասկած:
- Բոլոր անդամներս անվնաս են:
- Անշուշտ:
- Գլո՞ւխս:
- Գլուխդ, բացի քանի մը սկրթութիւններէն, կատարելապէս իր տեղն է, ուսերուդ վրայ:
- Կը վախնամ, որ ուղեղս վնասուած է:
- Վնասուած:
- Այո: Մի՞թէ չենք վերադարձած Երկրին երեսը:
- Ո՛չ, ի հարկէ, ո՛չ:
- Ուրեմն ես խելագարուած եմ, որովհետեւ արեւի լոյս կը տեսնեմ, կը լսեմ քամիին սուլոցը և ալիքներուն աղմուկը:
- Այդքան միայն:
- Չէ՞ք բացատրեր ինձի այս ամենը:
- Բան մը չեմ բացատրեր, որովհետեւ անբացատրելի է. բայց դուն կը տեսնես ու կը համոզուիս, որ երկրաբանութիւնը տակաւին չէ ըսած իր վերջին խօսքը:
- Դուրս ելլենք ուրեմն, բացազանչեցի ես ու իսկոյն օտքի ելայ:
- Ո՛չ, Աքսէ՛լ, ոչ, թարմ օդը կը վնասէ քեզի:
- Թարմ օդը՞:
- Այո. քամին զօրաւոր է, կրնաս մտիլ:
- Բայց կը հաւատացնեմ ձեզի, որ ես ինձի հրօշակի կ'ըզգամ:
- Քիչ մը համբերութիւն, տղա՛ս: Հիւանդութեանդ կրկնումը մեզի նորէն խոչընդոտ կ'ըլլայ, իոկ մենք պէտք չէ մամանակ կորսընցնենք, որովհետեւ միւս ափը անցնիլը կրնայ երկար տևել:
- Միւս ափը անցնի՞լը:
- Այո: Այսօր ալ հանգստացիր, իսկ վաղը կը նաւարկենք:
- Կը նաւարկե՞նք:
- Այս վերջին բառը լսելով ապշեցայ: Ի՞նչպէս: Նաւարկե՞լ: Մի՞-

թէ մեր առջև գետ, լիճ կամ ծով կար: Մի՞թէ ոեւէ նաև խարխսխ նետած էր ստորերկրեայ նաւահանգիստը:

Հետաքրքրութիւնս ծայր աստիճան գրգռուած էր: Հօրեղբայրս ի դուր ուզեց ինձի զսպել: Երբ տեսաւ, որ անհամբերութիւնս կըրնար ինձի աւելի փնասել, քան իմ փափաքին բաւարարումը, տեղի տուաւ:

Ես շուտով հագուեցայ, զգուշութեան համար փաթթուեցայ վերմակներէն մէկուն մէջ և դուրս ելայ քարանձաւէն:

## 1.

Սկիզբը բան չէի տեսներ. աչքերս անսովոր ըլլալով լոյսին՝ իսկոյն գոցուեցան: Երբ կրցայ բանալ աչքերս, աւելի շատ ապշեցայ քան թէ զարմացայ:

— Ծովը, բացագանչեցի ես:

— Այո, պատասխանեց հօրեղբայրս, «Լիդենսպրոկի ծովը», և ես յոյս ունիմ, որ ոչ մէկ ծովագնաց ինձմէ չի խլեր դայն յայտնաբերելու պատիւն ու իմ անուետութս գայն կոչելու իրաւունքը:

Ջուրի ընդարձակ տարածութիւն մը, լճի կամ ծովու սկզբնաւորութիւնը, փռուած էր մեր աչքին առջև մինչև հորիզոն: Խիստ կըտըրտուած ծովեղբքը, որուն կը զարնուէին վերջին ծփանքները, ծածկուած էր մանր աւազով և ցան ու ցիր խեցիներով, որոնց մէջ ժամանակ մը ապրած էին նախնական կենդանի էակները: Ալիքները զարնուելով ափին, կը փչրուէին այնպիսի շոնդալից աղմուկով, որ յատուկ է շրջափակուած տարածութիւններուն. թեթև փրփուրը կը լուչէր մեզմ քամիի շունչէն և քանի մը կաթիլ ալ դէմքիս զարնուեցան: Տեղ-տեղ հարթ ափին վրայ դուրս ցցուած էին հսկայ ժայռերու սեպեր, հասնելով անչափելի բարձրութեան: Անոնցմէ մի քանին եզերքը պատուելով, առաջ կը բերէին հրուանդաններ և թերակղզիներ: Աւելի հեռուն կ'երևային այդ նոյն վիթխարի ժայռերը, դուրս ցցուելով հորիզոնի մշուշապատ խորքին վրայ: Այո, իրականով կիանոս մըն էր. շրջապատուած ժայռերով, ամայի և վայրենի սեսքով:

Հայեացքս կրնար շատ հեռուն թափանցել, որովհետև «մասնայատուկ» լոյս մը կը լուսաւորէր ամենափոքր մանրամասնութիւնները: Արեւին լոյսը չէր այդ. իր լուսաճաճանչ ճառագայթներու խուրձով ու սքանչելի փայլով, ոչ ալ լուսնի տժգոյն ու սարտամ լոյսը: Այդ լոյսին ուժը, անոր թրթռացող փայլը, անոր չոր ու թափանցիկ ըսպիտակութիւնը, ցած ջերմաստիճանը, լուսնի լոյսէն գերազանց

ԸՆՄԱՐՆԸ, այդ բոլորը բացայայտ կը դարձնէին անոր ելեքտրական ծագումը: Այդ լոյսը կը նմանէր հիւսիսափայլին, և իր շողերով լեցուցած էր այդ քարայրը, որ կրնար իր մէջ ամբողջ ովկիանոս մը ընդգրկել: Մեր գլխուն վրայ կախուած կամարը, եւ ուրիշ խօսքով եթէ կ'ուզէք՝ երկինքը, կարծես կազմուած էր խոշոր ամպերէ, շարժուն ու փոփոխական գոլորշիներ՝ որոնք խտանալով, քանի մը վայրկեան յետոյ կրնային տեղատարափ անձրեւի փոխուել: Կը թուէր թէ, մթնոլորտային այսպիսի ուժեղ ճնշման տակ, ջուրի գոլորշիացում չէր կրնար ըլլալ, սակայն ինծի համար անյայտ բնագիտական պատճառներով, խիտ ամպեր կախուած էին երկինքէն: Բայց և այնպէս եղանակը լաւ էր: Ելեքտրական ալիքները լոյսի զարմանալի խաղեր կ'առաջացնէին շատ վեր բարձրացած ամպերուն վրայ: Անոնց ստորին շերտերուն վրայ, վերի ամպերէն ստուերներ կ'իջնային և յաճախ երկու անջատուած շերտերու արանքէն մեղ կը հասնէր զարմանալի վառ ճառագայթ մը: Բայց և այնպէս արեւի ճառագայթ չէր այդ, քանի որ անոր կը պակսէր ջերմութիւնը: Այդ լոյսը ախուր և մելամաղձոտ տպաւորութիւն կը թողուր: Աստղաղարչ երկնակամարի փոխարէն, կ'ըզգայի որ այդ ամպերուն վրայ կրանիթէ առաստաղ կար, որ կը ճնշէր վրաս իր ամբողջ ծանրութեամբը: Որքան ալ ընդարձակ ըլլար այս տարածութիւնը, այնուամենայնիւ շատ փոքր էր, նոյնիսկ ամենամանր արբանեակի մը պտոյտին համար: Ես յիշեցի անդլիական նաւապետի մը այն սեսութիւնը, որ ան երկիրը կը նմանցնէր մեծ, դատարկ գունտի մը, որուն ներսը օդը կը լուսաւորուի իր իսկ ճնշման շնորհիւ, մինչդեռ երկու աստղեր, Պըղուտոնն ու Պրոգերպինը իրենց խորհրդաւոր շաւիղը կը գծեն հոն: Արդեօք ճիշդ ըսած էր ան:

Իրականին մէջ կը գտնուէինք ընդարձակ քարայրի մը մէջ, աւելի ճիշդ զնտանի մը: Կարելի չէր նոյնիսկ մօտաւորապէս որոշել ո՞չ անոր լայնութիւնը, որովհետեւ ծովափը կը տարածուէր անվերջ, ո՞չ ալ երկայնքը, որովհետեւ հայեացքը կը կորսուէր հորիզոնի անորոշ գծերուն մէջ: Ինչ կը վերարերէր քարայրին բարձրութեան, հաւանական է որ քանի մը մղոնէ աւելի ըլլար ան: Ո՞ւր կը յինուէր այդ կրանիթէ պատերուն կամարը, աչքը չէր կրնար որոշել այդ, բայց մթնոլորտին մէջ կախուած ամպերը, հաւանաբար հինգ հազար մեթր բարձրութիւն ունէին: Այդ բարձրութիւնը կը գերազանցէր երկրային ամպերու բարձրութիւնը, բան մը, որ պէտք է վերագրել օդի զգալի խտութեան:

Քարայր բառը, ի՞նչ խօսք, որ յարմար չէ պատկերացնելու համար այս ընդարձակ տարածութիւնը. բայց մարդկային լեզուին կը պակսին բառերը այն մարդուն համար, որ կը յանդգնի խորանալ

երկրագունդի ընդերքը: Ինձի անյայտ էր, թէ ինչպիսի երկրաբանական երեւոյթով կարելի էր բացատրել այսպիսի քարայրի գոյութիւնը: Մի՞թէ երկրագունդի սառելու հետեւանքով առաջացած էր այդ կարգ մը ուղեւորներու պատմածներէն դիտէի քանի մը նշանաւոր քարայրներու մասին, բայց անոնցմէ ոչ մէկը այսպիսի ընդարձակութիւն չէ ունեցած:

Հուճկոյտը հետագօտած է Գուռախարայի քարայրը, Գոլումպիոյ մէջ. երկուհազարհինգհարիւր ոտք տարածութեամբ, և եթէ իրեն լըյաջողութեցաւ որոշել այդ քարայրին ամբողջ երկարութիւնը, ամենայն դէպս, հաւանական է, որ ասկէ շատ աւելի ընդարձակ չէ եղած: Մամօնտեան հսկայ քարայրը Հնետուկի մէջ, ի հարկէ, աւելի մեծ չսփեռու կը հասնի, քանի որ անոր կամարը հինգ հարիւր ոտք բարձրութիւն ունի անչափելի խորութեամբ լճի մը վրայ և ուղեւորները անոր մէջէն կ'անցնին տասը մղոն տարածութիւն, առանց վերջը գտնելու: Բայց ի՞նչ են այդ քարայրները համեմատած տար հետ, որով ես կը հիանայի այս վայրկեանիս, անոր ամպամած երկինքով ելեքտրական լոյսով և ընդարձակ ծովով, որ սեղմած էր անոր պատերուն մէջ: Երեւակայութիւնս անզօր էր այս անսահման տարածութեան առջեւ: Խոր լուծեամբ կը դիտէի այս հրաշալիքները, բառեր չէի գտներ արտայայտելու համար զգացումներս: Կը թուէր թէ կը տեսնեմ հեռաւոր մոլորակի մը — Ուրանոսի կամ Նեպտունի — այնպիսի երեւոյթները, որոնց մասին իմ ճերմկայիննք բնոյթը զաղափար չուէր: Նոր զգացումներու համար նոր խօսքեր պէտք էին, սակայն անոնք չկային երեւակայութեանս մէջ: Կը նայէի, կը խորհէի, կը հիանայի աշուտութեամբ ու քիչ մըն ալ երկիւղով:

Այս տեսարանին անսպասելիութիւնը վերագարձուց իմ դէմքիս գոյնը. կը բժշկուէի վարմանքի ազդեցութեան տակ ու կը կաղզուրուէի այս նոր ձեւի բուժման միջոցաւ. բացի այդ, խիտ օդին կենսարար ուժը կենդանացուց զիս, թոքերուս տալով մեծ քանակութեամբ թթուածին:

Գիւրբին է հասկնալ, որ նեղ ներքնուղիին մէջ քառասունհօթ օրուայ բանտարկութենէն յետոյ, անսահման հաճոյք էր շնչել ազի գոլորշիով յաղեցած այս խոնաւ օդը: Այդ պատճառով ալ չէի զղջացած, որ գուրս ելած էի նեղ քարանձաւէն: Հօրեղբայրս՝ արզէն վարժուած այս հրաշալի տեսարանին, այլևս չէր զարմանար:

— Բաւական ուժ ունի՞ս քիչ մը զբօսնելու համար, հարցուց ան ինձի:

— Այո, անշուշտ, պատաւխոտնեցի, շատ հաճելի կ'ըլլայ այդ:

— Է՛հ, ուրեմն, յետուէ թեւիս, Ա.քսէլ, եւ երթանք ծովեզերքէն: Ես շտապեցի ընդունիլ առաջարկը ու մինք սկսանք շրջիլ այս նոր

ովկիանոսի արերուն: Չախ կողմը սկսւ ժայտերը իրարու վրայ զիղուած լեռներու հսկալ զանգուածներ կազմած էին, որոնց լանջերէն անթիւ վճիւր ջրվէժներ կը թափուէին շատաշիւով: Թեթեւ գոլորշիներ, լողալով մէկ ժայռէն միւսը, ցոյց կու տային տաք ջուրի գոյութիւնը, իսկ առուները մեղմ կարկաչիւնով կը հոսէին գէպի ընդհանուր աւազանը: Այդ առուներուն մէջ եւ ճանչցայ մեր հաւատարիմ ուղեցոյցին «Հանսի վտակը», որ մեղմօրէն կը խառնուէր ծովու ջուրերուն, կարծես այնպէս հոսած ըլլար աշխարհի սկզբնաւորութեան օրէն:

— Մենք այլեւս այդ վտակը չենք տեսներ, ըսի եւ հառաչելով:

— Է՛հ, ի՞նչ ընենք, պատասխանեց բրօֆէսէօրը, ան, թէ ուրիշ մը, մի՞թէ նոյնը չէ:

Այս պատասխանը ինծի քիչ մը ապերախութեացաւ: Բայց այդ պահուն անսպասելի տեսարան մը գրաւեց ուշադրութիւնս: Հարիւր քայլ հեռաւորութեան վրայ, բարձր հրուանգանի մը ետեւը, մեր աչքին առջեւ պատկերացաւ խիտ անտառ մը: Ան բաղկացած էր միջակ բարձրութիւն ունեցող ծառերէ, հովանոցածեւ ու կանոնաւոր չըրջագծերով: Օդին հոսանքը չէր հասներ անոնց անբնական, որովհետեւ, հակառակ քամիին, անոնք անշարժ կանգնած էին, կարծես քարացած եղեւնիներու պուրակ ըլլար: Սո արագացողի քայլերս և մօտեցայ անոնց: Չէի կրնար որոշել այդ անձանօթ ծառերուն տեսակը: Միթէ՞ր ատոնք չէին պատկանիր արդէն մեզի ծանօթ երկու հազար բուսացուցակին (ֆլօրա): Ո՛չ, երբ մենք մօտեցանք, զարմանքս ապշութեան փոխուեցաւ: Իսկապէս մեր առջեւ կանգնած էին երկրային սովորական բոյսեր, բայց հսկայական մեծութեամբ: Հօրեղբայրս տուաւ անոնց ճշգրիտ անունը:

— Սունկի ամբողջ անտառ մըն է աս, ըսաւ ան:

Եւ ան չէր սխալուեր: Երեւակայեցէք, թէ ինչպիսի զարգացման կրնան հասնիլ այդ բոյսերը տաք ու խոնաւ տեղեր: Ինծի յայտնի էր, որ ըստ Բուլկարի\*) «*Lycopodium giganteum*»-ը կը հասնի մինչեւ ութը կամ իննը ոտք շրջագծի, բայց ատոնք սպիտակ սունկեր էին, երեսունէն մինչեւ քառասուն ոտք բարձրութեամբ, համապատասխան արամազիծ ունեցող գլխարկով: Անոնց թիւը հոս հազարներու կը հասնէր. լոյսի ոչ մէկ ճառագայթ չէր թափանցեր անոնց խիտ ստուերէն և կատարեալ մթութիւն կը տիրէր անոնց կամարնեւորուն տակ, որոնց խիտ շարքերը կը նմանէին ափրիկեան քաղաքներու կլօր տանիքներուն:

Սակայն, ուղեցի աւելի խորանալ այն սնկային անտառին մէջ, գերեզմանային ցուրտ կ'իջնէր այդ խիտ կամարներէն: Կէս ժամ

\*) Ֆրանսացի բուսաբան Ժ. Կարուս:

մենք չըջեցանք այս խոնաւ մթութեան մէջ եւ իսկական բաւակա-  
նութեամբ դուրս եկանք դէպի ծովու ափը :

Բայց այս ստորերկրեայ երկրի բուսականութիւնը միայն սուն-  
կերով չէր սահմանափակուեր : Քիչ մը աւելի հեռուն կը բարձրանա-  
յին մեծ թիւով ուրիշ տեսակի ծառերու խումբեր , անգոյն տերեւ-  
ներով : Անոնց ճանչնալ դիւրին էր , անոնք երկրային բոյսերու ստո-  
րին տեսակներն էին , թուփեր , որոնց բարձրութիւնը արտակարգ չա-  
փերու կը հասնէր , լիկոպոսներ՝ հարիւր ոտք բարձրութեամբ , հսկայ  
սիդիլիւարներ , հիւսիսային եղեւիններու բարձրութեամբ պտերներ ,  
լեպիդոփեմսրոններ կրկնակ գլանաձեւ բուներով , վերջաւորուած եր-  
կար տերեւներով , որոնք ծածկուած էին կոշտ մազերով :

— Զարմանալի է , հրաշալի է , հոյակապ է , բացազանչեց հօրեղ-  
բայրս : Այս ամբողջը կը պատկանի աշխարհի երկրորդական ժամա-  
նակաշրջանին : Ահա մեր այգիներու խեղճուկ բոյսերը , որոնք իսկա-  
կան ծառեր էին երկրազուտի առաջին շրջաններուն : Նայէ՛ , Աքսէլ ,  
հիացի՛ր , աս իսկական պատկեր է բուսարանի համար :

— Դուք իրաւացի էք , հօրեղբայր : Բնութիւնը , ինչպէս կ'երե-  
ւայ , ցանկացեր է պահել այս ընդարձակ ջերմոցին մէջ անգըջհե-  
ղեղեան բոյսերը , որոնք այնքա՛ն յաջող կերպով վերականգնուեր են  
գիտնականներու կորովամտութեամբ :

— Դուն շատ ճիշդ կ'ըսես . ասիկա ջերմոց մըն է , բայց աւելի  
ճիշդ կ'ըլլար ըսել . թէ աս նաև գաղանանոց է :

— Գաղանանոց :

— Այո՛ , ի հարկէ : Նայէ՛ մեր ոտքերուն տակ թափուած փոշիին .  
այս՝ ոսկորներու փոշի է :

Ոսկորներ՝ բացազանչեցի ես :

— Այո՛ . անգըջրհեղեղեան կենդանիներու ոսկորներ :

Ես շտապեցի դիտել . չքայքայուող հանքային նիւթերէ կազմը-  
ւած այդ մնացորդները և առանց երկար մտածելու բնորոշեցի հըս-  
կայ կենդանիներու ոսկորները , որոնք կը նմանէին չորցած ծառերու  
բուններուն :

— Ահա՛ , մասսաչուսի ներքեւի ծնօտը , ըսի , ահա՛ դիմոսերխումի  
սեղանատամիւսերը : Ա՛յ , այս աղգոսկրը կարող է պատկանիլ միայն  
այդ տեսակի ամենամեծ կենդանիին մեզաթերխումին : Այո՛ , աս իս-  
կական գաղանանոց է , որովհետեւ այս ոսկորները , կասկած չի կայ ,  
այստեղ չէին կրնար բերուած ըլլալ ջրհեղեղի միջոցաւ : Այն կենդա-  
նիները , որոնց կը պատկանին այս ոսկորները , ապրեր են այս ստո-  
րերկրեայ ծովու ափերուն , այս ծառանման բոյսերու ստուերին տակ :  
Տեսէ՛ք , ահա և ամբողջ կմախքներ : Եւ սակայն . . .

— Սակայն ի՞նչ , հարցուց հօրեղբայրս :

— Ինձի համար անբացատրելի է չորքոտանիներու զոյութիւնը այս կրանիթէ քարայրին մէջ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ կենդանական կեանքը երկրի վրայ առաջ է եկեր միայն երկրորդական մամանակաշրջանին, երբ շնորհիւ ջուրերու անզտիւթեան գոյացաւ առաջին հողը, որը փոխարինեց առաջին մամանակաշրջանի ժայռերը :

— Է՛, լաւ, Արսէյ : Տարակուսանքիդ շատ պարզ պատասխան կայ, այն, որ այս հողը անգուններու շնորհիւ կազմուեց է :

— Ինչպէ՞ս, այսպիսի խորութեան մէջ, երկրի մակերեւոյթին տակ :

— Անկասկած, այդ երեւոյթը կը բացատրուի երկրաբանական օրէնքով : Որոշ ժամանակաշրջանի մը երկիրը կազմուած էր միայն առաձգական կեղեւով, որը ձգողական օրէնքի շնորհիւ կոնտրակուած էր պարբերական տառանումներու : Շատ հաւանական է, որ այդ ժամանակ անդի ունեցեր է գետնի իջնալը և հողերու մէկ մասը իջեր է բացուած խորունկ անդունդները :

Այդ ի հարկէ կրնար կատարուել : Բայց եթէ անդրջրհեղեղեան կենդանիները ապրեր են այս ոտորերկրեայ վայրերուն մէջ, ա՞յլ կրնայ երաշխաւորել, որ այդ հրէշներէն մէկն ու մէկը չի թափառիր հիմա այս մութ անասուններուն մէջ, կամ այս սեպ ժայռերուն ետեւը :

Այս միտքը մէջս ծագելով՝ ոչ առանց սորսափի անշուշտ չորս կողմս նայեցայ, բայց ոչ մէկ կենդանի էակ չէր երեւար այդ ամայի ափերուն :

Ես քիչ մը յոգնեցի էի. ուստի նստայ հրուանդոններէն մէկուն ցցուածքին վրայ, որու ստքերուն ազմուկով կը զարնուէին ալիքները : Այդտեղէն հայեացքս կ'ընդգրկէր ամբողջ ծալխորը : Խորքը, բրգածեւ ժայռերուն մէջ կարծես տեղաւորուած էր փոքր նաւահանգիստ մը, որուն ջուրերը պաշտպանուած ըլլալով քամիէն, հանդիստ կը նիւնէին : Այստեղ շատ ազատ կրնային խարխալ նետել երկաշն նաւ մը և երկու կամ երեք միակայմ նաւեր : Կը կարծէի, թէ ահա ուր է անդէ մը առաջուսաները բացած, նաւ մը բաց ծովը դուրս կուգայ, տարուելով հարաւային քամիէն :

Բայց այդ պատրանքը շատ շուտ չքուցաւ : Մենք ի հարկէ, միակ կենդանի էակներն էինք այդ ստորերկրեայ աշխարհին : Երբեմն քամին կը դադարէր և ծովու յերկ ժայռերուն վրայ կը տիրէր անպատմելի խոր լուսթիւն : Ես կ'աշխատէի հայեացքով թափանցել հնաւոր մշուշին մէջէն պատսեւու այն վարագոյրը, որ կը ծածկէր հորիզոնի խորհրդաւոր խորքերը : Ո՞ւր կը վերջանար այս ծովը : Ո՞ւր կը սա-

նէր: Կը կարողանա՞նք արդեօք երբևիցէ նաւարկել դէպի հակառակ ափը:

Հօրեղբայրս իր կողմէ այդ մասին բնու չէր կասկածեր: Իսկ ես կը փափաքէի այդ և միեւնոյն ժամանակ երկիւղ ունէի:

Ամբողջ ժամ մը դիտելով այս հրաշալի տեսարանը, մենք ետ դարձանք աւազուտ ափով դէպի մեր քարայրը: Այնտեղ ես քնացայ խորունկ քունով, ամենատարօրինակ մտքերու ծանրութեան սակ:

## ԼԱ

Յաջորդ օրը արթնցայ բոլորովին առողջ: Մտածեցի, որ լողալը ինձի համար շատ օղտակար կ'ըլլար, ու դացի, քանի մը բոպէ սուղ-ուեցայ այդ ստորերկրեայ ծովու ջուրին մէջ:

Լողալէ յետոյ, մեծ ախորժակով նախաճաշեցի: Հանսը շատ լաւ կը պատրաստէր մեր ուտելիքը. այժմ ան բաւականաչափ ջուր և կրակ ունէր և այդպէսով կը կարողանար մեր նախաճաշը քանի մը տեսակներէ պատրաստել: Իրար ետեւէ քանի մը դաւաթ սուրճ հրամ-ցուց մեզի, և երբեք այդ հրաշալի ըմպելիքը այդքան համեղ չէր թուացեր ինձի:

— Այժմ, բաւ հօրեղբայրս, մակընթացութեան ժամն է, և պէտք է հանգամանքէն օգտուիլ ուսումնասիրելու համար այդ երևուոյթը:

— Ինչպէս, մակընթացութի՞ւն, բացաքանչեցի:

— Անկասկած:

— Մի՞թէ արեւի և լուսնի ազդեցութիւնը այդքան հեռու կը տարածուի:

— Ինչո՞ւ չէ: Մի՞թէ բոլոր մարմինները չեն ենթարկուիր ընդհանուր ձգողական օրէնքին: Ուրեմն, ջուրի այս զանգուածն ալ չի կրնար խուսափիլ ընդհանուր օրէնքէն, և դուն կը տեսնես, հակառակ անոր մակերևուոյթին վրայ ազդող մթնոլորտային ճնշումին, ան կը բարձրանայ այնպէս, ինչպէս Ատլանտեան ովկիանոսը:

Այդ միջոցին մենք արդէն դուրս եկեր էինք աւազուտ ծովափը և տեսանք, թէ ինչպէս ալիքները իրարու հասէ կուցային դէպի ափը:

— Ահա մակընթացութիւնը կ'ըսկսի, բացաքանչեցի ես:

— Այո՛ Աքսէլ և ծովափրփուրի մնացորդներէն դուն կրնաս հաշուել, որ ծովը կը բարձրանայ մօտաւորապէս տասը ոտք:

— Անհաւատալի է:

— Ո՛չ, բնական է այս:

— Ինչ ալ որ ըսենք, այս բոլորը ինձի ատրօրինակ կը թուի և

հազիւ կը հաւատամ աչքերուս: Ո՞վ կրնար երբեւիցէ մտածել, որ երկրի կեղեւին տակ գոյութիւն ունի իսկական ծով, մակընթացութեամբ և տեղատուութեամբ, քամիներով ու փոթորիկներով:

— Ինչո՞ւ չէ: Միթէ այդ հակառակ է ֆիզիքական օրէնքներուն:

— Իհարկէ ոչ, քանի որ պէտք է հրաժարիլ կեդրոնական ջերմութեան տեսակէտէն:

— Ուրեմն մինչեւ հիմա Դելիի տեսակէտը կը հաստատուի՞:

— Ակնհերե է. ոչ մէկ բան չի ժխտեր ծովերու և ցամաքներու գոյութիւնը երկրի հերսը:

— Իհարկէ, միայն թէ ոչ բնակելի:

— Այդպէս: Բայց ինչո՞ւ այս ջուրերուն մէջ չի կրնար գոյութիւն ունենալ ուէ ձուկի տեսակ:

— Ամենայն դէպս դեռ մինչեւ հիմայ ուէ ձուկ չտեսանք:

— Դէ՛հ, ինչ կայ որ, կրնանք կարթը պատրաստել և տեսնել, թէ արդեօք խայծը այստե՞՛ ալ նոյն ազդեցութիւնը կ'ունենայ, ինչպէս լուսնի տակի ջուրերուն մէջ:

— Փորձենք, Ա. քսէլ. չէ՞ որ պէտք է թափանցել այս նոր վայրերու բոլոր դադտնիքներուն:

— Բայց, հօրեղբայր. իսկպէս ո՞ւր կը գտնուինք մենք: Ես այդ դեռ չհարցուցի. հարց մը, որուն անշուշտ ձեր պարծիքները արգէն պատասխանած կ'ըլլան:

— Հորեղանական ուղղութեամբ Իսլանտայէն երեք հարիւր յիսուսուն մղոն հեռու:

— Այդքան հեռո՞ւ:

— Վտտահ եմ, որ նոյնիսկ մէկ քիլոմէթր անգամ չեմ սխալուիր:

— Իսկ կողմնացոյցը կը շարունակէ հարաւ արեւե՞լք ցոյց տալ:

— Այո՛. տասնրինը աստիճան և քառասուներկու բուլկ դէպի արեւմուտք թեքումով. ճիշդ այնպէս, ինչպէս երկրի վրայ ինչ կը վերաբերի թեքումին. հոս կը կատարուի հետաքրքիր երեւոյթ մը, որը դիտեցի ուշադրութեամբ:

— Ինչպիսի՞ երեւոյթ:

— Սլաքը, փոխանակ թեքուելու դէպի րեւեռ, ինչպէս այդ կ'ըլլայ հիւսիսային կիսագունդին մէջ, ընդհակառակը կը բարձրանայ:

— Ուրեմն, պէտք է եզրակացնել, որ մագնիսական ձգողութեան կէտը կը գտնուի երկրի մակերեւոյթին և այն կէտին մէջտեղ, ուր կը գտնուինք մենք այժմ:

— Շատ ճիշդ է, և պէտք է ենթադրել, որ եթէ մենք կը դրանք բեւեռային երկիրներուն տակ, մօտաւորապէս եօթանասուն

աստիճանի, ուրտեղ Ձէյմս Ռօսսը յայտնարեց մաքնիսական բեւեռը, ապա ուրեմն սլաքը պէտք է ուղղահայեաց կանգնի: Ուրեմն ձը-ղողութեան խորհրդաւոր կեդրոնը շատ խորունկը չի գտնուիր:

— Արդարեւ, գիտութիւնը բոլորովին ալ կասկած չունի այդ մասին:

— Իսկ ի՞նչ խորութեան վրայ կը գտնուինք:

— Մօտուորապէս երեսունհինգ մղոնի վրայ:

— Ուրեմն, ըսի ես հայեացքս քարտէզին վրայ ձգելով, մեր գըլ-խուն վրայ կը գտնուի Սկոլտիայի լեռնային մասը, ճիշդ այնտեղ, ուրտեղ Գրամպիանսի բարձր ձիւնապատ գագաթներն են:

— Այո՛, պատասխանեց բրօֆէսէօրը ծիծաղելով, քիչ մը ծանր է այդ բեռը, բայց առաստաղը հաստատուն է: Տիեզերքի մեծ ճարտարապետը զայն կառուցեր է լաւ շինանիւթէ և մարդը երբեք այդպիսի կայունութիւն չէր կրնար տալ: Ի՞նչ են կամուրջներու կամարներն ու մայր եկեղեցիներու կամարածեւ առաստաղները համեմատած այս գմբեթին, որ երեք մղոն շառուիղ ունի, և անոր տակ ազատօրէն կրնայ տարածուիլ ամբողջ ովկիանոս մը իր փոթորիկներով:

— Ո՛հ, ես երկիւղ չունիմ, որ երկինքը կ'իյնայ գլխուս: Իսկ այժմ, հօրեղբայր, ի՞նչ են ձեր ծրագիրները: Չէ՞ք մտածեր արդեօք երկրի երեսը վերադառնալու մասին:

— Վերադառնա՞լ: Բան ըսիր: Ընդհակառակը, շարունակել ճամբորդութիւնը, քանի որ ամեն ինչ այնքան լաւ կ'երթայ:

— Սակայն չեմ հասկնար, թէ ինչպէս պիտի կրնանք մտնել այս ջուրի զանգուածին տակ:

— Եւ չեմ ալ մտածեր գլխիվայր իյնալ անոր մէջ: Եթէ իրականին մէջ ովկիանոսները լիճեր են, որովհետեւ շրջապատուած են ցամաքով, ապա աւելի իրաւամբ կարելի է ենթադրել, որ այս ներքին ծովը շրջապատուած է կրանիթէ պատերով:

— Ատոր ոչ մէկ կասկած չիկայ:

— Եթէ այդպէս է, ուրեմն վստահ եմ, որ հակառակ ամիսն շոր անցքեր պիտի գտնեմ:

— Ի՞նչ երկարութիւն ունի ձեր կործիքով այս ովկիանոսը:

— Երեսուն կամ քառասուն մղոն:

— Այդպէս, ըսի ես, մտածելով սակայն, որ այդ ենթադրութիւնը կրնար և ճիշդ չըլլալ:

— Չպէտք է ժամանակ կորսնցնել, վաղն իսկ մենք ծովուն մէջ կ'ըլլանք:

Ակամայ սխտայ հայեացքով փնտռել այն նաւը, որ մեզի պիտի փոխադրէր միւս ամիս:

— Այդպէս ուրեմն, ըսի, մենք ծովուն մէջ կ'ըլլանք. բայց ո՞ւր է նաւը:

— Այս ծովը անցնելու համար կարիք չկայ նաւի, տղա՛ս, լաւ և ամուր լաստն ալ բաւակիան է:

— Լա՛ստ, բացադանչեցի, բայց լաստը շինել դիւրին չէ, և ես չեմ տեսներ...:

— Դուն չես տեսներ, Աքսէ՛լ. բայց կրնաս լսել, եթէ ականջ դնես:

— Լսե՞լ:

— Այո՛, մուրճի հարուածները քեզ կը հասկացնեն, որ Հանսն արդէն գործի է անցած:

— Հանսը լա՛ստ կը պատրաստէ:

— Այո՛:

— Ինչպէ՞ս. միթէ արդէն ծառեր է կտրեր:

— Ծառերն արդէն գետինն էին պառկած: Երթանք, պիտի տեսնես, թէ ինչպէս կ'աշխատի:

Քառորդ ժամ մը յետոյ տեսայ Հանսը, որ կ'աշխատէր փոքր նաւահանգիստը կազմող հրուանդանին միւս կողմը: Քանի մը քայլ եւս և ես արդէն քովն էի: Ինչքա՛ն զարմացայ, երբ տեսայ աւաղին վրայ կէս մը պատրաստուած լաստը, կառուցուած գերաններով: Բաղ-մաթիւ հաստ տախտակներ, ծուռ կոճղեր, զանազան տեսակի պարան-ներ թափուած էին այս ու այն կողմ: Այդ բոլորէն ամբողջ նաւա-տորմ մը կարելի էր կառուցանել:

— Հօրեղրա՛յր, բացադանչեցի, ի՞նչ ծառեր են ասոնք:

— Նղեւին, չոճի, ցարասի, հիւսիսային զանազան տեսակ ծառեր, որոնք քարացեր են ծովու ջուրի աղբեցութեան տակ:

— Մի՞թէ հնարաւոր է:

— Այո՛, ասոնք կը կոչուին բրածոյ ծառեր:

— Բայց այդ պարագային, քարի պէս կարծր ըլլալով, լաստը չի կրնար լողալ ջուրին երեսը:

— Երբեմն այդպէս կ'ըլլայ. այդ տեսակի ծառերէն քանի մը հատը կատարեալ քարացած են, իսկ ուրիշներ, ինչպէս ասոնք, նոր սկսած են քարանալ: Նայէ՛, շարունակեց հօրեղրայրս, ծով նետուով այդ թանկագին կտորներէն մէկը:

Փայտի կտորը սկիզբը կորսուեցաւ, բայց նորէն ջուրին երեսը ըարձրացաւ և սկսաւ տատանիլ ալիքներուն վրայ:

— Համոզուեցա՞ր հիմա, հարցուց հօրեղրայրս:

— Համոզուեցայ, թէեւ պարզապէս անհաւատալի է:

Միւս օրը, երեկոյեան, շնորհիւ ուղեցոյցի հմաութեան, լաստը պատրաստ էր: Անոր երկայնութիւնը 10-12 ոտք էր, իսկ լայնու-

Թիւնը 3-ն: Գերանները ուժեղ պարաններով իրարու կապուած էին և հաստատուն մակերեւոյթ էին կազմած: Երբ այդ յանկարծաշէն նաւը ջուրը իջեցուցինք, սկսաւ հանդարտ լողալ «Լիդենպրոկի ծով»ի ալիքներուն վրայ:

## ԼԲ

Օգոստոս 13ին կանուխ արթնցանք: Լաստի սարքաւորման մասերը կը կազմէին երկու երկար ձողերէ բաղկացած կայմը, առաջատակալը, որ կազմուած էր երրորդ ձողով ու մեր վերմակներէն պատրաստուած առաջատը: Բաւական պարան ունէինք: Ամեն ինչ հաստատուն էր:

Ժամը Յին բրօֆէսէօրը մեկնելու նշան տուաւ: Ուտելիքը, իրերը, գործիքները, զէնքերն ու մեծ քանակութեամբ խմելու ջուրը արդէն իրենց տեղն էին: Հանսը զեկ էր պատրաստեր, որու օգնութեամբ կարող էր լաստը ղեկավարել: Ան կանգնեցաւ զեկի՛ն մօտ, ես քանդեցի մեղի ափին հեւ կապող պարանը, առաջատը բարձրացուցինք և արագօրէն հեռացանք ափէն: Այն վայրկեանին, երբ նաւահանգիստէն դուրս կուգայինք, հօրեղբայրս ցանկալով անուն մը տալ անոր, առաջարկեց իմ անունս:

— Ծիշդը ըսեմ, ես առարկեցի թէ ուրիշ անուն մը կ'առաջարկեմ:

— Ի՞նչ անուն:

— Գրեախենի անունը: Քարտէզի վրայ «Գրեախենի նաւահանգիստը», չատ զեղեցիկ կ'ըլլայ:

— Շատ լաւ, թող ըլլայ «Գրեախենի նաւահանգիստը»:

Այդպէսով սիրելի Գրեախենիս յիշատակը կապուեցաւ մեր զարմանալի ուղեւորութեան հետ:

Քամին կը փչէր հիւսիս-արեւելքէն և մենք չափազանց մեծ աւրագութեամբ առաջ կ'երթայինք: Օդի խտութիւնը զգալիօրէն կ'աւելցնէր քամիին ոյժը, հսկայ փուռի մը նման կ'ուռցնէր առաջատը: Ժամ մը յետոյ հօրեղբայրս կրցաւ բաւական ճշգրտօրէն չափել լաստի արագութիւնը:

— Եթէ շարունակենք նաւարկել այս արագութեամբ, ըսաւ ան, մէկ օրուայ մէջ առնուաղն 30 մղոն առաջ կ'երթանք և շուտով կը հասնինք դիմացի ափը:

Զպատասխանեցի և անցայ լաստի առաջամասը:

Հիւսիսային ափը արդէն անհետացեր էր հորիզոնին ետեւը: Աչքերուս առջեւ կը տարածուէր անսահման ծովը, մեծ ամպերը իրենց

ստուերը կը ձգէին անոր մակերևոյթին վրայ: Ելեքտրական լոյսի արծաթանման ճառագայթները այս ու այնտեղ արտացոլացնելով ջուրի կաթիլներուն մէջ, կ'առաջացնէին պսպղուն կէտեր: Ռիչ յետոյ եղերքը բոլորովին չքացաւ տեսողութենէս. այլեւս ոչ մէկ նշան կար, որու միջոցաւ կարելի ըլլար որոշել լաստի շարժման արագութիւնն ու եթէ չըլլար անոր ետեւը առաջացած փրփրալի հետքը, կարելի էր կարծել, թէ լաստը չի շարժուիր:

Կէսօրուայ մօտ ալիքներու վրայ երեւցան ծովային խոտերու վիթխարի զանգուածներ: Ինծի ծանօթ են այդ վիթխարի զանգուածները: Ինչպէս նաեւ՝ այդ վիթխարի բոյսերու աճման ոյժը. բոյսեր որոնք կը տարածուին ծովու յառակը աւելի քան տասներկու հազար ոտք խորութեամբ. կը բազմանան գրեթէ չորսհարիւր մըթնոլորտ ուժի ճնշման տակ և յաճախ կ'առաջացնեն բաւական ընդարձակ ծանծաղուտներ, որոնք կը կասեցնեն նաևերու շարժումը: Բայց, ես կը կարծեմ, որ ոչ մէկ տեղ այդպէս հսկայ ծովային խոտեր չեն աճիր, ինչպէս Վիզենպրոկի ծովուն մէջ:

Մեր լաստը անցաւ երեքէն-չորս հազար ոտք երկարութեամբ տարածուող ծովասէղերու կողքէն, որոնք օձի պէս կը սողային տեսողութեան հորիզոնի այն կողմը: Հաճոյքով կը դիտէի այդ անվերջ ժապաւէնները, սպասելով, թէ շուտով անոնց վերջը կուգայ: Ժամեր անցան, բայց յոյս չարդարացաւ:

Բնութեան ինչպիսի ոյժ է, որ կ'առաջացնէ այդ բոյսերը և ի՞նչ տեսք ունէր երկիրը իր կազմաւորման առաջին դարերուն, երբ ջրամութեան ու խոնավութեան ազդեցութեան տակ անոր երեսին կը զարնէր միայն բուսական թաղաւորութիւնը:

Գիշերը վրայ հասաւ, և ինչպէս նկատեր էի նախորդ օրը, օդին մէջ լոյսի ոյժը չէր պակսեր: Բնութեան մշտական երևոյթն էր այդ որու տեսականութեան վրայ կարելի էր վստահ ըլլալ:

Ընթրիքէն վերջ ես պառկեցայ կայմին քով ու անմիջապէս քընացայ. թաղուելով անհող երազներու մէջ: Հանար անշարժ նստած էր զեկին մօտ, հետեւելով լաստի ընթացքին, թէեւ ետեւէն փչող նուազատաւոր քամիին շնորհիւ զեկավարելու կարիք չկար:

«Գրեւտիոնի նաւահանգիստէն» մեկնելուն և իվեր բրօնիէսէօր Լիզենպրոկը ինծի յանձնարարեր էր վարել «նաւային օրագիրը», անոր մէջ նշանակելով ամենափոքր գիտումները, գրի առնելով հետաքրքիր երևոյթները՝ քամիի ուղղութիւնը, լաստի առաջացման արագութիւնը, անոր անցած ճամբան, մէկ խօսքով այս սարօրինակ ուղեւորութեան բոլոր դէպքերը: Ուրեմն ես կը բաւականանամ այստեղ վերադարձել իմ ամենօրեայ գիտումները, որոնք գրի են առնուած դէպքերու ազդեցութեան տակ, որպէսզի աւելի ճիշդ հաշիւ տամ մեր նաւարկութեան մասին:

Ուրբաթ. 14 Օգոստոս: Միօրինակ հիւսիս-արեւելեան քամի: Հաս-  
տը արագ կը յողայ ուղիղ դիժով: Ծովափը մնացեր է մեր հասեր, ե-  
րեսուն մղոն հեռաւորութեան վրայ: Հորիզոնէն ոչինչ չերեւար: Լոյ-  
սի ոյժը չի պակսիր: Հրաշալի եղանակ է. այսինքն ամպերը շատ  
բարձր են, խիտ չեն և կը լողան հալող արծաթի պէս սպիտակ մըթ-  
նոլորտին մէջ: Ձերմաչափը +32<sup>0</sup> աստիճան ցոյց կուտայ Յելսինուսով:

Հանար կէսօրին թելին ծայրը կարթ կը կապէ, և որպէս խոյժ  
վրան միսի կտոր մը անցնելով ծովը կը ձգէ: Երկու ժամուան մէջ բան  
մը չորսաց: Արդեօք այս ջուրերը անրնա՞կ են: Ոչ: Թելը կը ցնցուի  
եւ Հանար ջուրէն կը հանէ ձուկ մը, որ ուժով կը թրպտայ:

— Ձո՛ւկ, բացապանչեց հօրեղբայրս:

— Թառափ է, ըսի, փոքր թառափ:

Բրօֆէնէօրը ուշադրութեամբ կը դիտէր ձուկը և համակարծիք  
չէր ինձի հետ: Այդ ձկանն պուլսը տափակ ու կլոր էր, մարմնի առա-  
ջամասը ծածկուած էր ոսկրային թերթիկներով. բերանը ակոաներ  
չկային. բաւական զարդացած լողաթևերը փակած էին անպօչ մարմ-  
նին: Այս կենդանին անկասկած կը պատկանէր այն տեսակին. որուն  
ընազէտները կոչեր են թառափ, բայց այս անկէ կը տարբերի աչքի  
ինկող նշաններով: Հօրեղբայրս չէր սխալած և կարճ հետազօտութենէ  
յետոյ ըսաւ.

— Այս ձուկը կը պատկանի ընտանիքի մը, որ անհետացած է  
քանի մը դար առաջ. անոր քարացած մնացորդները կարելի է գըտ-  
նել փոխանցման շրջանի հողերուն մէջ:

— Ինչպէ՛ս, ըսի եւ, ուրեմն մենք բռնեք ենք առաջին ծովերու  
ընակիչներէն մէ՞կը:

— Այո, պատասխանեց հօրեղբայրս, շարունակելով դիտել ձուկը,  
և դուն կը տեսնես, որ այս բրածոյ ձուկերը ոչ մէկ նմանութիւն  
չունին ներկայ տեսակներուն հետ: Այսպէս կենդանի մը ձեռք ձգելը  
ընազէտի համար իսկական բախտաւորութիւն է:

— Բայց ո՞ր ընտանիքին կը պատկանի այս:

— Գանօիդեանց դասին ցեֆալասպիսներու ընտանիքին. իսկ տե-  
սակը...

— Ո՞ր տեսակին:

— Փղերիֆդիսներու տեսակին. կրնամ այդ մասին երդում ընել:  
Բայց այս ձուկը այնպիսի առանձնայատկութիւն ունի, որ ինչպէս  
կ'ըսեն, կ'ապրի միայն ստորերկրեայ ջուրերուն մէջ:

— Ի՞նչ առանձնայատկութիւն:

— Այս ձուկը կոյր է:

— Կո՞յր:

Կը նայիմ. իսկապէս շատ ճիշդ է: Բայց գուցէ բացառիկ զէպք

է այս: Կրկին կը ձգենք կարթը: Այս ծովը, ինչպէս կ'երեւայ, լեցուն է ձուկերով, որովհետեւ երկու ժամուայ ընթացքին կ'որսանք մեծ քանակութեամբ փղերիքիսնեք, ինչպէս նաեւ դիփղերիսնեքու անհետացած ընտանիքին պատկանող ուրիշ ձուկեր, որոնց տեսակը, սակայն, հորեղբայրս չկրցաւ որոշել: Բոլոր այս ձուկերն ալ զուրկ էին աչքերէ: Այս անսպասելի ձկնորսութիւնը մեծ չափով աւելցուց մեր կենսամթերքի պաշարը:

Ուրեմն ինչպէս կ'երեւայ, հաստատ կարելի է ենթադրել, որ այս ծովուն մէջ կան միայն քրածոյ տեսակներ: Գուցէ կը պատահինք նաեւ այն սողուններէն մի քանիին, որոնց գիտութիւնը կրցեր է վերականգնել ոսկորներու և կրճիկներու մնացորդներուն միջոցաւ:

Կը վերցնեմ հեռագրիտակն ու ծովը կը դիտեմ: Ամեն տեղ ամալուծիւն է: Անկասկած, մենք դեռ շատ հեռու ենք ծովափէն: Կը նայիմ օդին: Ինչու անմահ կիւլէիի վերականգնած թռչուններէն մէկ քանին չէին թռչիր, իրենց թեւերով ճեղքելով մթնոլորտի այս ծանր շերտերը: Ձուկերը անոնց համար առատ կեր էին: Կը դիտէի անհուն տարածութիւնը, սակայն մթնոլորտը նոյնքան անբնակ էր, որքան ծովափը:

Բայց և այնպէս երեւակայութիւնս դիւ կը տանէր հրաշալի ենթադրութիւններու աշխարհը: Կ'երսողէի աչքերս բաց: Ինծի կը թուէր, թէ ջուրի երեսին կը տեսնեմ անդրջրհեղեղեան վիթխարի կրեաներ, լողացող կղզեակներու պէս. թէ մտայլ փերուէն վրայ կը թափառին նախնադարեան հսկայ կաթնասունները — Լիփոսերները, որոնց գանր են Պրազիլեայի քարայրներուն մէջ և Մերիկոսերներ, որոնք եկեր են Սիպրիի սառուցեալ շրջաններէն: Կը կարծեմ, թէ հեռուն, ժայռերուն ետեւը թաքնուած է հաստամորթ Լոֆիոնդոնը, այդ վիթխարի գետնակինճը, որ պատրաստ էր որսը խլելու Անուպլոսերիումի ձեռքէն. վերջինս սարօրինակ կենդանի մըն է, խառնուրդ ուղեղջրերի, ձիու, գետաձիւի և ուղաի: Հսկայ մասնողոնքը կը շարժէ կրնճիթը եւ ժանիքներով կը փշրէ ժայռերը, իսկ մեղաթերիումը հողը կը փորէ իր խոշոր թաթերով և մոնչիւնով թնդացնելով կրանիթէ ալառածները. աւելի բարձրը սրածայր գագաթներուն վրայ կը մառքըլցի երկրագունդի վրայ առաջին անգամ յայնուող կապիկը՝ պրոնոպիլիկը. աւելի՛ բարձր, խիտ մթնոլորտին մէջ ջղջիկի պէս կը սըլանայ թեւաւոր ձևքով փղերոզակաիլը: Վերջապէս օդի ամենաբարձր շերտերուն մէջ՝ հսկայական թռչուններ, կազուարէն աւելի՛ հըզօր, ջայլամէն աւելի մեծ, կը բանան իրենց լայն թեւերը և գլխով կը զարնուին կրանիթէ կամարի պատերուն:

Ամբողջ այս քարացած աշխարհը կը վերականգանանայ երեւակայութեանս մէջ: Ես կը փոխադրուեմ աշխարհի կազմաւորման օրերը,

մարդուն յայտնուելէն դեռ շատ առաջ, երբ լրիւ չձեւաւորուած երկիրը դեռեւս պայմաններ չէր ստեղծեր անոր գոյութեան համար, երբ ընդհանրապէս դեռ կենդանի էակները չէին ի յայտ եկեր: Կ'անհետանան կաթնասունները, ապա թռչունները. երկրորդական ժամանակաշրջանի սողունները, վերջապէս ձուկերը, պատենաւորները, կակղամորթերը, յօդաւորները: Փոխանցման շրջանի կենդանիները, իրենց հերթին, անէութեան մէջ կը սուղուին: Գոյութիւն չունին ոչ տարուայ եզանակները, ոչ կլիմաները. երկրագունդի սեփական ջերմութիւնը անընդհատ կ'աւելնայ և կը գերազանցէ արեւի ջերմութիւնը: Բուսականութիւնը կ'աճի անսահման չափերով. ստուերի պէս կը թափառիմ ծառանման ձարխոտերուն մէջ, անվճռական քայլերով կոխկոտելով աւազահողը, կը յենուիմ վիթխարի փշատերեւ ծառերու բուններուն և կը քնանամ հարիւր օտք բարձրութեամբ լիկոբողներու ստուերին տակ:

Դարերը կ'անցնին օրերու նման. կը վերապրիմ երկրի կերպարանափոխութեան շրջանները: Կ'անհետանան բոյսերը, կրանիթէ ժայռերը կը կորսնցնեն իրենց կարծրութիւնը. սաստիկ ջերմութեան ազդեցութեան տակ հեղուկները կը փոխարինեն կարծր նիւթերուն: Ձուրբերը կը հասնին երկրագունդի երեսին. անոնք կ'եռան և կը զուրշխանան. դուրշին կը ծածկէ երկիրը, որ հետզհետէ կ'ընդունի կալսին ձեւ, արեւու պէս մեծ ու փայլուն:

Այդ միգամածի կեդրոնը դունդ մը, որ մէկ միլիոն չորսհարիւր հազար անգամ աւելի մեծ է քան երկիրը, որմէ հետագային պէտք է կազմուի մեր երկրագունտը: Այսպէս՝ ինքզինքս կ'ողամ տարուած միջմոլորակային տարածութեան մէջ:

Ի՞նչ երազ է այս. ո՞ր կը տանի ան գիտ: Տենդոտ ձեռքս թուղթին վրայ կը խզմզէ այս տարօրինակ մանրամասնութիւնները: Ամեն բան մոռցեր եմ, և բրօֆէսէօրը, և ուղղեցոյցը. և՛ լստալ:

— Ի՞նչ պատահեցաւ քեզի, հարցուց հօրեղբայրս:

Լայն աչքերս սեւեռուած են անոր վրայ: առանց զինքը տեսնելու:

— Ձգոյշ կեցիր, Ա.քսէլ, ծովը կ'իյնաս:

Ճիշդ այդ վայրկեանին Հանսի ուժեղ ձեռքը զրկեց զիս: Առանց այդ օգնութեան երազներովս տարուած, պիտի իյնայի ալիքներուն մէջ:

— Խեղագարուե՞ր է, ինչ է, բացառանչեց բրօֆէսէօրը:

— Ի՞նչ է պատահեր, հարցուցի վերջապէս, ուշքի գալով:

— Չրլլայ թէ հիւանդ ես:

— Ո՛չ, վայկեան մը գլուխս զարձաւ: Հիմա լաւ եմ:

— Այս՛, քամին բարեյաջող է, ծովը հանդարտ: Մենք արագ առաջ կ'երթանք, ու եթէ ենթադրութիւններուս մէջ չեմ սխալիր, շուտով եզերքը կը հասնինք:

Այդ խօսքերուն վրայ ոտքի ելայ ու զխօսցի հորիզոնը, բայց ջուրի գիծը դեռ ևս ձուլուած է երկնակամարի գիծին հետ:

14.

Շաբաթ, Օգոստոս 15: Ծովը առաջուայ պէս միօրինակ է: Յամաքը չերեւար: Հորիզոնը չափազանց հեռու կը թուի:

Գլուխս դեռ կը ցաւի ծանր երազներու ազդեցութեան տակ: Հօրեղբայրս ոչինչ կ'երազէ, բայց արամազրութիւնը լաւ չէ ան հեռագիրտակով կը նայի ամեն կողմ և ձեռքերը կը խաչածեւէ բարկացած դէմքով: Կը նկատեմ, որ Բրօֆէսէօր Լիդենայրովը արամազիր է նորէն նախկին անհամբեր մարդը դատնալու և այդ վաստը կը նշեմ օրագրիս մէջ: Անկէ մարդկային զգացումի քանի մը կայծ դուրս կործելու համար անհրաժեշտ էին այն վտանգներն ու տանջանքները, որոնց ենթարկուեցայ, բայց առողջանալէս յետոյ ան կրկին առաջուայ մարդը դարձաւ:

— Դուք անհանգիստ կ'երեւաք, սիրելի հօրեղբայր, ըսի, տեսնելով, որ ան յաճախ աչքերուն կը տանի հեռագիրտակը:

— Անհանգիստ. ո՛չ:

— Ուրեմն անհամբեր էք դարձեր:

— Կրնայ պատահիլ...

— Բայց և այնպէս մենք արաք առաջ կ'երթանք:

— Ի՞նչ նշանակութիւն ունի այդ: Արագութիւնը չէ որ նուազ է, այլ ծովը չափազանց մեծ:

Այստեղ յիշեցի, որ բրօֆէսէօրը մեկնելէ առաջ հաշուեր էր, թէ այս ստորերկրեայ ծովու երկարութիւնը երեսուն մղոն կ'ըլլար: Բայց մենք արդէն երեք անգամ աւելի ճամբայ էինք անցեր, և հարուստին ծովափը դեռ չէր երեւար:

— Մենք կ'առաջանանք, բայց բոլորովին չենք իջներ, շարունակեց բրօֆէսէօրը: Ժամանակ միայն կը կորսնցնենք, ես հոս չեմ եկեր, այս լճակին վրայ զրօսական պտոյտ կատարելու:

Այսպէս, ան մեր ճամբորդութիւնը զրօսանք կը համարէր, իսկ ծովը՝ լճակ:

— Բայց, ըսի ես, քանի որ մենք Սակնուսսեմի ցոյց տուած ճամբին կը հետեւինք...

-- Ծիշդ այդ է հարցը: Մի՞թէ հետեւած ենք այդ ուղիին: Սակնուսսեմը արդեօք հանդիպած է այս ջուրի տարածութեան: Այն գետակը, որ զայն իբրև ուղեցոյց ընդունեցինք, մի՞թէ մեզի ճամբէն չչեղեց:

— Ամենայն դէպս զղջալու ոչ մէկ պատճառ ունինք, որ հոս կը գտնուինք: Այս տեսարանը սքանչելի է, և...

— Հարցը գեղեցիկ տեսարաններ դիտելու մէջ չէ: Ես առաջագրած եմ որոշ նպատակ մը և պէտք է հասնիմ անոր: Ուրեմն, գեղեցկութեան մասին չխօսիս ինձի հետ:

Ես նկատի առի այդ և թոյլ տուի, որ բրօֆէսէօրը անհամբերութենէն շրթունքները խածնէ: Երեկոյեան ժամը վեցին Հանսը իր վարձքը պահանջեց և իրեն վճառուեցաւ իր երեք բիկստալէրը:

Կիրակի, 16 Օգոստոս: Ոչ մէկ նորութիւն: Նոյն եղանակը: Քամին կ'ըսկսի ցրտել: Արթննալուս առաջին գործս եղաւ լոյսին ուժը որոշել: Ես ամեն վայրկեան կը վախնայի, թէ չըլլայ որ ելեքտրական լոյսը պակսի և վերջ ի վերջոյ բոլորովին խաւարի: Բայց ոչ, լաստին ստուերը յստակ կ'երեւայ ջուրին վրայ:

Իսկապէս այս ծովը անսահման է, Հաւանական է, որ ան նոյնքան ընդարձակ է որքան Միջերկրական ծովը, կամ նոյնիսկ Ատլանտեան օվկիանոսը: Եւ ինչո՞ւ չէ, հօրեղբայրս շուտ-շուտ կը չափէ անոր խորութիւնը. պարանին ծայրը կը կապէ ամենածանր քլունգներէն մէկը և կը նետէ մօտ երեք հարիւր մեթր խորութեան մէջ: Ծանրութիւնը յատակը չի հասնիր: Մեծ դժուարութեամբ վեր կը քաշենք զայն: Երբ քլունգը վերջապէս լաստին վրայ կը հանենք, Հանսը ինձի ցոյց կու տայ անոր վրայ երեւցող խիստ ճմլուած տեղեր: Կարծես այս երկաթի կտորը ուժգին կերպով սեղմուած ըլլայ երկու կարծր մարմիններու միջև: կը նայիմ որսորդին:

— Tänder, կ'ըսէ ան:

Բան մը չեմ հասկնար և կը նայիմ հօրեղբօրս, որ բոլորովին թաղուած է խոհերու մէջ: Չեմ համարձակիր անհանգստացնել և այդ պատճառով ալ նորէն կը դիմեմ իսլանտացիին: Ան քանի մը անգամ բերանը բանալով ու գոցելով կը բացատրէ իր միտքը:

— Ատամներ, կ'ըսեմ ես ապշած, ուշադրութեամբ դիտելով երկաթէ ձողը: Այո, կասկած չիկայ, որ ատամի հետքեր կ'երեւան մետաղին վրայ: Ծնօտները, որոնց վրայ հաստատուած են այդ ատամները, չափազանց ուժեղ պէտք է ըլլան: Մի՞թէ հոս, ջուրին տակը, մեծ խորութեան մէջ կը շարժուի անհետացած տեսակներու պատկանող հրէշներէն մէկը, նոր շնածուկէն սուղի գիշակեր է և կէտ ձուկէն աւելի վայրագ է: Հայեացքս չեմ կրնար հեռացնել կիսով չափ կրճուած երկաթէ ձողէն: Մի՞թէ անցեալ գիշերուայ երազս կրնայ իրականութիւն դառնալ: Այս մտածումները ամբողջ օրը կ'անհանգստացնեն զիս, և յուզումս հազիւ կը հանդարտի քանի մը ժամ քնանալէ ետք:

Երկուշաբթի, Օգոստոս 17: Ես կ'աշխատիմ յիշել այդ անդրջրհեղեղեան կենդանիներուն յատուկ քննազգները, կենդանիներ, որոնք

յաջորդելով կակղամորթներուն, պատեանաւորներուն ու ձուկերուն նախորդեցին կաթնասուններու երեւալը: Այն ատեն աշխարհը սողուններուն կը պատկանէր: Այդ հրէշները կը տիրապետէին երկրորդական ժամանակաշրջանի ծովերուն: Բնութիւնը անոնց պարզեւած էր ամենակատարեալ կազմը: Ինչպիսի վիթխարի կազմուածք, ինչպիսի սննդաւատալի ոյժ: Ժամանակակից ամենամեծ և ամենասոսկալի սողունները — ալիգատորներն ու կոկորդիլոսները — նախնական ժամանակաշրջանի իրենց նախահայրերու ամենաթոյլ յաջորդներն են միայն:

Ես կը դողամ այն մտածումէն, թէ այդ հրէշները կրնան երեւան գալ: Ոչ մէկ մարդկային աչք զանոնք չէ տեսած կենդանի վիճակի մէջ: Անոնք երկրագունտին վրայ երեւցած են մարդէն հարիւր հազարաւոր տարիներ առաջ, բայց անոնց քարացած կմախքները, որոնք գտնուած են կաւային կրահողին մէջ, հնարաւորութիւն տուին վերակազմելու անոնց կազմախօսական կառուցուածքը և պատկերացնելու անոնց վիթխարի շափերը:

Համպուրկի թանգարանին մէջ ես տեսած եմ այդ սողուններէն մէկուն կմախքը, որուն երկարութիւնը երեսուն ոտքի կը հասնէր: Միթէ ինձի, երկրի բնակիչիս, վիճակուած էր դէմ առ դէմ գրանուելու անգրջրհեղեղեան ընտանիքներէն մէկուն ներկայացուցիչին հետ: Ոչ, այդ անկարելի է: Բայց և այնպէս հզօր ատամներուն հետքերը մնացած էին քլունդին վրայ և այդ հետքերէն կարելի էր եզրակացնել, թէ այդ ատամները կոնսձեւ էին կոկորդիլոսի ատամնակուն պէս:

Աչքերս սոսկումով կը յառին ծովուն, վախնալով թէ յանկարծ տեղէ մը դուրս կը թռի ընդծովեայ քարայրներու բնակիչներէն մէկն ու մէկը, կարծես բրօֆէսէօր Լիդենպրոկն ալ նոյն բանի մասին կը մտածէ, թէ և կրնայ ըլլալ որ իմ զգացած վախս չզգար, որովհետև քլունդը դիտելէ յետոյ, նորէն աչքերը կը յառէ սվիխանոսին:

«Սառանան տանի, կ'ըսեմ ես ինձի, ո՞ւրկէ գլխուն փչեց խորութիւնը շափել: Գուցէ և վրդովեց այդ հրէշներէն մէկը ու մէկուն հանդիստը և չըլլայ թէ մենք յարձակման ենթարկուինք մեր ուղեւորութեան միջոցին...»:

Ակնարկ մը կը նետեմ գէնքերուն վրայ ու կը տեսնեմ, որ անոնք լաւ վիճակի մէջ են. հօրեղբայրս կը նկատէ այդ և հաւանութեան նշան կ'ընէ: Ջուրին երեսը յայտնուած ուժգին շարժումներ ցոյց կու տան, որ խոր շերտերու մէջ անհանգստութիւն կը տիրէ: Վըտանգը կը մօտենայ: Պէտք է զգուշ ըլլալ:

Երեքաբքի, Օգոստոս 18: Վրայ կը հասնի երեկոն, կամ տեղի ճիշդ այն պահը, երբ քունը կը ճնշէ մեր կոսկերը. որովհետև այս

ով կիանոսին վրայ գիշեր չիկայ ու անողոք լոյսը անխնայ կը յոգնեցնէ մեր աչքերը. կարծես բեւեռային ծովերու արեւի ճառագայթներուն տակ կը նաւարկենք: Հանսը զեկի մօտ է: Մինչ ան կը հսկէ, ես կը քնանամ:

Երկու ժամ յետոյ կ'արթննամ ու մեղ ցնցումէնս լաստը աննկարագրելի ուժգնութեամբ կը բարձրանայ ալիքներուն վրայ և մէկդի կը շարտուի քառասուն մեթր հեռաւորութեան վրայ:

— Ի՞նչ պատահեցաւ, կը հարցնէ հօրեղբայրս, մի՞թէ ծանծաղուտի դարնուեցանք:

Հանսը մատով ցոյց կու տայ մօտ չորս հարիւր մեթր հեռաւորութեան վրայ երեւցող սև զանգուածը, որ մերթ կը բարձրանար, մերթ կը սուղուէր ջուրին տակ: Ես անոր կը նայիմ ու կը բացազանչեմ.

— Վիթխարի ծովախոզ է այդ:

— Այո, կ'ըսէ հօրեղբայրս, և ահա հոն ծովային մողէզը անսովոր մեծութեամբ:

— Իսկ հոն՝ աւելի հեռուն հրէշային կոկորդիլոս մը: Տեսէք անոր խոշոր ծնօտն ու ատամներուն շարքը, որոնցմով զինուած է: Ա՛հ, անհետացաւ:

— Կէտը, կէտը, կը բացազանչէ բրօֆէսէօրը: Կը տեսնեմ անոր վիթխարի լողակները: Տի՛ս, անոր ռունգերէն դուրս ժայթքող ջուրի սլունները:

Իսկապէս, ջուրի երկու հսկակայտկան սիւներ կը ժայթքէին ծովուն վրայ, հասնելով բաւական մեծ բարձրութեան: Մենք ապշած ու վարհուրած էինք, տեսնելով ծովային հրէշներու այդ խումբը: Անոնք անբնական մեծութիւն ունէին և անոնցմէ ամենափոքրը կրնար ծնօտի մէկ հարուածով ջարդուփշուր ընել մեր լաստը: Հանսը ուղեց փոխել լաստին ուղղութիւնը, այդ վտանգաւոր մօտիկութենէն ազատելու համար, բայց միւս կողմը նկատեցինք ոչ նուազ վտանգաւոր թշնամիներ — քառասուն ոտք լայնութեամբ կրէայ մը և երեսուն ոտք երկարութեամբ օձ մը, որ իր վիթխարի գլուխը ալիքներէն վեր կը բարձրացնէր:

Փախուստ տալ անկարելի էր: Հրէշները կը մօտենային. անոնք կը պտըտէին լաստին շուրջը այնպիսի արագութեամբ, որ ճեպընթաց գնացքն անգամ չէր կրնար հասնիլ անոնց. անոնք կը պտըտկէին լաստին շուրջը: Վերցուցի հրացանս: Բայց ի՞նչ կրնար ընել դնդակը այն հաստ թևիներուն, որոնցմով ծածկուած էր այդ կենդանիներուն մարմինը:

Սարսափէն ստուած էինք: Անոնք տրդէն մօտեցած էին: Մէկ կողմէն կոկորդիլոսը, միւս կողմէն օձը, միւսները անհետացած էին:

Ես կը պատրաստուիմ կրակել: Հանսը մէկ նշանով կը կեցնէ զիս: Երկու հրէշները կ'անցնին լաստի հարիւր մեթր հեռուէն, կը յարձակին իրարու վրայ և կատաղութենէն մեզի չեն նկատեր: Լաստէն երկու հարիւր մեթր հեռաւորութեան վրայ կ'ըսկսի կռիւր:

Մենք յստակ կը տեսնենք իրարու վրայ յարձակող երկու հրէշները: Բայց ինձի կը թուի, թէ հիմա ուրիշ կենդանիներ եւս կու գան մասնակցելու այս պայքարին: Ծովախոզը, կէտը, մողէզը, կրէան — կ'երեւան մէկը միւսին ետեւէն: Կը մատնանչեմ Հանսին: Ան բացասարար գլուխը կը շարժէ:

— Trwa, կ'ըսէ:

— Ի՞նչպէս, երկո՞ւ. կը կարծէ, թէ միայն երկո՞ւ կենդանի... .

— Ան իրաւունք ունի, բացառանչեց հօրեղբայրս, որ հեռագիտակը աչքէն չէր հեռացներ:

— Չէ', չի կրնար ըլլալ:

— Այո: Այս հրէշներէն մէկը ծովախոզի դունչ ունի, մողէզի գլուխ, կոկորդիլոսի ատամներ, այդ պատճառով ալ մենք խաբուեցանք: Անդրջրհեղեղեան սողուններու մէջ ամենասարսափելին է այդ և կը կոչուի իխտիոզավր:

— Իսկ մի՞ւսը:

— Միւսը օձ է՝ պաշտպանուած կրէայի պատեանի մէջ, առաջինին սոսկալի թշնամին — պլեդիոզավր:

Հանսը չէր սխալեր: Երկու հրէշներ էին միայն, որ կը խռովէին ծովու հանդարտութիւնը. իմ աչքիս առջեւ նախնական ծովերու երկու սողուններն էին: Կը տեսնէի իխտիոզավրի արիւնալից աչքերը՝ մարդկային զլխու մեծութեամբ: Բնութիւնը զայն օժտած էր չափազանց ուժգին տեսողական գործարանով, ընդունակ՝ դիմանալու ծովու խորքերուն ջրերու շերտերու ճնշման: Անոր երկարութիւնը կը հասնի հարիւր ոտքի, և մեծութեան մասին գաղափար կը կազմեմ, երբ ան ալիքներու տակէն կը բարձրացնէ իր պոչին ուղղահայեաց լողակները: Անոր վիթխարի ծնօտները, ըստ բնագէտներուն, ունին ոչ պակաս, քան հարիւրութսուն ատամներ:

Պլեդիոզավրը գլանաձեւ մարմնով օձ մըն է, կարճ պոչով, ունի թիակաձեւ թաթեր: Մարմինը ամբողջութեամբ ծածկուած է պատեանով, իսկ իր ճկուն կարապի վիզը կրնայ բարձրացնել երեսուն ոտք ջուրէն դուրս:

Այդ հրէշները կը կռուին սոսկալի կատաղութեամբ: Անոնք կը բարձրացնեն ջուրի իսկական լեռներ, և մեր լաստը դառնալու վտանգի մէջ է: Երկու զազանները այնպէս իրարու փաթթուած են, որ զանոնք իրարմէ չեմ կրնար զանազանել: Յաղթողի կատաղութենէն ամեն ինչ կարելի է սպասել:

Կ'անցնի ժամ մը, երկու ժամ, իսկ կռիւը կը շարունակուի նոյն կատաղութեամբ: Կռուողները մէ'կ կը մօտենան լաստին, մէ'կ կը հեռանան անկէ: Մենք անշարժ ենք, կրակելու պատրաստ:

Յանկարծ երկուքն ալ կը խորասուզուին ալիքներուն տակ: Մի՞թէ կռիւը ծովուն յատակն է վերջանալու: Բայց անսպասելիօրէն ջուրին երեսը կ'երեւայ վիթխարի գլուխ մը — պլեզիոզավրին գլուխը: Հրէշը մահացու վիրաւորուած է: Չեմ տեսներ անոր վիթխարի պատեանը: Միայն երկար վիզը կը բարձրանայ ու կ'իջնէ, նորէն կը ծռի, կը դալարուի, ալիքներուն կը զարնուի հսկայ մտրակի պէս ու կը կծկուի կտրատուած որդի նման: Ջուրը կը ցայտէ մեծ հեռաւորութեան վրայ ու կը կուրացնէ մեզի: Բայց շուտով հսկայական սողունին հոգեվարքը կը մօտենայ իր վախճանին, շարժումները կը թուլնան, կծկումները կ'ընդհատուին և օձին երկար դիակը կը տարածուի ինչպէս անշարժ զանգուած ծովու խաղաղած ալիքներուն վրայ:

Իսկ իխտիոզավրը, արդեօք ան կը վերադառնա՞յ իր քարայրը, թէ նորէն կը յայտնուի ծովուն երեսը:

## ԼԴ.

Չորեքշաբթի, 19 Օգոստոս: Բարեբախտաբար ուժդին փչող քամին մեզի հնարաւորութիւն կու տայ շտապ հեռանալու կռուի դաշտէն: Հանսը ամբողջ ժամանակ ղեկի մօտ է: Հօրեղբայրս, որ այդ պայքարի անցուդարձերու ընթացքին պահ մը լքած էր զինք զրազնցնող մտածումները, նորէն սկսաւ անհամբեր կերպով դիտել ծովը:

Ուղեւորութիւնը կը վերադառնայ իր տխուր միօրինակութեան, սակայն այդ միօրինակութիւնը կը գերադասէի երեկուայ վտանգներէն:

Հինգշաբթի, 20 Օգոստոս: Բամին հիւսիս-արեւելքէն է. բաւական անհաւասար: Օրը տաք է: Մենք պ'առաջանանք մէկ ժամուայ մէջ երեքուկէ մզոն արագութեամբ: Կէսօրուան մօտ շատ հեռուն աղմուկ մը կը լսուի: Ես հոս միայն փաստը կը նշեմ, առանց կարենալ քացատրութիւն տալու: Այդ անընդհատ մռնչիւն մըն է:

— Հեռուն, կ'ըսէ քրօֆէսէօրը, ալիքներ կ'երեւի կը զարնուին ժայռերուն կամ որեւէ կղզիակին:

Հանսը կը բարձրանայ կայմին դագաթը, բայց ժայռ մը անգամ չի տեսներ: Ովկիանոսը ուղիղ կը տարածուի մինչև հորիզոնի դիժը:

Կ'անցնի երեք ժամ: Կը թուայ թէ աղմուկը հեռաւոր ջրվեժէ մը կու գայ: Այս կարծիքս կը յայտնեմ հօրեղբօրս, բայց ան գլուխը կը շարժէ: Սակայն համոզուած եմ որ չեմ սխալիր: Արդեօք մենք կ'երթանք դէպի ոեւէ սահանք, որ կրնայ մեզի անդունդին խորը

նետել: Թերևս իջնելու այդ ձեւը հաճելի է քրոֆէսէօրին, քանի որ շատ նման է ուղղահայեաց վայրէջքի, իսկ ես...

Ամենայն դէպս, մեզմէ քանի մը մղոն հեռաւորութեան վրայ, քամիի ուղղութեամբ ինչ որ աղմկալի բան մը կը կատարուէր, որովհետեւ մոնչիւնը այժմ աւելի ուժեղ կը լսուէր: Ուրկէ՞ էր այդ, երկինքէն թէ ովկիանոսէն:

Հայեացքս կ'ուղղեմ օդէն կախուած ամպերուն և կ'աշխատիմ չափել անոնց խորութիւնը: Երկինքը հանդարտ է, ամպերը կիտուած են երկնամարի ամենաբարձր կէտին, անշարժ կը թուին և կը կորսուին լոյսի վառ ճառագայթներուն մէջ: Երեւոյթի պատճառը պէտք է ուրեմն ուրիշ տեղ փնտռել: Ես կը դիտեմ յստակ ու անամպ հորիզոնը: Անոր տեսքը ոչ մէկ փոփոխութիւն չէ կրած: Բայց եթէ աղմուկը ջրվէժէն կու գայ, եթէ այս ծովը կը թափուի աւելի ցած աւաղանի մը մէջ, եթէ դղրդիւնը կ'առաջանայ ջուրի զանգուածի թափուելէն, ապա՝ ջուրի հոսանքը պէտք է աւելի սաստկանայ, և անոր աճող արագութիւնը ինծի հնարաւորութիւն կու տայ չափելու մեզի սպառնացող վտանգին մեծութիւնը: Կը դիտեմ հոսանքը: Ան բոլորովին աննկատելի է:

Ժամը չորսին մօտ Հանսը ոտքի կը կանգնի, կրկին կը բարձրանայ կայմին վրայ և այն տեղէն կը դիտէ ամբողջ կիսաշրջանակը, որ ովկիանոս մը կը կազմէ լաստին շուրջը: Անոր դէմքը ոչ մէկ զարմանք չարտայայտեր, բայց անոր հայեացքը սեւեռուած է կէտի մը:

— Անպայման բան մը տեսաւ, կ'ըսէ հօրեղբայրս:

— Կը կարծեմ:

— Հանսը ցած կ'իջնայ, մատով հարաւային կողմը ցոյց տալով կ'ըսէ.

— Der nere:

— Այնտեղ, կը կրկնէ հօրեղբայրս և վերցնելով հեռադիտակը, կը դիտէ ամբողջ վայրկեանէ մը, որ ինծի անվերջ կը թուի:

— Այո՛, այո՛, կը բացագանչէ ան:

— Ի՞նչ կը տեսնէք:

— Հսկայական ջուրի սիւն մը կը բարձրանայ ծովուն վրայ:

— Կրկին ծովային հրէ՞ջ մը:

— Թերեւս:

— Ուրեմն դէպի արեւմուտք ուղղուինք. չէ՞ որ մեզի յայտնի է թէ ինչքան վտանգաւոր է հանդիպիլ այդ անդրջրհեղեղեան հրէշնորուն:

— Շարունակօնք նոյն ուղղութեամբ, կը պատասխանէ հօրեղբայրս:

Ես կը նայիմ Հանսին, բայց անդրդուելի կերպով զեկը կը կուսավարէ:

Սակայն եթէ այդքան հեռաւորութեան վրայ, որ առնուազն տասներկու մղոն կ'ըլլայ, կարելի է որոշել ջուրի վեր ցայտող սիւնը, ուրեմն այդ առաջացնող կենդանին պէտք է գերընական մեծութիւն ունենար: Ամենատարրական զգուշութիւնը կը պահանջէր փախչիլ այդ վտանգէն. բայց մինք զգուշութեան համար չէ, որ եկած ենք այստեղ: Այդ պատճառով ալ առաջ կ'երթանք: Որքան կը մօտենանք, այնքան ջրասիւնը կը մեծնայ: Ինչպիսի հրէշ մը պէտք է ըլլայ ան, որ կարողանայ մէջը ընդունիլ այդքան քանակութեամբ ջուր և անընդհատ դուրս ժայթքէ:

Երիկոսան ժամը նօթին հազիւ երկու մղոն հեռու ենք անկէ: Անոր սեւին տուող, սարի պէս վիթխարի մարմինը կղզեակի նման պառկած է ծովուն վրայ: Յնորք է, թէ երկիւղի հետեւանք, բայց ինծի կը թուի թէ անոր երկարութիւնը երկու հարիւր մեթրէն աւելի է: Կէտաձուկերու ո՞ր տեսակին կը պատկանի այդ կենդանին, որու գոյութիւնը չեն գուշակեր ոչ կիւլիէն, ոչ Բլիւմբարսը: Անիկա անշարժ պառկած է. կարծես քնացած ըլլայ: Ինչպէս կ'երեւայ, ծովը չի կրնար զինքը բարձրացնել և միայն ալիքները կը զարնուին անոր կողերուն: Զրասիւնը, բարձրանալով հինգ հարիւր ոտք կը թափուի խլացուցիչ աղմուկով: Մենք խելագարի պէս կ'առաջանանք դէպի այդ վիթխարի զանգուածը, որուն հարիւր կէտաձուկ չէր բաւեր իրեւ օրական սնունդ:

Սարսափը կը տիրէ ինծի: Չեմ ուզեր աւելի առաջ երթալ: Եթէ պէտք ըլլար, պատրաստ էի կտրելու առաջատի պարանը: Կ'ըմբոստանամ բրօֆէսէօրին դէմ, բայց ան չի պատասխաներ ինծի:

Յտնկարծ Հանսը ոտքի կը կայնի, մատով ցոյց կուտայ սպառնացող կէտը և կ'ըսէ.

— Holm!

— Կզգի, կը բացագանչէ հօրեղբայրս:

— Կզգի, կը կրկնեմ ես ուսերս ցնցելով:

— Ակնհերեւ է, կը պատասխանէ հօրեղբայրս բարձր ձիծաղելով:

— Իայց այս ջրասիւնը...

— Հէյդէր, կ'ըսէ Հանսը:

— Ի հարկէ, հէյդէր, կը հաստատէ հօրեղբայրս, Խալանտայի մէջ եղածներուն նման:

Ես սկիզբը չեմ ուզեր համաձայնիլ, որ այդքան կոպիտ կերպով սխալուեր եմ: Ինչպէ՞ս, կղզին ընդունիլ ծովային հրէշի տեղ. բայց իրականութիւնը բացայայտ էր և պէտք է սխալս ընդունէի:

Որքան կը մօտենանք, ջրասիւնի բարձրութիւնը այնքան տուելի

մեծ չափեր կ'ըստանայ: Կղզեակը իսկապէս կը նմանէր ծովային վիթ-  
խարի կենդանիի մը, որուն զլուխը քսան մեթր կը բարձրանար ծովուն  
վրայ: Հէյզէրը փառայեցորէն կը բարձրանար կղզեակի մէկ ծայրը:  
Բամանակ առ ժամանակ խոր սրտա կը լսուի և ջուրի հսկայական  
սիւնը բուռն կատաղութեամբ կ'ելլէ մինչեւ ամպերու առաջին շերտը:  
Ջուրի այդ սիւնը մինակ է. անոր շուրջը չկան ո՛չ ծուխի քուլա-  
ներ, ոչ տաք ազդիւրներ, և ամբողջ հրաբխային ուժը կեդրոնացեր  
է միայն անոր մէջ: Ելեքտրական լոյսի ճառագայթները կը խառ-  
նուին այդ շլացնող խուրձին, որուն իւրաքանչիւր կաթիլը կը պըս-  
պղայ ծիածանի բոլոր գոյներով:

— Մօտենանք, ըսաւ բրօֆէսէօրը:

Բայց պէտք է զգուշութեամբ խուսափիլ այդ ջրասիւնէն,  
որ մէկ վայկեանի մէջ կրնայ ընկղմել մեր լաստը: Հանսը հատու-  
թեամբ կը ղեկավարէ լաստը և մեղի կը տանի կղզեակին ծայրը: Կը  
ցատկիմ ժայռի մը վրայ. հօրեղբայրս իսկոյն կը հետեւի ինձի, իսկ  
որսորդը կը մնայ իր տեղը, մարդու մը պէս որուն ոչինչ կը դար-  
մացնէ: Մենք կը քալենք կայծքարային կրանիտին վրայով. հողը  
տաք է և կը զողգղայ մեր ոտքերուն տակ: Մենք կը հասնինք կեդ-  
րոնական փոքր աւազանին, որմէ կը ժայթքէ հէյզէրը: Եռացող ջու-  
րին մէջ կը դնում ջերմաչափը. թոյց կուտայ 163 աստիճան: Ուրեմն  
այս ջուրը դուրս կուգայ բոցավառ հնոցէ մը: Այս երեւոյթը կըտ-  
րականապէս կը հակասէ բրօֆէսէօր Լիդենպրոկի մտածումի տե-  
սութեան: Չեմ կրնար ինքզինքս զսպել և կ'արտայայտուիմ այդ  
մասին:

— Ի՞նչ կայ որ, կը պատասխանէ ան, միթէ այդ իմ տեսակէտիս  
հակառակը կ'ապացուցանէ:

— Ոչինչ, կ'ըսեմ չոր ձայնով, տեսնելով որ անյողդողդ յամա-  
ռութեան հետ դործ ունիմ:

Սակայն պէտք է խոստովանիմ, որ մինչեւ հիմա ամեն ինչ մե-  
զի համար շատ նպաստաւոր կ'երթայ, և ինձի անհասկնալի պատճա-  
ռով. մեր ուղեւորութիւնը կը կատարուի ջերմութեան տառնձնա-  
յատուկ պայմաններու մէջ. բայց ինձի համար պարզ և ակներև է,  
որ մենք ուշ կամ կանուխ կը հասնինք այնպիսի տեղ մը, ուր կեդ-  
րոնական ջերմութիւնը կը հասնի իր բարձրագոյն կէտին և կ'անցնի  
ջերմաչափի բոլոր աստիճանները:

«Կը տեսնենք» կ'ըսէ բրօֆէսէօրը, որ այս կղզեակը իր եղբորորդ-  
ւոյն անունով կոչելով, մեկնելու նշան կուտայ:

Ես տակաւին քանի մը վայրկեան կը դիտեմ հէյզէրը: Կը նկատեմ  
որ անոր կաղմած սիւնը անհաւասար վեր կը բարձրանայ, որ երբեմն  
անոր ուժը կը պակսի, ապա կրկին կ'ուժեղնայ. ես այդ կը վե-

րագրեմ անոր պահեստին մէջ կուտակուած գոլորշիներու ճնշման փոփոխականութեան:

Վերջապէս մենք կը մեկնինք, շրջան ընելով հարաւային խիստ սրածայր ժայռերու քովէն: Հանսը այս դադարի միջոցին լաստը կարգի բերեր էր: Բայց մեկնելէ առաջ ես քանի մը դիտումներ կ'ընեմ մեր անցած ճամբան չափելու համար և արդիւնքը կը գրեմ օրագրիս մէջ: «Գրետխենի նաւահանգիստէն» մեկնելէս մինչև հիմա մենք անցանք 27 մղոնէն աւելի և կը գտնուինք Իսլանտայէն 670 մղոն հեռաւորութեան վրայ, Անգլիոյ տակ:

## ԼԵ

Ուրբաթ, 21 Օգոստոս: Յաջորդ օրը սքանչելի հէյդէրը անհետացաւ մեր տեսողութենէն: Զով քամին արագօրէն հեռացուց մեզի «Պքսէլ կղզի»-էն: Դղրդիւնները հետզհետէ մարեցան:

Եղանակը, եթէ կարելի է այստեղ այդպէս արտայայտուիլ, շուտով կը փոխուի: Մթնոլորտը կը յագենայ գոլորշիներով, որոնք իրենց մէջ կը կուտակեն աղի ջուրերու գոլորշիացումէն առաջացած ելեքտրականութիւնը: Ամպերը զգալիօրէն կը ցածնան և կ'ըստանան միօրինակ գոյն: Ելեքտրական ճառագայթները հազիւ կրնան թափանցել այն բնմի թանձր վարագոյրէն, ուր տեղի կ'ուեննայ փոթորիկներու ողբերգութիւնը:

Ես տեսակ մը անհանգստութիւն կ'ըզգամ ճիշդ այնպէս, ինչպէս երկրի վրայ ամեն կենդանի էակ կ'ըզգայ, երբ ամպրոպը կը մօտենայ: Դէպի հարաւ կուտակուած ամպերը չարագուժ տեսք կ'ըստանան, անոնք «անողոք» երեւոյթ ունին, ինչպէս կ'ըլլայ ընդհանրապէս փոթորիկէն առաջ: Օդը ծանր է, ձովը հանդարտ:

Հեռուն ամպերը կը նմանին բամպակի մեծ հակերու, զեղարուևաական անկարգութեամբ դիպուած իրարու վրայ: Անոնք հետզհետէ կ'ուռին, փոքրաթիւ կը դառնան, բայց աւելի կը մեծնան. այնքան կը ծանրանան, որ չեն կրնար անջատուիլ հորիզոնէն: Բայց զօրաւոր քամին զանոնք վեր կը քշէ: Անոնք հետզհետէ կը ձուլուին իրարու մէջ, կը մթաքնին և քիչ յետոյ վտանգաւոր զանգուածի ձև կ'ըստանան:

Պարզ է, որ մթնոլորտը լեցուած է ելեքտրականութեամբ. եւ կը ուղղէ զիս. մագիւս կը ցցուին զլիսուս վրայ այնպէս՝ ինչպէս կ'ըլլայ երբ կը մօտենաս ելեքտրական մեքենային: Ինձի կը թուի, թէ եթէ այն վայրկեանին ուղեկիցներս ինձի դպչէին, սւժեղ ցնցում կ'ըստանային:

Առաւօտեան ժամը 10ին փոթորիկի նշանները աւելի վճռական կը դառնան: Չեմ ուզեր հաւատալ երկիրքի սպառնալիքներուն, բայց և այնպէս կ'ըսեմ:

— Փոթորիկ պիտի ըլլայ:

Բրոֆէսէօրը չի պատասխաներ. շատ վատ սրամազրոթեան մէջ է, որովհետեւ ովկիանոսը անվերջ կը տարածուի աչքերուն առջև: Խօսքերս լսելով, ան միայն ուսերը կը ցնցէ:

— Փոթորիկ պիտի ըլլայ, կը կրկնեմ. հորիզոնը ցոյց տալով: Այդ ամպերը ծովուն վրայ կ'իջնեն, կարծես դայն ճնշելու նպատակով:

Կատարեալ լուսթիւն է: Բամին նոյն իսկ հանդարտեր է: Բնութիւնը կարծես մեռած է և չի շնչեր, օդի ուեէ շարժում չի նկատուելի: Բացուած առագաստը ծանր ծալքերով կախուած է կայմին վերայ, որուն ծայրը արդէն կը նկատեմ «Ս. Էլմայի\*» աղօտ լոյսը: Լաստը անշարժ կանգնած է հանդարտ ծովուն վրայ: Բայց քանի որ մենք չենք առաջանար, ինչի՞ կը ծառայէ առագաստը, որ կրնայ մեզի կորուստի մասնել, փոթորիկի առաջին իսկ հարուածէն:

— Իջեցնենք առագաստը, կ'ըսեմ, հաւաքենք կայմը, աւելի խոհեմութիւն կ'ըլլայ:

— Ո՛չ, սատանան տանի, կը բացադանչէ հօրեղբայրս, ո՛չ մէկ պարագային: Թող քամին մեզի բռնէ, թող փոթորիկը մեզի քշէ, տանի, միմիայն տեսնեմ ծովափի ժայտերը, եթէ նոյնիսկ մեր լաստը անոնց դարնուելով ջարդ ու փշուր ըլլայ:

Հաղիւ այդ խօսքերը արսասանուած, հարաւէն հորիզոնը մէկ անդամէն կը փոխէ իր տեսքը, կուտակուած ամպերը հեղեղի կը վերածուին, օդը ուժգին կը ձգուի դէպի այն գատարկութիւնը, որ առաջացեր է խտացումէն, լեցնելու համար զայն. կ'ըսկսի ուրականը: Մրրիկը կուգայ քարանձաւի ամենահեռաւոր ծայրերէն: Խաւարը կը կրկնապատկուի: Հաղիւ կրնամ քանի մը նոր դիտումներ պըրի առնել:

Լաստը կը բարձրանայ, կը թռչկոտի ալիքներուն վրայ: Հօրեղբայրս տեղէն անցին կը շարտուի: Սողալով կը մօտենամ իրեն: Ան կառչած է պարանի կտորի մը և կը թուի, թէ հաճոյքով կը դիտէ բնութեան սանձարձակ տարրերու այս տեսարանը: Հանսը տեղէն չի շարժիր: Անոր երկար մազերը, քամիէն թափուած անշարժ գէմքին վրայ, անոր կուտան տարօրինակ տեսք մը, որովհետեւ ա-

---

«) Փողովրդական լեզուով այդպէս կը կոչուին այն ելեֆոսական կայծերը, որոնք երեւան կուգան սրածայր մարմիններու վրայ, երբ օդը գորաւոր կերպով ելեֆոսականացած է: Մ. Թ.

մեն մէկ մազի ծայրին կը պսպղան կայծեր: Սակայն կայմը դեռ կը դիմանայ: Առագաստը կը ձգուի փքուած պղպշակի պէս, պատրաստ ճաքելու: Հասար կը քշուի այնպիսի արագութեամբ, որ չեմ կրնար չափել:

— Առագաստը, առագաստը, կը կանչեմ և նշան կ'ընեմ, որ իջեցնէ:

Ո՛չ, կը պատասխանէ հօրեղբայրս:

— Neï, կ'ըսէ Հանսը մեղմօրէն զլուխը շարժելով:

Անձրեւը մոնչացող ջրվէժ մը կ'առաջացնէ այն հորիզոնին առջև, դէպի ուր կը սլանանք խելայեղօրէն: Քայց մինչև մեզի հասնիլը, ամպերու վարագոյրը կը պատռուի, ծովը կ'ուռի և ելեքտրականութիւնը որ առաջ էր եկեր բարձր շերտերուն մէջ, շնորհիւ քիմիական ուժերու աշխոյժ գործունէութեան, կ'ըսկսի իր խաղը: Շանթի անհամար փայլատակումներ իրարու կը կտրեն բոլոր ուղղութիւններով, կայծակի հարուածներ իրարու կը յաջորդեն, գոլորշիի ամբողջ զանգըւածը կը շիկնի: Կարկուտի հատիկներ, որոնք կը խփուին մեր գործիքներուն ու գէնքերուն, կը լուսավառուին, և բարձրացող ալիքները կարծես կը բոցավառուին: Աչքերս չլացած են լոյսի սաստկութեանէն. ականջներս կը խլանան ամալրոպի որոտումէն, պէտք է ուժեղ բռնեմ կայմը, որ եղէքի պէս կը թեքուի մերրկի ուժգնութենէն...

(Սյստեղ ուղեւորութեանս յուշերը շատ անկատար կը զառնան: Միայն քանի մը թուղցիկ նօթեր գտայ, որոնք իրենց համառօտութեամբ և անյստակութեամբ իսկ կ'արտայայտեն հոգեկան յուզումս և մեր դրութեան մասին աւելի ճիշդ գաղափար մը կուտան, քան յիշողութիւնս):

Կիրակի, 23 Օգոստոս: Ո՞ւր կը գտնուինք: Ո՞ւր տարաւ մեզի այս աննախընթաց արագութիւնը: Գիշերը սոսկալի էր: Փոթորիկը չի հանգստանար: Կ'ապրինք անընդհատ աղմուկի, անվերջ գորգոռոցի մէջ, Մեր ականջներէն արիւն կը հոսի: Ո՛չ մէկ խօսք չենք կրնար փոխանակել:

Շանթի հարուածները չեն դադրիր: Կը նկատեմ բեկուած դիժերը, որոնք արագ անկումէն ետքը, կրկին վեր կը բարձրանան և կը զարնուին կրանիթէ կամարին: Ի՞նչ կ'ըլլայ, եթէ կամարը փլի: Կայծակի ուրիշ հատուածներ կը ճիւղաւորուին, կամ բոցավառ գունդերու ձեւ կ'ըստանան, որոնք կը պայթին ումարի նման: Ընդհանուր աղմուկը կարծես չաւելնար. ան հասեր է ամենարարձր կէտին, որուն կրնայ դիմանալ մարդկային ականջ:

Ամպերը անընդհատ կը բոցավառուին: Ելեքտրականութիւնը անվերջ կը շանթահարէ: Զուրի բազմաթիւ սիւններ կը բարձրանան օդը և նորէն փրփրալով ցած կը թափուին:

Ո՛ւր կ'երթանք... Զօրեղբայրս պտուկած է մարմնի ամբողջ երկարութեամբ լաստին միւս ծաղրը: Ձերմոտթիւնը կ'աւելնայ, կը նայիմ ջերմաչափին, որ ցոյց կուտայ... (Թիւը ջնջուած է):

Երկուշաբթի: 24 Օգոստոս. — Ստոր վերջը չպիտի դայ:

Մենք յօգնութենէն ուժասպառ եղեր ենք: Հանար միշտ միեւնոյնն է: Լասար անիտփօխ կերպով կը շարունակէ սուրալ ղէպի հարաւարեւելք: Մենք երկու հարիւր մղոնէն անելի ենք յառաջացեր, & Աքսէլի կողիէն՝ մեկնելէս յետոյ:

Կէսօրին քամիի ուժը կը կրկնապատկուի. սէտք է պինդ կապել մեր ունեցած իրերը: Մենք մեզի ալ կը կապենք: Ալիքները մեր գլխուն վրայէն կ'անցնին: Վերջին երեք օրը ոչ մէկ խօսք չենք կըրնար արտասանել: Բերաննիս կը բանանք, կը շարժենք շրթունքնիս, բայց ոչ մէկ ձայն դուրս չի դար: Իրարու ականջին խօսելով նոյնիսկ չենք կրնար զիրար հասկնալ:

Զօրեղբայրս կը մօտենայ ինձի և ինչ որ բառեր կ'արտասանէ կը կարծեմ, թէ կ'ըսէ. «մենք կորած ենք»: Սակայն վստահ չեմ կրնար ըսել: Կ'որոշեմ անոր զրիկ հեաեւեալ բառերը & իջեցնենք առագաստը»:

Հաւանութեան նշան կ'ընէ: Յանկարծ լուսավառ գնդակ մը կը դարնու լաստին: Կայմն ու առագաստը մէկ անգամէն կը տարուին և կը թռչին օդին մէջ, ինչպէս առասպելական թռչուններ:

Սարսափնէս կը քարանանք. կրակէ գնդակը, կէս սպիտակ, կէս կապոյտ, վեց մասնաչափ ոււմբի մեծութեամբ, զանդաղօրէն կը թռչի մէկ տեղէն միւսը, կը ցատկէ մթերքի պարկին վրայ. կրկին կամաց ցած կ'իջնէ, կը ցատկատէ, թեթեւ մը կը դպի վառօթի սակառին: Ա՛հ, ի՞նչ սարսափ. կրնանք օգը թռիլ: Ո՛չ, ստակալի գունտը կը հեռանայ, կը մօտենայ Հանսին, որ յամառօրէն անոր կը նայի, կը մօտենայ հօրեղբօրս, որ կ'իյնայ ծունկերուն վրայ անկէ խուսփելու համար. կուգայ մօտս, մինչդեռ համեռնի պէս գունատ եմ և կը դողամ անոր լոյսի փայլէն և տաքութենէն, գունտը կը պտտի ոտքիս շուրջը, զոր կ'աշխատիմ ետ քաշել, բայց չեմ յաջողիր:

Օգոնի հօտը կը բռնէ օդը, կը թափանցէ կեկորդս և թուքերս կը խեղդուինք:

Ինչո՞ւ չեմ կրնար ոտքս ետ քաշել: Ելեքարական գունդը մաքնիսացուցեր է լաստին վրայ գտնուող ամբողջ երկաթը, գործիքները, ղէնքերը սկսեր են շարժիլ և իրարու կը զարնոին սուր ձայներ արձակելով: Կօշիկներուս գամերը պինդ փակեր են փայտին մէջ հազցուած երկաթէ թիթեղին: Ահա թէ ինչու չեմ կրնար ոտքս ետ քաշել: Վերջապէս՝ մեծ գժուարութեամբ կրնամ ոտքս ազատել ճիշդ այն վայրկեանին, երբ գունտը չբջան ընելով կը հասնի անոր: Յանկարծ գո նար կը պայթի շտացող լոյս արձակելով. մենք

կ'ողողուինք լոյսի ցայտերով: Յետոյ ամեն բան կը հանդստանայ: Ես հազիւ կրցայ տեսնել հօրեղբայրս, որ փռուած է լաստին վրայ, իսկ Հանսը շարունակելով կանգնած մնալ ղեկին քով՝ «կրակ դուրս կը ժայթքէ» որովհետեւ ամբողջովին ելեքտրականացած է:

Ո՞ւր կ'երթանք: Ո՞ւր:

Երեքաբքի, 25 Օգոստոս. — Կ'ըսթափուիմ երկար ուշաթափուեթենէս յետոյ. փոթորիկը կը շարունակուի. կայծակը անվերջ կը փայլատակէ՝ օդին մէջ թռչող կրակէ օձերու երամին նման: Արդեօք դես ծովուն վրա՞յ ենք: Այո՛, և կը սլանանք սաստիկ արագութեամբ: Անցեր ենք Անգլիայի, Մանչի, Ֆրանսայի և գուցէ ամբողջ Եւրոպայի տակէն:

Նոր աղմուկ մը կը լսուի. ինչպէս կ'երեւայ ծովու ալիքները կը դարնուին ժայռերուն... Այն ժամանակ...

## ԼԶ

Այստեղ կը վերջանայ օրագիրս, որ կրցայ ազատել նաւաբեկութեան ժամանակ: Կը շարունակեմ պատմութիւնս:

Թէ ի՞նչ եղաւ լաստը ժայռերուն զարնուելու ատեն, չեմ կրնար ըսել: Զգացի որ ալիքները ղիս կը թանին ու եթէ մահէն ազատուեցայ, եթէ մարմինս ջարդ ու փշուր չեղաւ ժայռերուն զարնուելով, ես պարտական եմ Հանսին, որուն հուժկու թեւերը դուրս բերին զիս անդունդէն: Բաջարի իսլանտացին ղիս օտարաւ ալիքներէն հեռու, տաք անապին վրայ, ուր պառկեցայ հօրեղբօրս կողքին:

Յետոյ Հանսը վերադարձաւ. դէպի ժայռերը, որոնց կը զարնուէին կատաղի ալիքները, որպէսզի ազատէ նաւաբեկութենէն անվնաս մնացած մթերքը: Ես չէի կրնար խօսիլ. յուզումէ և յոգնութենէ ջարդուած էի. ժամ մը պէտք եղաւ որ ուշքի գամ:

Հեղեղանման անձրեւը կը շարունակէր տեղալ, առանց դադարի: Իրարու վրայ շարուած ժայռերը մեզի համար պատուապարան եղան այդ հեզեզէն պաշտպանուելու համար: Հանսը ուտելիք պատրաստեց, որուն ես չի դպայ, և ապա մեղմէ իւրաքանչիւրը: Երեք օրուայ անքնութենէ ընկճուած, թաղուեցաւ ասնջալի քունի մէջ:

Յաջորդ օրը եղանակը հրաշալի էր: Երկինքն ու ծովը հանդարտած էին կարծես փոխադարձ համաձայնութեամբ: Փոթորիկէն ոչ մէկ հետք չէր մնացեր: Բրօֆէսէօրը ուրախ խօսքերով շնորհաւորեց զիս, երբ ես արթնցայ:

— Է՛, սիրելի աղաս, բացաղանչեց, լաւ քնացա՞ր:

Ինչպէ՞ս չմտածէի թէ կը գտնուինք Արքայական փողոցի տունը թէ ես հանգիստ ցած կ'իջնեմ նախաճաշելու, թէ այսօր տեղի կ'ունենայ ամուսնութիւնս Գրետիսենի հետ: Ա՛հ, երանի թէ վոթորկը լաստը քշած ըլլար դէպի արեւմուտք. մենք անցած կ'ըլլայինք Գերմանիոյ տակէն, հասնէինք սիրելի ծննդավայրիս՝ Համպուրկի տակ, այն փողոցին, ուր կ'ապրէր ամենասիրելի էակս: Այդ ժամանակ միայն ութսուն մդոն տարածութիւն կը բաժնէր մեզի իրարմէ:

Այս տանջալի մտածումներն ունեցայ, նախքան հօրեղբօրս հարցին պատասխանելու:

— Հը՞. Ա.քսէլ, կրկնեց ան, չե՞ս ուզեր պատասխանել, լաւ քնացա՞ր, թէ ոչ:

— Շատ լաւ, պատասխանեցի. ճիշդ է, դեռ քիչ մը ջարդուած եմ, բայց պարապ բան է:

— Իհարկէ պարապ բան է. քիչ մը յոգնածութիւն, ուրիշ ոչինչ:

— Բայց դուք այսօր շատ ուրախ կ'երեւաք, հօրեղբա՛յր:

— Ես հիացած եմ, տղաս, հիացած. մենք արդէն հասեր ենք...

— Մեր ուղեւորութեան վերջակէտի՞ն:

— Ո՛չ, այս ծովու վերջաւորութեանը, որ անծայր կը թուէր: Այժմ մենք կրկին ցամաքով կ'երթանք ու այս անգամ իսկապէս կ'իջնենք դէպի երկրի ընդերքը:

— Սիրելի հօրեղբա՛յր, թոյլ տուէք որ ձեզի հարց մը տամ:

— Թոյլ կուտամ, Ա.քսէլ:

... Իսկ վերադարձը:

— Վերադա՞րձը: Դուն վերադարձի մասին կը մտածես, երբ դեռ չենք հասեր:

— Ո՛չ, ես միայն կ'ուզեմ հարցնել, թէ ինչպէս կը վերադառնանք:

— Ամենապարզ ձեւով: Հասնելով երկրագունդի կեդրոնը, կա՛մ նոր ճամբայ կը գտնենք երկրի երեսը վերադառնալու համար, կա՛մ համեստ կերպով ետ կը դառնանք նոյն այս ճանապարհով: Յոյս ունիմ, որ այս ճամբան չի փակուիր մեր ետեւէն:

— Եթէ այդպէս է, պէտք է նորոգել լաստը:

— Անպայման պէտք է նորոգել:

— Բայց մնացած պաշարեղէնը արդեօք կը բաւէ՞ այդպիսի մեծ ձեռնարկութեան համար:

— Այո՛, անկասկած: Հասնը ճարպիկ տղայ է, և ես վստահ եմ, որ ան փրկած է մեր ունեցածի մեծ մասը: Աւելի լաւ է, անձամբ ստուգենք:

Մենք հեռացամք քարայրէն, որ ըսց էր բոլոր քամիներու առ-

ջեւ: Մէջս յոյս մըն էր ծագեր, որ միամամանակ երկիւղի կը փոխ-  
ւէր. ինծի կը թուէր, թէ անկարելի է որ մեր ունեցածը փճացած  
չըլլար այն պահուն, երբ լաստը այդպէս սասակութեամբ ժայռերուն  
դարնուեցաւ: Բայց ես կը սխալէի: Հասնելով ծովափ, տեսայ Հան-  
սին, որ կայնած էր կանոնաւոր կերպով իրարու վրայ շարուած ի-  
րերու քով: Կօրեղբայրս անոր ձեռքը սեղմեց խորունկ երախտագի-  
տական զգացումով: Այս մարդը, դերմարդկային անձնագոհութեամբ,  
որու նմանը քիչ կը պատահի, աշխատեր էր, երբ մենք քնացած  
էինք և իր անձը վաանգելով, փրկեւր էր ամենաթանկագին իրերը:  
Ճիշդ է, մենք զգալի կորուստ ունեցանք, օրինակ, կորսնցուցինք  
մեր զէնքերը, բայց վերջիվերջոյ կրնայինք առանց անոնց ալ կա-  
ռավարուիլ: Վառօգի պաշարը անփնաս էր մնացեր, փոթորիկի ժա-  
մանակ պայթելու վտանգին տակ ըլլալէ յետոյ:

— Դէ՛հ, ի՞նչ ընենք, բացառանչեց բրօֆէսէօրը, քանի որ զէնք  
չունինք. պիտի հրամարինք որսորդութենէ:

— Լաւ, բայց գործիքնե՞րը:

— Ահաւասիկ անդայտաչափը, ամենէն անհրաժեշտը, որուն հա-  
մար բոլորը կուտայի: Անոր շնորհիւ կրնամ չափել խորութիւնը և  
հասկնալ, երբ կը հասնինք երկրի կեդրոնը: Առանց անոր մենք կըր-  
նայինք շատ հեռուն երթալ և նորէն դուրս ելլել երկրին երեսը հա-  
կառակ կողմէն:

Հօրեղբորս այդ կատակը ապշեցուց զիս:

— Իսկ կողմնացո՞յցը հարցուցի ես:

— Ահաւասիկ, այս ժայռին վրայ, կատարելապէս անփնաս վի-  
ճակի մէջ ինչպէս նաև խորնոմեթրն ու ջերմաչափերը: Այո՛, որչորդը  
թանկագին մարդ է մեզի համար:

Եւ իրօք, բոլոր գործիքները անփնաս էին: Իսկ ինչ որ կը վե-  
րաբերէր միւս իրերուն, նկատեցի, որ աւազին թափուած էին սան-  
դուխները, պարանները, քլունգները, բահերը և այլն: Պէտք է պար-  
զել նաև աննդամթերքի հարցը:

— Իսկ աննդամթերքը, հարցուցի ես:

— Հիմա զրադէնք աննդամթերքով, ըստ հօրեղբայրս:

Սննդամթերքի արկղները շարուած էին աւազի վրայ բոլո-  
րովին անփնաս վիճակի մէջ: Մովը խնայեւր էր անոնց մեծ մասը,  
և վերջապէս պարսիմաթի, մսի, օղիի և չիրի այդ մնացորդով կա-  
րելի էր տակաւին չորս ամիս ապրիլ:

— Չորս ամի՛ս, բացառանչեց հօրեղբայրս. այդ մեզի բաւական  
է մինչև վերջը, երթալ ու վերադառնալու համար, իսկ մնացորդով  
չքեղ ճաշ մը կուտամ գիտական կաճառի պաշտօնակիցներու:

Ես շատոնց արդէն ընտելացած էի հօրեղբորս բնաւորութեան,  
բայց և այնպէս այս մարդը միշտ կը զարմացնէր զիս:

— Հիմա, ըստե տն, լրացնենք մեր ջուրի պաշարը անձրևի ջուրով, որ լեցուցած է բոլոր կրանիթէ աւազանները փոթորիկի փամփանակ, այդպէսով ծարաւէն տանջուելու վախ չենք ունենար: Ինչ կը վերաբերի լաստին, թող Հանսը վերանորոգէ զայն, թէև կը կարծեմ, որ ատոր այլևս պէտք չենք ունենար:

— Ինչպէ՞ս՝ բացագանչեցի ես:

— Ես այդպէս կը կարծեմ, տղաս: Ինծի կը թուի, թէ մենք այստեղէն դուրս չենք ելլեր այն ճամբով, որով ներս մտանք:

Ես բրօֆէսէօրին նայեցայ տեսակ մը անվտանգութեամբ, ու ես ինծի հարց կուտայի, թէ արդեօք խելագարուած չէր ան:

— Երթանք նախաճաշի, ըստե ան: Հետեւեցայ անոր ու միասին բարձրացանք հրուանդանի մը վրայ: Հոն կուշո ու կուռ կերանք չորցած միս, պաքսիմաթ, մէկական բաժակ թէյ խմեցինք ու պէտք է խոստովանիմ, որ ամենահամեղ նախաճաշերէն մէկը եղաւ ատիկա: Ուտելու պահանջքը, թարմ օդը, այնքան յուզումնալից ապրումներէն յետոյ տիրող հանգիստը, այս բոլորը նպաստեր էին ախորժակի բացուելուն:

Նախաճաշի ժամանակ հօրեղբորս հարցուցի, թէ օ՛ւր կը գտնուէինք այս պահուն:

— Իմ կարծիքով, ըսի, շատ դժուար է հաշուել այդ:

— Ճշգրիտ հաշուել, այո, դժուար, նոյնիսկ անկարելի, պատասխանեց, որովհետեւ երեք օրուայ փոթորիկի պահուն չկրցայ որոշել լաստին արագութիւնն ու ուղղութիւնը, սակայն մենք կրնանք մօտաւորապէս որոշել մեր դիրքը:

— Ճիշդ է, որ մեր վերջին դիտումը ըրած էինք հէյզլէրի կըղզեակին մէջ:

— «Աքսէլի կղզեակին» սիրելիս: Պէտք չէ հրաժարիս երկրագունտի ընդերքը յայտնաբերուած առաջին կղզիին քու անունդ տալու պատիւէն:

— Թող այդպէս ըլլայ: Մինչև «Աքսէլի կղզին» մենք ծովուն վրայ մօտաւորապէս հարիւրսոթանասուն մղոն առաջ գացած էինք և իսլանտայէն վեց հարիւր մղոնէ աւելի հեռաւորութեան վրայ կը գտնուէինք:

— Լաւ. այդ կէտէն սկսեալ պէտք է հաշուել փոթորիկին չորս օրը, որու ընթացքին մեր արագութիւնը օրական ութսուն մղոնէն պակաս չէր կրնար ըլլալ:

— Համաձայն եմ. ուրնմն ընդամենը երեք հարիւր մղոն:

— Այո, այդպէսով «Լիդենպրոկի ծով»ուն տարածութիւնը մէկ ամիէն միւսը, զրեթէ վեց հարիւր մղոն կ'ըլլայ: Կը տեսնե՞ս, Աքսէլ, որ այս ծովը մեծութեամբ կրնայ մրցիլ Միջերկրականին հետ:

— Այո, մանաւանդ եթէ միայն անոր լայնութեամբ ենք նաւարկած:

— Շատ հաւանական է, որ այդպէս է:

— Եւ հետաքրքրականը այն է, աւելցուցի, որ եթէ մեր հաշիւները ճիշդ են, Միջերկրականը այժմ ճիշդ մեր գլխուն վերեւը կը գտնուի:

— Իսկապէ՞ս:

— Անկասկած, որովհետեւ մենք հիմա Ռէյկիաւիկէն ինը հարիւր մղոն հեռու կը գտնուինք:

— Գէշ ուղեւորութիւն չէ այս. տղաս, բայց հաստատել, թէ կը գտնուինք Միջերկրականի տակ և ոչ թէ Թուրքիոյ կամ Ատլանտեան ովկիանոսին, կարելի է միայն այն ատեն, եթէ մենք շեղած չենք մեր նախնական ուղղութենէն:

— Ոչ. քամին միօրինակ կը թուէր, այդ պատճառով ալ կը կարծեմ, թէ այս ծովափը «Գրետխենի Նաւահանդիստ»ին հարաւաքեւելեան կոմը կը գտնուի:

— Լաւ. դիւրին է ստուգել, կողմնացոյցին նայելով: Տեսնենք, թէ ինչ կ'ըսէ ան:

Բրոֆէսէօրը դնաց զէպի այն ժայռը, որուն վրայ Հանսը դրած էր գործիքները: Պերախ էր, կատակախօս ու ձեռքերը կը շփէր: Բոլորովին երիտասարդացած էր: Հետեւեցայ իրեն մեծ հետաքրքրութեամբ, որովհետեւ կ'ուզէի գիտնալ, թէ արդեօք չէի՞ սխալեր ենթադրութեանս մէջ:

Այդ ժայռին հասնելով, հօրեղբայրս առաւ կողմնացոյցը, հորիզոնական ձեւ տուաւ ու նայեցաւ սլաքին, որ տատանուելէն յետոյ տնչարժ կանգ առաւ մագնիսական ազդեցութեան տակ: Հօրեղբայրս նայեցաւ, յետոյ աչքերը շփեց, նորէն նայեցաւ: Ընտոյ ապշահար իմ կողմս դարձաւ:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուցի ես:

Ան նշան ըրաւ որ գործիքին նայիմ: Ես զարմանքի աղաղակ արձակեցի: Սլաքը հիւսիսը ցոյց կուտար հոն, ուր մենք հարաւ կը կարծէինք: Սլաքը դարձած էր ծովափին կողմը, փոխանակ բաց ծովը ցոյց տալու: Շարժեցի կողմնացոյցը և ուշադրութեամբ դիտեցի, գործիքը անշլեւաս էր: Ինչպիսի ուղղութիւն ալ որ սայինք սլաքին, ան նորէն յամառօրէն մեզի համար անսպասելի ուղղութիւն կ'ընդունէր:

Ուրեմն, այսպէսով, ոչ մէկ կասկած չէր մնար, որ փոթորիկի ժամանակ, քամին աննկատելի կերպով փոխեր էր ուղղութիւնը և լասսաը քշեր տարիւր էր զէպի այն ափը, որ հօրեղբորս կարծիքով մը նացեր է մեր ետեւը:

Անկարելի էր նկարագրել այն զգացումները, որոնց յաջորդաբար ենթարկուեցաւ բրոֆէսէօր Լիպենպրոկը. իր զարմանքը, անվստահութիւնը և վերջապէս բարկութիւնը: Երբեք չէի տեսած մարդ մը, որ սկիզբը այնքան յուսահատ, յետոյ այնքան գրգռուած ըլլար, ծովային ուղեւորութեան դժուարութիւնները, վտանգները, այդ բոլորը պէտք էր նորէն սկսիլ: Մենք ետ դարձած էինք, փոխանակ առաջ երթալու: Բայց հօրեղբայրս շուտով իշխեց ինքնիրեն:

— Մէ, ճակատագիրը ինձի հետ ի՞նչպիսի խաղ կը խաղայ, բացառանչեց ան, տարեքը դաւադրութիւն են կազմեր ինձի դէմ, օգը, կրակն ու ջուրը միացեալ ուժերով արգելք կ'ըլլան ուղեւորութեանս: Է՛հ, լաւ, թող տեսնեն, թէ ինչի ընդունակ է կամքիս ուժը: Չեմ գիշիր, ոչ մէկ քայլ չեմ նահանջեր, ու կը տեսնենք, թէ ով կը յաղթէ, մարդը, թէ բնութիւնը:

Կանգնած ժայռին վրայ, յուզուած ու սպառնական: Օթթօ Լիպենպրոկը, ահարկու Այաքսի նման. կարծես աստուածներուն մենամարտի կը հրաւիրէր. բայց ես տեղին համարեցի միջամտել, որպէսզի սանձահարեմ այդ խելագար զայրոյթը:

— Մտիկ ըրէք ինձի, ըսի իրեն վճռական եղանակով, ամեն փառասիրութիւն պէտք է իր սահմանը ունենայ: Կարելի չէ կռուիլ անկարելիին դէմ, մենք լաւ պատրաստուած չենք ծովային ճամբորդութեան համար. կարելի չէ հինգ հարիւր մղոն նաւարկել, գերանները կոպիտ ձեւով իրարու միացնելով, առագաստի փոխարէն ծածկոց և կայմի փոխարէն ձող գործածելով, ան ալ զօրաւոր քամիներուն դէմ: Մենք չենք կրնար ղեկավարել լաստը, և ալիքներուն ձեռքը խաղալիք ըլլալ: Խելագարութիւն կ'ըլլար երկրորդ անգամ ձեռնարկել այդ անհնարին ուղեւորութեան:

Ես կրցայ ամբողջ տասը վայրկեան բերել այսպիսի անհերքելի փաստեր, առանց ընդմիջուելու, որովհետեւ բրոֆէսէօրը երբեք ուշադրութիւն չէր դարձներ իմ վրաս, և ըսածներէս ոնէ մէկ բառ չէր լսեր:

— Դէպի լա՛ստ, բացառանչեց ան:

Այդ եղաւ իր պատասխանը: Ես իղուր խնդրեցի, բարկացայ, իմ դէմս կանգնած էր կրանիթէ ալ աւելի զօրաւոր կամք մը:

Արդէն Հանսը վերջացուցեր էր լաստին նորոգումը: Կարծես այդ տարօրինակ մարդը կը գուշակէր հօրեղբորս ծրագրերը: «Սուրատարբանդար»ի քանի մը կտորներով ան նորէն ամրացուց լաստը: Առագաստը արդէն պարզուած էր ու քամին կը խաղար անոր ծածանող ծալքերուն մէջ:

Բրոֆէսէօրը քանի մը խօսք ըսաւ ուղեցոյցին, ու ան իսկոյն սկսաւ բնօցնել մեր իրերը լաստին վրայ, և ամեն ինչ պատրաստուեցաւ մեկնումի համար: Եղանակը բաւական պարզ էր, կը փչէր մեզի նպաստաւոր հիւսիս-արեւմտեան քամին:

Ինչ կը մնար ինծի ընել, միս-մինակ գիմադրել երկուքին: Այդ անկարելի էր: Գոնէ Հանսը իմ կողմս ըլլա՞ր: Բայց ոչ: Կը թուէր, որ իսլանտացին բոլորովին հրաժարած էր սեփական կեանքէ և անձնագոհութեան երգում ըրած: Իր տիրոջ հանդէպ այդքան հաւատարիմ սպասաւորէ մը կարելի չէր բան սպասել: Պէտք էր երթալ: Ես կը պատրաստուէի արգէն իմ սովորական տեղս գրաւելու: Լաստին վրայ, երբ հօրեղբայրս կեցուց զիս:

— Մեկնումը վաղուան յետաձգենք, ըսաւ ան:

Ձեռքս շարժեցի ամեն բանի համաձայնած մարդու մը պէս:

— Ոչ մէկ բան պէտք չէ անտեսեմ, շարունակեց ան, և քանի որ բախտը զիս այս ամբ բերաւ, առանց հետադօտելու պէտք չէ հեռանամ հոսկէ:

Այս խօսքերը հասկնալի կ'ըլլան, երբ նկատի առնուի այն, որ թէև մենք վերադարձած էինք հիւսիսային ամբ, բայց ոչ հոն, ուրկէ նախապէս մեկնեի էինք: «Գրեթէ ինչն առաջնագիտած», հաւանական է, աւելի արեւմուտք ինկած էր: Ուրեմն, այս ծովեղբրքը ուշադրութեամբ հետադօտելը շատ ընական բան էր:

— Երթանք ուրեմն շրջակայքը հետադօտելու, ըսի ես:

Հանսը ձգելով իր գլխաւոր մտերուն, մենք ճամբայ կլանք: Ծովափէն մինչև սեպ ժայռերու ստորոտը բաւական ընդարձակ տարածութիւն էր. ժայռերուն հասնելու համար առնուազն կէս ժամուայ ճամբայ պէտք էր կտրել: Մենք կը կոխկռտէինք տարրեր ձեռով և մեծութեամբ անհամար խեցիներ, որոնց մէջ ապրած էին նախնական դարերու կենդանիներ: Եկատեցի նաև հսկայական կրեայի պատեաններ, որոնց արամագիծը յաճախ տասնհինգ օտքէն աւելի էր: Գետինը ծածկուած էր քարի բազմաթիւ բեկորներով: Տեսակ մը ճալաքարեր, որոնք ալիքներու շփումէն կլոր ձև առած էին ու ծովափ թափուած յաջորդական շարքերով: Այդ երեւոյթը ինծի մտածել տուաւ, թէ ժամանակ մը ծովուն տակը կղած է այս ամբողջ տարածութիւնը: Յիր ու ցան ժայռերը, որոնք հիմա ցամաքի վրան էին, որոշակի կը կրէին ալիքներու հետքերը: Այս երեւոյթը որոշ չափով կրնար բացատրել ծովու գոյութիւնը երկրի մակերեւոյթէն քառասուն մղոն խորութեան տակ: Բայց, ըստ ինծի, ջուրի այս ամբողջ զանգուածը պէտք է հետզհետէ իջած ըլլար երկրի ընդերքը և ծագում առած է հաւանօրէն, ովկիանոսի ջուրերէն, որոնք թափուեի էին ունէ՝ ճեղքուածքէ մը: Բայց պէտք է ընդունել, որ այդ ճեղ-

քուածքը հիմա փակուած է՝ որովհետեւ, հակառակ պարագային, ամբողջ այս քարանձաւը, աւելի ճիշդ, այս հսկայական աւաղանը մինչև բերանը լիցուն պիտի ըլլար: Կրնայ պատահիլ նաև, որ այս ջուրը ստորերկրեայ կրակի ազդեցութեան տակ մասամբ կը գոյորչիանայ, որով և կը բացատրուի ամպերու գոյութիւնը, ինչպէս նաև կլեքտրականութեան առաջացումը, որ փոթորիկներ կը յարուցանէ երկրագունդին ներսը:

Մեր տեսած երևոյթներուն այսպիսի, բացատրութիւն մը ինծի բաւարար կը թուէր, որովհետեւ բնութեան բոլոր հրաշալիքները, որքան ալ անոնք արտակարգ ըլլան, միշտ կարելի է բացատրել բնագիտական պատճառներով:

Ուրեմն, կը քայէինք ջուրերէ կազմուած տղմային գեանին վրայ, որ այնքան մեծ տարածութիւն կը գրաւէ երկրին վրայ: Բրոֆէսէօրը ուշադրութեամբ կը դիտէր ժայտերու իւրաքանչիւր ճեղքը, իրեն համար մեծ կարեւորութիւն ունէր ուսումնասիրել մեր առջև ներկայացող ամեն մէկ բացուածքի խորութիւնը:

Երկար ստեն քալեցինք «Լիզենպրոկի ծով»ու ափով, երբ գետինը յանկարծ փոխեց իր բնոյթը: Կը թուէր, թէ ան տակն ու վրայ ուցիրուցան էր եղած տակի շերտերու ուժգին բարձրացման հետեւանքով: Տեղ-տեղ փլուզումներն ու բարձրացումները կը վկայէին ստորին շերտերու զօրաւոր տեղափոխութեան մասին:

Մենք դժուարութեամբ կ'անցնէինք կրանիտէ բեկորներու վըրայէն, որոնք խառնուած էին կայծքարի և տիղմի հետ. յանկարծ առջևենիս բացուեցաւ ոսկորներով ծածկուած դաշտ մը, աւելը ճիշդը հովիտ մը: Կարելի է ըսել, թէ ընդարձակ գերեզմանատուն մըն էր այդ, ուրտեղ քսան դարերու ընթացքին սերունդներու յաւիտենական անձիւնները իրարու էին խառնուեր: Հեռուէն կ'երեւային բեկորներու բարձր կոյտերը, որոնք կը տարածուէին մինչև հորիզոնը և ապա կ'անհետանային ցնդող մշուշին մէջ: Հոս, մօտաւորապէս երեք քառակուսի մղոն տարածութեան վրայ, դրոշմուած էր կենդանական աշխարհի ամբողջ պատմութիւնը:

Հետաքրքրութիւնն ու անհամբերութիւնը մեզի առաջ կը մղէին: Մեր ոտքերուն տակ աղմուկով կը ջարդուէին նախապատմական կենդանիներու բեկորներն ու բրածոները, որոնց հագուազիւտ նմուշներուն համար իրարու հետ կը վիճին մեծ քաղաքներու թանգարանները:

Ես ապշած էի: Հօրեղբայրս իր երկար բազուկները բարձրացուցեր էր դէպի կրանիտէ կամարը, որ մեզի համար երկինքի տեղ կը բռնէր: Ան իր լայնաբաց բերանով, ակնոցներու տակէն փայլող աչքերով, վերէն վար և ձախէն աջ շարժուող գլոխով, իր ամբողջ կերպարանքով անսահման զարմանք կ'արտայայտէր: Անոր աչքին

առջև կը տարածուէր լեպոստերնեռու, մերիկոսերնեռու, մաստողոնու- ներու տեսակի անդրջրհեղեղեան հրէշներու անգնահատելի հաւաքա- ծոյ մը, որ այդտեղ կուտակուած էր կարծես ճիշդ անոր անձնական բաւականութեան համար: Եւ ինչքա՛ն մեծ հղաւ իր զարմանքը, երբ այդ բեկորներու կոյտի տակէն դուրս բերուա լերկ գանկ մը: Գողգղա- ցոյ ձայնով բացագանչեց.

— Աքսէ՛լ, Աքսէ՛լ, մարդկային գա՛նկ:

— Մարդկային գա՛նկ, հօրեղբայր, կրկնեցի ես, ոչ պակաս դար- մացած:

— Այո՛, եղբորորդիս: Ա՛հ, Միլն-Էդւլարս: Ա՛հ, Գազրֆաժ: Ին- չո՞ւ հոս չէք, ուր կը գտնուիմ ես, Օթթօ Լիզենպրոկս:

## ԼԸ

Հասկնալու համար հօրեղբորս բացագանչութիւնը, ուղղուած այդ ֆրանսացի հոչակաւոր զիտնականներուն, պէտք է դիտնալ, որ մեր մեկնելէն առաջ բալուռնդրոկիայի համար շատ կարեւոր դէպք մըն էր տեղի ունեցեր, 1863 Մարտ 28ին Արևվիլի մօտ Մուլէն-Կինիօնի քարահանքերուն մէջ Պ. Բուչէ տը Բերտայի զեկավարութեամբ աչ- խատող հողափոր բանուորները մարդկային գանկ մը գտան հողի երե- սէն տասնչորս ոտք խորութեան տակ: Ատիկա իր տեսակի մէջ առա- ջին բրածոն էր, որ հողին տակէն դուրս կը բերուէր: Անոր մօտ գրա- նուեցան քարէ տապարներ և տաշած կայծքարի կտորներ, որոնք ժա- մանակի ընթացքին միօրինակ գոյն էին ստացեր:

Այդ գիւտը մեծ ազմուկ հանեց ոչ միայն Պրանսայի, այլ նաև Անգլիոյ և Գերմանիոյ մէջ: Պրանսայի Գիտութեան Ակադեմիայի անդամներէն ոմանք, յատկապէս Միլն Էդւլարսը և Տը Գազրֆաժը հետաքրքրուեցան այդ դժբօյ, ապացուցին զանուած գանկի անվի- ճելի իսկութիւնն ու ամենաջերմ պաշտպանները հանդիսացան «ճնտոի վերաբերեալ գատական գործին», ինչպէս կը կոչէին Անգլիացիները:

Անգլիոյ երկրաբաններուն, որոնք այդ իրողութիւնը անմիակի կը գտնէին, Յալգոնիքի, Պուսգօին, Գարբնիքին և ուրիշներուն միացան գերմանացի զիտնականներ, և անոնց մէջ, առաջին կարգի վրայ, ամենէն խանդավառը Լիզենպրոկ հօրեղբայրս էր:

Չորրորդական ժամանակաշրջանի մարդկային բրածոն այդդիտով ապացուցուած և ընդունուած էր, բայց այդ տեսութիւնը կատարի հակառակորդ մը ունեցաւ յանձին Էլի-Տը-Պոմօնի: Այդ բարձր հեղինա- կաւոր գիտնականը կը պնդէր, թէ Մուլէն-Կինիօնի հողը կը պատկանէր

ուչ թէ «Չրհեղեղեան» կազմութեան, այլ աւելի նոր շերտերուն, և այդ տեսակէտի մէջ համաձայն ըլլալով Կիւմրիէի հետ, չէր ընդուներ, թէ մարդկային ցեղը առաջացեր էր չորրորդական ժամանակաշրջանի՝ կենդանիներուն հետ միամամանակի Լիգենպրոկ հօրեղբայրս. երկրաբաններու մեծամասնութեան հետ, տեղի չի տուաւ, վիճեցաւ և առարկեց և այդպէսով Էլի-Տը-Պոմոն գրեթէ մինակ մնաց իր տեսակէտին մէջ:

Մենք ծանօթ էինք դործի բոլոր մանրամասնութիւններուն, բայց չէինք դիտեր, թէ մեր մեկնելէն յետոյ այդ դործի պարզաբանումը նոր յառաջդիմութիւն ըրեր էր թէ ոչ: Նոյնանման ուրիշ ծնօտներ, որոնք թէև կը պատկանէին տարբեր տիպի անհատներու և սպգութիւններու, գտնուեցան շարք մը քարայրներու փխրուն դորչահողերուն մէջ՝ Փրանսա, Չուիցերիա և Պելճիգա, ինչպէս նաև ղէնքեր, իրեր, դործիքներ, մանուկներու, պատանիներու և ծերերու կմախքներ: Մարդու գոյութիւնը չորրորդական ժամանակաշրջանին օրէ օր աւելի կը հաստատուէր:

Այդ դեռ բոլորը չէր: Երրորդական շրջանի հողերէն դուրս բերուած մնացորդները հնարաւորութիւն տուին աւելի համարձակ գիտնականներուն՝ մարդկային ցեղին ալ աւելի մեծ տարիք սահմանել: Ծիշդ է, այդ բեկորները մարդկային ոսկորներ չէին, այլ միայն անոր ձեռքի գործերը, բրածոյ կենդանիներու ոտքերու և սպգերու ոսկորներ՝ կանոնաւոր կերպով տաշուած, քանդակուած այդ բեկորներն իրենց վրայ կը կրէին մարդկային աշխատանքի հետքեր:

Այդպէսով, մէկ թուիչքով մարդը մէկ անգամէն բարձրացեր էր բազմաթիւ դարերու սանդուխի աստիճաններէն. ան կախեր էր մասսոդոնցից, դարձեր ճհարաւային փիղձի ժամանակակիցը: Անոր գոյութիւնը հարիւր հազար տարիով ետ կ'երթար:

Եթէ նկատի ունենանք գիտութեան բալուսնդոլոկիայի այսպիսի տեսութիւնը, ապա հասկնալի կ'ըլլայ հօրեղբորս զարմանքն ու ուրախութիւնը, մանաւանդ որ քսան քսայ հեռաւորութեան վրայ ան ղէմ առ ղէմ կայնեցաւ չորրորդական դարաշրջանի մարդկային նոյնչին: Իսկոյն կարելի էր ճանչնալ որ մարդկային մարմին է այդ Արդեօ՞ք այդ մարմինը դարերու ընթացքին պահպանուեր էր շնորհիւ հողի յատուկ կազմին. այդ ըսել դժուար էր ինձի համար: Դիակի կաշին ձգուած էր մազաղաթի նման, անգամները և ակունները ըստ երկուսովին դեռ եւս անշնաս, առատ մազերով, ձեռքերու և ոտքերու մատներուն եղունգները անհեղիօքէն երկար, այդ բոլորը մեզի կը ներկայանար այնպէս, ինչպէս եղեր էր իր ողջութեան ժամանակ:

Դարերու այդ ուրուականին առջև պայպանձեր էի. հօրեղբայրս որ սովորաբար այնքան շատ կը խօսէր, նոյնպէս լուռ էր: Գնեք

բարձրացուցինք զիսկը, շօշափեցինք իրանը. ան մեզի կը նայէր իր փոսը ինկած աչքերով:

Քանի մը վայրկեան լռութենէ յետոյ, հօրեղբորս մէջ կրկին խօսեցաւ բրօֆէսէօրը. ան մոռցաւ, թէ ինչ պայմաններու մէջ կը գըտնըւինք և անկասկած երեւակայեց, թէ կանգնած է իր ուսանողներուն առջև, որովհետև սկսաւ խօսիլ բրօֆէսէօրական ձևով կարծես իր ունկնդիրներուն դիմելով.

— Պարոններ, ըսաւ ան, պատիւ ունիմ ձեզի ներկայացնելու չորրորդական դարաշրջանի մարդը: Քանի մը գիտնականներ ժըխտեցին անոր գոյութիւնը. հիմա ամենէն անհաւատն իսկ մատով զայն շօշափելով կրնայ համոզուիլ իր սխալի մասին: Ես գիտեմ, որ գիտութիւնը պէտք է շատ զգոյշ ըլլայ այսպիսի գիւտերու հանդէպ: Ընծի յայտնի է, թէ ինչպիսի չարաշահութիւններ են ըրեր զանազան պարնաուսներ և այլ ռաւլաթանքեր քարացած մարդկային բեկորներու հետ: Ես ծանօթ եմ այդ կարգի բոլոր պատմութիւններուն: Գիտեմ նաև, որ Գիւլիէն և Պլուսինպալսը այդպիսի ոսկորները մամոնթի ոսկորներու տեղ ընդունեցին: Բայց ներկայ պարագային ուէէ կասկած չի կրնար ըլլալ: Դիակը ձեր առջևն է, դուք կրնաք տեսնել, շօշափել զայն, ոչ թէ կմտիք է, այլ անվթար մնացած մարմին: Դուք կը տեսնէք, որ անոր բարձրութիւնը հազիւ վեց սանաչափ է. կասկածէ դուրս է, որ ան կը պատկանի Կովկասեան ցեղին: Ես կը համարձակիմ նոյնիսկ ըսել, որ ան կը պատկանի Յարեթեան ընտանիքին. որ ցրուած է Հնդկաստանէն սկսած մինչև արեւմտեան Եւրոպայի սահմանները: Այո՛, բրածոյ մարդ է այս, մատողոհնոտի ժամանակակիցը: Բայց ի՞նչ ճամբայով հասեր է ան այստեղ՝ այս ընդարձակ քարանձաւը: Այս հարցին ևս չեմ կրնար պատասխանել: Ամենայն դէպս, մարդը մեր աչքին առջևն է, շրջապատուած իր ձեռքով պատրաստուած գործիքներով, ու ես չեմ կրնար կասկածիլ, որ ան ապրեր է նախնական ժամանակներուն մէջ:

Երբ բրօֆէսէօրը աւարտեց, սկսայ ծափահարել: Պէտք է խոստովանիլ, որ հօրեղբայրս իրաւացի էր ու իր եղբորորդիէն աւելի գիտնական մարդիկ իսկ կը դժուարանային վիճիլ անոր հետ: Ուրիշ հոութիւններ ևս եկան հաստատելու անոր տեսակէտը. այս բրածոյ մարմինը մինակը չէր ոսկորներով ծածկուած այդ ընդարձակ դաշտին վրայ: Ամեն մէկ քայլափոխի մենք կը պատահէինք ուրիշ մարմիններու, այնպէս որ հօրեղբայրս կրնար անոնցմէ ընտրել ամենալաւերը, թերահաւատներուն համոզելու համար:

Բայց կարեւոր հարց մը կը ծագէր մեր առջև, որ մենք չէինք կրնար լուծել:

Արդեօք այս էակները գետնի ուժեղ տատանման հետևանքով արդէն մահացած ինկեր էին «Լիզննպրոկ ծովու» եզերքը, թէ անոնք

ապրեր էին այդ ստորերկրեայ աշխարհի մէջ, այս արհեստակոն երկինքին տակ, երկրի բնակիչներու նման ծնելով և մեռնելով: Մինչեւ հիմայ մենք ողջ տեսեր էինք ծովային հրէշներ միայն և ձուկեր: Արդեօք այս ստորերկրեայ աշխարհի ամայի փերուէն վրայ դեռ չի՞ թափառիր նախապատմական մարդը:

## ԼԹ

Կէս ժամ ևս քալեցինք այդ ոսկրակոյտերուն մէջ: Վառ հետաքրքրութիւնը շարունակ մեզի առաջ կը մղէր: Դեռ ի՞նչ հրաշալիքներ, ի՞նչ դանձեր կը պահէր իր մէջ այս քարանձաւը: Հայեացքս նոր դիւտեր, երեւակայութիւնս նոր զարմանայիքներ կ'ակնկալէր:

Ծովեզերքը շատոնց անհետացեր էր այդ դերեզմանատան ետեւը: Անզոյզ բրօքէսէօրք, առանց մտահոգուելու, թէ կրնայինք մոլորուել, դիս աւելի հեռուները կը տանէր: Մենք լուռ առաջ կ'երթայինք ողորուած ելեքտրական լոյսով: Ելեքտրական լոյսը բոլոր իրերը կը լուսաւորէր հաւասարապէս. որոշ կիլակէտ գոյութիւն չունէր, որ կարենար ստուեր ձգել: Գոլորչիները բոլորովին ցնդեր էին: Ժայռերը, հեռաւոր լեռները, ծառերու քանի մը անորոշ խումբեր տարօրինակ տեսք էին ստացեր շնորհիւ ճառագայթող լոյսի համաչափ տարածման:

Մէկ ժամ քալելէ յետոյ, հասանք ընդարձակ անտառ մը, բայց այդ արդէն «Գրեախիսնի նաւահանդիւստի» քովը մեր տեսած «սունկի» անտառը չէր: Ատիկա երկրորդական դարաշրջանի բուսականութիւնն էր իր ամբողջ փարթամութեամբ: Հսկայ արմաւենիներ, կարմրածառեր, կիպարիսներ և բազմաթիւ այլ ծառեր իբարու էին հիւսուած, պատուտակներու ամբողջ ցանցով մը: Հողը ծածկուած էր մամուռներու և լերդուկներու խառտ գորգով: Ստուակները կը մրմնջէին թուփերու հովանիին տակ, եթէ կարելի է այդպէս անուանել, որովհետեւ ոչ մէկ ստուեր չիկար: Անոնց փերուէն աճեր էին ծառանման պտերներ, նման անոնց, որոնք կ'աճին ջերմօցներուն մէջ: Բայց բոլոր այս ծառերը, թուփերը, բոյսերը անդոյն էին, որովհետեւ զրկուած էին արեւի կենսատու ջերմութենէն: Ամեն ինչ կը ձուլուէր միօրինակ գորշ ու կարծես գալկացած դոյնի մը մէջ: Տերեւները, կարծես օդին մէջ խռնացած թուղթէ շինուած ըլլային:

Հորեզայր Լիդենպրոկը համարձակ առաջ կ'երթար այս ընդարձակ անտառին մէջ: Ես անոր կը հետևէի ոչ առանց երկիւղի: Եթէ բնութիւնը այստեղ բուսական կեր է պատրաստեր, ինչո՞ւ կաթնասուն կենդանիներ եւս չըլլան այս վայրերուն մէջ: Բացասիներուն մէջ նը-

կատեցի ճակնդեղային լոյսեր և խոտաբոյսեր, որոնք այնքան սիրելի են ոռոճացող կենդանիներուն: Ապա խառնիխուռոն կ'երեւային երկրադունտի զանազան գօտիներու ծառերու ակասկները, կաղնին կ'աճէր արմաւենիի կողքին, աւսարալիական էղալիպոսը կոթնած էր նորվեկիական մայրիին, հիւսիսային ողորնիի ճիւղերը խառնուեր էին զելունտական կաւրիզի ճիւղերուն հետ,

Յանկարծ կանգ առի և ձեռքովս կանգնեցուցի հօրեղբորս: Սրբոռուող լոյսը հնարաւորութիւն կու տար անտառին մէջ ամենափոքր իրերն իսկ նշմարելու: Ինձի թուաց, որ կը տեսնեմ... — ոչ թէ թուաց, այլ սեփական աչքերով տեսայ հոկայական մարմիններ, որոնք կը շարժուէին ծառերուն տակ: Իսկապէս, վիթխարի քաղաքներ էին անոնք, մաստոգոնտներու հօտեր, ոչ թէ բրածոյ, այլ կենդանի ու նման անոնց, որոնց բեկորները գտնուեցան 1801ին Օհայոյի ճահիճներուն մէջ: Կը տեսնէի այդ վիթխարի փիղերը, որոնց կնճիթները կը գալարուէին ծառերուն տակ, օձերու նման: Կը լսէի, թէ ինչպէս իրենց երկար ժանիքներով կը ջարդէին դարաւոր բուները: Ճիւղերը կը ճարճատէին ու տերեւները մեծ քանակութեամբ պոկուելով կ'անհետանային այդ հրէշներու վիթխարի երախներուն մէջ: Եւ այսպէս, մենք մինակ էինք այստեղ, երկրի բնիկներէն մէջ, այդ հրէշներու իշխանութեան տակ: Հօրեղբայրս անոնց կը նայէր:

— Երթա՛նք, ըսաւ ան յանկարծ ձեռքէս բռնելով, առաջ, առաջ:

— Ո՛չ, բացազանչեցի, ո՛չ: Մենք անգէն ենք: Ի՞նչ կրնանք ընել այս վիթխարի չորքոտանիներուն մէջ: Վերադառնանք հօրեղբայր, վերադառնանք: Ոչ մէկ մարդկային էակ չի կրնար այս հրէշները գրգռել և անպատիժ մնալ:

Ոչ մէկ մարդկային էակ, պատասխանեց հօրեղբայրս ցած ձայնով, կը սխալուիս Աքսէ՛լ, նայէ՛, նայէ՛ հոն, ինձ կը թուի, թէ կենդանի էակ կը տեսնեմ. էակ մը, որ մեզի նման է, մարդ մը:

Ես այն կողմը հայեցայ, ուսերս թոթուելով, վճռած ըլլալով անվրստահութիւնս ծայր սատիճանի հասցնել: Սակայն հարկ եղաւ անձնատուր ըլլալ իրականութեան: Իսկապէս, մեղմէ քառորդ մղոն հեռու, յետուած հսկայ ծառի մը բունին, մարդկային էակ մըն էր կանգնած:

Ան կարծես կ'արածեցնէր մաստադոնտներու այդ անհամար հօտը:

Այս անգամ կմախքներու դաշտին մէջ մեր գտածը բրածոյ գիակ էր այլ հսկայ կենդանի էակ մը, որ կրնար յաղթահարել այդ հրէշները: Անոր հասակը տասնըրեկու տաքէն աւելի էր, գլուխը՝ գոմէշի գլխու մեծութեամբ, կորսուած էր գլղղուած մազերու անտառին մէջ. ան կը շարժէր հսկայական ճիւղ մը, անդրջրհեղեղիան հովիւի արժանի մահակ մը:

Մենք միացեր էինք անշարժ, սարսափէն քարացած: Բայց ան կրնար մեզի նկատել. պէտք էր փախիլ այս տեղէն:

— Եկէ՛ք, եկէ՛ք. բացագանչեցի հետս քաշելով հօրեղբայրս, որ կեանքին մէջ առաջին անգամ լսեց զիս: Քառորդ ժամ յետոյ մենք արդէն հեռացած էինք այդ ահռելի թշնամիի տեսողութենէն:

Իսկ այժմ, երբ հանգիստ կը մտածեմ այդ մասին, երբ այդ արտակարգ հանդիպումէն յետոյ ամիսներ անցած են, ի՞նչ կրնամ ըսել այդ մասին: Հաւատա՞լ: Ոչ. անկարելի է: Մեր տեսածը պարզապէս ցնորք էր և ոչ թէ իրականութիւն: Ընդունիլ. թէ մարդկային ցեղը կրնար սպրիլ այդ քարանձաւին մէջ, կատարեալ անմտութիւն պիտի ըլլար:

Կրնամ ընդունիլ, որ այդ կենդանի մըն էր, որուն կազմուածքը կը մօտենար մարդկային կազմին. ոեւէ նախադարեան կապիկ, պրոտոպիտեկ: Բայց այդ մէկը հասակով կը դերազանցէր բոլոր մեզի ծանօթ չափերը: Կապիկ, այո, որքան ալ անհաւատալի ըլլայ այդ, իսկ մարդ, երբե՛ք:

Սարսափէ ու զարմանքէ ապշած, մենք հեռացանք անտառէն: Գլխապատառ կը փախչէինք ու կարծես ընաղդաբար վերագարձանք «Լիդենպրոկի ծով»-ու ալիւ: Թէև վստահ էի, թէ առաջին անգամ ոտք կը կոխենք այս գետնին վրայ, բայց յաճախ կը նկատէի, այնպիսի ժայռեր, որոնք ինծի կը յիշեցնէին «Գրետխենի նաւահանգիստ»-ի ժայռերը: Բազմաթիւ առուակներ ու ջրվէժներ կը թափուէին ժայռերու ճեղքուածքներէն: Նմանութիւնը երբեմն ապշեցողցիչ էր:

Այդ մասին իմ կարծիքս յայտնեցի բրոֆէսէօրին: Ան եւս կը կասկածէր ու չէր կրնար ճանչնալ այս վայրը:

— Ինչպէս կ'երեւայ, ըսի ես, մենք վերադարձած չենք մեր մեկնման կէտը. փոթորիկը մեր լաստը քիչ մը վերև տարած է, բայց եթէ մենք ծովեզերքի ուղղութեամբ երթանք, անկասկած «Գրետխենի նաւահանգիստը» կը հասնինք:

— Այդ պարագային, պատասխանեց հօրեղբայրս, աւելորդ է շարունակել այս շրջագայութիւնը, աւելի լաւ է վերադառնալ քէպի լաստը: Բայց չե՞ս սխալիր արդեօք, Ա.քսէլ:

— Դժուար է ըսել, սիրելի հօրեղբայր, որովհետև բոլոր ժայռերը իրարու կը նմանին: Սակայն ինծի կը թուի, թէ կը ճանչնամ այն հրուանդանը, որուն ստորտը Հանսը կառուցեց լաստը: Մենք պէտք է որ մօտ ըլլանք փոքր ծովախորշին և կարծես ճիշդ ան է, հոն:

— Ոչ, Ա.քսէլ, եթէ այդպէս ըլլար, մենք ամենայն դէպս կը հանդիպէինք մեր սեփական հեռքերուն, իսկ ես բան մը չեմ տեսնիր:

— Իսկ ես կը տեսնեմ. բացագանչեցի ես. յարձակելով առարկայի մը վրայ, որ կը փայլէր աւազին վրայ:

— Ի՞նչ բան է այդ:

— Ահա թէ ինչ է, պատասխանեցի ու հօրեղբորս ցոյց տուի ժանգոտած դաշոյն մը:

— Ա՛հ, ըսաւ ան, ուրեմն այս ղէնքը գու՛ն քեզի հետ բերած էիր:

— Ե՛ս. բնաւ երբեք, գուցէ դո՛ւք:

— Ոչ. որքան կը յիշեմ, այդպիսի դաշոյն բնաւ չեմ ունեցած:

— Տարօրինակ է:

— Ո՛չ, Աքսէլ. շատ պարզ է. իսյանտացիները յաճախ այդպիսի ղէնքեր կը գործածեն. ինչպէս կ'երեւայ, այդ դաշոյնը Հանսին կը պատկանի, գուցէ ան կորսնցուցած է ծովեզերքի:

Ես գլուխս շարժեցի. Հանսը այդպիսի դաշոյն չուներ:

— Այս դաշոյնը գուցէ նախապատմական ղէնք ըլլայ, ըսի ես, հսկայ հովիւի ժամանակակից կենդանի մարդուն ղէնքը: Բայց ոչ. այս ղէնքը քորիէ դարու չէ, ոչ ալ պրոնդէ դարու: Ասոր բերանը պողպատէ է...

Հոս հօրեղբորս ընդմիջեց զիս:

— Հանգստացիր, Աքսէլ, ըսաւ ան լսւրջ ձայնով. այս դաշոյնը տասնըվեցերորդ դարու ղէնք է. իսկական դաշոյն, ինչպիսին ասպետները կը կրէին իրենց դօտինն մէջ, և կռուի ժամանակ ատու վերջին հարուածը կու տային. այս դաշոյնը սպանական ծագում ունի. ո՛չ քեզի կը պատկանի, ոչ ինձի, ոչ որսորդին, ոչ ալ նոյնիսկ ոեւէ այնպիսի մարդկային էակի, որ գուցէ երկրագունտի ընդերքը կ'այրի:

— Ուրեմն, ձեր կարծիքով...

— Նայէ՛, բերանը ծածկուած է ժանգով, որ յառաջացած է ոչ թէ մէկ օրէն, մէկ տարիէն, այլ հարիւր տարիէն:

Բրօֆէսէօրը, ըստ իր սովորութեան, ոգեւորուած էր, տարուելով իր երեւակայութեամբ:

— Աքսէ՛լ, ըսաւ, մենք կը գտնուինք մեծ յայտնութեան մը առջև: Այս դաշոյնը հոս, աւազին վրայ ինկած մնացած է հարիւր երկու հարիւր, երեք հարիւր տարիէ ի վեր և անոր բերանը թափուած է այս ստորերկրեայ ծովու ժայռերուն զարնուելով:

— Բայց չէ՞ որ ինքնեքեքն չէ եկած, բացառանչեցի ես, մեզմէ առաջ մէկը եղած է հոս...

— Այո՛, մարդ մը...

— Իսկ այդ մարդը՞...

— Այդ մարդը իր անունը փորագրեր է այս դաշոյնով: Այդ մարդը ուզած է անգամ մը ևս իր ձեռքով ցոյց տալ երկրին կեդրոնին ճամբան: Փնտռենք ուրեմն:

Ծայր աստիճան հետաքրքրուած, ուղղուեցանք դէպի բարձր ժայռերը, ուշադրութեամբ քննելով ամենափոքր ճեղքուածները: Այդ-

պէսով հասանք տեղ մը, աւր ծովափը կը նեղնար: Ծովը կուգար, կը հասնէր գրեթէ ժայռերուն ստորտը, երեք կամ չորս մէթր տարածութեամբ անցք միայն ձգելով: Ժայռերու երկու ցցուածքներու արանքին մէջ կ'երեւար մութ նրբուղիի մը մուտքը:

Այգտեղ, կրանիթէ հարթ քարին վրայ երեւցան երկու խորհրդաւոր տառեր, կիսով չափ մաշած, ատոնք խիղախ և արտակարգ ուղեւորի անուան երկու սկզբնատառերն էին:

— Ա. Ս. Առնէ Սակնուսեմ՝, բացազանչեց հօրեղբայրս, միշտ և ամեն տեղ Առնէ Սակնուսեմ:

և

Ուղեւորութեան սկիզբը ես այնքան տարօրինակ բաներ տեսած էի, որ այլեւս բան մը չէր կրնար զիս զարմացնել: Բայց և այնպէս երեք հարիւր տարի առաջ փորագրուած այս տառերուն առջև ասպիտակ մնացի. բացի անկէ, որ գիտնական քիմիագէտի անուան սկզբնատառերը կ'երեւային ժայռին վրայ, ձեռքս կը գտնուէր նաև այն դաշոյնը, որով ան փորագրած էր այդ տառերը: Այլևս կարելի չէր կասկածիլ այդ ուղեւորի գոյութեան և ուղեւորութեան իրական ըլլալուն մասին:

Մինչդեռ այս մտքերը կը պտտէին գլխուս մէջ, բրօքֆէստօր Լիդենպրոկը ճառ մը արտասանեց, որուն մէջ խանդավառ գովեստներ կը կարգար Առնէ Սակնուսեմի հասցէին:

— Սքանչելի հանճար. բացազանչեց ան, դուն ամեն ջանք թափեցիր, որպէսզի ուրիշ մահկանացուներուն առջև բացուին երկրի կեղեւին ճամբաները, և քու նմաններդ այս ստորերկրեայ մութ նըկուղներուն մէջ կարենան գտնել երեք դար առաջ քու ուղեւորներ թողած հետքերը: Դուն հնարաւորութիւն տուիր, որ ուրիշները եւս հիանան այս հրաշալիքներով: Տեղ-տեղ փորագրուած անունդ քեզի հետեւող խիղախ ճամբորդը կ'առաջնորդէ ուղիդ դէպի իր նպատակը, և մեր մոլորակի կեդրոնը, դեռ երկար կը մնայ քու սեփական ձեռքով արձանագրուած անունդ: Թող ուրեմն ես ալ իմ անունս դնեմ այս կրանիտեայ վերջին էջին տակ և թող այսուհետեւ քու յայտնաբերած այս ծովու ափին տեսած քու հրուանդանը ընդմիշտ «Սակնուսեմի հրուանդան» կոչուի:

Հօրեղբորս սգեւորութիւնը փոխանցուեցաւ նաև ինծի: Ես մոռցայ ուղեւորութեան դժուարութիւնները և վերագարձի բոլոր վտանգները, և կը ցանկայի կատարել այն, ինչ որ ուրիշ մը կատարած էր, և ոչ մէկ բան ինծի անկարելի կը թուէր:

— Առաջ, ստա՛ջ, բացազանչեցի և արդէն կը վազէի դէպի մութ

անցքը, ևրբ բրօֆէսէօրը կեցուց զիս, այդ անհամբեր մարդը խորհուրդ տուաւ ինծի աւելի համբերատար ու պաղարիւն ըլլալ:

— Նախ և առաջ վերադառնանք Հանսին մօտ և լաստը հոս բերենք, ըսաւ ան:

Դժկամակութեամբ հնազանդեցայ և շտապ քայլերով անցայ ծովեզերեայ ժայռերուն մէջէն:

— Գիտէ՞ք, հօրեղբայր, ըսի իրեն ճամբան, որ մինչև հիմա բախտը դարմանալիօրէն մեղի հետ եղած է:

— Ահա թէ ինչ. այդպէ՞ս կը կարծես դուն, Աքսէլ:

— Ի հարկէ: Նոյնիսկ փոթորիկը մեղի շրտակ ճամբուն մէջ դըրաւ: Մինչդեռ լաւ եղանակը կրնար մեղի հեռացնել անկէ: Այն ատեն Սակնուսսեմի անունը մենք չէինք տեսներ և այժմ անել դրութեան մէջ կ'ըլլայինք:

— Այո, Աքսէլ, ուղղակի հրաշք է, որ մենք դէպի հարաւ նաւարկելով, քշուեցանք դէպի հիւսիս, դէպի «Սակնուսսեմի հրուանդանը»: Այս իրողութեան մէջ անբացատրելի բան մը կայ:

— Կարեւորը այդ չէ: Կարիք չիկայ իրողութիւնը բացատրելու. պէտք է օգտուիլ անկէ:

— Ի հարկէ, տղաս, բայց...

— Մենք հիմա նորէն հիւսիս կ'երթանք, կ'անցնինք Շուէտի, Թուսիոյ, Սիպրիոյ և Եւրոպայի միւս հիւսիսային երկիրներուն տակէն, փոխանակ խորանալու Ափրիկէի անապատներուն ու ովկիանոսի ալիքներուն տակ:

— Այո, Աքսէլ, դուն իրաւացի ես, և ամեն ինչ դէպի լաւը կ'երթայ, քանի որ մենք կը թողունք այս հորիզոնական ծովը, որ ան մեղի ոչ մէկ տեղ չէր հասցներ: Հիմա պէտք է իջնենք, շարունակ իջնենք: Գիտե՞ս, որ մինչև Երկրին կեդրոնը հասնելու համար միայն հազար հինգհարիւր մղոն կը մնայ:

— Ոչինչ բան, բացազանչեցի, չարժեք նոյնիսկ ասոր մասին խօսիլ: Առաջ, առաջ:

Այսպիսի խոսակցութիւններով հասանք որսորդին մօտ: Անմիջապէս մեկնելու համար ամեն բան պատրաստ էր, տեղաւորուեցանք լաստին վրայ և ուղղուեցանք դէպի «Սակնուսսեմի հրուանդանը»: Քամին նպաստաւոր չէր այնպիսի նաւակի մը համար, ինչպիսին մեր լաստն էր, այդ պատճառով ալ քանի մը անգամ թիակներու օգնութեան դիմեցինք: Յաճախ ժայռերը այնքան յառաջած էին ծովուն մէջ, որ ստիպուած էինք մեծ շրջաններ ընել: Վերջապէս Լրեք ժամ նաւարկելէ յետոյ, Երեկոյեան ժամը վեցին մօտ ավեր ելլելու համար յարմար տեղ մը մօտեցանք:

Ես ցատկեցի ավեր, հօրեղբայրս ու իսլանտացին հետեւեցան ին-

ծի: Այս ծովային ուղեորութիւնը ինծի չէր հանդատացներ. ընդհակառակը: Ես նոյնիսկ առաջարկեցի ճայրել մեր նաւերը», նահանջի ամեն ճամբայ կտրելու համար: Բայց հօրեղբայրս հակառակ էր ատոր:

— Ամենայն դէպս, ըսի ես, անմիջապէս ճամբայ ելլենք:

— Համաձայն եմ, ազատ, բայց նախ և առաջ պէտք է հետադարձել այս նոր ներքնուղին, դիտնալու համար, թէ արդեօք կարիք չկա՞յ սանդուխներ պատրաստելու:

Հօրեղբայրս գործի գրաւ Ռումկորֆի գործիքը. լաստը կապեցինք ծովեզերքը: Ներքնուղին անցքը հազիւ քսաւ քայլ հետու էր մեզմէ և մեր փոքրիկ խումբը, ես առջեւէն, իսկոյն ճամբայ ինկանք:

Ներքնուղին անցքը գրեթէ կլոր էր և մօտաւորապէս հինգ ոտք տրամագիծ ունէր: Մուտք ներքնուղին կարծես փորուած էր լերկ ժայռերուն մէջ. անոր պատերը տաշուած էին հրաբլային նիւթերէ, որոնց համար ժամանակին իբրև անցք ծառայած էր: Անցքին վարի մասը գետնի հաւասար էր, այդպէսով ներքնուղին կարելի էր մտնել առանց դժուարութեան:

Նախ մենք կ'երթայինք բոլորովին հորիզոնական ուղղութեամբ, բայց քանի մը քայլ յառաջանալէ յետոյ յանկարծ ճամբան փակուեցաւ քարի հսկայ զանգուածով:

— Անիծեա՛լ մայր, բացազանչեցի, տեսնելով այդ արդէւրք:

Իզուր փնտոնեցինք աջ ու ձախ, վերն ու վարը. ոչ մէկ անցք, ոչ մէկ ճեղքուածք կար: Ես սաստիկ յուսախաբ եղայ, և չէ ուզեր ընդունիլ այդ արգելքին իրական ըլլալը: Մոկեցայ ու քարէ զանգուածը վարէն զիտեցի, յետոյ վրայէն նայեցայ. ոչ մէկ բացուածք. ամեն կողմ նոյն կրանիթեայ պատուարը: Հսնար լաստերի լոյսով լուսաւորեց պատի բոլոր մասերը, բայց ոչ մէկ անդ ամենափոքր անցք անգամ չէր նկատուեր: Պէտք էր հրաժարիլ անցնելու մտադրութենէն:

Գետին նստայ. հօրեղբայրս կ'երթեւեկէր մեծ-մեծ քայլերով:

— Բայց ի՞նչպէս անցաւ Սակնուստեմը, բացազանչեցի:

— Այո՛, ըսաւ հօրեղբայրս, մի՞թէ այս ժայռը կանգնեցուց զինք:

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեցի աշխուժօրէն: Ժայռի այս զանգուածը անցքը յանկարծ փակած է, հաւանաբար երկրաշարժի հետեւանքով: Պարզ է, որ այս ներքնուղին նախապէս ճամբայ եղած է լալսներու համար ու հրաբխային նիւթերը ազատօրէն անցած են անոր մէջէն: Տեսէք, կրանիթեայ առաստաղին վրայ նոր ճեղքուածքներ կ'երևան. ասոնք առաջացած են այն բանէն, որ վիթխարի մեծութեամբ քարեր նետուած են ներքնուղին մէջ: Բայց հետագային աւելի ուժգին ճնշում մը այս զանգուածը հոս մղած է և փակած է այդ անցքը: Սակնուստեմը դէմ չէ առած այս պատուարին: Մինք պէտք է յաղթահարենք զայն, այլապէս արժանի չենք ըլլար Երկրին կեդրոնը հասնելու:

Ահա՛ թէ ինչպէս խօսեցայ: Բրօֆէսէօրի հոգին ամբողջութեամբ ինձի փոխանցուած էր: Յայտնագործութիւններու տենջը զիս կ'օգու-  
ւորէր. մոռցած էի անցեալը ու կ'արհամարհէի սպառազան: Ինձի հա-  
մար այլևս ոչինչ գոյութիւն ունէր երկրագունտին երեսը: Քաղաք-  
ներն ու գիւղերը, Համպուրկն ու Արքայական փողոցը այլևս զիս  
չէին զբաղեցնէր. իսկ իմ խեղճ Գրեախենը, հաւանաբար ինձ կը հաշ-  
ուէր թաղուած յաւիտեան երկրին ընդերքին մէջ:

— Ուրեմն, ըսաւ հօրեղբայրս, բրիչի և քլուենդի օյնութեամբ  
մեզի ճամբայ բանանք և քանդենք պատը:

— Բրիչը չի կրնար քանդել այսքան կարծր պատը, ըսի:

— Ուրեմն...

— Վառօդ ունինք. կրնանք պայթեցնել ժայռը:

— Պայթեցնե՞լ:

— Այո, պէտք է միայն ժայռին մէջ ծակ մը բանալ:

— Հա՛նս, գործի անցիր, բացազանչեց հօրեղբայրս:

Հանսը իսկոյն լաստէն բերաւ քլուենդը ու անով ժայռին մէջ ա-  
կանի համար ծակ բացաւ: Աշխատանքը գիւրեմն չէր: Պէտք էր այն-  
պիսի մեծութեամբ ծակ բանալ, որուն մէջ կարելի ըլլար քսան քի-  
լօկրամ հրաբամպակ լեցնել, նիւթ մը, որուն քանդիչ ուժը վառօդէն  
չորս անգամ աւելի է: Սաստիկ յուզուած էի: Մինչդեռ Հանսը իր աշ-  
խատանքով զբաղած էր, հօրեղբօրս կ'օգնէի պատրոյգը պատրաստե-  
լու համար:

— Մենք կ'անցնինք, կ'ըսէի ես:

— Անշուշտ, կ'անցնինք, կը կրկնէր բրօֆէսէօրը:

Կէս դիշերին աւարտեցաւ ականի աշխատանքը, հրաբամպակին  
լիցքը դրինք ժայռին մէջ, իսկ պատրոյգին ծայրը ներքնուղիէն  
գուրս կուգար: Կայծ մը բաւական էր այդ ահուլի ականը պայթեց-  
նելու համար:

— Սպասենք մինչև վաղը, ըսաւ բրօֆէսէօրը:

Պէտք էր հնազանդիլ և սպասել ամբողջ՝ վից ժամ:

ԽԱ.

Յաջորդ օր, Օգոստոս 27ը նշանաւոր դարձաւ այս ստորերկրեայ  
ուղեւորութեան համար: Ես այդ մասին չեմ կրնար յիշել, ստանց  
սարսափի: Այդ բոպէէն սկսեալ մեր գատողութիւնը, բանականու-  
թիւնը, հնարադիտութիւնը այլևս ոչ մէկ դեր կրնային խաղալ և  
մենք բնութեան ուժերու խաղալիքը դարձանք:

Ժամը վիցին պատրաստ էինք արդէն: Կը մօտենար այն ժամը,

կրք վառողի օգնութեամբ մեզի համար ճամբայ պիտի բանայինք կը-  
րանիթեայ պատին մէջ: Պատրոյգը վառելու պատիւը ինծի վիճակ-  
ուեցաւ: Այդ գործողութիւնը կատարելէն յետոյ պէտք է շտապէի հաս-  
նելու ուղեկիցներուս, որոնք լաստին վրայ էին, բաց ծովը դուրս գալու  
համար: Այդպէսով կը կարծէինք որ ազատ կը մնանք պայթիւնի հե-  
տեանքներէն, որոնք կրնային կրանիթեայ զանգուածի ներքին սահ-  
մաններէն շատ հեռուն տարածուիլ: Մեր հաշուով պատրոյգը պէտք  
է վառուեր տասը վայրկեանէն, մինչեւ վառողին հասնիլը: Հետեւա-  
բար, բաւականաչափ ժամանակ ունէի մինչեւ լաստը հասնելու հա-  
մար: Պատրաստուեցայ կատարելու իմ դիրս մեծ յուզումով:

Շտապ նախաճաշէն յետոյ հօրեղբայրս ու որսորդը ուղղուեցան  
դէպի լաստը, իսկ ես մնացի ծովափ: Պատրոյգին կրակ տալու համար  
ձեռքս բռնած էի վառած լապտերը:

— Գնա՛, տղաս, ըսաւ հօրեղբայրս և իսկոյն վերադարձիր մեզ  
մօտ:

— Հանգիստ եղէք, հօրեղբայր, չեմ ուշանար:

Ես շուտով գացի դէպի ներքնուղիին անցքը, բացի լապտերը և  
բռնեցի պատրոյգին ծայրը: Բրօֆէսէօրը խրոնօմէթրը բռնած էր  
ձեռքը:

— Պատրաստ ես. կանչեց:

— Պատրաստ,

— Ուրեմն կրակ, տղաս:

Իսկոյն կրակ տուի պատրոյգին և վազն ի վաղ ծովափ հասայ:

— Բարձրացի՛ր լաստին վրայ, բացաճանչեց հօրեղբայրս, և  
մեկնի՛նք:

Ուժգին հրումով Հանսը մեզի դէպի բաց ծովը քշեց, լաստը ամէն  
հեռացաւ յիսուն մետր: Տագնապալի վայրկեան էր: Բրօֆէսէօրը ու-  
շադրութեամբ կը նայէր խրոնօմետրի սլաքին:

— Հինգ վայրկեան եւս... կ'ըսէր ան, չո՛րս ևս չերեք...

— Երկու վայրկեան ևս... մէկ վայրկեան... փլէք կրանիտեայ  
ժայռեր:

Ի՞նչ կատարուեցաւ այդ վայրկեանին: Ինծի կը թուի, թէ չլսեցի  
պայթիւնի ձայնը: Բայց ժայռերուն ձեւերը յանկարծ փոխուեցան  
աչքիս առջեւ, անոնք վարադոյրի պէս բացուեցան: Տեսայ անյատակ  
անդունդ մը, որ կը բացուէր ծովափին: Ծովը կարծես գլխապատոյսի  
բռնուած վիթխարի ալիքի մը վերածուեցաւ և անոր մէջքին վրայ  
բարձրացաւ լաստը:

Մենք երեքով դարձանք: Լոյսին փոխարինեց խաւարը: Զգացի,  
որ յենման կէտը չքացաւ և այդ ոչ թէ ոտքերուս տակ, այլ լաստին  
տակ, կարծեցի, թէ լաստը կ'ընկղմի, բայց կը սխալէի: Ուզեցի խօ-

սիլ հօրեղբորս հետ, բայց ալիքներուն ազմուկը չէր թողուր, որ ձայնըս լսելի ըլլայ: Հակառակ խաւարին, ազմուկին, ապշութեան, յուզումին, հասկըցայ թէ ինչ կը կատարուէր:

Պայթած ժայռին ետեւը անդունդ էր: Պայթիւնը իսկական երկրաժարժ առաջացուցած էր ճեղքուածքներ ունեցող այդ գետնին մէջ, անդունդը բացուած էր ու ծովը հեղեղի փոխուելով, մեղի իր հետ կը քչէր ու կը տանէր դէպի բացուած անդունդը: Ընթացինքս կորսուած համարեցի:

Այդպէս անցաւ ժամ մը, երկու ժամ, ո՞վ գիտէ, գուցէ աւելի: Իրարու սեղմուած էինք, իրարու ձեռքէն բռնած, որպէսզի լաստէն դուրս չիյնայինք: Երբեմն լաստը ուժգին ցնցումներու կ'ենթարկուէր, երբ պատին կը զարնուէր: Սակայն այդ բաղխումները հազուադէպ էին, որմէ եզրակացուցի, որ ներքնուղին խիստ լայնցած էր: Կասկած չկար, որ Սակնուսսեմի ճամբան էր այդ. բայց մենք մինակ վար չէինք իջներ, մեր անզգուշութեան հետեւանքով ամբողջ ծովը մեղի հետ կը տանէինք:

Այս մտքերը, հասկնալի է, որ գլխուս մէջ ծագում առին տարտամ ու մութ ձեւով: Դժուարութեամբ կրնայի միտքերս ի մի հաւաքել այս գլխապտոյտ նաւարկութեան ժամանակ, որ անկումի կը նմանէր: Դատելով դէմքիս զարնուող օդի հոսանքի ուժէն, մեր շարժման արագութիւնը կը գերազանցէր արագընթաց դնացքներու արագութիւնը: Այս պայմաններուն ջահ վառելը անկարելի էր, իսկ մեր վերջին ելեքտրական դարձիքը փշրուեր էր պայթիւնի ժամանակ: Այդ պատճառով ալ ապշած մնացի, երբ կողքիս յանկարծ լոյս երեւցաւ: Հանսին հանդարտ դէմքը լուսաւորուեցաւ: Ծարպիկ որսորդը յաջողած էր լապտերը վառել և թէեւ անոր բոցը հազիւ կը պլպլար, այնուամենայնիւ քիչ մը կը լուսաւորէր այդ սոսկալի խուարը:

Ներքնուղին լայն էր, չէի սխալուի: Տկար լոյսը թոյլ չէր տար տեսնել միաժամանակ անոր երկու պատերն ալ: Մեղի այդպիսի մեծ արագութեամբ քշող ջութերու հոսանքը աւելի սաստիկ էր, քան Սմերիկայի ամենասարժնթաց ջրվէժներու հոսանքը: Երբեմն լաստը կ'իյնար ջրապտոյտի մէջ ու հոլի պէս կը դարձնէր: Երբ մեր լաստը կը մօտենար ներքնուղիի պատերէն մէկուն, լապտերի լոյսով կրնայի գաղափար կազմել, թէ ինչպիսի արագութեամբ առաջ կ'երթայինք: Ժայռերու զուրս ցցուած մասերը անընդհատ իրար կը յաջորդէին: Իմ կարծիքով այդ արագութիւնը հաւասար էր մէկ ժամուայ ընթացքին երեսուն մղոնի:

Հօրեղբայրս և ես կը նայէինք մոլոր հայեացքով, ինկած կայմի բեկորի մօտ, որ ջարդուած էր աղէտի ժամանակ: Կ'աշխատինք մէջքերնիս դարձնել դէպի քամիին հոսանքը. շարժման արագութիւնէն չնչահեղձ չըլլալու համար:

Այդպէս անցան մամեր: Դրութիւնը չէր փոխուեր, բայց զէպօ մը աւելի բարդացուց այդ: Մեզի հետ առած իրերու մեծ մասը չքացած էր այն պահուն, երբ ծովը բուռն թափով մեզի քշեց: Լապտերը վերցնելով, սկսայ նայիլ, թէ ինչ մնացած էր մեր ունեցածէն: Գործիքներէն միայն կողմնացոյցն ու խրոնոմետրը մնացած էին. սանդուխներէն ու պարաններէն միայն կտոր մը մնացած էր, փաթեթուած կայմի բեկորին. ոչ բահ, ոչ բրիչ, ոչ մուրճ, իսկ պաշարեղէն՝ միայն մէկ օրուայ համար մնացած էր — կտոր մը չորցած միս ու քանի մը կտոր պաքսիմաթ. ահա բոլորը: Ապուշ հայեացքով կը դիտէի չորս կողմս, չուղելով հաւատալ տեսածիս: Եւ սակայն ինչի՞ մասին կը մըտածէի. եթէ նոյնիսկ ամիսներու պաշար մնացած ըլլար, ինչպէս կրնայինք դուրս ելլել այդ անդունդէն, որուն մէջ մեզի նետած էր այդ անդիմադրելի հոսանքը:

Սակայն, երեւակայութեան անբացատրելի տարօրինակութեամբ մը, մոռցայ անմիջական վտանգը և ապագայ սարսափներու մասին կը մտածէի: Գուցէ կարենայինք աղատիլ այս վտանգաւոր վիճակէն: Բայց ինչպէս: Իսկ սովէն մեռնելու վտանգը: Վճռեցի այդ մասին բան մը չըսել հօրեղբօրս, իր հանգստութիւնը չվրդովելու համար:

Այդ միջոցին լապտերի լոյսը հետզհետէ տկարացաւ ու բոլորովին մարեցաւ. պատրոյզը ամբողջութեամբ վտուած էր: Դարձեալ մթուածիւն տիրեց. այդ անթափանցելի խաւարը ցրուելու ոչ մէկ յոյս կար: Թէև մեզ մօտ տակաւին ցահ մը մնացած էր, սակայն կարելի չէր զայն ձեռքի մէջ ունենալ: Երեխայի պէս գոցեցի աչքերս՝ մթութիւնը չտեսնելու համար: Բաւական երկար ժամանակ անցնելէ յետոյ մեր շարժման արագութիւնը կրկնապատկուեցաւ. ես այդ նկատեցի օդի զօրացող հոսանքէն: Զուրի անկումը ծայրայեղ չափերու հասաւ, կը թուէր, թէ այլևս չէինք սահեր, այլ կ'իյնայինք, կարծես ուղղահայեաց թռիչք կը կատարէինք: Հօրեղբայրս ու Հանսը թեւերէս ուժգին բռնած իրենց ամբողջ ուժովը կը պահէին զիս:

Յանկարծ ցնցում մը զգացի. լաստը կարծր մարմնի բաղնած չէր, բայց անկման ընթացքին յանկարծ կանգ էր առած. Զուրի զանգուած մը, Զուրի հսկայ սիւն մը թափեցաւ լաստին վրայ: Ես շնչահեղձ եղայ ու կը խեղդուէի... Սակայն այս յանկարծակի ջրհեղեղը երկար չտեւեց: Քանի մը վայրկեան յետոյ ես ինծի զգացի ազատ օդի մէջ և սկսայ լիաթօք շնչել: Հօրեղբայրս ու Հանսը պինդ բռնած էին զիս, իսկ լաստը կը շարունակէր տանիլ մեզի:

Իրիկուան ժամը տասին մօտ էր: Վերջին ցնցումէն յետոյ առաջին բանը, որ նկատեցի, այդ ներքնուղիին մէջ յանկարծ տիրող լուսութիւնն էր, որ յաջորդած էր քանի մը ժամ ահեղ խլացուցիչ ալմուկին: Վերջապէս, շուկի պէս լսեցի հօրեղբորս ձայնը, որ կ'ըսէր.

— Կը բարձրանանք:

— Ի՞նչ կ'ուղէք ըսել, բացազանչեցի:

— Այո, կը բարձրանանք, կը բարձրանանք:

Ես ձեռքս պարզեցի ու պատին դպցուցի. ձեռքս արիւնեցաւ: Կը բարձրանայինք անասելի արագութեամբ:

— Զա՛հը, ջահը, բացազանչեց բրօֆէսէօրը:

Հանսը մեծ դժուարութեամբ կրցաւ վառել ջահը, որուն բոցը բաւականաչափ լուսաւորեց ամբողջ տեսարանը:

— Այդպէս ալ կը կարծէի, ըսաւ հօրեղբայրս, կը գտնուինք նեղ ջրհորի մը մէջ, որ հազիւ ութ մէթր լայնութիւն ունի: Զուրը, հասնելով անդունդին յատակը, նորէն կը բարձրանայ իր մակերեւոյթին և մեզի իրեն հետ կը բարձրացնէ:

— Ո՞ւր:

— Չեմ գիտեր, բայց պէտք է ամեն բանի պատրաստ ըլլալ: Այն արագութիւնը, որով կը բարձրանանք, իմ կարծիքով մէկ երկվայրկեանի մէջ 4 մէթր կ'ըլլայ, այսինքն մէկ վայրկեանի մէջ 240 մէթր, կամ մէկ ժամէն երեք ու կէս մղոն: Այս ընթացքով շատ հեռու կ'երթանք:

— Այո, եթէ բան մը մեզի չկանգնեցնէ, եթէ այս անդունդը ելք ունի: Բայց եթէ անոր բերանը փակ է, եթէ օդը, ջուրի սիւնին ճնշման ազդեցութեան տակ հետզհետէ խտանա՞յ, եթէ մենք ջարդուփշուր ըլլա՞նք...

— Աքսէլ, պատասխանեց բրօֆէսէօրը մեծ պաղարիւնութեամբ, մեր դրութիւնը, ի հարկէ, անյոյս է, բայց և այնպէս փրկուելու որոշ հաւանականութիւններ կան, այդ է որ ես նկատի ունիմ: Եթէ տմեն վայրկեան կրնանք ոչնչանալ, միեւնոյն ատեն ամեն վայրկեան կրնանք փրկուիլ: Պէտք է ուրեմն պատրաստ ըլլանք օգտուելու ամենաչնչին հանդամանքներէն:

— Բայց ինչ ընենք:

— Բան մը ուտենք ուժ ստանալու համար:

Այդ խօսքերուն վրայ, ես հօրեղբորս նայեցայ: Պէտք էր վերջապէս ըսել իրեն այն, ինչ որ մինչեւ հիմա չէի ուզեր յայտնել:

— Ուտե՞լ, կրկնեցի:

— Այո, անմիջապէս:

Բրոքէտէօրը դանիերէն քանի մը խօսք ըսաւ: Հանար ղուսը  
չարմեղ:

— Ի՞նչպէս, բացագանչեց հօրեղբայրս, մեր պաշարը մի՞թէ կոր-  
սուելի՞ է:

Այո, ս՛նա բոլորը, ինչ որ մնացած է: Կտոր մը չորցած միս մեր  
երեքին համար:

Հօրեղբայրս ինծի կը նայէր, առանց խօսքերս հասկնալ ուզելու:

— Իսկ հիմա, ըսի, մի՞թէ դուք տակաւին կը հաւատաք, թէ  
կրնանք փրկուել:

Հարցումս առանց պատասխանի մնաց:

Անցաւ ժամ մը: Սաստիկ անօթութիւն կ'ըզգայի Ուղեկից-  
ներս նոյնպէս ուտել կ'ուզէին, բայց ոչ ոք կը համարձակէր ձեռք  
տալ սննդի այդ խեղճուկ մնացորդին:

Սակայն կը բարձրանայինք մեծ արագութեամբ: Երբեմն մեր  
շունչը կը կարուէր, ինչպէս կը պատահի օդագնացներուն, երբ ա-  
նոնք մեծ արագութեամբ կը բարձրանան: Բայց անոնք եթէ բարձ-  
րանալով օդի վերին շերտերը, հետզհետէ աւելի ու աւելի ցուրտ  
կ'ըզգան, մենք բոլորովին ատոր հակառակը կ'ըզգայինք: Ձերօ  
մաստիճանը կը բարձրանար զգալի արագութեամբ և այդ վայրկեանին  
հաւանաբար կը հասնէր քառասուն աստիճանի:

Ինչ կը նշանակէր այս փոփոխութիւնը: Մինչև հիմա փաստերը  
կը հաստատէին Դեվիի և Լիզենպրոկի տեսութիւնը, մինչև հիմա  
հրակայուն լեռնահանքիբու, էլեքտրականութեան ու մագնիսակա-  
նութեան առանձնայատուկ պայմանները փոխած էին ընթացիկ  
ընդհանուր օրէնքները, մեզի համար չափաւոր ջերմաստիճան ստեղ-  
ծելով, սակայն կեդրոնական ջերմութեան տեսութիւնը, իմ կարծիքով,  
կը մնար միակ հնարաւոր բացատրութիւնը Մի՞թէ հիմա ինկած էինք  
այնպիսի միջավայրի մէջ, ուր այդ երեւոյթները կը կատարուէին  
իրենց ամբողջ ուժով, ուր ջերմութիւնը ժայռերուն կուտար կատար-  
եալ հայման վիճակ: Նս ասկէ կը վախնայի, և ըսի բրօքէտէօրին.

— Եթէ չխեղդուինք կամ, սովէն չմեռնինք, միշտ ալ ողջ-ողջ  
այրուելու հեռանկարը կայ մեր սողուն:

Ան միայն ուսերը ցնցեց ու իր խոհերուն մէջ թաղուեցաւ:

Ժամ մը եւս անցաւ: Բացի ջերմութեան բարձրացումէն, ուրիշ  
ոչ մէկ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Վերջապէս, հօրեղբայրս խղեց  
լուութիւնը:

— Հասցա՛, ըսաւ, պէտք է բան մը ընել:

— Ի՞նչպէս, հարցուցի:

— Այո: Պէտք է ուժերը վերականգնել: Եթէ փորձենք քանի մը  
ժամ երկարել մեր զոյւթիւնը, խնայելով սնունդի մնացորդը, թոյլ  
կը մնանք միջին վերջը:

— Այո, և այդ վերջը շատ ալ չուշանար:

— Բայց եթէ փրկուելու առիթը ներկայանայ, եթէ գործելու կարիք ըլլայ, ո՞ւրիկէ ուժ կ'ըստանանք:

— Բայց, հօրեղբայր, ի՞նչ կը մնայ մեզի, եթէ մօտ վերջին կըտորն ալ ուտենք:

— Ոչ ի՛նչ, Ա. քսէլ, ոչ ի՛նչ. բայց մի՞թէ քեզ աւելի կը կշտացնէ, եթէ աչքերով ուտես այդ: Դուն կը դատես, մարդու մը նման, որ կամք չունի, եռանդ չունի:

— Իսկ մի՞թէ դուք տակաւին յոյսերնիդ չէք կորած, բացազանչեցի դրդուում:

— Ո՛չ, վճռականօրէն պատասխանեց բրօֆէսէօրը:

— Ինչպէ՞ս. դուք տակաւին փրկութեան որեւէ յո՞յս ունիք:

— Այո՛, ի հարկէ, այո՛. չեմ կրնար թոյլ տալ, որ մարդը քանի դեռ կը բարախի անոր սիրտը, քանի դեռ ընդունակ է շարժելու, յուսահատութեան մատնուի:

Ինչպիսի՞ խօսքեր: Նման պայմաններուն այդ խօսքերը արտասանող մարդը, ի հարկէ, արտակարգ կամքի տէր պէտք է ըլլար:

— Վերջապէս, ի՞նչ կ'ուզէք ընել, հորցուցի:

— Ուտել մնացած պաշարեղէնը մինչևե վերջին փշրանքը, և այդպէսով վերականգնել մեր ուժերը: Թող այս մեր վերջին ճաշը ըլլայ, բայց, ամենայն դէպս, փոխանակ հիւծելու, մենք նորէն մարդ կը դառնանք:

— Լաւ, ուտենք, բացազանչեցի:

Հօրեղբայրս առաւ մօտին մէկ կտորը ու աղէտէն ազատուած քանի մը պաքսիմաթը, և երեք հաւտասար մասի բաժնեց: Իւրաքանչիւրիս կէս քիլօկրամ ուտելիք ինկաւ: Բրօֆէսէօրը կերաւ անյագօրէն, տենդոտ շտապօղականութեամբ, ես առանց հաճոյքի, հակառակ անսթութեանս, գրեթէ զրուանքով: Հանսը, հանգարտ, դանդաղ, չափաւոր, ծամելով փոքր կտորները և կուլ տալով այնպէս հանդիստ, որ կարծես մեր ապագան զինք բնաւ չէր մտահոգեր: Ան նոյնիսկ դատու կիսով չափ լեցուած մրգօղիին շիշը ու առաջարկեց մեզի խմել. այդ բարերար խմիչքը քիչ մը կազդուրեց մեզի:

— Fortraflig, ըսաւ Հանսը. խմելով իր հերթին:

— Սքանչելի է, յարեց հօրեղբայրս:

— Ես նորէն քիչ մը յուսադրուեցայ: Այդ եղաւ վերջին ճաշը, առաւօտեան ժամը հինգն էր: Ճաշէն վերջ ամեն մարդ իր խոհերուն մէջ ինկաւ: Ինչ որ ինձի կը վերաբերէր, իմ մտածումները յիշողութիւններն էին միայն, յիշողութիւններ, որոնք զիս կը փոխադրէին Երկրագունդին երեսը, որմէ երբեք պէտք չէ հեռանայի: Արքայական փողոցին տունը, իմ սիրելի Գրետխենը, բարի Մարթան տեսիլ:

քի պէս կ'անցնէին աչքերուս առջևէն: Հօրեղբայրս միայն ամբողջովին նուիրուած էր գործին, ջահը ձեռքին ուշադրութեամբ կը գիտէր գեանին բնոյթը: Կը լսէի թէ ինչպէս ան ինքնիրեն կը շըշըջար երկրորանական լացատրութիւններ, կը հասկնայի ատոնք և սկամայ կը հետաքրքրուէի:

— Կրանխտ, կ'ըսէր. մենք տակաւին առաջին դարաշրջանի շերտերը կը դտնուինք, բայց կը բարձրանանք: Ո՞վ գիտէ...

Ո՞վ գիտէ: Տակաւին յոյս ունէր: Ձեռքով կը շփէր ուղղահայեաց պատը ու քանի մը վայրկեան յետոյ կը շարունակէր.

— Սհա Գնէյս, ահա թերթաքար: Հրաշայի է: Շուտով կ'երեւան երկրորդական շերտերը և այն ժամանակ...

Ի՞նչ կ'ուզէր ըսել բրոֆէսէօրը: Մի՞թէ կրնար չսփել մեր գըլխուն վրայ կախուած երկրային կեղեւին հաստութիւնը: Արդեօք հընարաւորութիւն ունէ՞ր այդ հաշիւը ընելու: Ո՞չ: Մ'անօմէթըը չկար և ոչ մէկ հաշիւ դայն կրնար փոխարինել:

Ձերմութիւնը երթալով կ'աւելնար ու մենք քրտինքի մէջ կը լողայինք այդ այրող մթնոլորտին մէջ: Համսը, հօրեղբայրս ու ես ստիպուեցանք հանել մեր բաճկոններն ու բաճկոնակները, ամենաթեթեւ հագուստը մեղի նեղութիւն, նոյնիսկ տանջանք կը պատճառէր:

— Մի՞թէ կը բարձրանանք դէպի հրաբորբոք վառարանին կեդրոնը, բացառանչեցի, երբ ջերմութիւնը աւելի սաստկացաւ:

— Ո՞չ, պատասխանեց հօրեղբայրս, այդ անկարելի է, անկարելի:

— Բայց և այնպէս, ըսի, պատը շօշափելով, պատը սաստիկ տաք է:

Այդ վայրկեանին ձեռքս ջուրին դպաւ. ստիպուած էի ձեռքս իսկոյն ետ քաշել:

— Ջուրը կ'եռայ, բացառանչեցի:

Այս անգամ բրոֆէսէօրը պատասխանեց միայն ցասկոտ շարժումով մը:

Այդ պահուն աննկարագրելի սարսափ մը պատեց զիս, որ երբեք այլեւս չհետացաւ ինձմէ: Կ'ըզգայի, թէ կատարուելու է այնպիսի ազէտ մը, որ ամենավառ երևակայութիւնն անգամ չի կրնար պատկերացնել: Այդ միաքը սկիզբը տարտամ ու անորոշ, հետզհետէ որոշ ձեւ առաւ գլխուս մէջ: Ես ետ կը մղէի դայն, բայց ան յամառօրէն կը վերադառնար կրկին: Քանի մը ակամայ դիտումներ հաստատեցին համոզումս: Ջահի աղօտ լոյսին տակ անսովոր շարժումներ նկատեցի կրանիտէ շերտերուն մէջ, անկասկած ինչ որ արտակարգ երևուոյթ կը պատրաստուէր, որուն մէջ ելեքտրականութիւնը դեր կը խաղար: յետոյ այս արտակարգ տաքը, այս եռացող ջուրը... Ես վըճռեցի նայիլ կոմիսցոյցին:

Կողմնացոյցը կարծես խելագարուեր էր:

Այո խելագարուեր էր: Ալաքը կը թռչէր մէկ բեւեռէն միւսը, կը վազէր շրջանակի բոլոր կէտերով և յետոյ կը պտըտէր գլխապտոյտ ունեցողի պէս: Ինծի լաւ յայտնի էր, որ երկրագունտին կեղևը ոչ մէկ ատեն կատարեալ անշարժութեան մէջ չէ. ներքին նիւթերու քայքայումէն առաջացած փոփոխութիւնները կը ձգտին շարունակ պահել զայն տառաման վիճակի մէջ, նոյնիսկ այն ատեն երբ իր վրայ ապրող էակները չեն իսկ կասկածիր այդ շարժման մասին: Երբ աղմուկ կը լսուէր: Այդ դրդիւնը կարելի էր նմանցնել այն աղմուկին, որ կ'առաջացնեն բազմաթիւ սայլեր քարքարոտ փողոցէ անցնելու ժամանակ: Անընդհատ կրկնուող ամպրոպի ձայն էր այդ: Յետոյ մագնիսական սլաքը, ելեքտրական-երեւոյթներէն ցնցուելով, կը հաստատէր ենթադրութիւնս, հանքային կեղևը կ'ըսպառնար պատըռուիլ, կրանիտեայ զանգուածները՝ սեղմուիլ, ճեղքուածքները՝ փակուիլ, արանքները՝ լեցուիլ, ու մենք խեղճ հիւլէներս, կը ջարդուէինք այդ ահարկու սեղմումին մէջ:

— Զօրեղբայր, սիրելի հօրեղբայր, կորսուած ենք, բացազանչեցի:

— Ի՞նչ սարսափ նորէն պատեց քեզի, հարցուց զարմանալի պազարիւնութեամբ, ի՞նչ պատահեցաւ:

— Ա՛յ, աեսէք, թէ ինչպէս կը շարժուին պատերը, ինչպէս կը փշրուին կրանիտեայ շերտերը, ուշադրութիւն դարձուցէք սա ջերմութեան, եռացող ջուրին, խտացող գոլորշիներուն, պարող մագնիսական սլաքին, երկրաշարժի այս բոլոր նշաններուն:

Զօրեղբայրս մեղմօրէն գլուխը շարժեց:

— Երկրաշարժ, հարցուց:

— Այո:

— Սիրելի տղաս, ինծի կը թուի, թէ դուն կը սխալիս:

— Ինչպէ՞ս. մի՞թէ դուք չէք հասկնար այս նշաններուն իմաստը:

— Երկրաշարժ, ո՛չ. աւելի լաւը կ'ըսպասեմ:

— Ի՞նչ կ'ուզէք ըսել:

— Հրաբխային ժայթքում, Ա.քսէլ:

— Հրաբխային ժայթքո՞ւմ, բացազանչեցի, ուրեմն կը գտնուինք գործող հրաբուխի խառնարա՞նը:

— Այդպէս կը կարծեմ ըսաւ բրօֆէսէօրը, և մեզի համար ամենալաւ բանն է այդ:

Ամենալաւ բանը՞: Արդեօք խելագարած չէր հօրեղբայրս: Ի՞նչ կը նշանակէր այդ, ո՞ւրկէ էր այդ հանգստութիւնն ու ժպիտը:

— Ինչպէ՛ս, բացագանչեցի: Մի՞թէ հրաբուխային ժայթքումի մէջ կը գտնուինք, մի՞թէ՞ ճակատագիրը մեզի շարժած է հրավառ լավաներու, հրճորբք ժայռերու, եռացող ջուրերու, հրաբխային ամեն տեսակ նիւթերու ճամբուն վրայ: Ժայռերու զանգուածներու, մոխրի ու լավայի անձրեւին հետ միասին մենք եւս կը մղուինք, կը նետուինք քոցերու յորձանքին մէջ, և ա՞յդ է ամենալաւ բանը մեզի համար:

— Այո՛, պատասխանեց բրօնքսէօրը ակնոցներուն վրայէն ինծի նայելով, որովհետեւ այդ է մեր միակ յոյսը երկրի երեսը վերագառնալու համար:

Հագարաւոր մտածումներ կը խառնուէին զլիտուս մէջ: Հօրեղբայրըս իրաւացի էր. և երբեք ան ինծի աւելի խիզախ ու աւելի ինքնավստահ երեւցած չէր, որքան այդ վայրկեանին, երբ կ'ըսպասէր ժայթքումին ու այնքան պաղարիւնութեամբ կը կշռագատէր բոլոր հաւանականութիւնները:

Իսկ մենք կը շարունակէինք բարձրանալ: Ամբողջ գիշերը անցաւ այդ վերամբարձ շարժման մէջ: Երջագատի ալմուկը կ'աւելնար: Ենչա՜նկձ կ'ըլլայի, կը թուէր ինծի. թէ հասած էր վերջին ժամը: Եւ սակայն մարդկային երեւակայութիւնը այնքան տարօրինակ է որ անձնատուր եղայ իսկական մանկական մտածումներու: Բայց ես չէի որ կը տիրապետէի մտքերուս. ատոնք իմ վրայ կը գերիշխէին:

Այնտեղ որ հրաբխային ժայթքումը դուրս կը շարժէր մեզի, լաստի տակ եռացող ջուր էր. իսկ ջուրի տակ՝ լավայի խմոր, հալած ժայռերու խառնուրդ, որոնք խառնարանին գալաթը պիտի սփռուէին ամեն կողմ: Իսկապէս կը գտնուէինք հրաբուխի երախին մէջ. այդ մասին ոչ մէկ կասկած կար: Այս անգամ մենք դորժ ունէինք ոչ թէ մարած Մնեֆելսի հետ, այլ հրաբուխի մը, որ եռուն դորժունէութեան մէջ էր: Ուստի ես սկսեայ հարց տուի, թէ ի՞նչ լեռ կրնար ըլլալ այդ և սչխարհի ո՞ր մասին դուրս պիտի շարժուէինք: Հիւսիսային երկիրներու վրայ, այդ բոլորովին անհաւանական էր: «Սակնուսսեմի հրուանդանքէն սկսեալ մենք քանի մը հարիւր մղոն շարունակ ուղիղ գէպի հիւսիս գացինք: Մի՞թէ Իսլանտայի տակ կը գտնուինք: Արդեօք դուրս պիտի շարժուէինք Հեկլայի խառնարանէն, կամ կղզիի միւս եօթը հրաբխային լեռներու մէկէն կամ միւսէն: Դէպի արեւմուտք 500 մղոն տարածութեան վրայ, լայնութեան այդ աստիճանին տակ կը յիշէի միայն աննշան հրաբուխներ, որոնք կը գտնուին Ամերիկայի հիւսիս-արեւմտեան ծովափին: Իսկ զէպի արեւելք միայն մէկ հաս կար և կը գտնուէր լայնութեան ութսուներորդ աստիճանի տակ, ժան Մայէն կղզիին վրայ. Եփրեյակընէն ոչ հետու. ճիշդ է, խառնարաններ չատ կային և այնքան լայն էին, որ կրնային ամբողջ բանակ մը դուրս ժայթքել: Բայց անոնցմէ ո՞ր մէկը մեզի դուրս պիտի շարժէր, այդ էր, որ կ'աշխատէի գուշակել:

Առաւօտեան վերելքի շարժումը արագացաւ: Զերմութիւնը, փոխանակ նուազելու, նրկրի երեսը մօտենալով, ընդհակառակը, բարձրացաւ. այդ Զերմութիւնը միայն տեղական բնոյթ ունէր և հետեւանք էր հրաբուխի աղդեցութեան: Այլ ոչ մէկ կասկած ունէի — անասելի ուժ մը, քանի մը հարիւր միլիոնրորդի ուժ առաջացած նրկրի ընդերքին մէջ գոլորշիներու կուտակումներէն — անդիմադրելիօրէն մեղի վեր կը մղէր: Բայց ի՞նչ պիտի անթիւ վտանգներու կ'ենթարկէր մեզի: Շատ չանցած դեղնագոյն ցոլքերը սկսան թափանցել լայնցած ներքնառիւծին մէջ, նկատեցի աջ ու ձախ խորացած անցքեր. վիթխարի ներքնառիւծներու պէս, որոնցմէ թանձր գոլորշի դուրս կու գար, բացաւ լառ լեզուները ճարճատելով կը լիզէին անոնց պատերը:

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, հօրեղբայր, բացազանչեցի:

— Լաւ, ինչ ընենք, ծծմբային բոցեր են ատոնք: Փայթքումներու ժամանակ շատ բնական բան է այդ:

— Բայց եթէ շրջապատեն մեզ:

— Մեզ չեն շրջապատեր:

— Իսկ եթէ շնչահեղձ ըլլա՞նք:

— Շնչահեղձ չենք ըլլար. ներքնառիւծին կը լայննայ, և եթէ պէտք ըլլայ, լաստը կը ձգենք ու կը պահուրտինք որեւէ ճեղքուածքի մէջ:

— Իսի ջո՞ւրը, բարձրացող ջո՞ւրը:

— Զուր չիկայ այլևս, Ա.քսէլ, այլ լավայէն յառաջացած տեսակ մը խմոր, որ մեզի կը տանի մինչև խառնարանին անցքը:

Իսկապէս ջուրի սիւնը այլևս չիկար և անոր փոխարինած էին բաւական խիտ, եռացող հրաբխային նիւթեր: Զերմութիւնը անտանելի կը դառնար և ջերմաչափը, հաւանական է, եթանասուն աստիճանէն աւելի ցոյց կու տար: Բրտինքի մէջ կը լողայի: Եթէ չըլլար վերելքին արագութիւնը, մենք անկասկած շնչահեղձ կ'ըլլայինք:

Առաւօտեան ժամը ութին մօտ վերելքը յանկարծ դադրեցաւ. լաստը բոլորովին անշարժ կանգ տուաւ:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուցի, այդ անսպասելի դադարի ջրնուցումէն ապշած:

— Դադար, պատասխանեց հօրեղբայրս:

— Մի՞թէ ժայթքումը կը դադարի, բացազանչեցի:

— Յոյս ունիմ, որ ոչ:

Ոտքի ելայ և ջանացի չորս կողմս դիտել: Գուցէ լաստը ժայռի մը ցցուածքի դէմն էր առեր: Այդ պարագային պէտք էր իսկոյն ազատել լաստը: Սակայն մօխիւրի, լավայի և ճալաքարերու զանգուածը նոյնպէս կանգ էր առեր:

— Արդեօք ժայթքումը կը դադարի՞, բացազանչեցի:

— Ա՛, ըսաւ հօրեղբայրս, կը վախնա՞ս ուրեմն, որ ժայթքումը

դադարի, աղաս: Բայց հանգստացիր, այս դրութիւնը երկար չի կրնար տեւել: արեւն հինգ վայրկեան անցաւ և շուտով մենք նորէն կը չարանակենք մեր վերելքը գէպի խառնարանի անցքը:

Բրօֆէսէօրը այս խօսքերուն հետ շարունակ խորնոմեթրին կը նայէր և անգամ մը եւս իրաւացի դուրս եկաւ իր նախադուշակութեան մէջ: Շատ չանցած, լարտը վերստին սկսաւ բարձրանալ արագ և անկաստն շարժումով, որ մօտաւորապէս երկու վայրկեան տեւեց և կրկին կանգ առաւ:

— Լաւ, ըսաւ հօրեղբայրս ժամացոյցին նայելով, ասար վայրկեանէն կրկին առաջ կ'երթայ:

— Տասը վայրկեանէն:

— Այո': Մենք այնպիսի հրարուխի հեռ գործ ունինք, որու ժայթքումը դադարներով կ'ըլլայ: Ան մեզի հանգիստ կու տայ:

Շատ ճիշդ էր այդ: Նշանակուած վայրկեանին մենք նորէն վեր կը մղուէինք ծայրայեղ արագութեամբ: Ստիպուած էինք գերաններուն կառչիլ լաստէն դուրս չիյնալու համար: Վերելքը կրկին դադարեցաւ: Հետագային երկար մտածեցի այս տարօրինակ երեւոյթի մասին, առանց գոհացուցիչ բացատրութիւն գտնելու: Բայց և այնպէս ինձի համար պարզ էր, որ մենք ոչ թէ հրարուխի գլխաւոր բերանի մէջը կը գտնուէինք, այլ հաւանաբար՝ երկրորդական անցքի մը մէջ, ուրսեղ աւելի թոյլ հարուածներ միայն կ'ըզգացուէին:

Չեմ կրնար ըսել, թէ քանի անգամ կրկնուեցաւ այս երեւոյթը. այնքանը միայն կրնամ հօտտօտել, որ ամեն անգամ վերելքը վերըսկըսելուն պէս, կ'աճէր վեր բարձրացող ոյժը: Կարծես թէ մենք կը գտնուէինք թնդանօթի մը մէջ: Դադարներու ժամանակ չնչանեղծ կ'ըլլայինք, իսկ վերելքի ժամանակ այրող օդի հոսանքը շունչս կը կտրէր: Սակայն յաճախակի ցնցումներէն ուժասպառ եղած, ուշադնաց եղայ: Առանց Հանսի բաղուկի օգնութեան, դանկտ ջախջախուած կ'ըլլար կրանխտէ պատին զարնուելով: Այդ պատճառաւ ալ ես չկրցայ պահել ոչ մէկ ճիշդ յիշողութիւն, թէ յետոյ ի՞նչ պատահեցաւ: Աղտտ կերպով կը յիշեմ անընդհատ դզրդիւնները, որոնք նման էին ամպրոպի որոտներուն, կրանիթէ զանգուածի տատանումները, լաստի շրջապտոյտ շարժումները: Ան կը ծփար լավայի ալիքներուն վրայ, մօխիբի անձրևի տակ, շրջապատուած ճարճատող բոցերով: Փոթորիկը, կարծես հսկայական վտ քսէն դուրս գալով, կ'արժարձէր ստորերկրեայ կրակը: Վերջին անգամ նշմարեցի Հանսին դէմքը կրակէ ցոլքին մէջ, և անկէ վերջ այլեւս բան չզգացի, բացի այն շարագուժ սարսափէն, որ կ'ըզգան թնդանօդի երախին կապուած գծրախտ մահապարանները, այն վայրկեանին, երբ պիտի արձակուէի ռումբը, անոնց անդամները օդին մէջ ցան ու ցիր ընելու համար:

Նրբ աչքերս բացի, զգացի, որ մեր ուղեցոյցը իր հզօր ձեռքով բռնե՛ր է գօտիս: Միւս ձեռքով կը պահէր հօրեղբայրս: Վիբաւորուած չէի, բայց ինքզինքս լիովին ջարդուած կ'ըզգայի: Պառկած էի լսրան լանջին, երկու քայլի վրայ անդունդն էր և ամենափոքր շարժումը կրնար մեզի ձգել այդ անդունդը: Հանաք կեանքս փրկե՛ր էր, երբ ես պիտի գլորուէի խառնարանի լանջերուն:

Ո՞ւր կը գտնուինք, հարցուց հօրեղբայրս, ըստ երեւոյթին դժգոհ՝ որ երկրի երեսն ենք վերադարձեր:

Որտորդը ուսերը բարձրացուց, ցոյց տալու համար թէ բան չի գիտեր:

— Իսլանտայի մէ՞ջն ենք, հարցուցի ես:

— *Nei*, պատասխանեց Հանսը:

— Ինչպէ՞ս թէ ոչ, բացառանչեց բրօֆէսէօրը:

— Հանսը կը սխալի, ըսի ես տեղէս բարձրանալով:

Այս ուղեւորութեան անթիւ անակնկալներէն յետոյ մեզի նոր անակնկալ մըն էր վերապահուած:

Կ'սպասէի տեսնել յաւերժական ձիւնով ծածկուած գագաթ մը. շրջապատուած հիւսիսային անբերրի անապատներով, բայց մենք ընդհակառակը պառկած էինք լեռան մը լանջին վրայ, որ կ'այրուէր արեւի կիզիչ ճառագայթներէն: Չէի ուզեր հաւատալ աչքերուս, բայց սաստիկ տաքութիւնը կը վերցնէր ամեն կասկած: Խառնարանէն դուրս էինք եկեր կիսամերկ և արեւը, որ վերջին երկու ամիսները բան չէր տուեր մեզի. շատ առատաձեռն էր և ջերմութեամբ ու լոյսով կ'ողողէր մեզի:

Նրբ աչքերս վարժուեցան այս շլացուցիչ փայլին, ջանացի ուղղել երեւակայութեանս սխալները:

Բրօֆէսէօրը՝ առաջինը խօսեցաւ և ըսաւ.

— Իրաւ որ, այս երկիրը Իսլանտայի նման չէ:

— Իսկ Մայէն կղզիի՞ն, ըսի:

— Ոչ ալ անոր տղաս: Հիւսիսային հրաբուխ է այս իր կրանիտէ բլուրներով և ձիւնապատ գագաթով:

— Սակայն...

— Տե՛ս, Աքսէլ, տե՛ս:

Մեր գլխուն վերեւ, մօտաւորապէս հինգ հարիւր ոտք բարձրութեան վրայ կը բացուէր հրաբուխի խառնարանը, որմէ իւրաքանչիւր քառորդ ժամը անկամ մը հզօր պայթիւնով դուրս կուգար բոցերու բարձր սիւն, խառնուած մօսիքի ու լավայի հետ: Վարը, բաւական թեք լեռնալանջի մը վրայ կը տարածուէին հրաբխային նիւթերու շերտեր, եօ-

Թէն ութը հարիւր ոտք երկարութեամբ, որմէ կարելի էր եզրակացնել, թէ հրարուխի ընդհանուր բարձրութիւնը կը հասնէր մօտաւորապէս երկու հարիւր մեթրի: Անոր ստորտը կորսուած էր իսկական կանաչազարդ լայնի մը մէջ, ուր ես նկատեցի ձիթապտուղի և թուղի ծառեր ու խաղողի որթեր, ծանրաբեռնուած ոսկեղօծ ողկոյններով: Պէտք էր համաձայնիլ որ այս երկիրը ոչ մէկ բանով չէր նմաներ հիւսիսային երկիրներուն:

Այս կանաչազարդ տարածութեան միւս կողմը կերեւար հրաշալի ծովը կամ լիճը, որուն շնորհիւ այս մոգական երկիրը կը վերածուի նի մը մղոն երկարութեամբ կղզիի մը: Արեւելեան կողմը քանի մը տուներու ետեւ կ'երեւար փոքր նաւահանգիստ մը, ուր կայտաբօյն ալիքներուն վրայ կ'օրօրուէին իւրայատուկ ձեւի նաւեր: Աւելի հեռուն, ջուրի հարթավայրէն դուրս կուգային կղզեակներու խումբերօ անոնք այնքան շատ էին, որ մըջնանոցներու կը նմանէին: Արեւմտեան կողմը, հեռաւոր ցամաքամասեր կիսաշրջան մը կը կազմէին. անոնց մէկ մասին վրայ կը գծագրուէին կայտաւուն լեռներու համաչափ ձեւերը. աւելի հեռուն կ'երեւար արտասովոր բարձրութեամբ կոնաձեւ լեռ մը, որուն գագաթէն ծուխի քուլաներ կը բարձրանային: Դէպի հիւսիս, արեւի ճառագայթներուն տակ կը փայլէր ջուրի ընդարձակ տարածութիւնը, որուն վրայ այս ու այն կողմ կայմեր կամ պարզուած առաքաստներ կ'երեւային: Այս տեսարանի անսպասելիութիւնը կը հարիւրապատկէր անոր հրաշալի գեղեցիկութիւնը:

— Ո՞ւր ենք մենք, ո՞ւր ենք, կը կրկնէի ես կիսաձայն:

Հանսը անտարբեր էր. իսկ հօրեղբայրս այս գրաւիչ տեսարանը կը դիտէր առանց բան մը հասկնալու:

— Ինչ ալ կոչուի այս լեռը, ըսու ան վերջապէս, այսուամենայնիւ շատ տաք է այստեղ, պայթիւնները կը շարունակուին և ճիշդն ըսած, չարժեր հրարխային ժայթքումէն դուրս գալ, գլխնուս ժայտի կտոր մը ստանալու համար: Յած իջնենք և տեսնենք թէ ի՞նչ պիտի ընենք: Պէտք է ըսել, որ քաղցէն ու ծարաւէն կը մեռնիմ:

— Ոչ մէկ կասկած, որ բրտֆէսէօրը երազող մարդ չէր: Ինչ կը վերաբերի ինձի, մոռնալով քաղցն ու յոգնութիւնը, այգտեղ ժամերով կը մնայի. սակայն պէտք էր հետեւիլ ուղեկիցներուս:

Հրարուխի լանջերը բաւական թեք էին. մենք սողալով իջանք մոխիրով ծածկուած ձորերէն, խուսափելով լավայի հեղեղներէն, որոնք կը հոսէին հրավառ օձերու պէտ: Երբ կ'իջնէիք, ես անդադար կը խօսէի, որովհետեւ երեւակայութիւնս շարունակ կը գործէր:

— Մենք Ասիա ենք, յացագանչեցի, Հնդկաստանի ծովեզերքը, Մալանան կղզիներուն մէջ, Աւստրալիա: Մենք անցանք ամբողջ կիսագունտի տակէն և դուրս ելանք Եւրոպային հակոտնուայ կէտէ մը:

— Իսկ կողմնացոյցը՞, առարկեց հօրեղբայրս:

— Ճիշդ է. կողմնացոյցը... ըսի ես շուարած: Եթէ անոր հաւատանք, մենք շարունակ դէպի հիւսիս ենք գացեր:

— Ուրեմն ան խաբե՞ց մեզի:

— Օ՛, ի հարկէ խաբեց:

— Եթէ սակայն հիւսիսային բեւեռը չէ այս:

— Բեւեռը՞. ոչ. բայց...

Այստեղ անհասկնալի բան մը կար: Մենք արդէն կը մօտենայինք կանաչազարդ հովտին, որուն նայելով մարդ հաճոյք կ'ըզար: Քաղցն ու ծարաւը զիս կը տանջէին: Բարերազդարար երկու ժամ քալելէն յետոյ մեր առջեւ բացուեցաւ գեղեցիկ դաշտ մը, ամբողջովին ծածկուած ձիթապտուղի և նուռի ծառերով ու խաղողի թուփերով, որոնք կարծես ոչ ոքի կը պատկանէին: Պէտք է ըսել, որ մենք այդ մասին շատ ալ չէինք մտածեր: Ինչպիսի՜ հաճոյքով կերանք և ինչպէ՞ս մեզ կազդուեցին այդ հիւթալի պտուղները և ոսկեգոյն ողկոյղները: Քիչ մը հեռուն խոտերուն մէջ, ծառերու ստուերին տակ դտայ աղբիւր մը, որուն պաղ ջուրով զովացուցինք մեր երեսն ու ձեռքերը: Երբ մենք հանգիստի հաճոյքը կը վայելէինք, ձիթապտուղի ծառերու մէջէն տղայ մը երեւաց:

— Ա՛հ, բացագանչեցի, ահա և այս երջանիկ երկրի բնակիչը:

Խեղճ, աղքատիկ հագնուած տղայ մըն էր այդ. մեր ներկայութիւնը սաստիկ վախցուց զայն: Մեր կիսամերկ, գզգզուած տեսքով ոչ մէկ վստահութիւն կրնայինք ներշնչել:

Այն վայրկեանին, երբ տղան կը պատրաստուէր փախչելու, Հանսը վազեց ետեւէն և ետ բերաւ զայն, առանց կարեւորութիւն տալու անոր ճիչերուն ու դիմադրութեան: Հօրեղբայրս ջանաց հանգստացնել փոքրիկը և սկսաւ հարձուփարձել, նախ գերմաներէն լեզուով.

— Ի՞նչ կը կոչուի այս լեռը, փոքրի՛կ:

Տղան պատասխան չտուաւ:

— Լաւ, ըսաւ հօրեղբայրս, պարզ է ուրեմն, որ Գերմանիա չենք գտնուիր:

Եւ այդ միեւնոյն հարցումը անգլիերէն կրկնեց:

Տղան դարձեալ չպատասխանեց: Ես տարակուսանքի մէջ էի:

— Բայց միթէ խո՞ւլ է այս տղան, բացագանչեց բրօֆէսէօրը և քիչ մը հպարտանալով իր լեզուազիտութեամբ, միեւնոյն հարցը ֆրանսերէն կրկնեց:

Նոյն լուծութիւնը տղուն կողմէ:

— Լաւ, փորձենք իտալերէնը, շարունակեց հօրեղբայրս և այդ լեզուով հարցուց.

— Ո՞ւր կը գտնուինք մենք:

Դարձեալ լռութիւն:

Այս/սնդամ հօրեղբայրս բարկացաւ ու աղուն ականջէն քաշելով՝  
բացագանչեց խաւերէն:

— Պիտի խօսի՞ս վերջապէս. ի՞նչ կը կոչուի այս կղզին:

— Սթրոմպոլի, պատասխանեց փոքրիկ հովիւը, ազատելով Հանսի  
ձեռքէն և փախչելով դէպի դաշտ, ձիթենիներու մէջէն: Մենք ար-  
դէն մոռցանք դայն:

Սթրոմպոլի: Ինչպիսի՞ տպաւորութիւն գործեց վրաս այդ անըս.  
պատելի անուկը: Մենք կը գտնուէինք Միջերկրական ծովու մէջտե-  
ղը, այն կղզիին վրայ, ուր ժամանակ մը էօլը շղթայակապ ըրաւ  
քամիներն ու փոթորիկները: Իսկ արեւելեան կողմի կապոյտ լեռները,  
Գալապոցիոյ լեռներն էին: Դէպի հարաւային հորիզոն երեւցող բար-  
ձր հրաբուխը էտնան էր, սոսկալի էտնան:

— Սթրոմպոլի, Սթրոմպոլի, կը կրկնէի անընդհատ, իսկ հօրեղ-  
բայրս կը ձայնակցէր շարժումներով և խօսքերով:

Ա՛հ, ինչ դարձանալի ուղեւորութիւն: Մէկ հրաբուխի մէջէն մըտ-  
նել երկրի ընդերքը, և դուրս գալ ուրիշ հրաբուխով մը, և այս  
վերջինը աւելի քան հազարերկուհարիւր մղոն հեռու էր Մնեֆէլսէն,  
Իսլանտոյի անբերրի երկրէն, որ աշխարհի ծայրը կը գտնուի: Ու-  
ղեւորութեան արկածները մեզ բերեց հասցուցեր էին աշխարհի ամե-  
նաշքեղ շրջաններէն մէկը: Յաւերժական ձիւնի շրջանէն մենք ինկեր  
էինք յաւերժական կանաչութեան շրջանը, սառուցեալ գօտիի գորշ  
մշուշէն Սիկիլիոյ կապոյտ երկինքին տակ:

Պտուղներով և պաղ ջուրով նախաճաշելէ յետոյ մենք ճամբայ  
ինկանք, որպէսզի Սթրոմպոլի նաւահանգիստը հասնինք: Խոհեմու-  
թիւն համարեցինք չյայտնել, թէ ինչպէս ինկանք այս կղզիին վրայ:  
Թերահաւատ խալացիները մեզի կ'ընդունին որպէս դժոխքէ դուրս  
եկած ստանաններ: Այդ պատճառաւ ալ աւելի լաւ համարեցինք  
մենք մեզի փոթորիկէ ազատուածներ յայտարարել:

Ճամբուն լսեցի, թէ ինչպէս հօրեղբայրս ինքն իրեն կը շըն-  
ջար:

— Իսկ կողմնացո՞յցը, կողմնացո՞յցը որ հիւսիս ցոյց կուտար: Ինչ-  
պէ՞ս բացատրել այս երեւոյթը:

— Ծիշողը, ըսի անհող երեւոյթով, բոլորովին կարիք չիկայ ա-  
տոր բացատրութեան, այդպէս աւելի լաւ կ'ըլլայ:

— Ի՞նչ կ'ըսես տեսնուած բա՞ն է, որ հանքաբանութեան բրօ-  
ֆիէսէօրը չկարենայ բացատրել տիեզերագրական երեւոյթ մը: Այդ խայ-  
տառակութիւն կ'ըլլայ:

Այսպէս խօսելով, հօրեղբայրս կիսամերկ, կաշիէ քսակը դօտիին  
և ակնոցները քիթին, նորէն հանքաբանութեան բրօֆիէսէօրի սոսկալի  
տեսքն առաւ:

Արթուրի ներու այդիկն հեռանալով, ժամ մը յետոյ հասանք Ս. Վիգենչոսի նաւահանգիստը, ուր հանար պահանջեց իր ծառայութեան տասերեքերորդ շարաթականը: Այս վճարումը կատարուեցաւ ձեռքի ամենաջերմ սեղմումով: Կարծես ան քիչ մը զգացուեցաւ, մատներուն ծայրով թեթեւակի սեղմեց մեր ձեռքը և ժպտաց:

## ԽԵ

Ինծի կը մնայ աւարտել այս պատմութիւնը, որուն չեն հաւատար նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք սովոր են ոչ մէկ բանի զարմանալու, բայց ես առաջունէ պաշտպանուած եմ մարդոց թերահաւատութեան դէմ:

Աթրումպոլի ձկնորսները մեզի ընդունեցին նաւարեկեալներուն վայել խնամքով: Անոնք մեզի առին հազուատ և ուտելիք: Երկու օր յետոյ, փոքր նաւ մը մեզի հասցուց Մեսինա, ուր քանի մը օրուայ ընթացքին, մենք կատարեալապէս հանգստացանք և կազդուրուեցանք:

Սեպտեմբեր 4ին, ուրբաթ օրը, մեկնեցանք արքայական ընկերութեան «Vollturno» թղթատար շոգենաւով և երեք օր յետոյ հասանք Մարսէյ, առանց ունէ բանի մասին մտահոգուելու, բացի անխժուած մազնիսական սլաքէն, այդ անբացատրելի երևոյթը լըջօրէն զիս կ'անհանգստացնէր: Սեպտեմբեր 9ին, երկոյեան հասանք Համպուրկ: Անկարելի է նկարագրել Մարթայի զարմանքն ու Գրետսենի ուրախութիւնը:

— Հիմա, երբ դուն հերոս դարձար, ըսաւ սիրելի նշանածս, դուն այլեւս ինձմէ չպէտք է հեռանաս, Ա. քսէլ:

Նայեցայ անոր: Ան մէկ կուլար, մէկ կը ժպտէր: Հասկնալի է, որ բրօֆէսէօր Լիւենպրոկի վերադարձը հսկայական տպաւորութիւն գործեց Համպուրկի մէջ: Շնորհիւ Մարթայի շատախօսութեան, ամեն կողմ տարածուեր էր, որ ան մեկներ է զկայի երկրի կեդրոնը: Ոչ ոք չէր հաւատար անոր, և երբ կրկին տեսան զայն, աւելի չհաւատացին:

Սակայն շնորհիւ Հանսի ներկայութեան և իսլանտայէն ստացուած շարք մը լուրերու, հասարակական կարծիքը հետզհետէ փոխուեցաւ:

Այդպէսով հօրեղբայրս դարձաւ մեծ մարդ, իսկ ես՝ մեծ մարդու եղբորորդի, այդ սլ բան մըն էր: Համպուրկը, ի պատիւ մեզի շքեղ հանդէս մը սարքեց: Գիտական կաճառին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր ժողով մը, ուր բրօֆէսէօրը զեկուցում տուաւ իր ուղեւորութեան մասին: Նոյն օրը ան քաղաքային արխիւին յանձնեց Սակնուսսեմի վաւերագիրը և իր ցաւը յայտնեց, որ պայմանները թոյլ չի տուին իրեն

Իսլանտացի ճանապարհորդի հետքերով հասնիլ մինչեւ երկրի կեդրոնը:

Այս պատիւը, կասկած չիկայ, որ շատերու նախանձը պիտի շարժէր: Եւ որովհետեւ հօրեղբորս տեսակէտները, հիմուած անհերքելի փաստերու վրայ, կը հակառէին գիտութեան մէջ ընդունուած կեդրոնական ջերմութեան տեսութեան, ան ստիպուած եղաւ կատարի բանակաւի բռնուիլ բոլոր երկիրներու գիտնականներուն հետ:

Ինչ կը վերաբերի ինձի, ես չեմ կրնար ընդունիլ անոր սառուցման տեսութիւնը: Հակառակ այն բոլորին, որ տեսայ, ես կը հուաւոր տամ եւ միշտ ալ պիտի հաւատամ կեդրոնական ջերմութեան բայց կը խոստովանիմ, որ շարք մը դեռ չուսուցնասիրուած պայմաններ կրնան փոփոխութեան ենթարկել այդ օրէնքը, քնական երեւոյթներու ազդեցութեան տակ:

Այդ միջոցին, երբ այս հարցերը կը քննուէին ամենամեծ ոգեւորութեամբ, հօրեղբայրս անկեղծ ցաւ մը զգաց: Հակառակ անոր խնդրանքին, Հանսը հայրենիքի կարօտով բռնուած, հեռացաւ Համպուրկէն: Մարդ մը, որուն ամեն ինչ պարտական էինք, թոյլ չի տուաւ, որ վարձահատոյց ըլլանք իրեն:

«Ferval», ըսաւ ան օր մը, և հրաժեշտի այդ պարզ խօսքով մեկնեցաւ Ռէյքիավիկ և բարեյաջող ճամբորդութեամբ հոն հասաւ: Մենք սերտօրէն կապուած էինք այդ խիղախ որսորդին, անոր բացակայութիւնը երբեք մոռցնել չտուաւ զայն, և ես, որ կեանքս իրեն կապուական, միշտ սիրով պիտի յիշեմ զայն, և անկասկած պիտի չի մեռնիմ, մինչեւ որ անգամ մըն ալ չտեսնեմ Հանսը:

---

Իբրև եզրակացութիւն, պէտք է աւելցնեմ, որ մեր «Ուղեւորութիւն դէպի երկրի կեդրոնը» ամբողջ աշխարհին հսկայական տպաւորութիւն գործեց: Ան տպագրուեցաւ և թարգմանուեցաւ բոլոր լեզուներով. ամենատարածուած թերթերը տպագրեցին անոր գլխաւոր դրուագները՝ զանազան մեկնաբանութիւններով, վերլուծութիւններով: Բազմը հազուագիւտ կերպով կը ժպտէր հօրեղբորս. դեռ իր կենդանութեան, չտեսնուած փառքի արժանացաւ:

Բայց ցաւ մը, իսկական վիշտ մը կը մթազնէր անոր փառքը. մագնիսական սլաքին հետ կապուած երեւոյթը կը մնար անբացատրելի:

Օր մը, երբ ես անոր աշխատասենեակին մէջ կարգի կը բերէի հանքային հաւաքածոյ մը, հայեացքս ինկաւ հռչակաւոր կողմնացոյցին վրայ և սկսայ ուշադրութեամբ նայիլ անոր: Վեց ամիսէ իվեր կողմնացոյցը ինկեր էր անկիւն մը, առանց կասկածելու, թէ ինչքան անհանգստութիւն կը պատճառէր մեզի:

Յանկարծ, ինչպիսի՞ հրաշք ներկայացաւ աչքիս: Ճչացի:  
Բրօֆէսէօրը ներս վազեց:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուց ան:

— Կողմնացո՞յցը:

— Լաւ, յետոյ, ի՞նչ:

— Անոր սլաքը հարաւ ցոյց կուտայ և ոչ թէ հիւսիս:

— Ի՞նչ կ'ըսե՛ս:

— Տեսէ՛ք, անոր բեւեռները տեղափոխուեր են:

— Տեղափոխուե՞ր:

Հօրեղբայրս նայեցաւ, ստուգեց և յանկարծ այնպէս վեր ցատկեց, որ տունը դղրդաց: Կարծես լոյս մը փայլեցաւ միաժամանակ անոր և իմ մտքիս մէջ:

— Այսպէս, ուրեմն, բացագանչեց ան, երբ վերստին խօսիլ կարողացաւ, «Սակնուսսեմի հրուանդանը» հասնելնէս յետոյ անիծուած սլաքը հիւսիսի փոխարէն հարաւ ցոյց կու տար:

— Հաւանական է:

— Ատով ալ կը բացատրուի մեր մոլորումը: Բայց ի՞նչ ազդեցութեան հետեւանք է բեւեռներու տեղափոխումը:

— շատ պարզ է:

— Բացատրէ միաքող, տղաս:

— Լիդենպրոկ ծովուն վրայ պատահած փոթորիկի միջոցին, այն հրեղէն գնդակը, որ մագնիսացուց լաստին երկաթէ մասը, մեր սլաքն ալ ծռեց:


— Ահա թէ ի՞նչ, բացագանչեց բրօֆէսէօրը բարձրաձայն ծիծաղելով, ուրեմն ելեքտրականութեան խաղն էր այդ:

Այդ օրէն սկսեալ հօրեղբայրս գիտնականներու մէջ ամենէն երջանիկը եղաւ, իսկ ես ամենաբարտաւոր մարդը, որովհետեւ գեղեցիկ Գրետիսենս չափահաս գառնալով, Արքայական փողոցի տան մէջ գըրաւեց քեռաղջկայ և կնոջ տնոյր: Աւելցնենք նաև, որ անոր մօրեղբայրը դարձաւ հռչակաւոր բրօֆէսէօր Օթթօ Լիդենպրոկը, անդամ թղթակից ամբողջ աշխարհի բոլոր գիտական, աշխարհագրական և հանքաբանական ընկերութիւններու:

Վ Ե Ր Ձ







//

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033558

(In 804)

A  $\frac{11}{33558}$

Գ Ի Ն Ը

ՍԻՒՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆ	225 Լ. Դ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	5,5 ՇԻԼԻՆ
ԱՄԵՐԻԿԱ	90 ՍԷՆՅԵ

Հասցի:

Collège Armenien  
Rue Wadi Abou-Djémil, 127  
Beyrouth, (Liban)